Արտաշես Քալանթարյան

ԽՂՃԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅՑԸ

ԵՐԳԻՇԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐ

«Հայաստան» Հրատարակություն,Երևան, 1965

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ժողովածուն կազմված է վերջին մի քանի տարում հեղինակի գրած երգիծական պատմվածքներից և ֆելիետոններից, որոնց մի մասը տպագրվել է պարբերական մամուլում:

Նրանց հերոսները ձեզ էլ անծանոթ չեն: Դրանք այն մարդիկ են, ովքեր իրենց հոգեկան արատներով խանգարում են ժողովրդի հանգիստն ու աշխատանքը, խախտում սոցիալական համակեցության նորմաները, իրենց ագահությամբ, եսասիրությամբ, անտարբերությամբ ու անհոգությամբ վնաս հասցնում մեր ընդհանուր գործին:

Ժողովածուի մեջ տեղ գտած ֆելիետոնների գործող անձանց անունները հասկանալի պատճառներով փոփոխված են:

АРТАШЕС ПИРАГАЕВИЧ КАЛАНТАРЯН
Ночное появление совести
Юмористические рассказы и фельетоны
(На армянском языке)
Издательство "Айастан"
Ереван, 1965

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ծիծաղը լուրջ գործ է:Բժիշկներն էլ հաստատում են այդ, երբ հոգեկան զանազան խանգարումներ ունեցող մարդկանց խորհուրդ են տալիս սրտանց ծիծաղել: Եվ շատ դեպքեր են լինում, երբ ծիծաղը բուժում է: Բայց ծիծաղը միայն, այսպես ասած, թերապևտիկ բուժամիջոց չէ: Այն երբեմն հանդես է գալիս նաև որպես վիրահատ ու կտրում, հեռացնում է մարդկանց բնավորության այս կամ այն կողմում առաջացած խոցերը և ուռուցքները՝ եթե դրանք բարորակ չեն: Եվ աստված մի արասցե, եթե ծիծաղը բարկանում է. նա կարող է դառնալ դատախազ ու տեղնուտեղը կիրառել քրեական օրենսգրքի այն սարսափելի հոդվածը, որը պահանջում է պատժի առավելագույն չափ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Ո՞վ հարևան չունի:

Ես էլ ունեմ հարևան: Ճիշտ է, բախտի բերումով մենք մի բնակարանում չենք ապրում, բայց դժբախտության բերումով ապրում ենք մի շենքում:

Մեր պատշգամբները թեև հեռու են, բայց միմյանց են նայում, և առաջին օրը, երբ մենք նոր շենք տեղափոխվեցինք, դա ինձ շատ զվարճալի թվաց: Դուրս ես գալիս պատշգամբ, և որովհետև դիմացդ ո՛չ Մեծ Մասիս կա և ո՛չ էլ Փոքր, ո՛չ պուրակ կա և ո՛չ էլ գետ, ստիպված նայում ես դիմացիդ պատշգամբին, հետո աչքերդ ակամա հառում պատուհանին, պատու-հանից ներս անցնում, դիտում կահավորանքը և մարդկանց շարժումը: Ու երբեմն քեզ թվում է, թե մարդկային մի փոքրիկ ակվարիում ես դիտում: Շատ զվարճալի է:

Ահա իմ ակամա հարևանը հանեց քաղաքացիական շորերը, հագավ ընտանեկան շերտավոր մի տաք հագուստ, քնքշորեն ետ հրեց սեղանին դրված ափսեն, մեղմորեն գրկեց կնոջը ու պատշգամբ դուրս եկավ: Պատշգամբ դուրս եկավ ու դիտում է ինձ, հետո մեր պատշգամբը, հետո մեր սենյակը, հետո նորից ինձ ու գոչում է չթաքցրած ցնծությամբ.

- Շնորհավոր նոր տունդ, հարևա՛ն:

- Շնորհակալություն, ձեր տունն էլ շնորհավոր,- անկեղծությամբ գոռում եմ ես:

- Դու մուղամներ սիրո՞ւմ ես,- հարցնում է հարևանս:

Ես հանկարծակիի եմ գալիս: Ի՞նչ կապ ունի նոր տունը մուղամի հետ:

- Շա՛տ,- ճչում եմ տարակուսանքով:

- Հիմա կլսես,- բղավում է նա ու տուն է մտնում:

Ես էլ եմ տուն մտնում, և նստում եմ թե չէ՝ ականջիս է հասնում ախորժալուր մի երգ, սրտամորմոք մի ձայն, որ հոսում է մերթ մեղմ, մերթ կամացուկ ելնում ու ճախրում է օդում, մերթ սլանում է վեր ու ճռվողում գարնան արտույտի նման, մերթ ծառս է լինում, վարարում է, հորդում ու գետի պես խփում ափերին: Հետո կրկին մեղմանում է միանգամից ու քնքուշ մատներով խաղում է սրտիս լարերի հետ:

Երգն ինձ պատշգամբ է դուրս բերում: Հարևանս է: Այսինքն ոչ թե հարևանս, այլ նրա, «Խաղաղություն» կոչվող հսկա ռադիոընդունիչը, որը տիրաբար բռնել է պատշգամբի կեսը, մյուս կեսը զիջելով հարևանիս և մագնիտոֆոնին: Նվագը մի վայրկյան լռում է:

- Լա՞վ է, հարևան ջան,- բակով մեկ հնչում է հարևանիս բասը:

- Հոյակապ է,- բացականչում եմ ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու նվագը նոր թափ, նոր ավյուն է ստանում:

Մինչև ուշ գիշեր ես լսում էի նույն այդ ախորժալուր երաժշտությունը և քնեցի սարսափելի հոգնած: Երազիս մեջ զրուցում էի ռուս մեծ նկարիչ Ռեպինի հետ: Նա նայում էր ինձ մռայլ հայացքով ու, մատը վեր բարձրացրած,ասում էր. «Ես միշտ սիրել եմ երաժշտություն: Երբ երկար ժամանակ չեմ կարողացել լսել, կարոտել եմ»:

Ես նրա հետ չէի վիճում:

Հաջորդ օրն աշխատանքից հետո հոգնած տուն դառնալով, պառկեցի մի քիչ քնելու, երբ ահավոր մի ձայն օձիքիցս ամուր բռնած ինձ խլեց Մորփեոսի գրկից: Վեր թռա ու քնաթաթախ պատշգամբ դուրս եկա, կարծելով, թե ինչ-որ դժբախտություն է պատահել: Չէ՜, սխալվել էի. հարևանիս «Խաղաղությունն» էր:

- Հը, ո՞նց է,- որոտի միջից կարծես կայծակ փայլատակեց հարևանիս ճիչը:

Անկեղծորեն ասած՝ վատ էր. կրկին նույն երգը, որ նախորդ օրը լսել էի 42 անգամ և որ հոսում էր մերթ մեղմ ու մերթ կամացուկ ելնում... և այլն: Հետո՝ տրամադրություն չունեի, հետո՝ ուզում էի քիչ հանգստանալ: Վատ էր, ու ես միայն գլխով արեցի:

Լավատես է մարդը: Գլխի իմ այդ անմեղ շարժումը ընդունելով որպես ջերմ հավանություն, նա ռադիոընդունիչի բռնակը այնպես պտտեցրեց, որ ես օրորվելով սենյակ վերադարձա ու ձեռքերով բռնեցի գլուխս: Չօգնեց: Գնացի լողասենյակ, ամուր փակեցի դուռը ու բացեցի ցնցուղի ծորակը: Չօգնեց: Նվագը վարարում, հորդում ու գետի պես խփում էր ափերին... և այլն:

Չորրորդ օրը ես չէի ուզում աշխատանքից տուն դառնալ: Զգում էի, որ դանդաղորեն խելագարվում եմ: Այն երգը, իմ սիրած այն երգը, որ մերթ մեղմանում էր... և այլն, հիմա դամոկլյան սրի նման ամենուրեք և ամեն վայրկյան իմ գլխին էր կախված, հետևում էր ինձ, հետապնդում էր ու հալածում: Նույն երգը լսել 97 ժամ անընդհատ, 15 րոպեն մեկ, առանց ընդմիջման, հասկանո՞ւմ եք, առանց ընդմիջման, երբ նույնիսկ կապիտալիստական երկրներում քաղաքական բանտարկյալներին ընդմիջումներով են տանջում:

Շրջեցի հենց այնպես, աննպատակ և սեփական տունս դարձա չգիտես ինչու գաղտագողի, երկչոտ, անաղմուկ քայլերով, կեսգիշերն անց: Եվ, հրա՞շք էր, ինչ է, մուղամը չկար: Փոխարենը էստրադային թեթև մի նվագախումբ մեծ զվարթությամբ կատարում էր իմ սիրած երգերից մեկը՝ «Մարինան»,«Մարի՛նա, Մարի՛նա, Մարի՛նա» - մեկ անգամ չբավարարվելով կանչում էր երգիչը:

«Բարեփոխություն՝ հօգուտ ինձ,- մտածեցի ես՝ մի տեսակ գորովանքով լցվելով հարևանիս նկատմամբ,- մարդը մուղամից Մարինային է անցել»:

Այո, հարևանս էր, բայց ոչ նույնը: Մուղամի հարևանս դիմացի ակվարիումում ռադիոընդունիչն էր փորփրում:

«Ուրեմն աստված կա,- չարախնդացի ես,- կա՛: Անեծքս տեղ է հասել»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու սկսեցի մեծագույն հաճույքով ունկնդրել «Մարինա»-ն: Տասնհինգ թե տասնվեց անգամ համառորեն Մարինային կանչելուց հետո տղամարդը լռեց:

- Լա՞վն է,- այս անգամ հնչեց մի այլ տղամարդու ձայն:

Շրջվելով ձայնի կողմը, տեսա մյուս՝ արդեն կողքի հարևանիս, երիտասարդ մի տղայի, որը գլխի և ուսերի զարմանալի ճարպիկ շարժումներով կրկնում էր«Մարինա»-ի ռիթմը:

«Լավն է»,- ուզեցի ասել ես, բայց ամբողջ կյանքում անընդհատ «Մարինա» լսելու հեռանկարը ինձ սարսափեցրեց: Տառապանքս փորձ ուներ, և ես խուսանավեցի:

- Ոչինչ,- ասացի սառը քաղաքավարությամբ:

- Իսկ այս մյո՞ւսը,- ասաց նա և անհետացավ:

Շնչառությունս կարգավորվեց: Ուրեմն հիմա մի ուրիշ բան կնվագի: Եվ... կրկին հնչեց «Մարինա»-ն: Այս անգամ մեկը չէր, յոթ թե ութ առողջ տղամարդիկ ամբողջ կոկորդով Մարի-նային էին կանչում:

Խուճապահար տուն մտա: Հարևանս նվագարկիչի ասեղը փոխելու ժամանակ մի քանի անգամ ձայն տվեց, բայց ես չարձագանքեցի: Հեռախոսս մի քանի անգամ զանգեց, լսափողը չվերցրեցի: Դռան զանգը երկար ժամանակ հնչում էր, տեղիցս չշարժվեցի: Ինձ թվում էր, թե այդ բոլորն էլ երիտասարդ հարևանս է, որ միայն պետք է հարցնի.

- Իսկ այս մյո՞ւսը...

Եվ այս անգամ «Մարինա»-ն հնչեցնի Պյատնիցկու անվան մեծաշնորհ և մեծածավալ երգչախմբի կատարմամբ:

Չեմ ավելացնի: Գիշերվա ժամը երեքին ես այնպես էի ատում նախկին սիրելի, հրապուրիչ Մարինային, որ եթե ձեռքս ընկներ՝ տեղնուտեղը կխեղդեի ու ինքնակամ կհանձնվեի դատաքննչական օրգաններին: Երևի դրանից էր, որ քնեցի շատ անհանգիստ ու վայրիվերո երազներ տեսա: Մեկ ինձ թվում էր, թե Մարինան միայնակ երգչի հետ մեր կենտրոնական ունիվերմագում է և բողոքի գիրք է պահանջում: Մեկ էլ իբր 6 - 7 միլիցիայի աշխատողներ Մարինային տուգանում են փողոցային երթևեկության կանոնները խախտելու համար և բոլորը միասին եռանդով բղավում. «Մարի՛նա, Մարի՛նա, Մարի՛նա»: Հետո էլ, թե իբր ես վարսավիրանոցում սափրվում եմ, և հանկարծ ներս է մտնում հանգուցյալ բանաստեղծ Գյոթեն ու ասում ինձ չթաքցրած նախատինքով.

- Ես միշտ կարողացել եմ ավելի լավ աշխատել երաժշտություն լսելուց հետո:

Այդ երազներից ես ի գիտություն ընդունեցի միայն հարգարժան Գյոթեի խոսքերը և հաջորդ գիշեր Մարինայի ու Խան Շուշինսկու ոչ այնքան համերաշխ դուետի ներքո (հարևաններս գործարար մրցության մեջ էին) մի հոդված գրեցի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այդպիսի բան կյանքումս չէր եղել: Խմբագիրը երեք անգամ կարդաց հոդվածս, ամեն անգամ կասկածով նայելով վրաս, հետո վախվորած զգուշությամբ հարցրեց.

- Քեզ ի՞նչ է պատահել, ոչինչ չեմ հասկանում: Գույնդ...

- Գյոթեն ու Մարինան... - հառաչեցի ես ու, ինչպես ասում են, դողդոջուն շուրթերով պատմեցի ողջ եղելությունը:

- Ոչինչ չես կարող անել,- ասաց մեր աշխատողներից մեկը,- քաղսովետի որոշմամբ մարդիկ մինչև գիշերվա ժամը մեկը ինչ ձայներ ասես կարող են հանել:

- Այո՛, ոչինչ չես կարող անել, քաղսովետի որոշումն այդպիսին է: Բայց հո այդ որոշումը չի՞ ասում, թե ռադիոընդունիչներն ու մագնիտոֆոնները պետք է պատշգամբում դնել և ոչ թե տանը, թե ձայնը պետք է բարձրացնել մինչև վերջին «դո»-ն, թե նույն երգը պետք է նվագել ոչ պակաս, քան 87 անգամ, թե պետք է հասնել նրան, որ բոլոր հարևանները ինքնասպանություն գործեն կամ կամովին վտարվեն քաղքից:

- Դա արդեն դաստիարակության հարց է, գաղափարի հարց է, ճաշակի հարց է, բնավորության հարց է,- ասաց մեր աշխատողներից մյուսը:

«Դաստիարակություն, գաղափար, ճաշակ, բնավորություն» - բառերը կրկնելով, ծանր խոհելով տուն դարձա այն ժամանակ, երբ Խան Շուշինսկին ռեվանշ էր վերցնում: Նա առանց շունչ քաշելու երգում էր տասնհինգ րոպե, երբ Մարինան երեք րոպեն մեկ մի վայրկյան հանգստանում էր:

«...Ճաշակ, բնավորություն» մտմտալով վերցրեցի «Իմաստուն մտքերի աշխարհում» գիրքը («Զնանիե» հրատարակություն, տիրաժ 300 000, գինը 59 կոպ., Մոսկվա, 1962թ.) և ուզեցի իմանալ, թե աշխարհի մեծագույն մտքերը ի՞նչ են ասել վերոհիշյալ հասկացությունների մասին: Բացեցի և հաղթական ճիչ արձակելով պատշգամբ դուրս եկա:

- Ուշադրություն,- բղավեցի ես այնպիսի ձայնով, որ Խան Շուշինսկին ուՄարինան սարսափահար լռեցին:

Ես կրքոտ մի շարժումով բարձրացրեցի գիրքս ու գոչեցի այնպես, որ ոչ միայն հարևաններս, այլև ողջ Երևանը լսի.

«Յուրաքանչյուր մարդու բնավորությունը ազդում է այլ մարդկանց երջանկության վրա, նայած թե ինչ կարող է տալ այդ բնավորությունը՝ վնա՞ս, թե՞ օգուտ: Ադամ Սմիտ: Անգլիացի տնտեսագետ»:

Այս ազդու խոսքերը արտասանելուց հետո ես վերջնականապես թողեցի պատշգամբը:

Համերգը շարունակվեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու հիմա մտածում եմ. Եթե Գյոթեն մեր շենքում ապրեր, կկրկնե՞ր արդյոք իր անպատասխանատու խոսքերը՝ թե «Ես միշտ կարողացել եմ ավելի լավ աշխատել երաժշտություն լսելուց հետո»:

Դժվար թե...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԽՂՃԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅՑԸ

Զը՛նգ... Հնչեց գիշերային լռության մեջ:

Ապրանքագետ Գարեգին Վարդանյանը մատը հեռացրեց զանգի կոճակից ու ականջ դրեց: Ոչ մի ձայն:

Համա թե քնում ես, կնի՛կ,- կամացուկ փնթփնթաց նա՝ խոսքերն ուղղելով փակ դռան կողմը,- աչքս թեքում եմ թե չէ, Մաթևոսի գիրկն ես ընկնում:

Այստեղ ապրանքագետ Գարեգին Վարդանյանը մոռացավ զանգը ու մի պահ մտորեց Մաթևոս անվան շուրջը: Մի քանի օր առաջ նրանց մոտ մեկը զեկուցում էր կարդացել «Քուն և երազ» թեմայով: Մի քանի անգամ այդ լուրջ, ակնոցավոր մարդն ասաց, որ երբ մարդիկ ուզում են քնել, Մաթևոսի թե Մոթևոսի, թե նման մի «ոսի» գիրկն են ընկնում: Թե ինչու, Գարեգինը ոչինչ չհասկացավ: Բայց ինչպես միշտ, զեկուցող վերադասի խոսքերն ընդունեց ի գիտություն:

Նա նորից սեղմեց զանգի կոճակը ու այս անգամ շատ պարզ լսեց երկար տարիների իր կյանքի ընկերուհու՝ Թագուհու չստերի ծանոթ քստքստոցը:

- Ով է,- լսվեց դռան ետևից:

- Իսկ դու ո՞ւմ էիր սպասում, իշխանուհիս:

- Քեզ, իշխա՛նս,- հեգնանքով ասաց Թագուհին ու բացեց դուռը,- քեզ էի սպասում, պալատական բժշկիդ հետ:

«Բժիշկ» բառի վրա Գարեգինը մի թեթև այլայլվեց: Ճիշտ որ, ախր ինքը խոստացել էր իր ծանոթ հեղինակավոր բժշկին հրավիրել տուն: Կինը հազում էր վերջերս:

- Դե, Թագուհի ջան, մի նեղանա,- ասաց նա, աշխատելով հանել վերարկուն ու գլխարկը,- ես, դե գիտես, էլի: Մի փոքր ուշացա: Այ, հենց հիմա, հենց հիմա կգնամ ու կկանչեմ:

- Մի երկու ժամ էլ սպասիր, թող լուսանա, նոր կգնաս,- ասաց կինը, օգնելով ամուսնուն՝ հագուստը հանելու դժվարին ու պատասխանատու գործում: - Այդպես, բարձրացրու թևդ, թեքվիր մի քիչ, հիմա այս մեկը...

- Ինչո՞ւ, ո՞ւշ է,- հարցրեց ամուսինը, ծուլորեն բացուխուփ անելով աչքերը:

- Այնքան էլ չէ: Գիշերվա ժամը չորսն է:

- Դե՛, դե՛, առանց երգիծանքի և հումորի,- նեղացավ Գարեգինը, հետո նայեց ժամացույցին ու ժամացույցը գցեց ցած,- վա՛յ, տես, է՛, իսկապես, ժամը չորսն է:

Ու այնպիսի մի նախատինքով նայեց կնոջը, ասես Թագուհին էր մեղավոր: Հետո հառաչեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ազնիվ խոսք, ես մեղավոր չեմ: Այ, հենց այսօր, դուրս եկա աշխատանքից, տուն էի գալիս, մեկ էլ ճանապարհին մեր պահեստապետ Սերոբը հանդիպեց: Խոսեցինք դեսից-դենից, մեկ էլ թե՝ գնանք մի-մի բաժակ խմենք: Դե, ախր ո՞նց մերժես: Կնեղանա մարդը, ամբողջ սրտով էր ասում: Գնացինք մի-մի բաժակ խմեցինք, մեկ էլ Վարազը եկավ, թե՝ իմ խաթեր 50- 50 գրամ... Է, հետո՞, ես էլ մարդ եմ, չէ, իրենք ինձ հյուրասիրեն, ես չէ՞... մի շիշ կոնյակ բերել տվի, նստեցինք: Հետո Սերոբը թե՝ գնանք մեր տուն: Չէ, առաջ Վարազենց տուն գնացինք, հետո... հա, հետո մտանք մեր դիրեկտորի տուն, նրան էլ վերցրեցինք ու գնացինք Սերոբենց:

- Ախր թող խմելն, էլի,- կամացուկ մրմնջաց Թագուհին, Գարեգինի անօգնական գլուխը բարձին վստահելով,- ախ, որտեղից եկավ ձեր այդ... այդ հարբեցող դիրեկտորը:

- Դե՛, դե՛, դիրեկտորիս մասին ոչ մի խոսք: Հասկացա՞ր: Շատէլ ընկերական, պատվավոր ու, եթե կուզես իմանալ, հարգանքով մարդ է:

- Ախ, երանի առաջ տանեին,- ամբողջ սրտով մաղթեց Թագուհին,- ու տեղը նոր մարդ բերեին ստամոքսի խոցով: Էլ հո չէի՞ր խմի:

- Ուրեմն ես կամք չունեմ, հա՞,- փորձեց բարկանալ Գարեգինը:

- Է՛, լավ չես անում, Գարեգի՛ն,- շարունակելով իր զեկուցումը՝ «Ալկոհոլը ու նրա վնասները» թեմայով, ասում էր Թագուհին,- ամեն օր խմում ես: Առավոտյան գնում ես, գիշերը գալիս: Մոռացել ես տունդ: Շուտով երեխաներդ քեզ երևի «քեռի» կանչեն: Իսկ ես հիվանդ եմ, ամեն ինչ չեմ հասցնում:

Գարեգինը մի ուժեղ ծակոց զգաց սրտի արվարձաններում ու շրջվեց մի կողքի: Այդ խիղճն էր, որ այցի էրգալիս նրան:

- Դե լավ, լավ, թող քնեմ, շարունակությունը հաջորդ համարում,- քրթմնջաց նա:

Բայց խիղճն սկսել էր իր գործը: Եվ այստեղ ապրանքագետ ԳարեգինՎարդանյանը հանդես եկավ մի լուռ մենախոսությամբ, որի իմաստն այն էր, որ, իսկապես, ինքը ոչ լավ ամուսին է, ո՛չ էլ բավարար հայր: Ճիշտ է, աշխատավարձը բարեխղճորեն տուն է բերում, բայց միայն այդքանը: Նա մի կարգին չգիտի էլ, թե ինչ է կատարվում իր ընտանիքում, և տան գումարը վերջանալու մասին իմանում է միայն այն ժամանակ, երբ Թագուհին, մեղավոր ժպիտով, առավոտյան նրա առջևն է դնում քաղցր թեյ ու հաց:

Իսկ թե կինն ինչպես է կազմակերպում տնտեսությունը, ինչպես է հասցնում ամեն բան՝ առավոտ վաղ փայտ կոտրում, վառարանը վառում, հետևում երեխաների դասերին, լվանում, արդուկում ու մաքրում հագուստները, շուկա գնում, ճաշ պատրաստում, մասնակցում ծնողական ժողովներին, ինչ-որ բարձեր ասեղնագործում, ինչ-որ կոմպոտներ հնարում... «Չէ՛, առնվազն անազնվություն է դա»,- ինքնաքննադատաբար խարազանեց Գարեգին Վարդանյանը Գարեգին Վարդանյանին: Եվ որտե՞ղ է քո խիղճը,ընկե՛ր:

Մի նոր, սուր ծակոց անմիջապես մատնանշեց խղճի տեղը, և Գարեգին Վարդանյանը վերջնականապես անձնատուր եղավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Վաղվանից,- վճռեց նա,- ես դառնում եմ այլ մարդ: Բավական է: Էլ չեմ խմելու: Չե՞մ կարող, դեռ կտեսնենք: Նույնիսկ դիրեկտորն էլ առաջարկի, չեմ խմի: Շատ ստիպի, կասեմ ստամոքսի խոց ունեմ, կտեսնես, ընկեր դիրեկտոր,- սպառնաց նա մթությանը,- որ առանց խմելու էլ կարող եմ տղամարդ լինել»:

Երբեք նա այդքան ուժեղ ու վճռական չէր զգացել իրեն: Այդ էր պատճառը, որ մի տեսակ հպարտությամբ լցվեց իր նկատմամբ: Այն միտքը, որ նա այսուհետև ամբողջ հոգով օգնելու է կնոջը, նույնիսկ արցունքներ առաջացրեց նրա աչքերում:

Նա մի պահ անասելի ցանկություն զգաց երկարել ձեռքը ու մեղմ, շատ մեղմ շոյել կնոջ՝ արդեն ճերմակել սկսող մազերը, աշխատանքից կոշտացած ձեռքերն ու քնքո՛ւշ-քնքո՛ւշ խոսքեր ասել, մոտավորապես հետևյալ ձևակերպումով՝ «Իմ լավ, իմ միակ Թագուհի, վաղվանից ես նոր մարդ եմ այլևս,դու ինձ կտեսնես առավոտյան...»

Այդպես հուզված ու գոհ,ապրանքագետ Գարեգին Վարդանյանը քնեց:

...Եվ ահա, առավոտյան նա արթնացել է բոլորից վաղ: Քնքշորեն համբուրում է կնոջ ականջը, ուղղում երեխաների վերմակները, խանդաղատանքով նայում նրանց քթիկներին, ապա գնում է ցախանոց: Վառարանը հուրհրաց ծիածանի բոլոր գույներով, սենյակը տաքացավ, թեյնիկը սկսեց ուրախ սուլել: Բռնելով ծանոթ եղանակը, Գարեգինը ևս սուլելով գնաց խանութ, գնեց N 4 գործարանի հացը, վերադարձավ, սեղանը կարգի բերեց ու արթնացրեց Թագուհուն:

Թագուհու դեմքին մի այնպիսի զարմանք նկարվեց, որ Գարեգինը չկարողացավ պահել ծիծաղը:

- Այս բոլորը դո՞ւ... - մրմնջաց կինը:

- Ես, ի՞նչ կա որ,- հանգիստ պատասխանեց Գարեգինը,- դա իմ պարտքնէ: Չէ՞ որ ես այս ընտանիքի հայրն եմ:

Կինը գրկեց ամուսնուն:

- Դե, լա՛վ, լա՛վ, ի՞նչ մի բան եմ արել,- շիկնեց Գարեգինը, ոչ առանց դժվարության պոկվելով կնոջ գրկից ու, երեխաների թաթիկներից բռնելով, դուրս եկավ տնից: Տղային դպրոց տարավ, աղջկան՝ մանկապարտեզ, իսկ ինքը գնաց աշխատանքի: Աշխատում էր արտակարգ եռանդով: Բոլոր պաշտոնակիցները հիացած նրան էին նայում, իսկ դիրեկտորը նույնիսկ ասաց.

- Նայում եմ քեզ ու հիանում, Գարեգի՛ն, դու իսկապես լավ աշխատող ես: Գնանք ռեստորան, այսօր ես եմ հյուրասիրելու քեզ:

- Ո՛չ, չեմ կարող,- քաղաքավարի, բայց չտեսնված վճռականությամբ մերժեց Գարեգինը,- զբաղված եմ: Նախ՝ երեխաներիս խոստացել եմ կինո տանել, և երկրորդ՝ կինս հիվանդ է: Ես չեմ կարող նրան մենակ թողնել:

Տան ճանապարհին նրան հանդիպեց Սերոբը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չգնա՞նք մի-մի բաժակ...

Գարեգինը սկզբում ուզում էր ասել, թե ստամոքսի խոց ունի, բայց հրաժարվեց այդ մտքից: «Եվ ինչո՞ւ պետք է կեղծեմ»: Ու ասաց վճռական.

- Ո՛չ, Սերոբ, ես այլևս ոգելից խմիչքներ չեմ օգտագործում և նույնը խորհուրդ եմ տալիս քեզ:

Սերոբը շփոթված հեռացավ. շփոթված ետ-ետ քաշվեցին նաև Վարազն ու Վաղոն, որոնք այնուհետև հանդիպեցին նրան:

Գարեգինը երեխաներին տուն տարավ: Արագորեն, առանց ճաշելու, գնաց ու տուն հրավիրեց իր ծանոթ բժշկին, ճաշից հետո երեխաների համար կարդաց Թումանյանի «Չախ-չախ թագավորը», պահմտոցի խաղաց, որին մասնակցեց նաև երջանկությունից շառագունած Թագուհին: Հետո ընտանիքի բոլոր անդամները ռադիոյի հետ միասին երգեցին մի երգ, որը ռադիոն այդ օրը արդեն չորրորդ անգամն էր հաղորդում:

Այնուհետև Գարեգինը ծանոթացավ որդու օրագրին և օգնեց նրան պատրաստելու դասերը: Իսկ երեկոյան, երբ արդեն քնել էին երեխաները, Գարեգինը խոհանոցում էր: Ճիշտ է, Թագուհին կտրականապես արգելեց նրան մասնակցել ճաշասպասքի լվացման կամ չորացման աշխատանքներին, բայց և այնպես Գարեգինը չհեռացավ խոհանոցից: Նա կնոջը պատմում էր իր աշխատանքի մասին, այն մասին, որ որոշել է այս տարի ոչ թե մենակ, այլ ամբողջ ընտանիքով ծովափ գնալ, և էլի ու էլի շատ հաճելի բաներ:

- Իմ իշխան,- ասաց նրան Թագուհին, երբ պատրաստվում էին քնելու,- ես խոսք չեմ գտնում արտահայտելու իմ երջանկությունը: Չնեղանաս, բայց ուզում եմ ասել, որ այս օրը ամենապայծառ, ամենաուրախ օրն էր իմ կյանքում:

- Դե, դա հասկանալի է, իմ իշխանուհի,- մեղմությամբ պատասխանեց Գարեգինը, զարմանքով նկատելով, որ կնոջ մազերը կրկին սևացել են,- դա հասկանալի է: Ի՞նչ ես տեսել դու: Բայց ոչինչ, սրանից հետո ավելի լավ կլինի, այ կտեսնես: Ես ազնիվ խոսք եմ տալիս: Գո՞հ ես:

Նա սպասում էր, որ Թագուհին կասի «գոհ եմ», բայց ոչ մի ձայն չլսվեց:

- Գ՞ոհ ես,- կրկնեց Գարեգինը՝ կարծելով, թե Թագուհին չլսեց իր խոսքերը, բայց դարձյալ ոչ մի պատասխանի չարժանանալով, այս անգամ նայեց կնոջը:

Թագուհին նրան էր նայում նախատինքով ու տրտմությամբ:

- Ի՞նչ է, ուրեմն էլի՞ գոհ չես,- անասելի վիրավորված բացականչեց Գարեգինը,- գոհ չես, հա՞...

- Իսկ ինչի՞ց գոհ լինեմ: Նրա համար, որ աշխատանքից ուշացե՞լ ես,- հնչեց Թագուհու ձայնը ինչ-որ մի այլ տեղից, հեռվից...

...Ու ապրանքագետ Գարեգին Վարդանյանը արթնացավ քնից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուժեղ տրորեց աչքերը, մի կերպ բացեց կոպերը, նայեց ժամացույցին: Փոքր սլաքը քայլում էր 10-ի վրայով:

- Զանգ տուր հիմնարկ, հայտնիր, որ հիվանդ եմ, ու մի բաժակ էլ բան տուր՝ գլուխս ցավում է,- ասաց նա մռայլ:

Նրան մի պահ թվաց, թե կինը դանդաղում է: Սաստիկ բարկացավ ու դեռ երազի ազդեցության տակ, աշխատած, բայց չգնահատված մարդու ցասումով գոչեց.

- Ի՞նչ ես այդպես նայում, գոհ չե՞ս...

Կինը թոթվեց ուսերը, տարուբերեց գլուխը և գնաց իր հերթական պարտականությունները կատարելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴԻՐԵԿՏՈՐ ԱՌԱՆՑ ԽԱՆՈՒԹԻ

(Իրական զավեշտական դեպք երեք պատկերով)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Վարսենիկ Ամիրյան - կառավարիչ, միջահասակ կին:
Մարկոս Սահակյան - դիրեկտոր, միջահասակ տղամարդ:
Դիմակ - անորոշ զբաղմունքի տեր անձնավորություն:
Գործողության վայրը՝ Երևան: Ժամանակը՝ վերջերս:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Վարագույրը արագորեն բացվում է: Պարզվում է, որ մի վարագույր էլ կա: Բեմ է մտնում մեկը՝ դիմակով, ձեռքին նիզակ ունի բռնած, որպես քննադատության խորհրդանիշ:

ԴԻՄԱԿ - *(Դիմում է հանդիսականներին)*: Ձեր մեջ Նոր Ջեյթունում ապրողներ կա՞ն: Գեղեցիկ: Իսկ գոյություն ունի՞ այնտեղ մանկական ունիվերմագ: Ո՞չ, հիանալի է:*(Զգուշորեն նայում է չորս կողմը)*: Բայց, զգուշացեք, եթե ձեզ հանդիպի մեկը և ասի, որ իր անունն է Մարկոս Սահակյան, և ինքը Նոր Ջեյթունի մանկական ունիվերմագի դիրեկտորն է, չլինի՞ թե զարմանաք կամ անվստահություն արտահայտեք, այդ Մարկոսը ձեռքին թուղթ ունի, պաշտոնական թուղթ...

Լսվում է կրակոց, ճայթյուն: Բեմը մթնում է, իսկ երբ լուսավորվում է կրկին, դիմակով մարդն այլևս չկա: Բացվել է նաև երկրորդ վարագույրը: Բեմը պատկերում է կառավարիչ Վարսենիկ Ամիրյանի առանձնասենյակը: Կահավորված է պարզ, ճաշակով: Մեծ գրասեղան: Նրա ետևում Ամիրյանն է նստած և մտովին ինչ-որ հաշվումներ է կատարում: Դեմքը մտազբաղ է, թախծոտ:

ԱՄԻՐՅԱՆ -Առևտրի կազմակերպման բազմաթիվ ձևեր կան և նույնիսկ նորերը: Օրինակ՝ ինքնասպասարկում, սեկցիա՝ առանց վաճառողի, խանութ՝ առանց վաճառողի: Դա լավ է, իսկ ավելի՛ նոր, ի՞նչ նոր բան կա:*(Դառնությամբ)*: Ոչի՛նչ: Բայց պե՞տք է: Պետք է: Ի՞նչ անել: *(Կանգնում, սարսափելի մտատանջության մեջ սկսում է քայլել սենյակում: Հետո հանկարծ դեմքը պայծառանում է: Հրճվանքով):* Գտա՛, դիրեկտոր՝ առանց խանութի: Հոյակապ միտք է, օրիգինալ: Կեցցե՛ս, Ամիրյան: Դիրեկտոր առանց խանութի...

Ներս է մտնում Սահակյանը:

ՍԱՀԱԿՅԱՆ - Բարև, ընկ. Ամիրյան: Բա հիմա ես ի՞նչ անեմ: Գործարանի բանավանի ունիվերմագի դիրեկտորն էի. աշխատանքից հեռացրին ոչ ճիշտ առևտուր կազմակերպելու համար: Մի ամբողջ օր է անգործ եմ: Վե՞րջը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՄԻՐՅԱՆ- Գիտեմ, ես էլ կրկնեցի հրամանը: Ուրիշ կերպ չի կարելի:*(Խիստ):* Առևտրի կանոնները սրբազան են, ընկեր: Դուք պետք է իջեցվեք պաշտոնում:

Պաուզա: Սահակյանը քննադատությունից ազդված՝ կախում է գլուխը:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Նույն տեսարանը: Նույնք:

ՍԱՀԱԿՅԱՆ - Բա ո՞նց անենք... Ախր, առևտրից բացի, ուրիշ ոչ մի գործ անել չեմ կարող:

ԱՄԻՐՅԱՆ - Հասկանալի է: Առանց առևտրի ապրել չեք կարող: Լավ: Ես քեզ համար մի առաջարկ ունեմ... նորարարական: *(Խիստ):* Կարո՞ղ ես աշխատել որպես դիրեկտոր՝ առանց խանութի: *(Սահակյանը այլայլվում է):* Զգուշացնում եմ՝ նոր ձև է և դժվար: Ստիպված պետք է լինես ոչինչ չանել, բայց ամեն ամիս աշխատավարձ ստանալ: Չեմ թաքցնում, ծանր կլինի: Չես ունենալու ո՛չ հաշվարկ, ո՛չ վաճառողներ, ո՛չ մաքրողներ, ո՛չ պահակ և ո՛չ էլ խանութ: Խնայողություն: Հասկանալի՞ է:

ՍԱՀԱԿՅԱՆ - Հասկանալի է, հարգելի ընկ. Ամիրյան:

ԱՄԻՐՅԱՆ - Իսկ դժվարություններից չե՞ս վախենում:

ՍԱՀԱԿՅԱՆ - Իհարկե, ես գիտեմ, ծանր կլինի*: (Ուղղվում է, գլուխը բարձրացնում է վեր, աջ ձեռքը դնում կրծքավանդակին):* Կգնամ, ուր ուղարկեք:

Ամիրյանը գոհ ժպտում է, բարձրանում է տեղից, ամուր, բարեկամաբար սեղմում Սահակյանի ձեռքը: Մարկոսը հուզմունքից այլևս ոչինչ չի արտասանում: Զարմանալիորեն ծափեր չեն լսվում:

ԱՄԻՐՅԱՆ - Ապրես, ես գիտեի, որ դու վախկոտներից չես: Գրում եմ հրամանդ: Ինն օր առաջ նշանակվում ես Կոմիտասի փողոցի վրա գտնվող կտորեղենի սալոնի դիրեկտոր:

ՍԱՀԱԿՅԱՆ -*(Սարսափած):* Սալոնի՞: Ուրեմն կա՞ այդպիսին:

ԱՄԻՐՅԱՆ - Ո՛չ, ո՛չ, հանգստացիր: Շենքը նոր են սկսել կառուցել: Մինչև շահագործման հանձնվի, մի բան կմտածենք:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Նայն սենյակը: Նույնք: Երկու ամիս հետո:

ՍԱՀԱԿՅԱՆ - *(Տագնապով):* Ընկ. Ամիրյան, գործերը վատ են գնում, շենքը շուտով կավարտվի: Փրկեցեք ինձ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՄԻՐՅԱՆ - Հանգստացիր, իմ սենյակում դու ապահով ես: Ուրիշ ի՞նչ կա:

ՍԱՀԱԿՅԱՆ - Ջանսաղություն, այսինքն՝ որ ճիշտն ասեմ, գործի դժվարության համեմատ աշխատավարձը ցածր է. ստանում եմ որպես երկրորդ կարգի խանութի դիրեկտոր: Ի՞նչ կլինի, ընկ. Ամիրյան ջան, հաստիքս դիրեկտոր՝ առանց խանութի է, չէ՞: Դարձրու դիրեկտոր՝ առանց առաջին կարգի խանութի, է՛լի, 40 ռուբլի ավել կստանամ: Իսկ, ինչպես ձեզ հայտնի է, «ավել պատառը փոր չի ծակի»:

ԱՄԻՐՅԱՆ - Ողջունում եմ, խելացի առաջարկություն է և ասացվածքն էլ սրամիտ: Սպասիր խոսեմ մեր վարչության պետի հետ:*(Հեռախոսը մոտ է բերում, վերցնում է լսափողը, հավաքում համարը):* Ալո՛, ընկ. Դարյա՞ն: Ես եմ: Շատ եմ խնդրում՝ օգնեք: Նոր Զեյթունի մանկական ունիվերմագի գործը շատ լավ է գնում, բան չի մնացել, այս երկու օրը շենքի նախագիծը պատրաստ կլինի: Այո, թույլ տվեք Սահակյանին նշանակել, լավ, միամիտ տղա է: Չե՞ք առարկում: Շատ, շատ շնորհակալ եմ:*(Դառնալով Սահակյանին):*Տեսա՞ր...

ՍԱՀԱԿՅԱՆ - Ես ցնցված եմ:

ԱՄԻՐՅԱՆ - Ահա՛ հրամանդ: Նշանակվում ես մանկական ունիվերմագի դիրեկտոր: Ո՛չ, բոլորովին մի անհանգստացիր, շուտ չի կառուցվի: Դեռ որոշված էլ չէ, թե որ տրեստն է սկսելու շինարարությունը: Իսկ թե բան է՝ մտածեն իսկապես սկսել, իսկույն ինձ տեղյակ պահիր... Մի այնպիսի խանութ կտեղափախեմ, որ ընդհանրապես չի բացվելու. *(Նայում է Սահակյանին, զոհունակությամբ ժպտում է):* Դե, ինչպե՞ս ես գտնում իմ նորարարական առաջարկությունը:

ՍԱՀԱԿՅԱՆ - Ցնցված եմ, հանճարեղ է: Եթե խանութ լիներ, մեծ թվով մարդիկ ահագին աշխատավարձ էին ստանալու՝ ակնհայտ վնաս հասցնելով պետությանը: Իսկ հիմա, խնդրեմ, միայն ես եմ ստանում:*(Նայում է Ամիրյանին երախտագիտության մեծ զգացումով):*

ՎԱՐԱ...

Ո՛չ, վարագույրը դեռ չի իջել: Դահլիճում սուլոցներ կան ու այլ անհանգստություն: Հանդիսականները չեն հեռանում: Նրանք սպասում են վերադաս օրգանների միջամտությանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«ՎԵՐՋԸ ԴՈՒ՞Ք ԵՔ...»

Մեր տան կարագը անսպասելիորեն վերջացավ: Գիտեի, որ այն լիքն է քաղաքի բոլոր խանութներում, դրա համար էլ շատ հանգիստ բացեցի հենց մեր կողքի խանութի դուռը:

- Կարագ է պետք,- ասացի վաճառողին,- դե, գիտեք ինչ, երեխաները...

- Չունենք,- կասկածամտորեն ինձ նայելով, նետեց վաճառողը,- հենց նոր վերջացավ, վաղը կլինի:

- Բայց երեկ լիքն էր,- ապշեցի ես:

- Լի՛քն էր... - հեգնեց վաճառողը,- իսկ առավոտյան հերթը տեսա՞ք:

- Առավոտյան ես երեխային երաժշտական դպրոց էի տարել,- չգիտես ինչու ակամա բացատրություն տվեցի ես,- բայց մի՞թե կարագի համար հերթ կար...

- Հերթը միշտ էլ կլինի, եթե հերթի է կանգնել նաև Համասփյուռ Ծատուրովնան,- մռայլ ասաց վաճառողը,- կես ժամվա մեջ ամբողջը տարան: Վաղը եկեք, երկու տոննա կտամ:

- Ի՞նչ:

- Կարագ:

- Ինչիս է պետք երկու տոննան,- վիրավորվեցի ես:

- Ուզում եմ ասել, որ շատ ունենք,- մեղմացավ վաճառողը,- դուք ինձ կներեք, երբ տեսնում եմ այդ Համսփյուռ Ծատուրովնային…

- Բայց ո՞վ է վերջապես այդ կինը,- հետաքրքրվեցի ես:

- Քաղաքացի է,- բացատրեց վաճառողը:

Ու նկատելով, որ իմ հետաքրքրությունը շարժվել է, սկսեց պատմել:

Համասփյուռ Ծատուրովնան այս մեր անցավոր կյանքում մի բան միայն հաստատ գիտե, որ եթե որևէ խանութում հերթ չկա, ուրեմն չարժե այնտեղ մտնել:

Այդ է պատճառը, որ երբ որևէ տեղ տեսնում է մի քանի հոգու իրար ետևից կանգնած, մոռանում է ամեն ինչ՝ այն, որ աշխատանքից ուշանում է, որ կաթը վառարանի վրա է, որ դուրս է եկել խալաթով, որ տանը հյուրերը սպասում են, որ... Մի խոսքով ողջ աշխարհում չի գտնվի մի ուժ, որը նրան ետ կանգնեցնի հերթից: Մոտենում է ու հուզված հարցնում հերթի ծայրում կանգնած մարդուն.

- Ներողություն, վերջը դո՞ւք եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այո՛:

- Իսկ ի՞նչ հերթ է:

- Չգիտեմ,- անկեղծորեն ասում է Համասփյուռ Ծատուրովնայի բնավորությամբ մի քաղաքացի:

Այդ ժամանակ Համասփյուռ Ծատուրովնայի ետևում կանգնած կինը, որը մոտ 15 րոպե զրուցում էր իր ընկերուհու հետ սրածայր կոշիկների մասին, հանկարծ հարցնում է.

- Ի՞նչ են վաճառում այստեղ:

- Չգիտեմ,- ասում է Համասփյուռ Ծատուրովնան:

- Ինչպե՞ս թե, չգիտեք և հե՞րթ եք կանգնել:

- Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ են վաճառում:

- Ո՛չ,

- Ուրեմն ինչո՞ւ եք հերթ կանգնել:

- Որովհետև դուք կանգնած եք:

- Ես էլ կանգնել եմ, որովհետև այս ընկերն է կանգնած:

Ի վերջո հերթի առջևի ծայրից խոսքերի պատառիկներ են հասնում ետին ծայրը:

- Ասում են արտասահմանյան ապրանքներ են ստացել:

- Ի՞նչ:

- Արտասահմանյան:

- Իսկ ի՞նչ ապրանքներ...

- Արտասահմանյան,- սաստում են մի քանիսը:

Եվ հերթը շարունակում է առաջ գնալ…

Համասփյուռ Ծատուրովնային հաճախ է հաջողվում հասնել մինչև այնտեղ, ուր ապրանքն է վաճառվում: Ճիշտ է, այստեղ նա քիչ է մնում ուշաթափվի, տեսնելով, որ իրեն անհրաժեշտ ոչ մի ապրանք չկա: Բայց սրտի ցավով, համենայն դեպս, ինչ-որ բան գնում է: Նման ձևով անցյալ երեք ամսում նա գնել է, օրինակ, նորածնի հագուստային կոմպլեկտ, թեև երբեք երեխա չի ունեցել, գնել է տղամարդու մորթե գլխարկ, թեև չի հիշում, թե երբ է բաժանվել երրորդ ամուսնուց, գնել է չինական մի մեծ սկահակ, որի նպատակը անհայտ է, ձուկ բռնելու մի քանի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կարթ, թեև երբեք ձկնորսությամբ չի զբաղվել, և «պինգ-պոնգի» գերմանական գնդակներ, որոնք մարմարյա փղիկների նման դարսել է դաշնամուրի վրա:

Ճիշտ է, հաճախ էլ հերթը նրան չի հասել, բայց նման դեպքերում Համասփյուռ Ծատուրովնան մի հայացք է նետել ետ և մխիթարվել, տեսնելով, որ իր ետևում կանգնած են բազմաթիվ քաղաքացիներ: Ուրեմն նրանց էլ չի հասել:

Երբեմն պատահել է նաև անսպասելին: Համասփյուռ Ծատուրովնան մոտ մեկուկես ժամ հերթի է կանգնել և հենց որ հերթը իրեն է հասել, պարզվել է, որ ոչ թե ապրանք, այլ քաղաքային բռնցքամարտի մրցության տոմսեր են վաճառում: Իսկ մի ուրիշ անգամ էլ...

...Համասփյուռ Ծատուրովնան շտապում էր դեպի օդանավակայանի քաղաքային բաժանմունքը՝ Ղափան թռչելու համար տոմս գնելու: Նա առավոտ վաղ գործուղված էր լեռնագործների քաղաքը: Մոտենալով բաժանմունքին, Ծատուրովնան նկատեց, որ մի հերթ ձգվել, զիգզագներ է կատարել ու եկել հասել է բաժնմունքի դռանը: Ուրեմն՝ երկու հերթ. որի՞ ետևից կանգնել՝ տո՞մսը գնել, թե գուցե արտասահմանյան ապրանքնե՞ր: Փորձությունը սոսկալի էր: Բայց մի քանի վայրկյան անց հաղթանակեց սովորությունը, և Համասփյուռ Ծատուրովնան արտասահմանյան ապրանքների հերթի զիգզագներով սկսեց առաջանալ դեպի ցանկալի վերջնակետը:

Որքան մոտենում էր հերթը, այնքան աճում էր Համասփյուռ Ծատուրովնայի անհանգստությունը՝ կհասնի՞ իրեն, թե ոչ: Իսկ եթե անցյալ ամսվա պես չհասնի՞: Նա ընդհանրապես չար կին չէր, բայց այդ վայրկյանին ինչպիսի սարսափելի մտքեր ասես չէին անցնում նրա մտքով: Մտածում էր, օրինակ, թե ինչքան լավ կլինի, եթե առջևում մեկը նվաղի ու դուրս գա հերթից, գուցե նրան օգնեն և հերթը առաջանա առնվազն երեք ոտնատեղ: Բայց հերթում, ինչպես երևում է սրտային հիվանդներ չկային, ու դրա համար էլ, այլևս չդիմանալով, Համասփյուռ Ծատուրովնան դիմեց իր առջևում կանգնած ծերուկին:

- Օ՜հ, ինչ դանդաղ է առաջ գնում հերթը, սոսկալի է:

- Այո, սոսկալի է,- անմիջապես արձագանքեց ծերունին, -իսկական բյուրոկրատներ...

- Այո՛, այո՛, բյուրոկրատներ,- ոգևորված համաձայնվեց Համասփյուռ Ծատուրովնան,- ի՜նչ լավ նկատեցիք՝ բյուրոկրատներ... Մի՞թե հնարավոր չէ ապրանքն ավելի արագ բաց թողնել:

- Ի՞նչ ապրանք,- ապշեց ծերունին:

- Դե, այդ, արտասահմանյան:

- Ի՞նչ արտասահմանյան:

- Դե, ապրանքներ,- սրտնեղեց Ծատուրովնան:

- Որտե՞ղ են վաճառում,- հետաքրքրվեց ծերունին:

- Ինչպե՞ս թե որտեղ... Իսկ դուք ինչի՞ հերթ եք կանգնել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ծերունին այնպես քրքջաց, որ երկար ժամանակ ուշքի չէր գալիս:

- Կո...մունալ, ծախ…սերի վարձն ենք մուծում, բ…բանկ… Երեք պատուհանից մեկն է աշխատում, դրա համար էլ հերթ է գոյացել,- վերջապես մի կերպ բացատրեց ծերունին:

Համասփյուռ Ծատուրովնան գունատվեց, դուրս վազեց հերթից ու մի շնչով օդանավակայանի բաժանմունք մտավ: Բայց... աշխատանքն արդեն ավարտվել էր..

Եվ ի՞նչ, կարծում եք թողե՞ց իր սովորությունը: Ո՛չ: Համասփյուռ Ծատուրովնան հիմա էլ այնտեղ է, որտեղ մի քանի մարդ կանգնած են իրար ետևից: Երբ մի որևէ բան եք ուզում գնել, մի փոքր դանդաղեք և կտեսնեք, որ նա անմիջապես կհայտնվի ձեր կողքին ու կհարցնի հուզմունքից ընդհատվող ձայնով.

- Վերջը դո՞ւք եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԽՈՐԴՈՒԲՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ ՓՈՍ ՓՈՐՈՂԸ…»

- Գնացեք փողոցները,- կարգադրեց կոմունալսպասարկման բարեկարգման գրասենյակի պետ Նիկոլայ Գորյանը:

- Փողոցներից նոր եկանք,- անվստահորեն իրար նայելով,տարակուսեցին նույն երկարաշունչ գրասենյակի աշխատողները:

- Էլի գնացեք,- պնդեց պետը,- գնացեք ու քանդեք փողոցները:

- Ո՞րը:

- Որը պատահի:

Քանդելու հարուստ փորձ ունեցող բարեկարգողներն անմիջապես դուրս եկան գրասենյակից ու ցրվեցին քաղաքում: Ով ինչ փողոց տեսավ, քանդեց: Մի քանի շաբաթ անց ամեն ինչ վերջացած էր, և շուկաների մութ անկյուններում «Անիի ավերակներ» վաճառող ներկարարները փոսերի ու խանդակների եզրաթմբերին նստած նոր էսքիզներ էին կատարում:

- Էս ի՞նչ արեցիք,- տուն չվերադարձող բարեկարգողների թևերից բռնած մրմնջում էին հուսահատ բնակիչները,- ինչո՞ւ քանդեցիք:

- Կոյուղի,- արժանապատվությամբ պատասխանում էին քանդողները:

- Իսկ խողովակնե՞րն ուր են:

- Վերջո՛ւմ:

- Իսկ մոնտաժողնե՞րը:

- Խողովակների հետ:

- Իսկ զոդողնե՞րը:

- Մոնտաժողների հետ:

- Իսկ...

Բարի՜ անձրև... Սա էլ կարծեց, թե մարդիկ աշնանային ծառատունկի համար են փոսեր փորել ու քանդել փողոցները: Եկա՜վ... եկավ ու լցրեց բոլոր փոսերը, եկավ ու լցրեց բոլոր խանդակները՝ մեծ հրճվանք պատճառելով թղթե մակույկներով ծովահեն-ծովահեն խաղացող փոքրիկ տղաներին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու որովհետև սովորաբար ջուր + հող= ցեխի, դրա համար էլ շուտով փոսերն ու փողոցները ծածկվեցին ցեխով, որ գիշերները փայլփլում էր ողորկ ասֆալտի պես իր հրապուրիչ գիրկը հրավիրելով ուշացած ճամփորդներին: Ու հիմա էլ, վերոհիշյալ պատմությունից մի քանի ամիս անց, գիշերները քաղաքի փողոցներում մեկ էլ կլսեք մի աղեկտուր ձայն.

- Պողոս, գտա՞ր...

Այդ Պետրոսն է հետաքրքրվում, թե Պողոսը վերջապես գտա՞վ ցեխի մեջ կորած իր չարաբաստիկ ձախ կոշիկը:

- Չէ՛,- հնչում է տխուր պատասխանը,- Պետրո՛ս...

Բայց Պետրոսն այլևս չկա: Նա ընկել է Նիկոլայ Գորյանիփորած փոսը:

Այո՛, միշտ չէ, որ ուրիշի համար փոս փորողն ինքն է ընկնում մեջը, ինչպես լավատեսությամբ հայտարարում է հայկական ժողովրդական առածը: Այստեղ ուրիշներն են ընկնում այդ փոսը: Իսկ Գորյանը... Գորյանը ինչո՞ւ պիտի ընկնի, երբ իր աթոռից ո՛չ ինքն է իջնում, ո՛չ էլ մեկ ուրիշն է փորձում իջեցնել նրան:

ՁԵՌՔԸ ՁԵՌՔ Է ԼՎԱՆՈՒՄ…

- Ի՞նչ բան է բուլդոզերը, ի՞նչ բան է ինքնաթափը,- չարաճճիորեն կկոցելով աչքը, բանվորներին հարցրեց գրասենյակի գլխավոր հաշվապահ Կարլեն Մարլենյանը:

- Մեքենաներ են,- անսխալ պատասխանեցին մի քանիսը:

- Ի՞նչ են անում այդ մեքենաները:

- Հողը փորում ու թափում են:

- Չէ՛, չէ՛, տնտեսական իմաստով:

- Հեշտացնում են բանվորների աշխատանքը:

- Այդպես եք գնահատում իմ արածը, հա՞,- վշտացավ Մարլենյանը,- ե՛ս եմ հեշտացնում ձեր աշխատանքը, ոչ թե բուլդոզերը, հասկանո՞ւմ եք, ե՛ս: Բուլդոզե՛րը…Բուլդոզերն ու բեռնաթափը բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը, իջեցնում ինքնարժեքը, տալիս խնայողություններ, իսկ ես այդ բոլորը վերցնում ու տալիս եմ ձեզ, պա՞րզ է: Բուլդոզերը մի օրում, ասենք, քանդում է 40 խորանարդ մետր հող, չէ՞: Իսկ ես գրում եմ. «Սերոբ Քերոբյանի ղեկավարած հողափորների բրիգադը տասը օրում քանդել է 40 խորանարդ մետր հող:Եվ այդ հողը դառնում է փող, մտնում ռոճկացուցակները և…

- Շա՛տ, շա՛տ շնորհակալ ենք, բարերար,- հառաչեցին հողափորները...

- Բա՛,- հաղթական բացականչեց գլխավոր հաշվապահը,- այ թե ինչ մարդ եմ ես:Ձեռքը ձեռք է լվանում, չէ՞: Իսկ երկու ձե՞ռքը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Երե՛ս,- թնդաց երախտապարտ հողափորախումբը:

- Դե, ջո՛ւր բերեք,- կարգադրեց գլխավար հաշվապահը ու ձեռքերը լվանալուց հետո գրասենյակի տրամադրության տակ աշխատող տարբեր կազմակերպությունների էքսկավա-տորավարներին ու ավտոգրասենյակի վարորդներին դուրս գրեց 453 ռուբլի:

- Ախր դրա համար միայն 75 ռ. 60 կոպեկ է նախատեսված,- գունատվեց հաշվետարը:

- Նիչևո՛, փող է, է՛լի, մի գրպանից դուրս է գալիս, մյուս գրպանն է մտնում,- կտրեց Մարլենյանը՝ մտածելով, որ միտք չունի «պետություն» բառը ասացվածքի մեջ մտցնել:

Սրանք դեռ ի՞նչ: Խորդուբորդություններ շատ կան մեր որոշ կոմունալսպասարկման և բարեկարգման գրասենյակների աշխատանքներում, որոնք պետք է քանդել, հարթեցնել և ասֆալտապատել: Ու քանի որ, ինչպես տեսանք, իրենք՝ գրասենյակի հաստիքով քանդողները, հարթեցնողներն ու ասֆալտապատողները բոլորովին ուրիշ հարցերով են մտահոգված, դրա համար էլ գուցե դատախազությունները այդ գործը շեֆության կարգով իրենց ձեռքը վերցնեն: Այդպես չէ՞…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՍԵԱՏԵՍ ՊԱՐՈՆԸ ԱՅՆ ԱՓԻՑ

Արտասահմանյան տուրիստների էքսկուրսիոն «Վոլգա»-ն այս անգամ կանգ առավ Երևանի կայարանամերձ հրապարակում: Մի քանի տուրիստներ ցած իջան ու հիացած սկսեցին դիտել կայարանի շենքը, անհագորեն կարդալ ցուցանակները:

- Մեր Երևա՜նը...

Ու ժպտում են ուրախության արցունքի միջից, չորս կողմն են նայում այնպիսի հայացքով, ասես ուզում են միանգամից տեսնել ամեն ինչ՝ Արարատի գագաթները, Սասունցի Դավթի արձանը, տուֆակերտ շենքերը, Երևանի կանաչ գոտին և, առաջին հերթին, իրենց հայրենակիցներին՝ սիրելի, հարազատ մարդկանց:

- Ի՜նչ հիանալի շենք է,- պայծառ ու հպարտ դեմքով ասում է տարեց մի կին, մատնացույց անելով կայարանամերձ շենքերից մեկը:

- Հրաշալիէ, չքնաղ, սքանչելի...

Ու ժպտում են բոլորը:

Միայն մեկը չի ժպտում: Կանգնած է լուռ և անտարբեր նայում է շրջապատին:

Միջահասակ, նիհար մարդ է նա: Ունի ձեռքեր և ոտքեր, և նույնիսկ աչքեր, կարճ ասած, արտաքին բոլոր տվյալները՝ մարդ կոչվելու: Բայց ինչ-որ բան, այնուամենայնիվ, պակասում է:

...Երկնագույն ավտոբուսը անաղմուկ սահում է Հոկտեմբերյան պողոտայով:

- Ես այստեղով անցել եմ ուղիղ 38 տարի առաջ, սայլով,- ասում է ծեր մի տուրիստ,- եթե չիմանայի, որ կայարանը հին տեղում է, ոչ մի կերպ չէի հավատա, թե նույնն է: Սա ի՞նչ հիանալի փողոց է դարձել…

Բոլորը ուրախ են, խոսում են, կատակում, հիացած բացականչում՝ հայրենի քաղաքի հաջողությունները տեսնելով: Բայց նիհար մարդը դարձյալ լուռ է և ավելի ու ավելի է մռայլվում:

Դա, իհարկե, չէր կարող չանհանգստացնել նրա ուղեկիցներին: Եվ ահա մեկը, մտահոգ դեմք ընդունելով, դիմում է մռայլ մարդուն:

- Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն, վատառո՞ղջ եք:

Մեկ ուրիշի ձայնում արդեն ընդգծված հեգնանք է լսվում.

- Պարոնը երևի բուժվելու համար է եկել հայրենիք…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ո՛չ: Վահագն Դադրյանը բուժվելու համար չէ Ամերիկայից հասել Երևան: Նա հիվանդ է, իհարկե, բայց անբուժելի, որովհետև տառապում է մի արտասովոր ախտով՝ սևատեսությամբ: Սևից բացի նրա համար գոյություն չունեն մնացած բոլոր գույները: Լայն բացված աչքերով, օրինակ, նա կարող է նայել սպիտակ սավանին ու հանգիստ ձայնով ասել.

- Սև է:

Այն էլ ասենք, որ սևատեսությունը ժառանգական հիվանդություն է Դադրյանների ընտանիքում: Այն, մասնավորապես, պարոն Վահագնին է անցել իր հորեղբորից:

Վաղ կորցնելով հորը, պարոն Վահագնը, որ այն ժամանակ պարոն չէր, այլ ամենասովորական ձևով չորեքթաթ տվող մի մանուկ, խնամակալվում է ու դաստիարակվում հորեղբոր՝ թուրքական ոստիկանության գաղտնի գործակալ Վահրամ Դադրյանի մոտ: Որոշ ժամանակ անց, ավագ Դադրյանը որոշում է ավելի առատաձեռն տեր գտնել և, թուրքական ոսկին դոլլարով փոխարինելով, ծառայության է անցնում ամերիկյան գաղտնի ոստիկանությունում: Նա իր հետ Ամերիկա է տանում նաև եղբորորդուն՝ Ստամբուլի միջնակարգ դպրոցներից մեկն ավարտած՝ Վահագն Դադրյանին:

Չմոռանանք ասել, որ Դադրյանը, ընդհուպ մինչև իր հորեղբոր «ժամկետանց» մահը, ապրում էր ոստիկանի անմաքուր քսակի հաշվին:

Հորեղբոր մահիչց հետո ի՞նչ էր մնում անելու նույն փողերով արդեն սոցիոլոգիայի դոկտոր դարձած պարոն Վահագն Դադրյանին. օգտագործել հորեղբորից մնացած միակ ժառանգությունը՝ սևատեսությունը: Ու որովհետև ամերիկյան որոշ անցուցանակ հիմնարկներում շատ են սիրում նման ժառանգություն ունեցող մարդկանց, դրա համար էլ Վահագն Դադրյանի աչքի առջև պահում են մի քսակ, որը թափահարելիս ախորժալուր հնչյուններ է արձակում:

- Ուզո՞ւմ ես,- հարցնում են:

- Ուզում եմ,- ամենայն անկեղծությամբ արտասանում է սոցիոլոգիայի դոկտորը:

Դե, եթե կարող ես՝ բռնի՛ր,- ասում են նրան, ու աթոռին կանգնելով, բարձրացնում քսակը:

Սոցիոլոգիայի պարոն դոկտորը ցատկում է ինչպես շնիկը՝«Հապա խլիր» կոնֆետի նկարում, բայց ձեռքը քսակին չի հասնում: Այդ ժամանակ նրան ասում են.

- Այս քսակը քոնը կլինի, եթե մեկնես Սովետական Հայաստան ու, վերադառնալով, գրես, թե ինչպիսի սարսափելի պայմաններում են ապրում այնտեղ:

- Իսկ առանց գնալու չի՞ լինի,- հայացքը քսակից չկտրելով, հառաչում է պարոն Վահագնը,- հենց այս գիշեր կնստեմ...

- Չի՛ լինի,- ասում են,- մեզ ականատես է հարկավոր: - Հետո հոգածությամբ ավելացնում են,- այնտեղ արևն ուժեղ է, չմոռանաս սև ակնոց վերցնել քեզ հետ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոցիոլոգիայի դոկտոր Վահագն Դադրյանը գործի մեջ է դնում իր ունեցած բոլոր ընդունակությունները՝ ո՛չ միայն Սովետական Հայաստան գալու թույլտվություն ստանալու, այլև որքան կարելի է այստեղ երկար մնալու համար:

Նրա ջանքերը զուր չեն անցնում: Պարոն դոկտորին հաջողվում է երկու անգամ լինել Հայաստանում: Սակայն, որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, անդրանիկ այցելությունից հետո նա տուն չի վերադառնում՝ երևի հույս չունենալով իր ունեցած «տվյալներով» գոհացնել ամերիկյան տերերին:

Դադրյանը մեկնում է Արևմտյան Գերմանիա, թափառում կապիտալիստական Եվրոպայի մի շարք քաղաքներում և ութ ամիս անց կրկին հայտնվում Սովետական Հայաստանում:

Այս անգամ մռայլադեմ պարոնը, սակայն, մերթ ընդ մերթ փորձում է նաև ժպտալ, աշխատելով թաքցնել իր հոգու թույնը: Նա կրկին ու կրկին շրջում է Հայաստանի մայրաքաղաքի փողոցներում, ամեն կերպ խույս տալով լուսավոր, արևոտ վայրերից, անընդհատ որոնելով մութ ու ստվեր: Բայց ապարդյուն: «Հայրենակարոտ» սոցիոլոգիայի դոկտորը զայրանում է, գազազում և արդեն երբեմն նույնիսկ չի կարողանում թաքցնել իր անասնական ատելությունը մեր նոր կյանքի, նրա կառուցողների նկատմամբ:

Նայում է դպրոցներին, ինստիտուտներին, մտնում շուկաներն ու խանութները, որոնք լի են ապրանքներով, ու գունատվում է.

- Սո՛ւտ է:

Խոսում է տարբեր զբաղմունքի տեր մարդկանց հետ, պրովոկացիոն հարցեր տալիս, կեղծում, խաբում ու շողոքորթում, իսկ երբ պարզվում է, որ մարդիկ բոլորովին էլ իրենց կյանքից դժգոհ չեն, ոռնում է կատաղությունից.

- Սո՛ւտ է:

Նա փորձում է վերից նայել մեր մարդկանց, արհամարհանքով սեղմում է շրթունքները, երբ խոսում են ժողովրդական տնտեսության, կուլտուրայի և գիտության բնագավառներում հայ ժողովրդի աննախընթաց հաջողությունների մասին: Շաղակրատում է հայոց լեզվի «աղավաղման» հարցի շուրջը, իսկ ինքը խոսում է այնպիսի հայերենով, որ թարգմանչի օգնությամբ էլ դժվար է հասկանալ:

Վերջերս լինելով Հայաստանի գրողների միությունում, պարոն Վահագնը հայտարարեց, թե սովետահայ գրողների ստեղծագործությունները իրեն բոլորովին դուր չեն գալիս: Նրան հարցրեցին.

- Իսկ ի՞նչ եք կարդացել մեր գրողներից:

Սոցիոլոգիայի դոկտորը, առանց ջանալու կարմրել, պատասխանեց.

- Ոչի՛նչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գաղտնիք չէ այլևս. սնատես պարոնի համար հավասարապես ատելի են մեր կյանքում իր բոլոր տեսածներն էլ, չտեսածներն էլ: Պատճառը պարզ է, նրանք սովետական են:

Պարոն դոկտորը պոռոտախոսում էր նաև բարոյականության թեմաներով:

Բայց հենց այդտեղ էլ սայթաքեց՝ ամբողջովին մերկացնելով իրեն, և ոչ միայն իրեն...

...Մի օր, երեկոյան ժամը 11-30-ի սահմաններում, հյուրանոցի հերթապահը ճիչեր է լսում մի սենյակից: Նա փորձում է բացել դուռը, բայց այն կողպված է լինում ներսից: Ճիչերը շարունակվում են: Կանացի մի ձայն օգնություն է աղերսում: Հերթապահի կանչով ներկայանում են հյուրանոցի ուրիշ աշխատողներ, ինչպես նաև միլիցիայի հերթապահը: Նրանք ստիպում են բացել դուռը, և երբ այն ի վերջո բացվում է, 24-ամյա Օ-ի սենյակում հայտնաբերվում է Հարվարդի համալսարանի դասախոս, սոցիոլոգիայի դոկտոր պարոն Վա-հագն Դադրյանը՝ սեփական անձով:

Պարզվում է, որ բարոյականության «ջատագովը» ամենավերջին խուլիգանի նման փորձել է բռնաբարել իր հարևանուհուն: Քիչ անց նա արդեն բացատրություն էր տալիս միլիցիայի հերթապահին, մերթ ընդ մերթ չմոռանալով բղավել.

- Մեղադրո՞ւմ եք ինձ: Այդպիսի դատարկ բանի համա՞ր: Ո՞վ է լսել. սա պետական հարց չէ: Սա իմ անձնական գործն է:

Երբ արձանագրություն կազմելու արարողությունը ավարտվեց, պարոնԴադրյանը կրկին իր համարը վերադարձավ ու նստեց գրասեղանի մոտ: Կարծում եք պատրաստվում էր խնդրագի՞ր գրել իր խուլիգանական արարքը ներելու վերաբերյալ: Ո՛չ: Պարոն դոկտորը գտնում էր, որ պատահածը չնչին բան է և չարժե նույնիսկ մտածել դրա մասին՝ այն էլ քնելուց առաջ:

Դադրյանին զբաղեցնում էր մի այլ միտք՝ ինչպե՞ս անել, որ երկարաձգվի իր ուղևորության ժամկետը: Ախր գործերը դարձյալ կիսատ են մնացել... Այս անգամ ի՞նչ պատասխան տա իր ամերիկյան տերերին:

- Գուցե հաջողվի,- մտմտում էր սոցիոլոգիայի դոկտորը:

Զո՛ւր հույսեր: Այժմ դժվար թե խոսք լինի նրա տուրիստական ուղևորության ժամկետը երկարաձգելու մասին: Բարոյազուրկ և ծախուՎահագն Դադրյանը պետք է հեռանա մեր երկրից:

Ավելի ճիշտ, նրան հարկավոր է ճանապարհել «ըստ արժանվույն», հրաժեշտի այնպիսի խոսքերով, որ պարոն վաճառվածը մյուս անգամ ախորժակ չունենա հիշելու Սովետական Հայաստանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼՈՒՍԻԿԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԱՄՈՒՍԻՆԸ

Մոտ երեք տարի առաջ, միջահասակ, լայնեզր գլխարկով մի մարդ հանդիսավոր անցնում էր քաղաքի կենտրոնական փողոցով և մեծ ուշադրությամբ դիտում... կանանց:

Նույն պահին քաղաքի մյուս փողոցներով քայլում էին նրա մերձավորներն ու հարազատները և հանդիպած ամեն ծանոթի տեղեկացնում.

- Երևանից Զուլումն է եկել աղջիկ տեսնելու, թե ունեք բերեք:

Իսկ երեկոյան ինքը՝ Զուլումը, հարսնացուի տանը նստած, սիրատոչոր աչքերով նայում էր թեկնածու Լուսիկին ու ասում ծանրորեն.

- Մի քանիսին ցույց տվեցին՝ չհավանեցի, բայց որ քեզ տեսա, ընկերԼուսիկ, սիրտս կպավ: Միայն թե հենց հիմա ասա «հա՛», որովհետև վաղը գործուղմանս ժամկետը լրանում է:

- Ինչպե՞ս կարելի է, առաջին օրն է,- փորձում էր շիկնել Լուսիկը:

- Ոչի՛նչ, սերը ամոթ բան չէ, թեև ես քսան տարեկան չեմ, թեև սիրեցյալ կին եմ կորցրել... - այստեղ Զուլումի ձայնը կերկերաց, նա գրպանից հանեց թաշկինակը ու քիթը մաքրեց,- թեև երկու երեխա ունեմ, բայց առաջին անգամ զգացի, թե ինչ բան է սերը, սերը՝ դա...

Լուսիկը աչքը չէր հեռացնում Զուլումի այտից, որի վրա մրի փաթիլի նման մի հաստ բան էր նստել: Նորահարսի իր առաջին ուշադրությունը ցույց տալու համար Լուսիկը հանեց թաշկինակը, ծայրը թրջեց ու գերագույն հոգածությամբ մոտեցրեց Զուլումի այտին:

- Խա՛լս,- ճչաց նորափեսան:

Բայց արդեն ամեն ինչ վերջացած էր: Նորափեսայի այտի խալը տեղավախվել էր նորահարսի թաշկինակի վրա...

Սակայն արհեստական խալի լիկվիդացումը վճռական նշանակություն չունեցավ կազմավորվող զույգի փոխադարձ հարաբերությունների զարգացման նախնական էտապի համար: Լուսիկն ու Զուլումը ամուսնացան և տեղափոխվեցին Երևան:

Մեղրամիսը դեռ չէր ավարտվել, երբ Զուլումի եղբայրը ինչ-ինչ մեղքի համար ձերբակալվեց:

- Դե փասա-փուսեդ հավաքիր,- տուն գալով ասաց Զուլումը, որը թեև ինժեներ էր աշխատում հանքային ջրերի տրեստում, բայց թուլություն ուներ ոգելից խմիչքների նկատմամբ ու ինչպես միշտ, չարաշահել էր իր թուլությունը,- բաժանվում եմ քեզանից, ոտքդ շառ է:

Ու կնոջը մի քիչ ծեծելուց հետո պայման դրեց, որ կամ նա իրեն կանխիկ հազար հինգ հարյուր ռուբլի գումար կտա, կամ թե չէ ինքը համատեղության կարգով ուրիշ կանանց էլ կնայի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ որովհետև Լուսիկը չէր կարող իր «շառ» ոտքի համար այդքան ծանր կոնտրիբուցիա վճարել, ուստի Զուլումը շտապեց կատարել միակողմանի պայմանագրի երկրորդ մասը: Դա, իհարկե, նպաստեց հարաբերությունների սրմանը, ու քանի որ ոչ մի տնատեր չէր կարողանում տանել Զուլումի հարբեցողությունը, կռիվն ու հայհոյանքը, դրա համար էլ նորապսակները մեկ տարվա ընթացքում տասը տուն փոխեցին՝ միջին հաշվով կտրելով նույնքան կիլոմետր ճանապարհ:

Այդ ճանապարհորդությունների ընթացքում Լուսիկը կարևոր հայտնագործություններ էլ արեց: Նա, օրինակ, իմացավ, որ սիրեցյալ կնոջը կորցնելուց հետո Զուլումը մի քանի կանանց էլ է կորցրել, չմոռանալով ամեն անգամ նրանց գլխին քող գցել, իսկ իր կրծքին ամրացնել թղթե ճերմակ վարդ՝ ի նշան սիրո և հավատարմության:

Ու գուցե դեռ երկար շարունակվեր նրանց ճանապարհորդությունը, եթե վերջին դեպքը չլիներ: Հայտնելով, որ գիշերը չի գալու *(աշխատանքով ծանրաբեռնված լինելու պատճառով)*, Լուսիկը, սակայն շուտ է ավարտում աշխատանքը ու վերադառնում է տուն: Երկար ժամանակ դուռը բախելուց հետո տեսնելով, որ ոչ ոք չի բացում, ներս է մտնում լուսամուտից, վառում է լույսը ու հենց ուզում է նախատել ամուսնուն՝ զգայարաններից մեկի թուլության համար, երբ մահճակալի մոտ նկատում է կանացի մի զույգ կոշիկ...

Ահա այստեղից էլ գործողությունը տեղափոխվում է խմբագրություն:

Լուսիկը խմբագրաթյանը խնդրում է պարզել, թե ինչ իրավունքով են այդ կոշիկները քայքայում իր ընտանիքը, ու մատնացույց է անում դրանց տիրոջը՝ ոմն Միրայի:

Հաջորդ օրը մեզ մոտ է գալիս Միրա Վլադիմիրովնան, նայում է վերևից, զարմացած.

- Ինչպե՞ս եք ձեզ թույլ տալիս նման կեղտոտ մի պատմության մեջ խառնել ինձ, մի կնոջ, որը ամուսնացած է, սիրում է իր ամուսնուն ամենայն ջերմությամբ և երջանիկ է: Եթե իմ ամուսինը իմանա, գիտե՞ք ձեզ... և հայտնում է, որ մեր կյանքը մազից է կախված:

Մենք նրան թախանձում ենք չկտրել այդ մազը, ներողություն ենք խնդրում, ասում ենք, որ դա հավանաբար թյուրիմացություն կլինի և այս անգամ խմբագրություն ենք հրավիրում Զուլումին:

- Լուսիկից բաժանվեցի՞ք,- հարցնում ենք:

- Նակոնեց,- հաղթական բացականչում է Զուլումը,- կյանքս կերավ, ասում էր աշխատավարձդ տուն բեր:

- Իսկ սկզբից չգիտեի՞ք նրա բնավորությունը:

- Որտեղի՞ց, ջահելություն արեցի, վռազեցի: Բացի դրանից,- այստեղ ինժեներ Զուլումը ցածրացրեց ձայնը ու մտերմաբար շարունակեց,- ինձանից ձեզ խրատ, իմացեք, կնիկը...

Եվ որովհետև բոլոր դեպքերում խմբագրությունում նույնիսկ նման «այցելուներին» ապտակել չի կարելի, մեր զրույցը շարունակվեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Քանի՞ անգամ եք ամուսնացել:

- Երկու: Մեկը Ռոզան էր, որից երկու երեխա ունեմ, մյուսը Հայաստանը, որը վատ բնավորություն ուներ:

- Ինչպե՞ս թե, բա Լուսիկը:

- Ես նրա հետ չեմ ամուսնացել, ի՞նչ եք ասում,- բողոքում է Զուլումը,- ուղղակի ես տուն էի ուզում վարձել՝ փող չունեի: Լուսիկին ասացի, տուն վարձենք, կեսը ես տամ, կեսը՝ դու, մի սենյակում լավ հարևանների նման կապրենք: Նա էլ համաձայնեց:

- Իսկ Ֆենյա՞ն, Դուսյա՞ն, Սոնյա՞ն...

- Դե, նրանք «դաչնիկներ» են եղել, ես նրանց հետ կարգին չեմ էլ ամուսնացել, պարզապես եկել-գնացել են: Եվ հետո սա ի՞նչ բան է,- հանկարծ բարկանում է Զուլումը,- ինչո՞ւ եք ինձ նախատում, սիրել եմ, առել եմ, այո՛, բոլորին էլ, ուրեմն սերը արգելվա՞ծ է, դե մի պաշտոնական թուղթ տվեք, որ սերը արգելված է, տեսեք, թե ո՛նց եմ գրում ուր հարկն է...

Մենք որոշեցինք միառժամանակ ֆելիետոնի նյութ չդարձնել վերոհիշյալ պատմությունը, մտածելով, թե Զուլումը կզղջա ու կվերադառնա իր ընտանիքը: Բայց ահա վերջերս, սովորականի նման հարբած, մեզ մոտ եկավ ինքը՝ Զուլումը ու ձեռքի թուղթը թափահարելով բացականչեց.

- Նորից ամուսնացել եմ:

- Լուսիկի՞ հետ:

- Ի՞նչ Լուսիկ,- զարմացավ Զուլումը,- ախ, հա՛, նրա՞: Չէ, ջա՛նըմ, ի՞նչ եք ասում, Միրայի հետ:

- Ինչպե՞ս թե, բա նրա սիրեցյալ ամուսինը, երջանկությունը...

- Թողեց, թողեց, այն ժամանակ էլ մենք մոտ էինք: Հո ձեզ չէ՛ր ասելու: Դե, հիմա գրեք: Կարո՞ղ եք: Հենց որ գրեք՝ կբաժանվեմ ու կասեմ խմբագրությունը բաժանեց,- չարախնդում էր նա,- ես օրենքները գիտեմ:

Վերջացնենք. Զուլում կոչեցյալը հարբեցող է և անբարոյական:

Նա ամբողջությամբ անցյալի զզվելի մնացուկ է և արժանի է միայն մի բանի՝ հասարակության արգահատանքին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԶԵՂՉՈՎ ԵՎ ԱՌԱՆՑ ԶԵՂՉԻ

Ծայրից ծայր կարդացած միակ գիրքը խորապես ցնցեց Սամսոն Բերբերյանին: Դա «Բարեկենդանն» էր:

Գրքի ազդեցության տակ օրեր շարունակ նա թափառում էր փողոցներում, անձկությամբ նայում դռներին ու սպասում, թե ուր որ է մի կին դուրս կգա ու, ձեռքը դնելով ճակատին, կկանչի՝

- Ախպե՛ր, հե՛յ, ախպե՛ր:

- Ի՞նչ կա,- կհարցնի Բերբերյանը:

- Ախպե՛ր, ինչի՞ չես գալիս քո եղն ու բրինձը տանես, մենք քո ծառան հո չե՞նք... և այլն:

Ու ինքը տեսնելով, որ կնկա ծալքերից մեկը պակաս է, կվերցնի եղն ու բրինձը, հետո կնստի տանտիրոջ «Վոլգան» ու հայդե՛, դեպի տուն:

Իսկ տանտերը թող մեկ-երկու, մեկ-երկու անելով որոնի իրեն:

Բայց մի քանի ամիս թափառելուց հետո Բերբերյանը համոզվեց, որ ժամանակները փոխվել են, որ պակասավոր կանայք պակասել են, ու որոշեց ստեղծագործաբար մշակել «Բարեկենդանը»: «Չե՞ն կանչում, չե՞ն ուզում, որ տանեմ իրենց եղն ու բրինձը,- բարկացավ նա,- ոչինչ, ես կգտնեմ, ես ինքս կխնդրեմ, որ գան տանեն իրենց եղն ու բրինձը, իսկ հետո...»:

Մյուս օրը նա սեղմեց քաղաքի հարգարժան դասախոսներից մեկի զանգի կոճակը: Դասախոսը տանը չէր:

- Ահա թե ինչ, ընկերնե՛ր,- սենյակ մտնելով, հայտարարեց նա,- դուք հավանաբար արդեն գիտեք, որ քաղսովետի գործկոմում բացվել է մի նոր, այսպես ասած, շատ կարևոր բաժին: Նրա անունն է «Հատծառմասհատբաժ» այսինքն, ավելի պարզ ասած՝ «Հատուկ ծառայությունների մասնակի հատուցման բաժին»:

- Ի՛նչ եք ասում, հետաքրքիր է,- հետաքրքրվեցին դասախոսի մերձավորները,- բայց, ներեցեք, ի՞նչ կապ ունի դա մեզ հետ:

Համեստությունը զարդարում է մարդկանց, բայց տվյալ դեքում չարժե,- զգացվեց Բերբերյանը,- եթե ձեզ հետ կապ չունի, ապա էլ ո՞ւմ համար է բացված, ո՞վ չգիտե մեր սիրելի դասախոսի հատուկ ծառայությունները: Ես ավելի պարզ կասեմ, ինձ ուղարկել է ընկ...- ու նա մի այնպիսի ազգանուն ասաց, որ ներկա գտնվողները ոտքի կանգնեցին: - Այո՛, այո՛, հենց ինքը, կանչեց ու ասաց. «Գնա, իմացիր, գուցե որևէ բանի կարի՞ք ունեն, իսկ եթե ոչ, ցուցակով ինչ հատկացված է՝ հանձնիր»: Ասենք, ավելի լավ է դասախոսին պատմեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու եկավ առավոտյան ժամը 10-ին: Դասախոսը տանն էր: Տեղի ունեցավ ոչ պաշտոնական հանդիպում, որի ընթացքում դասախոսը իր շնորհակալությունը հայտնեց ուշադրության համար և հավաստիացրեց, որ ինքը այսուհետև ևս ոչ մի ջանք չի խնայի... և այլն:

Հետո հարցը ավելի կոնկրետացավ: Բերբերյանը նշեց այն թարմ ու բարձրորակ մթերքների քանակը, որը ըստ ցուցակի հասնում է դասախոսին:

- Ի՜նչ անհանգստություն,- սիրալիր առարկեց դասախոսը,- այդ մթերքներով խանութները լեփ-լեցուն են...

- Գները զեղչով են,- շտապեց բացատրել Բերբերյանը,- և հետո, գիտե՞ք ինչ, ցուցակները կազմված են արդեն, ու դրանց տակ ստորագրել է ինքը՝ ընկ... - նա տվեց նույն պատասխանատու ընկերոջ անունը,- եթե իմանա, որ մերժել եք, սաստիկ կվիրավորվի...

- Այդպիսի պարագայում... գնա՛նք,- վճռեց դասախոսը ու երկու բիդոն ձեռքին դուրս եկավ:

Քաղսովետի գործկոմի շենքի մոտ Բերբերյանը դասախոսից վերցրեց 59 ռուբլի գումար, նրան առաջարկեց սպասել ներքևում մինչև ինքը հաշվապահությունում հաշիվը ձևակերպի, ու սլացավ վերև:

Այստեղ ասենք, որ դասախոսի սիրտը կասկած ընկավ, նա կանգնեց հենց դռան մոտ ու սկսեց ուշադիր նայել բոլոր այցելուների դեմքերին: Բայց շուտով հայտնվեց Բերբերյանը ու, ձեռքին մի թուղթ թափահարելով, բացականչեց.

- Եղա՛վ: Հիմա դուրս գամ մի մեքենա բերեմ:

Ու դուրս եկավ:

Դասախոսը սպասեց մեկ ժամ՝ մատակարարը չեկավ, սպասեց երկու, երեք և այլ ժամեր, հետո հասկացավ կատարվածը և կորցրած դասաժամերն ու գումարը սգալով, դատարկ բիդոնները դնգդնգացնելով՝ վերադարձավ տուն:

Իսկ դրամաշորթը շարունակեց շրջագայությունները, եղավ բազմաթիվ մարդկանց տներում ու յուրաքանչյուրից շորթեց 50-60 ռուբլի՝ փոխարենը սիրալիրաբար առաջարկելով բիդոնները ձեռքներին կանգնել քաղսովետի գործկոմի մուտքի մոտ և ուշադիր դիտել այցելուներին:

Հետո սկսեց ավելի զգուշորեն գործել: Թերթերից ու ծանոթների միջոցով տեղեկանում էր, թե որտեղ ինչ մարդ է մահացել ու այդ տունն էր գնում՝ իր ծառայություններն առաջարկելու: Չէ՞ որ մեծ վիշտ կրած մարդիկ ավելի դյուրահավատ են:

Սի քանի օր առաջ իմանալով, որ Մարատի փողոցի բնակիչներից մեկը մահացել է, Սամսոն Բերբերյանը շտապում է այնտեղ ու կերկերուն ձայնով հարցնում.

- Մեռա՞վ:

- Մեռավ,- ասում է հանգուցյալի կինը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու մեկ էլ Բերբերյանը սկսում է հոնգուր-հոնգուր լաց լինել, պատմել, թե ինչպիսի բարեկամներ են եղել իրենք, մեկ-մեկ թվարկել հանգուցյալի արժանիքները: Բանն այնտեղ է հասնում, որ խեղճ կինը ստիպված սկսում է հանգստացնել անծանոթ հյուրին, օղի է մատուցում, մխիթարում է:

- Իսկ ես, ահա՛, մինիստրի մոտից եմ գալիս,- օղին խմելուց հետո դողդոջուն ձայնով հայտնում է Բերբերյանը,- նոր են զգում, թե ո՛ւմն են կորցրել, ծնկներին են խփում, բայց ի՛նչ... Է՛խ, է՛խ, և ի՛նչ մարդ էր: Երեկ հենց ինքը՝ մինիստրը, կանչեց, թե գնա տես ինչի կարիք ունեն... Ջղայնացա, հենց երեսին ասացի՝ «Մոլոդեց որ գլխի ընկար»: Բայց դե ի՞նչ, եկա, մի 60-70 ռուբլի տուր, քույրի՛կ, զեղչված գներով... վա՞ղը գամ... գեղեցիկ...

Հաջորդ օրը Բերբերյանը ձերբակալվեց, և շրջանի միլիցիայի բաժին հրավիրված նրա զոհերը, որոնց անունները իրենց հասկանալի պատճառով չենք ուզում տալ, մի քանի մարդկանց մեջ իսկույն ճանաչեցին նրան:

Ահա թե ուր հասցրեց Սամսոն Բերբերյանին նրա կարդացած միակ գիրքը՝ «Բարեկենդան»-ը: Այնինչ, այդպես չէր լինի, եթե նա ուրիշ գրքեր էլ կարդար և մասնավորապես ուսումնասիրեր քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, որի համաձայն կդատեն նրան իբրև խարդախի ու խաբեբայի և, ամենայն հավանականությամբ, առանց որևէ զեղչի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«ՈՒ ՉԵՄ ՏԱՐԲԵՐՈՒՄ...»

«... Ո՞րն է սիրածս...»
Ս. Բարակ

- Աղաչում եմ, միայն մեկ վայրկյան:

Երիտասարդի առջևից քայլող աղջիկը մեկ վայրկյան կանգնեց:

- Դու իմ սրտում նստած ես,- տխրագին ասաց երիտասարդը:

- Ե՞ս,- ապշեց աղջիկը, ակամա նայելով տղայի կրծքի այն հատվածին, որտեղ սովորաբար սիրտն է լինում:

- Ես քեզ ման եմ եկել ողջ կյանքում: Դու հաճախ եկել ես իմ երազին, ես լսել եմ քո բացականչը: Ասա, աղաչում եմ, դու էլ ինձ երազում չե՞ս տեսել:

- Ոչ,- այդ մտքից սարսափելով, ասաց աղջիկը:

- Ես պետք է ասեմ՝ թող կորչի ամոթխածությունը, կեցցե սերը: Ես քեզ սիրում եմ:

Այս տողերը կարդացող դպրոցական, ուսանող, բանվոր ծառայող, մատուցող-բուֆետապան, որոշակի և անորոշ զբաղմունքի տեր բազմաթիվ ջահել, տարեց ու ծեր աղջիկներ ու կանայք, անկախ դեմքի գույնից ու դավանանքից, զայրացած կբացականչեն...

- Ա՜... լսել ենք:

Հայտնում ենք նրանց, ովքեր չեն լսել: Զրույցը տեղի է ունենում, մեկ կողմից, որևէ կնոջ, մյուս կողմից՝ Սաղո Եփրեմի Կոկոսյանի միջև, որը ոտանավոր գրողների շրջանում կրում է «Բարակ» կեղծանունը:

Այնուհետև պատմությունը շարունակվում է հետևյալ կերպ. ավելի հաճախ, կամ համարյա թե միշտ՝ աղջիկը կոպտում է կամ լռին արհամարհանքով հեռանում: Բայց պատահում են նաև կանայք, որ մեկ վայրկյանից ավելի են կանգնում:

Եվ սկսվում է նրանց տառապանքը:

- Երեսունհինգ տարի քեզ եմ սպասել: Վերջապես գտել եմ: Ուզեմ տուն, դրամ, ժողովածու: Բայց ինչի՞ս են պետք այդ բոլորը, երբ չկաս դու,- լալիս է Բարակը,- նայիր ինձ, մի՞թե ես իրավունք չունեմ սիրելու կամ սիրվելու:

Կինը նայում է երիտասարդին: Խղճում է:

- Վաղը մայրիկիս հետ կգանք քո տուն,- մեկ վայրկյանից ավելի կանգնած կնոջը ասում է Բարակը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մյուս օրը 65-70-ամյա մայր Բարակը արդեն հարյուրիքսերորդ ռեյսն է կատարում ռեսպուբլիկայի և քաղաքի բնակարաններից մեկը ևս, ծանրորեն ասում է՝ «խնամի ջան» ու թույլտվություն է ստանում, որ որդին ազատ ելումուտ ունենա նոր հայտնաբերված տանը:

Բարակը ուրիշ ոչինչ չի ուզում՝ ուտում է զոքանչի հավերի սերունդներին, փոխարինաբար դրամ է խնդրում և ազատ ժամանակն օգտագործում ֆելիետոնի առաջին հատվածը նոր միամիտների համար կրկնելով:

Ձվերի և հավերի արագ լիկվիդացումից հետո կինը կամացուկ հարցնում է Բարակին, թե երբ են ամուսնանալու:

- Երբ որ երեխա ունենանք,- պատասխանում է Բարակը:

- Առանց ամուսնանալո՞ւ,- զարմանում է կինը:

- Ամուսնությունը վերջում:

Այստեղ էլ պատմությունը երկու ընթացք է ստանում. կա՛մ աղջիկը վերջապես ճանաչում է իր «փեսացուին» ու վռնդում է նրան, կա՛մ էլ հավատում ու խաբվում է:

Երկու դեպքում էլ, որոշ ժամանակ անց, Բարակը սկզբունքի պաշտպանության նշանաբանով հեռանում է անհայտ ուղղությամբ, նոր ծանոթի հետ փոխելով նաև բնակավայրը:

Ու մեկ էլ հայտնվում է Մոլոկովի փողոցի № X տանը, սենյակ է վարձում, իրեն հայտարարում «Շիրակի քնարերգու», և երկու-երեք օրում սեր խոստանում թաղամասի դեյրա հագնող բոլոր քաղաքացիներին:

Դեյրա հագնող բոլոր քաղաքացիները մեկ վայրկյան անց հեռանում են նրանից կամ վռնդում նրան, բացի մեկից՝ Ռիմա անունով մի բանվորուհուց, որին Բարակն ասում է.

- Երեսունհինգ տարի քեզ եմ սպասել...

- Էլի պիտի սպասես, մինչև լավ ճանաչենք իրար:

Կսպասեմ՝ թեկուզ երեք օր,- երդվում է Բարակը,- դու իմ սրտում նստած ես:

Ժամկետը բավարար է լինում, որովհետև հենց հաջորդ օրը պատահաբար աղջկա ձեռքն է ընկնում մի նամակ, որով Մոսկվայի մարզի Լոսինոպետրովսկ քաղաքի բնակչուհի Զինա Ցվետկովան Բարակին հիշեցնում է, որ ստոր մարդ է նա: «Իմ երեխային քո ալիմենտն էլ պետք չէ,- գրում է Զինան,- ես ապահարզան եմ պահանջում: Դու խորհուրդ ես տալիս, որ ես էլ անձնագիրս ոչնչացնեմ, որտեղ քո անունն է, և դրանով գործը համարեմ ավարտվա՞ծ: Այսինքն՝ այնպես, ինչպես դո՞ւ ես արել: Ո՛չ, չեմ կարող, ինձ այդպես չեն սովորեցրել ո՛չ հանգուցյալ ծնողներս, ո՛չ էլ այն դպրոցը, ուր սովորել եմ ես»:

Հաջորդ երկու օրը Ռիման նվիրում է Բարակի կենսագրության հակիրճ ուսումնասիրությանը և պարզում, որ Զինայից հետո Բարակն ամուսնացել է ևս երկու անգամ և նույնիսկ դատվել է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էլ չեմ կարող համբերել,- չորրորդ օրն ասում է «Շիրակի քնարերգուն»,-երջանկացրու ինձ, իմ անգին: Մի՞թե վերջապես չճանաչեցիր ինձ:

- Ճանաչեցի,- հայտնում է աղջիկը, ջերմ բարևներ է հաղորդում նրա երեք կանանցից ու հենց տեղում էլ համոզվում, որ Բարակը միայն քնքուշ բանաստեղծ չէ: «Քնարերգուն» ծեծում է աղջկան ու թողնելով ուշաթափ վայր ընկած, հեռանում:

Մի քանի օր անց այդ կապակցությամբ թաղային կոմիտեի հրավիրած ժողովում Սաղո Կոկոսյան-Բարակը հանդես է գալիս ընդարձակ ելույթով և հայտնում, որ թաղային կոմիտեն իրավունք չունի քննելու իր վարքագիծը, քանի որ ինքը իբր պատասխանատու աշխատող է:

Իսկ երբ Ռիման պատմում է նրա հետապնդումների և խուլիգանության մասին, Բարակը նախատինքով ասում է.

- Ո՞վ է այս մանկիկը: Չեմ ճանաչում: Ինչպե՜ս, ես հետապնդե՞լ եմ ձեզ: Եվ ինչպե՞ս չեք ամաչում: Ես ձեզ հայր կսազեմ, ընկեր Ռիմա:

Բայց թաղամասի բնակչուհիները Բարակի այլանդակ վարքն ապացուցող նորանոր փաստեր են բերում և թաղային կոմիտեն որոշում է դատարկապորտության, այլասերվածության և խուլիգանության համար Բարակին վտարել քաղաքից:

- Ի՞նձ վտարել,- ծիծաղում է քնարերգուն,- թե ուզենամ, հենց վաղը ձեզ բոլորիդ կվտարեմ՝ թաղային կոմիտեի անմիջական ղեկավարությամբ: Կենսագրությո՞ւնս եք ուսումնասիրում: Ինքս կպատմեմ իմ մասին...

Չուզեցինք այդ հոգնությունը թողնել Բարակին: Նա առանց այն էլ վերջերս շատ է ծանրաբեռնված, որովհետև սիրո բացատրության միաժամանակյա սեանս է տալիս մի շենքում տեղավորված չորս հիմնարկի աշխատակցուհիների հետ:

Եվ որոշեցինք գրել այս ֆելիետոնը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

«Երսննդառ»-ի №... խանութում ասեղ գցելու տեղ չկար: Սննդամթերքներով լի պարկերի, արկղերի, տակառների, վաճառասեղանների վրա և ետևում հավաքվել էին բազմաթիվ ու բազմատեսակ մկներ և կամացուկ ճստճստում էին՝ հայացքները չհեռացնելով պահեստային բաժնի դռնից:

Քիչ անց դռան ներքևի կամարի տակից դուրս եկավ Երևանի մկների ցեղապետը, պատկառելի մի առնետ:

Տիրեց քար լռություն:

- Հարգելի առնետներ և մկներ,- սկսեց ցեղապետը,- ես ձեզ այստեղ եմ հրավիրել մի թեթև բանկետի: Խանութը նոր ու թարմ ապրանք է ստացել: Բայց դա առիթ է միայն: Այս բանկետը մեզ հնարավորություն կտա կարծիքներ փոխանակելու, ամփոփելու անցյալ տարվա մեր աշխատանքները ու որոշելու մեր անելիքները առաջիկայում՝ քաղաքային պրոֆիլակտիկ դեզինֆեկցիոն կայանի աշխատանքային պլանի լույսի տակ:

Այնուհետև զեկուցողը պատմական մի թեթև էքսկուրս կատարեց՝ մեջբերումներ անելով համապատասխան գրականությունից՝ մկների բարեկեցության աճը կոնկրետ փաստերով ապացուցելու համար:

- Մեր նախնիներն էլ ժողովներ հրավիրել են: (Տե՛ս Խնկո-ապեր, Ընտիր երկեր, «Մկների ժողովը»): Բայց ի՞նչ ժողովներ են եղել դրանք: Առանց արցունքի չես կարող հիշել հետևյալ տողերը.

- Սով էր, սով էր Մկստա՛ն...

Ժողովականների շարքերով զսպված մի հեծկլտոց անցավ...

- Ահա թե ինչպես են ապրել մեր նախնիները: Բայց բավական է հիշենք դառն անցյալը: Թույլ տվեք ձեր անունից, մեր ողջ ցեղի անունից բաժակ բարձրացնել, խմել Երևանի պրոֆիլակտիկ դեզինֆեկցիոն կայանի ողջ կոլեկտիվի կենացը, որն այսօր ոչ մի ջանք չի խնայում մեր ուրախ ու ապահով կյանքի համար:

Աջ տոտիկով լռեցնելով ներկաների ցնծագին պոռթկումը, ցեղապետը շարունակեց.

- Դեզինֆեկցիոն կայանում գնալով մեզ ավելի ու ավելի բարձր են գնահատում: Եվ դա պետք է օրինական հպարտությամբ լցնի մեր սրտերը: Համոզվելու համար թույլ տվեք կարդալ կայանի շենքի մեր լիազոր Ճստիկյանի զեկուցագիրը:

«Հնարավորին չափ գաղտնի: Երեկ ես ունկնդիր եղա մի խոսակցության, որը տեղի էր ունենում ինձ անծանոթ մի ղեկավար ընկերոջ և կայանի դեռատիզացիոն բաժնի վարիչ, հարգարժան Դամբարյանի միջև: Բերում եմ այդ զրույցի սղագրությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Անծանոթ քաղաքացի- Ի՞նչ միջոցներով եք ոչնչացնում մկները:

Դամբարյան- Երկու՝ թունավորում և մեխանիկական միջոցներ: Թունավորելու դեպքում, դե ձեզ համար պարզ է, մկների բանուկ երթուղիներում և խաչմերուկներում թունավոր նյութեր ենք դնում, որից նրանք պարտավոր են ոչնչանալ: Ինչ վերաբերում է մեխանիկական միջոցներին, ապա դրանց թվին կարելի է դասել թակարդները, գիլիոտինը...

Անծանոթ քաղաքացի - Ի՞նչ:

Դամբարյան - Գիլիոտինը: Այն, որ թխկալով խփում է մկների գլխին: Մեխանիկական միջոցներից են նաև ցախավելը, հատակ լվանալու փայտը, զանազան կոշիկներ, կրկնակոշիկներ, փայտի կտորներ որոնցով բնակիչները հարվածում կամ հալածում են մկներին: Բոլոր այդ միջոցներով անցյալ տարի մենք ոչնչացրել ենք 26 հազար մուկ, որոնցից 4 հազարը առնետներ են, իսկ 22 հազարը բնակարանային մկներ ու մկնիկներ:

Անծանոթ քաղաքացի - Ինչպե՞ս թե, ձեզ հարյուր հազար ռուբլի գումար են հատկացրել, իսկ դուք ոչնչացրել եք ընդամենը 26 հազար մո՞ւկ:

Դամբարյան - 26 հազարը հաշվել ենք, բայց չէ՞ որ, դրանցից բացի, բազմաթիվ մկներ, մեր կարծիքով, հաշմանդամ են դարձել, զրկվել են մարմնի տարբեր մասերից, անհետ կորել են կամ անկողնին են գամվել թունավոր նյութերի ազդեցության տակ: Մենք կրճատել ենք նրանց կյանքի ժամկետը:

Անծանոթ քաղաքացի - Լավ, ընդունենք, որ եղած տվյալներից էլ կրկնակի քանակությամբ անհետ կորածներ ու հաշմանդամներ են եղել: Ամենաառատ զիջումներով անգամ ձեր մի մուկը փասարեն արժե 70 կոպեկ:

Դամբարյան - Այո՛, արժե: Խնդրում եմ հաշվի առնել, որ այսօրվա մուկը երեկվա մուկը չէ: Այսօր նրա պահանջները ուրիշ են: Եթե տարիներ առաջ հացի մի չորացած կտորով կարելի էր նրան հրապուրել դեպի թակարդը, ապա այսօր դրա համար միայն բարձրարժեք սնունդ է հարկավոր: Պատկերացնո՞ւմ եք. թարմ ձկներից միայն իշխան են ուտում, բախտակի, գեղարքունու, կարմրախայտի վրա ոչ մի ուշադրություն չեն դարձնում: Էլ չեմ խոսում կողակի, վոբլայի և կիլկայի մասին: Ապխտած ձկների շարքից գերադասում են գլուխը կտրած ու որովայնը հանած-մաքրած ապխտաձուկը:

Դրանից բացի, մենք նրանց կերակրում ենք ձավարով, մսով, պանրով և երշիկով, հասկանալի է, որ դրանք բոլորն էլ առաջին տեսակի պետք է լինեն: Ուրիշ է հիմա մկների ճաշակը: Կարճ ասած, անցյալ տարի մկներին կերակրելու համար գնել ենք տասնյակ հազարավոր ռուբլիների սննդամթերք:

Անծանոթ քաղաքացի - Այսինքն, ինչպե՞ս թե կերակրելու համար: Ինչո՞ւ եք կերակրում:

Դամբարյան - Ես ասացի կերակրո՞ւմ ենք: Կներե՛ք, սխալվեցի, ուզում էի ասել հրապուրում ենք...

Մկների հավաքույթի մասնակիցները քրքջացին, իսկ մեկը ռեպլիկայի կարգով նետեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ճիշտ է ասում, որ կերակրում են: Ես առողջապահության մինիստրության պլանբաժնի վարիչի դարակում եմ գրանցված: Այնտեղ մի թակարդ են դրել, ուր ամեն օր ամենահամեղ խորտիկներ են լինում: Ես ուտում ու դուրս եմ գալիս, որովհետև դռնակը չի փակվում: Հաջորդ օրը նրանք նոր խորտիկ են դնում:

- Դա առաջ էր թակարդ, ընկե՛ր,- ընդմիջեց ճաշարանների տրեստի գրասենյակում բնակվող մի մուկ - հիմա դրա նման մի քանի հազար թակարդներ դրված են տարբեր հիմնարկներում և հանդիսանում են մկնային ինքնասպասարկման անվճար ճաշարաններ:

Ցեղապետի զանգից հետո կրկին լռություն տիրեց:

Անծանոթ քաղաքացի - Իսկ դուք գիտե՞ք, որ Երսնդառի №... խանութից ձեր այդ երախտամոռ մկները գողացել են 700 ձու:

Դամբարյան - Իհարկե, գիտե՛մ, մենք փայլուն ինֆորմացիա ունենք: Բացի դրանից, առնետները հարձակվել են Չայկովսկու փողոցի մի տան երկամյա բնակիչ Ստյոպիկի վրա և կծել են նրան ու արդեն մի քանի ամիս է, ինչ հետապնդում են Լենինի պողոտայի 2-րդ նրբանցքի մի այլ տան բնակիչ Ավետիսյանին՝ նույն նկատառումներով:

Բայց մենք ի՞նչ կարող ենք անել հարգելի՛ս: Անցյալ տարի պետք է մշակեինք 158 միլիոն քառակուսի մետր տարածություն: Բյուջեն չբավականացրեց, մշակեցինք 120 միլիոնը: Այս տարվա պլանը ևս 120 միլիոն է: Իսկ գիտե՞ք, որ դա կազմում է մեր քաղաքի մշակելի տարածության 10 տոկոսը:

Դե, հիմա դո՛ւք ասեք, ի՞նչ անենք: Մենք մի տեղ մշակում ենք, մյուս տեղերում մկներն աճում են, մենք նրանց համար այստեղ թունավոր նյութեր ենք դնում, իսկ նրանք ուխտադրժորեն փախչում են այլ անվտանգ ու անմշակ վայրեր...

Ցեղապետի հայտարարությունն այն մասին, որ այս տարի մշակելի տարածությունը 38 միլիոնով պակասել է, հրճվանքի նոր պոռթկում առաջացրեց մկների շրջանում: Ցեղապետը կրկին բարձրացրեց տոտիկը ու ասաց.

- Հայտարարության կարգով ուզում եմ ասել, որ Երևանի արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն այսօր թակարդ չի արտադրում և դեռատիզացիոն բաժինը ստիպված հայտեր է ներկայացրել Միության այլ քաղաքների: Այնպես որ ցնծա՛ Մկստան:

Ու Մկստանը ցնծաց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԵՐԿՈՒ ՏՈՒԳԱՆՔ

Սամսոն Կճոզյանը քայլում էր փողոցով հաճույքից կկոցելով աչքերը ու մտածում՝ «Իսկապես որ ոտքով ման գալը վատ չէ»: Երկինքն անամպ էր, արևը ժպտում էր բնակարան ստացած մարդու պես: Հանդիպակաց մայթում մի մարդ վարդեր էր վաճառում: Սամսոն Կճոզյանը անասելի ցանկություն զգաց մի փունջ գնելու: Այդ նպատակով առաջին քայլերն էր անում, երբ ուժեղ մի սուլոց լսվեց:

Կճոզյանը ետ նայեց: Հատու քայլերով նրան մոտեցած միլիցիոները պատվի առավ և հրճվանքից դողացող ձայնով ասաց.

- Քաղաքացի, դուք տուգանված եք:

- Ինչո՞ւ,- մռայլվեց Կճոզյանը:

- Փողոցային երթևեկության կանոնները խախտելու համար,- բացատրեց միլիցիոները:

- Բայց ես հանկարծակի... վարդ,- փորձեց արդարարնալ Կճոզյանը:

- Կանոնագրքում նման բաներ չկան,- վճռական հնչեց միլիցիոների ձայնը,- վճարեցեք, խնդրեմ, տուգանքը և ստացեք անդորրագիրը:

- Ի*նչ,- Կճոզյանը սկսեց զայրանալ,- լա՛վ եք, երկու քայլի համար 30 կոպեկ, գուցե ձեզ թվում է, թե այդքան հե՞շտ է դրամ վաստակելը...

- Խնդրում եմ չվիճել:

- Բայց դուք ի՞նչ ձևով եք... - համբերությունից դուրս եկավ Կճոզյանը,- ձեզ հետ խոսում է մի կարևոր ձեռնարկության դիրեկտորը, ես ձեզ...

Հավանաբար սպառնալիքն ազդեց, որովհետև միլիցիոները մի փոքր շփոթվեց, բայց ի պատիվ իրեն, այնուամենայնիվ, մրմնջաց.

- 30 կոպեկ:

- Այո՛, հենց 30 կոպեկ, բայց ես չեմ կարող վճարել, պա՞րզ է, կոպեկները փողոցում չեն թափված: Այո՛:

Ու գնաց այս անգամ արդեն առանց խանգարելու փողոցային երթևեկության կանոնները՝ միլիցիոների զարմացած, վշտահար հայացքի տակ:

- Հետաքրքիր մարդիկ են,- չէր հանգստանում Կճոզյանը, այնքան հեշտությամբ էլ ասում են՝ երեսուն կոպեկ... մենք գիշեր-ցերեկ աշխատում ենք... Ասենք մեղքը իմն է, ո՞վ էր ստիպում ոտքով ման գալ: - Նա հանգստացավ միայն այն ժամանակ, երբ դիմացը երևաց իր ձեռնարկությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կճոզյանը ետևի դռնից առանձնասենյակ մտավ, արմունկով սեղմեց չգիտես ինչու մահուդի տակ խնամքով թաքցրած զանգի կոճակը և դռների մեջ հայտնված քարտուղարուհուն շշնջաց.

- Սպասողներ շա՞տ կան:

- Կլյաուզնիկներն են,- արհամարհանքով ժպտաց քարտուղարուհին,- ամեն մեկի ձեռքին մեր արտադրանքի մի-մի նմուշ կա: Ասում են՝ անորակ է:

- Ես չկամ, օբյեկտներում եմ, գլուխ չունեմ, պա՞րզ է:

- Դե, իհա՛րկե, պարզ է...

- Մերոնց կանչիր ետևի դռնից:

Քիչ հետո ներս մտավ ձեռնարկության գլխավոր հաշվապահ Ջիլյանը և լուռ մի քանի թղթեր դրեց սեղանին: Կճոզյանը ակներև բավականությամբ (այդ նրա աշխատանքային ամենասիրած պահն էր) ստորագրեց մի քանիսը, մյուսների վրա շեղակի ինչ-որ բաներ գրեց, ապա հարցրեց.

- Ուրի՞շ:

- Ուրիշ... - կմկմաց հաշվապահը,- երկաթուղային կայարանի ապրանքային բաժնի պատմությունն է, էլի՛, ապրանքը ուշացումով ենք տեղափոխել, մի մասն էլ անցյալ տարվանից դեռ այնտեղ թափված է, տուգանք են պահանջում:

- Ինչքա՞ն է...

- Դե, ոնց ասեմ... 30 հազար ռուբլի:

- Վա՛յ, Գաբրիել, Գաբրիել, դու երբեք մեծ մասշտաբի աշխատող չես դառնա:Մի քանի հազարի համար ընկճվել ես: Պադումայեշ, մեծ բան է:

- 30 հազար...

- Այո՛, հենց 30 հազար,- շարունակեց Կճոզյանը,- դատարկ բան է: Վերջապես, ի՞նչ է 30 հազարը, երբ մենք միլիոնների հետ գործ ունենք, վա՛յ, Գաբրիել, Գաբրիել,- նորից ծիծաղեց նա,- ես էլ կարծեցի ստուգում է... պադո՛ւմայեշ...

- Ախր մեր ձեռնարկության եկամուտից է...

- Դատարկ բան է, դատարկ բան, մեկ է, պետության գրպանն է գնում, բեր ստորագրեմ,- բարեհոգաբար ժպտաց Կճոզյանը և իր երկար ու գեղեցիկ ստորագրությունը դրեց տուգանքի թղթի վրա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿՐԱԿԸ ՁՄԵՌՎԱ ՎԱՐԴՆ Է

Գրեցինք այս վերնագիրը ու միանգամից զղջացինք: Մի՞թե հնարավոր չէ կրակը համեմատել մի այնպիսի ծաղկի, ասենք անթառամի հետ, որը ձմեռ թե ամառ կա: Իսկ վարդը... վարդը Երևանում իսկի մայիսին էլ չի լինում: Հետո մտածեցինք, որ վերնագիրը սխալ չի ընտրված: Իրոք, կրակը ձմեռվա վարդն է, որովհետև հազվագյուտ է վարդի պես:

Ըստ որում, այն էլ ասենք, որ հենց հիմա զգում ենք ընթերցողի տրամադրությունը: Նրանք, ում տանը այսպես թե այնպես ջեռուցման ռադիատորները տաք են, քմծիծաղ են տալիս ու ասում.

- Ֆելիետոնիստնե՛ր են, է՛լի, տես ինչքա՛ն են չափազանցում:

Իսկ նրանք, ովքեր հիմա մրսում են, ձեռնոցներով բռնել են մեր թերթն ու, ատամները մեղմորեն խփելով իրար, ասում են.

- Մ...մե՛ղմ են գրում, մ...մե՛ղմ: Չտեսանք մի ատամով բան գրեին:

Այսօր ձեզ համար չենք գրում, ո՛վ բնակարանում տաքություն ունեցող ընկերներ, այլ կատարում ենք մեր թերթի որոշ մրսող ընթերցողների խնդրանքը:

Մրսող ընթերցող Վարդանյանը խմբագրություն ուղարկած իր նամակում գրում է. «Գոնե դուք մի այնպիսի բան գրեք, որ հալեցնի մեր բնակկառավարիչ Կարապետյանի սրտի սառույցը: Նրա սրտի սառույցը որ հալվի, սիրտը կջերմանա, ու գուցե մտածի նաև մեր բնակարանների ջերմության մասին»:

Կարապետյանն այստեղ հավաքովի կերպար չէ, իհարկե, այլ միայն Լենինյան շրջանի № 5 բնակկառավարչության կառավարիչը: Բայց նրա վերաբերմունքը բնակիչների կարիքների նկատմամբ այնքան նման է քաղաքի մի շարք բնակկառավարիչների վերաբերմունքին, որ նրան դարձնում է կերպար ու մարմնավորում նրա մեջ բոլոր այն կառավարիչներին ու շրջսովետների գործկոմների աշխատողներին, շինարարական կազմակերպությունների բոլոր այն ղեկավարներին, ովքեր նստել են հիմա տաքուկ առանձնասենյակներում, հանել են նույնիսկ պիջակները ու ասում են մրսող քաղաքացիներին.

- Դե լավ, լավ, ի՞նչ եք պանիկա գցել: Արևոտ Երևանն է, է՛լի, ոնց որ Սիբիրում լինեք: Հանգիստ գնացեք, կտաքացնեն ձեր շենքերը:

Ծերեթելի փողոցում գտնվող 12 շենքի բնակիչներ այս ու նման խոսքեր լսում են արդեն երրորդ ձմեռը: Հինգ շենքերի բնակիչներ լսում են երկրորդ անգամ, իսկ վեց շենքերի բնակիչներ՝ առաջին անգամ: Փողոցի 23 շենքերն էլ այսօր չեն տաքացվում: Փոխարենը խոսքեր, գրագրություններ, հրամաններ, հրահանգներ որքա՛ն ուզեք: Հաշվումները ցույց են տվել, որ եթե այդ կաթսայատան շինարարության վերաբերյալ եղած ողջ գրականությունը հավաքվեր ու օգտագործվեր ըստ արժանվույն, այսինքն՝ որպես... վառելիք, ապա այս տարի լիուլի կբավարարեր բնակիչների պահանջը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց այդպիսի բան չի եղել: Փոխարենը եղել են երկիմաստ խոստումներ: Վերոհիշյալ բնակկառավարիչ ընկ. Կարապետյանն, օրինակ, մի անգամ դեռ ամռանը բնակիչներին ասել է.

- Չմտածեք: Էնպիսի պառավոյ ատապլենի պետք է սարքեմ, որ չկարողանաք ձեռք տալ:

- Ուռա՛, կեցցե՛ ընկ. Կարապետյանը,- բացականչել են Ծերեթելի փողոցի խանդավառ բնակիչները, բոլորովին չհասկանալով ընկ. Կարապետյանի սրամտությունը:

Հիմա են հասկացել, երբ արդեն ուշ է: Ռադիատորներին իսկապես հնարավոր չէ ձեռք տալ, որովհետև... սառած են:

Բայց իրենց բնակկառավարչի հումորի մեծ զգացումով հիանալու փոխարեն, բնակիչները չգիտես ինչու բողոքում են: Եվ ոչ միայն նրանք: Անիրավացիորեն բողոքում են նաև այդ թաղամասում գտնվող դպրոցի աշակերտները և ուսուցիչները: Մե՛ծ բան է. աշակերտները ֆիզկուլտ դասին օդակներից կախվում են վերարկուներով: Հետո՞ ինչ. չէ՞ որ փոխարենը աշխարհագրության դասին նրանք փայլուն պատկերացում կարող են ունենալ էսկիմոսների կյանքի մասին:

Գուցե նրանք չգիտե՞ն, թե ովքեր են այդ բոլոր նորամուծությունների հեղինակները, որպեսզի կարողանան ինչպես հարկն է երախտապարտ լինել նրանց: Եթե այդպես է, ասենք, Հայկական ՍՍՌ շինարարության մինիստրության 8-րդ տրեստի կառավարիչը և տրեստի 3-րդ շինմոնտաժային վարչության պետը: Նրանք այնքան համեստ են, որ երբեք չեն լինում իրենց օբյեկտում՝ կաթսայատանը, չեն տեսնում բնակիչներին: Չէ՞ որ նրանց տեսնելով բնակիչները թերևս ծափահարեն (ձեռքները տաքացնելու համար): Նրանք գերադասում են համեստորեն մի կողմ կանգնել և ծափահարությունները թողնել բնակկառավարիչներին, որպես նորամուծությունների հեղինակների:

Եվ իսկապես՝ կորչեն քարացած օրենքները: Ո՞վ է ասել, թե ձմռանը պետք է անպայման սենյակները տաքացնել կամ դաշնամուր նվագել առանց վերարկուի: Ինչո՞ւ նորություն չպետք է մտցնել, ինչպես արել են Լենինյան շրջանի երաժշտական դպրոցում: Այնտեղ, ի տարբերություն մյուս՝ կոնսերվատիվ դպրոցների, աշակերտները դաշնամուր են նվագում վերարկուներով, իսկ ջութակահարները կրում են ձեռնոցներ:

Եթե հարմար էլ չէ, ապա անկասկած օրիգինալ է:

Ի միջի այլոց, օրիգինալության մասին: Սովորական շոգեջեռուցումը համարելով հնացած, իր դարն ապրած մի ձև և մտածելով սենյակները ռադիատորների տխուր ներկայությունից ազատելու մասին, շինարարական կազմակերպությունները, ճարտարագետների օգնությամբ, Շիրակի փողոցի մի քանի շենքեր կառուցել են այն հաշվով, որ դրանք տաքացվեն օդով: Դա տեղի է ունենալու հետևյալ կերպ: Տաք օդը պետք է գա ու մտնի ոչ թե ռադիատորները, այլ ուղղակի սենյակի պատերի մեջ: Այնտեղ իր գործը տեսնելուց հետո տաք օդը պարտավոր է սենյակի պատին բացված փոքրիկ, կլոր անցքից ներս մտնել ու տաքացնել սենյակը: Մենք եղանք մի այդպիսի բնակարանում, որը գտնվում էր Շիրակի փողոցի № 10 շենքում: Ըստ պլանի, այնտեղ ամեն ինչ պետք է կարգին լիներ: Իսկապես, սենյակում ռադիատորներ ու խողովակներ չկային:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գո՞հ եք,- հարցրինք տանտիրոջը:

- Ի՞նչ առումով,- զգուշորեն տեղեկացավ նա՝ դժկամությամբ տաք ծածկոցի տակից հանելով աջ ձեռքը:

- Ջեռուցման առումով,- ասացինք մենք,- ռադիատորներ չկան և այլն:

- Ոչինչ, յոլա ենք գնում,- պատասխանեց նա ու բարձրացավ տեղից:

Մենք նոր զգացինք, թե ինչու չէր ուզում բարձրանալ: Շրջահայաց տանտերը, ծածկոցը գցելով ոտներին, «քուրսի» էր արել՝ էլեկտրական վառարանի օգնությամբ:

- Իսկ տաք օ՞դը... անցքից,- հանկարծակիի եկած մրմրնջացինք մենք:

- Օ՜, ապահով եղեք, անցքը կա,- ասաց նա ու մեզ մատնացույց արեց պատի մի կլոր կտրվածք, որը զանազան լաթերով խցանված էր:

- Փչո՞ւմ է,- հարցրեցինք մենք:

- Այն էլ ինչպե՜ս,- արձագանքեց տանտերը՝ նորից տեղավորվելով էլեկտրական վառարանի վրա,- փորձեցե՛ք:

Ոչ առանց դժվարության հանեցինք լաթերը: Իսկապես, պատի անցքից փչում էր բավականին զով, սառը օդ: Ամռանը այստեղ չտեսնված հաճելի կլինի:

- Երևի շինարարներն էլ են այդպես մտածել,- ասաց տանտերը,- դրա համար էլ չեն շտապում ցանցը կարգավորել:

Մենք բանավոր ցտեսություն ասացինք, որպեսզի մարդը քաղաքավարությունից ստիպված նորից ձեռքը չհաներ «քուրսիի» միջից, ու գնացինք նմանատիպ ջեռուցումով մի ուրիշ շենք՝ Շիրակի փողոցի նրբանցքում: Այնտեղ լսեցինք մի սարսափելի հետաքրքիր զրույց, որը տեղի էր ունենում բնակկառավարչության աշխատողի և մի բանվորի միջև: Մի զրույց, որն այդ օրերին հնչում էր քաղաքի բազմաթիվ շենքերում:

- Սիրելի ընկեր բնակիչ,- ասում էր կառավարչության աշխատողը ազդեցիկ ձայնով,- դուք երկու օր ուշացրել եք ջեռուցման վարձը: Ինտելիգենտ մարդ եք, չէի սպասում:

- Բայց ընկեր, ի՞նչ ջեռուցման վարձ, մեր բնակարանը բոլորովին չի տաքացվում:

- Հետո՞ ինչ:

- Ուրեմն ինչո՞ւ պետք է ջեռուցման վարձ տամ:

- Պարտավոր եք: Օրենք կա:

- Բայց օրենքը չի՞ ասում, որ շենքը պետք է տաքացնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մենք կաթսան վառում ենք: Մեղավո՞ր ենք, որ չի տաքացնում :

- Ուրեմն մե՞նք ենք մեղավոր:

- Այսինքն ինչո՞ւ եմ վիճում,- համբերությունից դուրս է գալիս կառավարչության աշխատողը,- կտամ դատարան, օրենքով կբռնագանձենք: Կարգ կա:

Եվ գնում է՝ հպարտ, որ օրենքը գիտե: Նրան չի հետաքրքրում այն, որ օրենքը վերաբերում է տաքացվող շենքերին, որ ոչ մի տեղ գրված չէ, թե կարելի է ջեռուցման վարձ պահանջել նրանցից, ում բնակարանը չի տաքացվում:

***

Ուզում ենք հենց այստեղ էլ վերջացնել, բայց վախենում ենք, որ մրսող ընթերցողը բողոքի.

- Թո՛ւյլ է, իսկ եզրակացությո՞ւնը,- ասի նա:

Մեր կարծիքով քաղաքի ջեռուցման գործը ձախողող բոլոր մարդկանց զզշորեն համոզելով, հրապուրելով պետք է տանել նորագույն մեթոդով (չ)տաքացվող սենյակներից մեկը ու հանել օդանցքը խցանող լաթերը…

Թող փոխադարձաբար փչեն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱՑՕԹՅԱ ԴՐԱՄՇՈՐԹՆԵՐԸ

- Համար 11-ին եմ ուզում:

- Այստեղ չէ, վաղը եկեք:

- Համար 5-ը որտե՞ղ է:

- Անցիր վերջը, անկյունում է:

- Բարի եղեք ինձ մատնացույց անել համար 2-ին:

- Ո՞ր համար 2-ին:

- Ինչպե՞ս թե որ: Քանի՞ համար 2 կա:

- Չորս: Իսկ դու պատահաբար վարպետի դեմքը չե՞ս հիշում:

- Եթե չեմ սխալվում, սափրված չէր ու միշտ ժպտում էր:

- Բա՛ն ասաց, այստեղ բոլորն էլ սափրված չեն ու միշտ ժպտում են...

Ընթերցո՛ղ, գուցե քեզ թվաց, թե կենտրոնական վարսավիրանոցո՞ւմ ես: Ո՛չ: Այդպիսի խոսակցություն դու կարող ես լսել ամեն օր, հրապարակի ջրավազանի մոտ: Կարող ես նույնիսկ անձամբ մասնակցել այդ խոսակցությանը, եթե ուզում ես բախտդ անորոշ ժամկետով կապել... քաղաքացի «սյուրպրիզ»-ների հետ:

Ընկերուհուդ հետ անցնում ես ջրավազանի մոտով: Սիրտդ զգացմունքներով լի է: «Կանգնենք մի պահ, սիրելիս, ու զմայլվենք հիանալի հրապարակով» - ասում ես դու, բայց հանկարծ տեսնում ես, որ դիմացից քեզ է ուղղված մի սարսափելի... լուսանկարչական ապարատ:

- Պատրաստ է,- ապարատն իջեցնելով, գրավիչ ժպիտով ասում է լուսանկարիչը,- կանխավճար մուծեցեք մեկ ռուբլի:

- Բայց մենք չէինք ուզում նկարվել,- վրդովվում ես դու, բողոքում, բայց հետն էլ գրպանիցդ հանում մեկռուբլիանոցը, որովհետև լուսանկարիչը անտանելի գրավիչ ժպիտով շարունակում է քեզ նայել...

Այդ դեռ ընկերուհուդ հետ: Իսկ եթե երեխաներիդ հետ ես դուրս եկել զբոսանքի, բոլոր դեպքերում գրպանումդ մի քանի կանխավճար պահիր:

Հասնում ես ջրավազանին թե չէ՝ մեկ էլ մի խումբ «սյուրպրիզ»-ներ, իրար հրմշտելով, դեպի քեզ են գալիս: Թեթևակի ետ ես նայում՝ փախչելու համար, բայց ուշ է, նահանջի ճանապարհը փակված է:

- Մի վայրկյան ապարատին նայեք,- բղավում են այս ու այն կողմից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երեխաներդ վախեցած ուզում են լաց լինել, մեկն այս կողմ է նայում. մյուսը՝ այն, իսկ դու էլ՝ բոլորովին հակառակ կողմ:

- Մի վայրկյան ինձ նայեք, այդպե՛ս,- շարունակում են բղավել այս ու այն կողմից, մատներն են չխկացնում, ուռացնում են թշերը, զարմանահրաշ ձայներ են արձակում, աչքով են անում՝ երեխաներիդ ֆոկուսը վերցնելու համար:

Իսկ հետո.

- Պատրաստ է,- բացականչում են «սյուրպրիզները» ու ձեռքդ, գրպանդ,գլխարկիդ մեջ են խոթում թղթի մի-մի կտոր՝ պահանջելով մեկական ռուբլի կանխավճար:

Կանխավճարը մուծելով մի կերպ ճողոպրում ես, ու երբ տուն ես հասնում, նոր ես միայն զգում, որ ո՛չ լուսանկարչի անունն իմացար, ո՛չ էլ հասցեն: Հիշում ես թղթի կտորները և սկսում կարդալ դրանք. «Բացօթյա ֆոտո համար... Ստացված է կանխավճար: Ձեր նկարը պատրաստ կլինի... ժամը 2-ից հետո: Անդորրագիրը ուժի մեջ է մինչև 5 օր: Հասցեն՝ հրապարակի մոտ»:

Այ, դրանից հետո ես դու լսում այն խոսակցությունները, որ արդեն կարդացիր մեր ֆելիետոնի սկզբում:

Նման երեք թղթի կտոր էլ մեր ձեռքն ընկավ: Բոլորի վրա էլ գրված էր համար 13: Դրանք խմբագրություն բերեցին քաղաքացիները և հայտնեցին, թե քանի որ հինգ օր է, ինչ լուսանկարչին չեն գտնում, պայմանագիրը համարում են չեղյալ, ուրախությամբ զիջում են կանխավճարը և հանդիսավորապես խոստանում երբեք զբոսնելու չգնալ ջրավազանի մոտ:

«Գուցե մեզ հաջողվի գտնել այդ խորհրդավոր համար 13-ին» - մտածեցինք ու գնացինք հրապարակ: Այնտեղ համառ որոնումներ էին ընթանում: Բազմաթիվ քաղաքացիներ, ձեռքներին մի-մի թուղթ բռնած, մոտենում էին նկարիչների մի խմբից մյուսին, աշխատում ճանաչել իրենց լուսանկարչին. նայում էին դեմքներին, կոշիկներին, վերարկուներին:

Հանկարծ նրանցից մեկը՝ «Եկավ, ահա, համար 13-ը»,- բացականչելով ընդառաջ գնաց փոքրիկ ճամպրուկավոր մի մարդու ու գրկեց նրան հարազատի պես:

Համար 13-ը սառնությամբ վանեց քաղաքացուն, բացեց փոքրիկ ճամպրուկը, որը բերնեբերան լիքն էր ու հայտարարեց.

- Մոտեցեք, հերթով:

Առաջինը մոտեցավ մի ընկերուհի ու մեկնեց թուղթը: Համար 13-ը ճամպրուկից հանեց բոլոր նկարները ու սկսեց շրջել:

- Սա՞ է:

- Ոչ:

- Սա պիտի լինի: Ո՛չ: Ի՞նչպես թե, սա է: Ես եմ նկարել, չգիտե՞մ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դա չի: Իմ երեխան տղա է,- արժանապատվությամբ ասաց ընկերուհին:

- Տղա-աղջիկ ի՞նչ տարբերություն, երեխան երեխա է,- նկատեց համար 13-ը ու նախատինքով դիտեց ընկերուհուն,- սա է՞լ չէ,- ասաց նա՝ վերջին նկարը շրջելով:

- Վերարկուն կարծես տղայինս է,- շփոթված ասաց ընկերուհին,- բայց սա ի՞նչ նկարէ: Դեմքը չի երևում:

- Ինչպես թե չի երևում,- զայրացավ նկարիչը,- դու Ձմեռ պապին նայիր:

- Ինչի՞ս է պետք Ձմեռ պապին, չեմ ուզում Ձմեռ պապիին նայել: Ինձ տղայիս նկարն է հարկավոր:

- Այս է, չես ուզում, գնա տանը նայիր,- կտրեց նկարիչը ու չորս նկարի համար երկուռուբլի պահանջելով, սկսեց հաջորդ Ձմեռ պապիին որոնել:

«Բայց ըստ սակագնի չորս նկարն արժե մեկ ռուբլի»,- կասի ֆոտո-գեղարվեստական կոմբինատի դիրեկտորը: - Ես այդ համար 13 կոչվածին պատասխանատվության կկանչեմ»:

Հարգելի ընկեր դիրեկտոր, մի՛ շտապեք: Եվ եթե կարողանաք կանչել, ապա ձեր բոլոր 20 լուսանկարիչներին միասին կանչեցեք, որովհետև բոլորն էլ չորս նկարը երկու ռուբլով են վաճառում, որովհետև բոլորն էլ զբաղված են խալտուրայով ու դրամաշորթությամբ և որովհետև օգտագործում են ոչ թե ձեր կոմբինատի անդորրագրերը, այլ իրենց սեփականը, կեղծածը:

Ավելի լավ չէ՞ ֆինբաժնի և միլիցիայի օրգանների հետ միասին մաքրել մեր հրապարակներն ու պուրակները այդ բացօթյա դրամաշորթներից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«ԾԱՂԻԿՆԵՐ»

Ես արդեն մեղմություն, քնքշություն ու երազկոտ ժպիտ եմ տեսնում ձեր դեմքերին: Եվ դա բնական է: Նույնիսկ թանաքով գրված «ծաղիկներ» բառը մի տեսակ լիրիկական տրամադրության մեջ է դնում, հուզում է ձեզ: Եթե մանկությունդ լեռնային գյուղում ես անցկացրել՝ հիշում ես գորգանման սարերը, դաշտային երփներանգ ծաղիկները, ու գլուխդ պտտվում է նրանց բուրմունքից: Իսկ եթե քաղաքում ես մեծացել՝ տեսնում ես փողոցի անկյուններում ցայտաղբյուրի ջրով ցողված մանուշակներ վաճառող փոքրիկ տղային, իսկ ավելի հաճախ՝ խանութներ, որոնց վրա ոսկեզօծ կամ սպիտակ տառերով գրված են «Ծաղիկներ»...

Այս տարի մեր քաղաքում շատ ու շատ կարելի է հանդիպել «Ծաղիկներ»-ի: Ո՛չ թե բնական՝ հոտավետ, փոքր-ինչ խոնավ ու զովություն տարածող: Ո՛չ, պարզապես ցուցանակների, որոնք փակցված են նախկին վարսավիրանոցների, կոշիկի կամ գլխարկների, կարի արհեստանոցների ճակատներին: Եվ զարմանքով ես տեսնում, որ նախկին մասնավոր արհեստավորը ածելու, կոշիկի ու գլխարկի փոխարեն ծաղիկներ ունի ձեռքին բռնած:

Վերջերս անցնում էի Պուշկինի փողոցով: Չեմ թաքցնի՝ նպատակ ունեի կոշիկներ գնել ինձ ծանոթ մի խանութում, բայց մեծ եղավ զարմանքս, երբ այնտեղ, որտեղ կոշիկի խանութ պետք է լիներ, «Ծաղիկներ» ցուցանակը տեսա: Ինքնաթիռով ներս մտա: Մի կին ու երկու տղամարդ ջանասիրությամբ պսակներ էին հյուսում, իսկ ներքևում, ջրամանի մեջ դրված էին թարմ, գեղեցիկ, իսկական ծաղիկներ:

- Ծաղկեփո՞ւնջ եք ուզում, թե պսակ,- հարցրեց կինը:

- Վարպետ Զարեին էի ուզում,- ասացի շփոթված:

- Ես այստեղ եմ,- ասաց տղամարդկանցից մեկը, ու ես ճանաչեցի Զարե Կոշկակարյանին:

- Ես... կոշիկ... - կակազեցի ես:

Վարպետ Զարեն ծիծաղեց:

- Այն էլ անցավ,- ասաց նա,- հիշո՞ւմ ես, մի ժամանակ էլ գլխարկներ էի վաճառում,բայց բոլորն էլ անցան: Հիմա ծաղիկներ ունեմ: Ավելի ձեռնտու է: Ո՞րն ես ուզում՝ պարաֆինե՞, թղթե՞, թե՞ բնական:

Անհարմար դրությունից դուրս գալու համար մատս մեկնեցի դեպի վարդագույն պիոնը:

- Տվեք 50 կոպեկ,- քաղաքավարությամբ առաջարկեց Զարեն:

Ես ցնցվեցի: Ես շատ եմ սիրում ծաղիկներ, հատկապես պիոն: Ես առաջ միշտ էլ դրանցից պետական խանութում մեկ հատը ինը կոպեկով էի գնում: Դրա համար էլ զայրացա ու պահանջեցի սակագինը, որը նրանք չունեին, հետո պահանջեցի պատենտը, որը նրանք ունեին, բայց որի բովանդակությունը հակադարձ համեմատական էր նրանց գործունեությանը: Նախ՝ պատենտը Զարեի քրոջ անունով էր: Երկրորդ՝ նրանք պարտավոր էին վաճառել

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

միայն թղթե ծաղիկներ: Երրորդ՝ պետք է աշխատեր միայն մեկը՝ պատենտի տերը, այնինչ աշխատում էին երեք հոգի:

- Դուք պիոն չեք սիրում,- արհամարհանքով ասաց Զարեն,- թե չէ 50 կուպեկի համարչէիք խոսա:

- Ո՛չ,- առարկեցի ես,- ես սիրում եմ պիոն և այն ձեռք կբերեմ ոչ թե ձեզ նման մասնավորների մոտ, այլ պետական խանութում:

Հետևիցս քրքիջ լսեցի, բայց դուրս եկա կրկնելով Գևորգ Էմինի խոսքերը՝ «Աշխարհում ամեն տեղ ծաղիկ կա»: Եվ պատկերացրեք դրությունս, երբ պարզվեց, որ ունիվերմագի դիմացի հանրահայտ «Ծաղիկներ» խանութում, որը պատկանում է քաղաքի կանաչապատման տրեստին՝ ոչ մի ծաղիկ չկար, և ոչ միայն ծաղիկ, ծաղկի հոտ անգամ չկար:

- Ինձ պիոն է հարկավոր,- դիմեցի խանութի վարիչ Մանուշակյանին:

Ես որոշել էի ինչ էլ լինի ապացուցել Զարե Կոշկակարյանին, որ կարելի է թարմ ծաղիկներ գնել նաև պետական խանութում: Ընկեր Մանուշակյանը, անկեղծ ցավակցության արտահայտությունը դեմքին, սեղմեց ձեռքս:

- Գիտե՞ք ինչ,- ասաց նա,- եթե մենք բազաներ ունենայինք, ապա հիմա ո՛չ միայն պիոնի, այլև նարցիսի, վարդակակաչի, հիացինտի, փաթաթվող վարդի, մեխակի, հասմիկի, յասամանի ու հիրիկի մի մեծ փունջ կնվիրեի ձեզ: Բայց հիմա չեմ կարող: Բավարարվեք, խնդրում եմ, թիթեղյա, պարաֆինե կամ թղթե ծաղիկներով: Դրանք էլ վատը չեն, միայն նրան, ում նվիրում եք, խորհուրդ տվեք դրանք չմոտեցնել դեմքին: Բողոքներ կան՝ չանգռում են...

Ես թափ տվեցի ձեռքս և արդեն հիասթափված դուրս էի գալիս խանութից, երբ հիշեցի մեծ բանաստեղծի խոսքերը «Թե լալիս ես վարդ ես ուզում, մայիս կգա, մի քիչ կաց» և հեռացա, մտածելով, որ եթե Երևանի կանաչապատման տրեստի ղեկավարները շարունակեն նման ձևով աշխատել, ապա ուրեմն դեռ քանի-քանի մայիսներ են հարկավոր, որպեսզի Երևանի ծաղկի պետական խանութներում հնարավոր լինի ձեռք բերել թարմ, բազմատեսակ ու էժան ծաղիկներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԿԻՆ ԳՅՈՒԼԻԶԱՐԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Ես ձեզ կպատմեմ զարմանալի իրողություն, զարմանալի և չլսված, մի մարդու մասին, որի գրական կյանքը տևեց ընդամենը չորսևկես ամիս:

Ո՛չ, նա չմեռավ: Գուցե նման մի բան պատահեր, եթե շարունակեր գրելը: Բայց նա պարկեշտ մարդ էր և ժամանակին ետ դարձավ կործանարար ճանապարհից, ճանապարհ, որից առանձին, նույնիսկ պրոֆեսիոնալ գրողներ չէին կարողանում հեռանալ:

Թվաբանության համեստ մի դասատու էր նա և երբեք չէր մտածում, թե թվերից բացի աշխարհում ուրիշ հետաքրքիր բաներ էլ կան: Չի կարելի ասել, թե նա ընդհանրապես չէր կարդում: Կարդում էր, միայն թե այնպիսի գրքեր, որտեղ գերակշռում էին թվերը: Եվ գուցե նա հենց այդպես էլ իր թվերի հետ հանգիստ հեռանար մեր, ինչպես ասում են անցավոր աշխարհից, առանց հանդիպելու մուսային, եթե չամուսնանար:

Բայց նա մարդ էր, զգացմունքներ կային, և նա չդիմացավ ու իր ձեռքն առաջարկեց հաշվետար Գյուլիզարին, երդվելով, որ նրան հարյուրավորների միջից է ընտրել ու հազար-հազարների հետ չի փոխի:

Հաշվետար Գյուլիզարն էլ էր թվեր սիրում, բայց ոչ միայն թվեր: Նա սիրում էր նաև հեքիաթներ ու պատմություններ լսել: Բավական էր, որ մեկը հիմնարկում մի բան պատմեր, Գյուլիզարը ձեռքերով հենարան էր կառուցում ծնոտի համար ու հափշտակված լսում:

Բայց եթե միայն լսեր, էլի ոչինչ, ոնց որ ասում են՝ գլուխը քարը, նման խայտառակ անախորժություններ տեղի չէին ունենա: Բայց նա լսելուց հետո էլ սիրում էր պատմել, և ոչ միայն սիրում, ուղղակի պահանջ էր զգում, տանջվում էր: Եվ հանգստանում էր միայն այն ժամանակ, երբ լսածը հաղորդում էր գոնե մեկին:

Իսկ ո՞վ էր նրա ամենամոտ ընկերը, ո՞ւմ հետ կարող էր կիսել նա իր հոգին տանջող հեքիաթներն ու պատմությունները, եթե ոչ իր սիրեցյալ ամուսնու, թվաբանության համեստ դասատուի հետ:

Դրսից ուղղակի սենյակ էր նետվում, գրկում ամուսնուն ու բացականչում.

- Թե իմանաս այսօր ի՜նչ եմ պատմելու, սիրտդ հետաքրքրությունից կպայթի, այնքա՜ն տխուր է, այնքա՜ն սարսափելի, որ մազերդ բիզ-բիզ կկանգնեն: Մեր հաշվապահը պատմեց, ուրեմն՝ ստեփանավանցի մի Սարգիս իրեն զցում է ջուրը: Չէ, սկզբում չի զցում: Սկզբում նրա տատը պատմում է, թե չար ոգիները...

Երբ ամուսնության հաջորդ օրը հաշվետար Գյուլիզարը նրան իր առաջին պատմությունն արեց, թվաբանության դասատուն նորահարսին զգուշորեն տեղեկացրեց, որ ինքը արվեստից ու գրականությունից հեռու կանգնած մարդ է: Բայց զգուշորեն տեղեկացնելը կօգնե՞ր: Իհարկե ո՛չ: Հաշվետար Գյուլիզարն այնքան խնդրեց, աղաչեց ամուսնուն՝ լսել իր զարմանահրաշ, չտեսնված պատմությունները, այնքան բացատրեց, թե ինչքան մարտողական է նման

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պատմություններ լսելը ճաշից առաջ, որ ի վերջո թվաբանության դասատուն ձեռքը հուսահատ թափ տվեց ու մինչև ուշ գիշեր քաղցած ականջ դրեց:

Եվ հենց այստեղից էլ սկսվեց նրա ժամանակավոր կործանումը:

Լսեց, լսեց ու մի օր էլ հանկարծ ձեռքը խփեց ճակատին:

- Ի՞նչ եղավ,- տեղից վեր թռավ հաշվետար Գյուլիզարը,- պատմածս այդքան վախենալո՞ւ էր:

- Ո՛չ, ո՛չ, ես ուղղակի զարմանում եմ, թե այդ պատմածներդ ինչո՞ւ մինչև հիմա չեմ գրել: Տես, է՛, ոնց որ երկու անգամ երկու՝ չորս,- ուրախացած հայտարարեց ամուսինը:

- Այսինքն ի՞նչ:

- Այսինքն այն, որ քո պատմածները կգրեմ, կտանեմ խմբագրություն (նրանց հաշվապահը ինձ ծանոթ է), կտպագրեն ու ինձ էլ փող կտան: Նրանք դրան այնտեղ «հոնորար» են ասում:

- Չէ՛ մի:

- Կտա՛ն, այ, կտեսնես, իսկ քո կարծիքով գրողները ո՞նց են փող ստանում: Հենց այդպես մեկը պատմում է, է՛լի: Վաղը հենց ստեփանավանցի Սարգսի պատմությունը տանելու եմ:

Ուրախացան, խոսեցին, վիճեցին՝ համարյա մինչև առավոտ, և վերջապես որոշեցին առայժմ չշտապել: Պայմանավորվեցին, որ սրանից հետո Գյուլիզարը ավելի ուշադիր կլսի սրա-նրա պատմածը, իսկ ամուսինն էլ անմիջապես գրի կառնի: Իսկ երբ պատմությունները հավաքվեն, կտանի խմբագրություն: Շատին ավելի շատ փող կտան:

Այդպես էլ արեցին: Ուղիղ չորս ամիս հետո թվաբանության համեստ ուսուցիչը քայլերն ուղղեց դեպի գրողների միություն՝ թևի տակ ունենալով մի բոլորովին նոր, կոկորդիլոսի արհեստական կաշվից պատրաստած թղթապանակ: Թղթապանակի մեջ հաշվետար Գյուլիզարի հավաքած և թվաբանության դասատուի գրի առած 18 պատմություն կար:

- Ահա՛,- ասաց նա, խմբագրության աշխատողի առջև դնելով թղթապանակը,-տպե՛ք:

- Նախ և առաջ կարդալ է հարկավոր,- թունավոր ժպիտով նկատեց խմբագրության աշխատողը:

- Կարդացեք,- պրոֆեսիոնալի հանգստությամբ և մեղմ ասած, համառությամբ, առաջարկեց դասատուն ու ավելի խորը ընկղմվեց բազկաթոռի մեջ, հասկացնելով, որ մինչև ամբողջ թղթապանակը ծայրեծայր չընթերցվի՝ ինքը չի հեռանա: Հետո հանկարծ ինչ-որ բան հիշեց ու հառաչեց: - Գիտե՞ք ինչքան անքուն գիշերներ եմ անցկացրել դրանց համար... - Նա ուզեց ավելացնել, որ դրանց պատճառով մեխանիկորեն դուրս է մնացել դպրոցից, բայց ամաչեց: Խմբագրության աշխատողը չլսելու դրեց նրա հառաչանքը և սկսեց կարդալ:

Բայց այստեղ կատարվեց անսպասելի բան: Խմբագրության աշխատողը կարդաց-կարդաց, ապա գլուխը բարձրացրեց և մեծ կասկածանքով դիտեց թվաբանության դասատուին: Թերթեց, նորից կարդաց ու նորից մի տեսակ տարօրինակ ձևով նայեց: Հետո՝ ո՛չ այս, ո՛չ այն,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

աջ ձեռքը զգուշորեն մեկնեց սեղանի ծայրին դրած մեծ, չորացած թանաքամանին ու այն հեռացրեց դասատուի մոտից: Քիչ անց, երբ վերջացնում էր արդեն պայուսակի պարունակության ընթարցումը, նույն զգուշությամբ հաջողացրեց դասատուի ձեռքի հասանելիության շրջանից հեռացնել նաև գրիչը, որ սուր, «ռոնդո» ծայր ուներ:

Դասատուն, որը նկատում էր խմբագրության աշխատողի կասկածելի շարժումները, վատ զգաց իրեն ու այլևս չդիմացավ:

- Դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում,- ասաց նա խուլ ձայնով, կարծելով, թե խմբագրության աշխատողի աչքում ինքը գող է թվացել:

- Ը՛ը, ե՞ս, ոչինչ, պարզապես... բայց դուք միք հուզվի,- գունատված մրմնջաց խմբագրության աշխատողը,- ուղղակի այստեղ ինչ-որ պատահականություն կա... շա՛տ, շա՛տ զարմանալի է... ը՛ը, բայց դուք միք հուզվի... Գիտե՞ք ինչ, դուք ուղղակի, ես համոզված եմ, ձեզանից անկախ, ը՛ը, օգտագործել եք Հովհաննես Թումանյանի և Ղաղարոս Աղայանի ստեղծագործությունների սյուժեները: Դե ձեր ստեփանավանցի Սարգիսը նույնն է, ինչ լոռեցի Սաքոն, և, ընդհանրապես, մյուսներն էլ:

- Ի...ի՞նչ...

- Այո՛, այո,- մրմնջաց խմբագրության աշխատողը: - Կուզեք գրադարան գնացեք, ճիշտ եմ ասում, վերցրեք Թումանյանի և Աղայանի գրքերը,- ասաց նա արդեն միջանցքից ու անհայտացավ:

Թվաբանության դասատուն մի պահ քարացավ տեղում, հետո սեղանից վերցրեց կոկորդիլոսի արհեստական կաշվից կտրած իր նոր թղթապանակը ու վճռական քայլերով դեպի գրադարան գնաց:

Հարևաններն ասում են, թե նա տուն է մտել սարսափելի վիճակում, փակել է դռերն ու պատուհաններն ու ինչ-որ երկար զրուցել հաշվետար Գյուլիզարի հետ: Թե ինչ են խոսել՝ ստույգ հայտնի չէ, բայց այդ օրվանից ո՛չ հաշվետար Գյուլիզարն է պատմություններ անում և ո՛չ էլ թվաբանության դասատուն է գրի առնում դրանք: Նրանք երկուսն էլ հիմա կարդում են:

Ես այս տխուր պատմությանը հենց այստեղ էլ վերջակետ կդնեի, բայց ճիշտն ասած անհանգիստ եմ: Գիտե՞ք ինչու: Վերջերս աչքի անցկացրի մեր երիտասարդ կոչվող գրողների որոշ գրքեր և սարսափով նկատեցի, որ նրանց սյուժեները և գործերի առանձին հատվածներ անչափ նման են հաշվետար Գյուլիզարի հեքիաթներին ու պատմություններին:

Անկեղծորեն եմ ասում, քանի ուշ չէ, թող այդ գրողները հետևեն թվաբանության դասատուի օրինակին, թող չգրեն, թող գրադարան գնան:

Մեղք է ընթերցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՉԳՆԱՀԱՏՎԱԾ ՏԱՂԱՆԴԸ

Եթե փողոցում կամ հասարակական մի այլ վայրում հանդիպեք միջահասակ, նիհար մի երիտասարդի, որը քայլում է գլուխը բարձր բռնած և մտածկոտ հայացքով նայում շուրջը, իմացեք, որ դա Մինաս Գինոսյանն է:

Բայց Մինաս Գինոսյանը միայն զբոսանքով չի զբաղվում: «Ազատ» ամբողջ ժամանակը նա ռացիոնալ օգտագործում է բողոքներ ու նամակներ գրելով, որոնք հետո ուղարկում է ամենատարբեր կազմակերպությունների և հիմնարկների միևնույն պահանջով:

- Ինչո՞ւ ինձ հենարան չեք տալիս: Հալածում եք: Տվեք ինձ մի հենարան, և ես շուռ կտամ...

Նամակներում նա չի գրում, թե ինչն է մտադիր շուռ տալ, բայց հենարանի անունը կոնկրետ նշում է, գրական աշխատողի հաստիք՝ մանկական թերթում:

Ի միջի այլոց, այն էլ ասենք, որ Մինաս Գինոսյանը ամբողջ կյանքում հենարաններ է խնդրել սրանից ու նրանից: Եվ այդ երբեմն նրան հաջողվել է: Օրինակ, նման մի հենարանով նա, չգիտես ինչպես, ընդունվեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը ու սրտապնդված բացականչեց.

- Տվեք ինձ ևս մի հենարան, այսինքն՝ թոշակ, և ես մեր բաժինը շուռ կտամ:

Իսկ երբ թոշակ ստանալու համար, քննությունների ժամանակ, նրանից որոշ գիտելիքներ պահանջեցին, Մինաս Գինոսյանը արագորեն կողմնորոշվելով, քննասենյակում ուշաթափվեց ու աչքերը չբացեց այնքան ժամանակ, մինչև գունատված դասախոսը ջրամանի պարունակությունը նրա գլխին դատարկելով, բղավեց.

- Տե՛ս, «չորս» եմ նշանակել, կուզես «հինգ» դարձնեմ, միայն թե բաց արա աչքերդ:

Երբ Մինաս Գինոսյանը ավարտեց համալսարանը, նրան հարցրեցին.

- Ո՞ր շրջանում կուզես աշխատել:

- Սպանդարյան,- աներեր վճռականությամբ պատասխանեց նա:

Իսկ երբ նրան հասկացրին, որ խոսքը ռեսպուբլիկայի շրջաններին է վերաբերում, Գինոսյանը բարկացավ.

- Կուզեք խորտակե՞լ ապագաս,- ասաց նա՝ հերքելով առողջապահական գիտության բնագավառում տարածված այն դրույթը, թե ուշաթափվածները չեն խոսում,- ինձ հենարան չե՞ք տալիս: Պետք չէ, ես ինքս կգտնեմ...

Եվ մի քանի ամիս թրև եկավ Երևանում, մինչև որ հաջողացրեց սրբագրիչ ընդունվել: Բայց էլի դժգոհ էր.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կուզեն դանդաղորեն մեռցնել տաղանդս, դրա համար էլ իրենց անգրագետ գրածները կարդալ կտան,- բողոքում էր նա,- բա սա հենարա՞ն է... սա, սա տպարան է: Ես թե՛ հոգեբան-մանկավարժ եմ, թե՛ հոգեբան-ժուռնալիստ: Իսկ խմբագրությունում ո՞վ կա: Այնտեղ ես պիտի լինեի, որ Հայաստանի մանուկներն իմանային, թե ում հետ գործ ունեն:

Մարդիկ լսեցին, լսեցին ու վերջը որոշեցին Մինաս Գինոսյանին բերել խմբագրություն՝ գրական աշխատանքի: Գուցե իրոք դրսևորի՞ իրեն: Ու նշանակեցին արվեստի և գրականության բաժնի գրական աշխատող:

Եվ Մինաս Գինոսյանը դրսևորեց իրեն: Նրան սկզբում հանձնարարեցին պատասխանել պիոներների նամակներին, կարդալ նրանց բանաստեղծություններն ու պատմվածքները, խորհուրդներ տալ, սովորեցնել: Բայց նրա ամեն մի նամակից հետո պիոներական մի հեկեկոց էր լսվում, և խմբագրության ղեկավարները մեղադրվում էին կոպիտ պատասխաններ ուղարկելու մեջ:

- Հարգելի Համբարձում,- մոտավորապես գրում էր Գինոսյանը,- դու տաղանդ չունես:

- Հարգելի Սահակ, դու հարցնում ես, թե ինչ բան է սիմֆոնիա, պատասխանում եմ, որ դա քո խելքի բանը չէ: Մեծանաս՝ կիմանաս:

- Հարգելի Վլադ, լավ կանես մեկ էլ չգրես:

Երբեմն էլ Աբրահամյանին հասցեագրված նամակը Էլչիբեկյանին էր ուղարկում, իսկ մի ուրիշին էլ երկար-բարակ բացատրում էր, թե որոշ քամիներ դուրս են գալիս երկրի մակերեսի ծակերից:

Մոտավորապես այս ձևով Մինաս Գինոսյանը պատասխանեց բաժնի ստացած 180 նամակից 29-ին: Եվ երբ խմբագրությունը 28 բողոք ստացավ (մեկը կորել էր ճանապարհին), խմբագրության ղեկավարները որոշեցին Գինոսյանի փորձաշրջանը համարել ավարտված ու նրան նորից տպարան ուղարկել:

- Ժամանա՛կ տվեք,- աղաչեց Մինասը,- տաղանդս մի մեռցրեք: Ինձ համար այդ ժամանակը քիչ էր:

Նրա փորձաշրջանը ավելացրին երկու անգամ: Եվ, ի վերջո, մտածելով, որ մարդը գուցե լավ լինի մի այլ բնագավառում, տեղափոխեցին աշխատանքի սպորտի և գիտության բաժին: Բայց Գինոսյանը դարձյալ դժգոհ էր:

- Բաժնի վարիչը կնիկ է ու ինձ դիտողություն է անում: Բա եղա՞վ: Ո՞ր տղամարդը կդիմանա,- տրտնջում էր նա: Իսկ բաժնի վարիչին պարզապես հայտարարում էր,- քո մակարդակը իմինից ցածր է, դու իմ գրածը չպիտի կարդաս:

Գարնանամուտին նրան ուղարկեցին Աշտարակի շրջանի Լուսակերտ գյուղը դպրոցականների գարնանային մրցումները կազմակերպելու համար: Բայց չորս ամիս շարունակ նա չկարողացավ կազմակերպել այդ մրցումները, պատճառաբանելով, թե հորդառատ անձրև էր գալիս: Ուղարկեցին ուրիշ շրջաններ՝ պիոներական թեմաներով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

փոքրիկ ակնարկներ գրելու: Բայց վերադառնալով, Մինաս Գինոսյանը միայն իր տպավորություններն էր հայտնում գնացքից ու պնդում, որ այնտեղ մի խելքը գլխին «պրավադնիկ» չկա:

Մի քանի նկատողություն ստանալուց հետո, երբ նրա հեռացման հարցը դրվեց, Գինոսյանը ձեռքին մի փոքրիկ դանակ սրելով, պատասխանատու քարտուղարին հասկացրեց, որ խմբագրի կյանքին հաշվված օրեր են մնացել: Հետո տեսնելով, որ խմբագրի դեմքը չի փոխվում, ստրատեգիական պլանը փոխեց ու նույն դանակը սրելով, պատասխանատու քարտուղարին հասկացրեց, որ իր՝ Գինոսյանի համար հաշվված օրեր են մնացել:

- Էդ դանակը փոքր է, քեզ չի սպանի,- անկեղծ ափսոսանքով ասաց քարտուղարը:

- Չի՞ սպանի, ես էլ կգնամ ավտոյի տակ կընկնեմ ու մի թղթի վրա կգրեմ. «Խմբագրի պատճառով անմեղ մեռա»:

Բայց նոր պլանն էլ չօգնեց, և Մինաս Գինոսյանը անցավ ընդհատակ: Նա դանակի փոխարեն խմբագրության աշխատողներին էր սրում իրար դեմ: Ա-ին մտերմաբար հայտնում էր, թե ինքը ասում է, որ միակ ժուռնալիստն Ա-ն է, բայց Բ-ն չի ընդունում: Բ-ին էլ խորհուրդ էր տալիս զգուշանալ Ա-ից, որովհետև նա ուզում է Բ-ին «պոդնոժկա» տալ: Բանն այնտեղ հասավ, որ մի օր Ա-ն, Բ-ն, Գ-ն և կոլեկտիվի մյուս անդամները հավաքվեցին ժողովի, Մինասին մերկացրին ու մի լավ քննադատեցին: Բայց, որովհետև դա էլ չօգնեց, «Աշխատանքում իրեն բացարձակապես չարդարացնելու, աշխատանքը ժամերով լքելու, զրպարտություններով զբաղվելու համար» Մինաս Գինոսյանին հեռացրեցին աշխատանքից:

Եվ այն, ինչ չէր կարողանում կատարել աշխատանքում, հեռացվելուց հետո կարողացավ: Դա գրելն էր: Ահազանգեց բոլոր տեղերը, թե եկեք տեսեք ինչ է կատարվում, խմբագրությունում քաոս է, միակ պայծառ դեմքը ես եմ, ինձ էլ ուզում են խավարեցնել: Մարդիկ եկան, ստուգեցին ու հայտարարեցին, որ ընդհակառակը, թերթի աշխատանքները լավացել են, և Մինաս Գինոսյանին առաջարկեցին զրպարտություններով զբաղվելու փոխարեն հանրօգուտ աշխատանքով զբաղվել:

Նույնիսկ խղճալով, առաջարկեցին գնալ տպարան՝ որպես սրբագրիչ:

- Որ տաղանդը տառե՞ր քջջի,- զայրացավ Գինոսյանը,- ես, որ իմ ուսերին եմ տարել բազմաթիվ ռեսպուբլիկական և քաղաքային թերթեր, հիմա տպարանո՞ւմ աշխատեմ: Երբե՛ք: Կա՛մ գրական աշխատանք, կա՛մ մահ:

Պայմանի առաջին մասը նրան մերժեցին, երկրորդից էլ ինքը հրաժարվեց ու դիմեց դատարան: Դատարանը գտավ, որ խմբագրությունը ճիշտ է վարվել: Դիմեց գերագույն դատարան: Քննության ուղարկեցին: Մյուս դատարանն էլ գտավ, որ խմբագրությունը ճիշտ է վարվել: Զայրացած Մինասը դիմեց երրորդ անգամ և իր ժուռնալիստական փայլուն ընդունակությունների առկայությունը հաստատելու համար պահանջեց դատարան հրավիրել խմբագրության... հաշվապահին:

Իր վերջին խոսքում Մինաս Գինոսյանն ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տաղանդները բոլոր դարերում էլ տանջվել են՝ վերցնենք Գալիլեյին, Չիկագոյին և Բալզակին, բայց բոլորն էլ անտրտունջ տարել են իրենց խաչը: Հիմա ժամանակները փոխվել են: Ես անտրտունջ չեմ մնա: Փառք աստծո, էնքան գրել գիտեմ, որ մինչև կյանքիս վերջն էլ կարող եմ բողոքել...

Ու մինչև հիմա էլ բողոքում է: Գրում է ուր ասես, նույնիսկ՝ ռեսպուբլիկայի սահմաններից դուրս: Եվ որովհետև սովետական աշխատողները հոգատար են նամակների ու բողոքների նկատմամբ, ապա ամիսը մեկ մի լուրջ հանձնաժողով է հավաքվում թերթի խմբագրությունում և ուսումնասիրում է այն դրդապատճառները, ինչի հիման վրա Մինաս Գինոսյանի չգնահատված տաղանդը թափառում է փողոցներում: Ու մինչև մի հանձնաժողովը եզրակացության է գալիս, որ ճիշտ են վարվել մեծամիտ, կիսագրագետ ու զրպարտիչ Մինասին աշխատանքից հեռացնելով, խմբագրություն է մտնում մի այլ լուրջ հանձնաժողով:

Մինաս Գինոսյանին տարբեր աշխատանքներ են առաջարկում՝ չի գնում: Բացատրում են, որ նրա ընտանիքը հայրենի քաղաքում է ապրում, թող գնա այնտեղ աշխատի: Չի գնում և վերջ:

- Մայրաքաղաքն ո՞ւմ թողնեմ,- ասում է նա,- հետո պատմությունն ինձ չի՞ դատապարտի: Ո՛չ, ինձ այստեղ հենարան տվեք:

Ու ամբողջ օրը թրև է գալիս փողոցներում և կենտրոնական փոստի շրջակայքում, իսկ ազատ ժամերին շարունակում է բողոքներ գրել, որպեսզի վերջապես մի լուրջ կոնսիլիում հրավիրվի՝ իր չեղած տաղանդը գնահատելու համար...

Ու մինչև հիմա էլ գրում է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՌԱՆՁԻ՞Ն, ԹԵ՞ՈՐՈՇ...

Եղիշե Բալյանը քայլում էր խմբագրության երկար միջանցքներով ու գլուխը պատի ժամացույցի ճոճանակի պես մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ թեքելով կարդում ցուցատախտակները՝ «Հատակին չթքել», «Գյուղ բաժին», «Պ. Կ.» (այսինքն՝ հրշեջ ծորակ), թեև պատի վրա ծորակ չէր երևում, «Ծխախոտը գետնին չնետել», «Չաղմկել», «Արվեստի բաժին»...

Հակառակ խստիվ զգուշացմանը, սենյակը կարծես Սոդոմ Գոմորի ֆիլիալը լիներ: Բալյանը ներս մտավ: Սեղաններից երկուսը ազատ էին, երրորդի վրա թեքված կարճազգեստ մի աղջիկ երկու ձեռքով հեռախոսը բերանին սեղմած ինքնամոռաց քրքջում էր, մերթ ընդ մերթ միայն արտասանելով «Օ՜յ, նեմոզու», «Օ՜յ, դավոլնո», «Օ՜յ, պրելեստ»: Հավանաբար նրան անեկդոտ էին պատմում: Չորրորդ սեղանը, որի վերևում պատիից մի սպառնալի մակագրություն գոչում էր. «Գործդ վերջացրիր՝ գնա», զբաղեցնում էր մշուշապատ մի մարդ: Մշուշապատ, քանի որ ծուխը քուլա-քուլա բարձրանալով ծածկել էր նրա դեմքը ու գալարվում էր որոշակի քանակությամբ մազերի մեջ:

- Ընկե՛ր:

- Լայն ճանապարհ երիտասարդությանը,- հանկարծ լսվեց մշուշի միջից, ու որոշակի քանակությամբ մազեր ունեցող մարդը ձեռքի գրիչը վարժ սահեցրեց թղթի վրայով: Այդ նրա սովորությունն էր, գրելիքը արտասանում էր բարձր ձայնով, այնքան բարձր, որ մյուս սենյակում աշխատող արդյունաբերության բաժնի վարիչին խանգարում էր թերթել «Տրուդ» թերթի նախանցյալ տարվա կոմպլեկտը՝ օրիգինալ առաջարկություններ անելու համար:

- Արվեստի բնագավառի առանձին ղեկավարներ... Առանձի՞ն, թե՞ որոշ,- շարունակեց մշուշապատ մարդը,- առանձինը լավ է, ավելի կոնկրետ է: - Այո՛, առաձին ղեկավարներ դեռ ինչպես հարկն է չեն վստահում երիտասարդ կադրերին, նրանց աշխատանքում խիզախորեն առաջ չեն քաշում, ինչպես այդ բազմիցս մատնանշել է մեր մամուլը:

Նա այստեղ միայն նկատեց արագիլի նման մեկ մի, ապա մյուս ոտքի վրա հենվող Բալայանին, գրիչը վար դրեց, ձախ ձեռքով ցրեց դիմացի ծուխը՝ երիտասարդի դեմքը տեսելու համար, ապա մռայլված ասաց.

- Բանաստեղծությո՞ւն եք բերել, տարեք նամակների բաժին, պոե՞մ՝ «Գրական թերթ», վե՞պ՝ Պետհրատ:

- Ռեցենզիա. «Կոկորդիլոսը երգում է» պիեսի բեմադրության վերաբերյալ,- կմկմաց նորեկը:

- Հետաքրքիր է,- ավելի մռայլվեց արվեստի բաժնի վարիչ Դարեյանը:

- Շատ է հետաքրքիր,- աշխուժացավ Բալյանը,- դուք էլ եք զգացել, չէ՞, ռեժիսորը սխալ է մեկնաբանել Գետառյանի առանց այդ էլ թույլ պիեսը և...

- Հետաքրքիր է,- ընդհատեց Դարեյանը,- դուք երևի գիտությունների թեկնածո՞ւ եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ո՛չ,- Բալյանի դեմքը բաց վարդագույն ստացավ:

- Ի՞նչ, մի՞թե դոկտոր, ներեցե՛ք,- Դարեյանը փորձեց ժպտալ:

- Ո՛չ,- երիտասարդի դեմքը փոխվեց մուգ վարդագույնի, ապա մի երկու տեղ ճերմակել սկսեց, և նա այնպես խեղճացավ, ասես բացի իրենից ամբողջ աշխարհն առնվազն գիտությունների թեկնածու էր:

- Դա, ուրախ եմ, այո՛, սրտանց,- Դարեյանը ժպտաց՝ ցույց տալով պլոմբված սեղանատամը: Նրա տրամադրությունը ասես միանգամից բացվեց,- բայց տպել չենք կարող,- ու վեր կենալով արդեն ուրախ-ուրախ թփթփացրեց երիտասարդի թիկունքին:

- Ինչո՞ւ,- սիրտ առավ Բալյանը:

- Նախ ընկեր Գետառյանը...

- Սարսափելի խելոք տղամարդ է,- ասաց կարճազգեստ աղջիկը, որը վերջացրել էր հեռախոսային սիրաբանությունը և հիմա սրտաձև փոքրիկ հայելու մեջ դիտում էր վերջին ութ տարում ոչ մի անգամ չշառագունած իր այտերը:

- Այո, ընկեր Գետառյանը դեմք է,- շարունակեց Դարեյանը, բայց զգալով, որ գնահատականը ցածր էր, ավելացրեց,- և ոչ միայն դեմք, այլև գլուխ է, մեծ գլուխ,- նա ասածը օրինակով ցույց տալու համար գրիչից տափակած ու թանաքոտ ցուցամատով մի քանի անգամ խփեց իր գլխին: - Դուք հո չե՞ք առարկում, որ նա գլուխ է, -հանկարծ հարցրեց նա խստադեմ:

- Ոչ, ինչո՞ւ,- կմկմաց Բալյանը:

- Իսկ կարդացե՞լ եք «Երկու հանճարեղ գլուխը»,- Դարեյանը խորամանկորեն կկոցեց աչքերը:

- Իհարկե,- պատասխանեց երիտասարդը տենդագին մտածելով, թե հարցերը դեպի ուր են տանում:

- Այդպե՞ս,- գոհ ծիծաղեց Դարեյանը,- հիմա պա՞րզ է, որ մեծ գլխի մասին գրողը ինքն էլ մեծ գլուխ պիտի ունենա,- ու աչքերը հառեց Բալյանի գլխին:

Ակնարկը չափազանց թափանցիկ էր, և երիտասարդը շիկնեց մինչև մազերի ծայրը (չմոռանանք սկզբում ասել, որ նա շիկահեր էր, գրքերի սովորական հերոսների նման ո՛չ թուխ, արևառ դեմք ուներ, ո՛չ ատլետիկ կազմվածք և ո՛չ էլ սև աչքերը նայում էին սև հոնքերի տակից):

- Դուք գլխի երկրաչափական մեծությո՞ւնը նկատի ունեք, թե՞ նրա բովանդակությունը,- հարցրեց նա մռայլ սրամտությամբ,- գոնե նայեք հոդվածս, գուցե ստացվել է...

- Նայեցի, սիրելի՛ս:

- Ի՞նչը նայեցիք, դեռ ձեռքիս է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ստորագրությանը նայեցի,- ժպտաց Դարեյանը,- պարզ գրած է. «Ե. Բալյան»: Ո՞վ է Բալյանը, հարցնում եմ ձեզ, ո՞վ է:

- Այսինքն ո՞նց թե ով է: Ե՛ս եմ:

- Ես գիտեմ, որ դուք եք, որովհետև տեսնում եմ ձեզ, ինչպես, եթե չեմ սխալվում, ասել է Ֆոյերբախը: Իսկ ո՞վ ձեզ կհավատա, ո՞վ է ձեզ ճանաչում: Ընթերցող լայն հասարակայնությունը գիտե՞ ձեզ. ոչ, ղեկավարությունը գիտե՞ ձեզ. ո՛չ, և վերջապես ինքը՝ ընկեր Գետառյանը գիտե՞ ձեզ. ո՛չ,- ամեն մի «ոչ»-ի հետ բաժնի վարիչը խնամքով ծալում էր մատներից մեկը՝ վախենալով, թե հաշիվը կկորցնի:

- Բայց որպեսզի ճանաչեն, տպել է հարկավոր,- ասաց երիտասարդը:

- Ո՛չ,- Դարեյանը ծալեց նաև չորրորդ մատը, բայց զգալով, որ այս այն «ոչ»-ը չէ, նորից բացեց մատը,- որպեսզի ճանաչեն, որպեսզի հավատան, հարկավոր է, որ նյութի տակ գրված լինի. «գիտությունների թեկնածու Բալյան», «գիտությունների դոկտոր Բալյան», պա՞րզ է: Խնդրեմ, գրեք այն ժամանակ: Դժվա՛ր է, դժվա՛ր, երիտասարդ,- նորից ծիծաղեց Դարեյանը,- մի կերպ կարելի էր տպագրել, եթե, օրինակ, առաջավոր փականագործ լինեիք կամ դաշտերի հերոս: Այն ժամանակ կգրեինք «Նամակ խմբագրությանը» կամ «Նամակ խոպանից», պա՞րզ է, իսկ դուք, եթե չեմ սխալվում ուսանող եք:

- Սխալվում եք,- չարախնդաց Բալյանը,- ուսուցիչ եմ:

- Համենայն դեպս ոչ վաստակավոր,- հանգիստ շարունակեց Դարեյանը,-այո՛, ո՛չ վաստակավոր:

Բալյանը զգում էր, որ համբերությունը հատնում է, և չնայած դիմացի պատից մի ուրիշ ցուցատախտակ խնդրում էր «չաղմկել», նա պահանջ էր զգում հենց աղմկելու, գոռալու... Չէ՞ որ դրա համար պետք չէր առնվազն գիտությունների թեկնածու լինելը:

Աղմուկը աշխուժացրեց խմբագրության աշխատողներին, միջանցքը լցվեց հիմնականում ծեր ժուռնալիստներով, որոնք ամեն օր գովերգում էին թոշակի անցնող բանվոր ծառայողներին, բայց իրենց մասին չէին անհանգստանում: Նրանցից ոմանք պարզապես բացեցին սենյակի դուռը ու թանաքոտ գլուխները ներս բերեցին, բայց երբ կարճազգեստ աղջիկն ասաց.

- Նովիչոկ է, երիտասարդ բանաստեղծ...

Ա՜,- ձայնեցին բոլորը ու հիասթափված իրենց առանձնասենյակները դարձան:

Դուք բյուրոկրատներ եք,- գունաթափված դեմքով ասում էր Բալյանը,-Իսկական բյուրոկրատներ:

Երիտասա՛րդ,- կարճազգեստ աղջիկը գլուխը բարձրացրեց կրոսվորդի վրայից,- մանր խուլիգանության մասին որոշումը կարդացե՞լ եք: Այդ խոսքերի համար ձեր գլուխը չեն շոյի:

Նա այդ այնքան վստահ ասաց, կարծես երիտասարդը աղաչում էր, որ իր գլուխը շոյեն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես կբողոքեմ,- չէր հանգստանում Բալյանը:

- Գնացեք նամակների բաժին, ընկե՛ր,- հոգածությամբ առաջարկեց Դարեյանը,-բողոքների հարցով նրանք են զբաղվում:

Երիտասարդն այնքան էր զայրացած, որ մի պահ մոռանալով, թե որտեղ է գտնվում՝ պահանջեց բողոքի գրքույկը: Հետո հուսահատ թափ տվեց ձեռքը ու դուրս եկավ:

Իսկ արվեստի բաժնի կիսաբաց դռնից, ասես ոչինչ էլ չէր եղել, կրկին հնչեց Դարեյանի անվրդով բասը.

- Երիտասարդ կադրերի նկատմամբ դեռևս առանձին ղեկավարներ...առանձի՞ն, թե՞որոշ...

Նա առաջնորդող էր գրում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴՈՒՔ ՆՐԱՆՑ ՀԵՌԱԽՈՍ, ՆՐԱՆՔ ՁԵԶ...

- Հեռախոս ունե՞ս:

Այդ ծանոթդ է քեզ հարցնում: Հարցնում է մի այնպիսի անփույթ ձայնով, որ նշանակում է, թե «ահա՛, իսկ ես ունեմ»:

- Ինչո՞ւ վերջերս մեր տուն չես գալիս,- շարունակում է ծանոթդ,- գոնե զանգ տուր 2-0... - և ստիպում է քեզ գրել իր հեռախոսի համարը: Ու թեև դու երբեք էլ մտադիր չես նրան զանգել, բայց սրտմտած, կեղծ ժպիտով հանում ես ծխախոտիդ տուփը ու գրում ես: Ինչո՞ւ: Որովհետև, դու հեռախոս չունես: Եթե ունենայիր, ինքդ նրան առաջինը կստիպեիր գրել քո հեռախոսի համարը: Ահա թե ինչ:

Ճիշտ է, փողոցի անկյունում ետ նայելով դեն ես նետում ծխախոտատուփդ, բայց տրամադրությունդ այլևս ընկած է:

Ինչո՞ւ: Որովհետև ուրիշներն ունեն հեռախոս, իսկ դու չունես:

Դժվար է հիմա առանց հեռախոսի ապրելը:

Բայց ի՞նչ անես, երբ մեր քաղաքը աճում է շատ ավելի արագ, քան հեռախոսային ցանցի աշխատողների օպերատիվությունը: Ի՞նչ անես, երբ հեռախոսային ատրիբուտները հազվադեպ են միահամուռ հանդես գալիս:

Չե՞ս հավատում: Փորձիր մտնել հեռախոսային ցանցի գրասենյակ: Մտա՞ր: Հարցրու՝ կարելի՞ է ձեր տանը հեռախոս տեղադրել:

- Գիծ չունենք,- կասեն:

- Համար չունենք,- կասեն:

- Ո՛չ գիծ ունենք, ո՛չ համար,- կասեն:

Այս նույն, ոչ այնքան հուսադրող պատասխանները լսելուց հետո շատ քաղաքացիներ էլ, նրանց շարքում՝ Երևանի Մանուշյանի փողոցի ու նրան հարակից շատ փողոցների բազմաթիվ հեռախոսասեր բնակիչներ, դիմումները աբոնենտային բաժնի ամենակուլ դարակներին ցմահ պահ տալուց հետո վերադառնում են իրենց անհեռախոս տները:

Ոմանք վերադառնում են անվերադարձ ու անհույս, իսկ ոմանք էլ այդ անուղղելի լավատեսները, շաբաթը մեկ անգամ բարձրանում են հեռախոսային ցանցի գրասենյակը տա-նող աստիճաններով, ակնածանքով նայում են աբոնենտային բաժնի փոքրիկ պատուհանից, որի ետևում նրանց իղձերի հեքիաթային, հեռախոսային աշխարհն է, ու հարցնում են խորին հարգանքով, ցածր, կրծքային ձայնով, երկյուղածությամբ, ինչպես սրբապատկերի առաջ.

- Մեր հեռախոսը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գիծ չունենք,- ասում են նրանց:

- Համար չունենք:

- Ո՛չ համար ունենք, ո՛չ գիծ,- ասում են նրանց:

Ահա թե ինչ են ասում հեռախոսային ցանցի աշխատողները Մանուշյանի և այլ փողոցներում ապրող մի փոքրիկ խումբ գիտությունների թեկնածուների, մի տեխնիկումի դիրեկտորի տեղակալի, մի ունիվերմագի դիրեկտորի տեղակալի և մի մեծ խումբ այլ տեղակալների, բաժնի վարիչների ու շարքային ընկերների:

Եվ նրանք հեռանում են, որ էլի գան: Մի՛ մեղադրեք նրանց, մարդիկ, հասկացեք նրանց, նրանք ուզում են հեռախոս ունենալ...

Մի՛ մեղադրեք նրանց: Թողեք, որ իրենց համար տարիներ շարունակ գան ու գնան: Ո՞ւմ են վնաս տալիս... Եթե հեռախոս ստանալու իրավունք չունեն, ապա հո ունե՞ն գալ ու գնալու իրավունք: Ճի՞շտ է:

Ու մի օր էլ նրանք եկան միասին, աշխույժով, ժպիտով... Պատկերացնու՞մ եք, ժպիտ՝ հեռախոսային ցանցում: Եկան, հավաքվեցին աբոնենտային բաժնի պատուհանի մոտ ու հարցրեցին.

- Հիմա՞ մուծենք գումարները:

- Ի՞նչ գումարներ,- զարմացան աբոնենտային բաժնում:

- Հեռախոս անցկացնելու գումարները...

- Ի՞նչ հեռախոս:

- Սովորական,- պատասխանեցին երջանիկ քաղաքացիները,- դե, այն, որ իրար հետ հեռվից խոսում են: - Ու կարծելով, թե խոսքը հեռախոսի ապարատի տեսակին է վերաբերում, շտապով ավելացրին,- ինչ տեսակ ուզում է լինի: Իհարկե, մենք Մանուշյան փողոցի...

- Գիծ չունենք, համար չունենք,- փողոցի անունը լսելուն պես, արագ-արագ պատասխանեցին աբոնենտային բաժնի աշխատողները ու փորձեցին ծածկել պատուհանը:

Բայց երջանիկ քաղաքացիները այդ թույլ չտվեցին:

- Դե, լավ, մի տանջեք, խնդրում ենք, դուք հո մեզանից լավ գիտեք, որ գիծ կա:

Եվ այստեղ բացվեց մի հետաքրքրաշարժ ու աշխույժ զրույց, որի ընթացքում աբոնենտային բաժնի աշխատողները երդվում էին բոլոր հեռախոսներով, որ Մանուշյանի փողոցում գիծ չկա, իսկ քաղաքացիները արցունքն աչքերին համոզում էին, որ կա, որ իսկական հեռախոսի գիծ է, կողքի փողոցից դուրս է գալիս ու,այ, այսպես թեքվում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկերներ, դուք թյուրիմացության մեջ եք,- անկեղծորեն հայտարարեց աբոնենտային բաժնի պետ ընկ. Զավադսկոյը,- ես ձեզ հայերեն եմ ասում այնտեղ մենք ոչ մի աշխատանք չենք կատարել: Գիծ չունենք:

- Ունեք: Սյուների վրայով...

- Ի՞նչ, նույնիսկ օդայի՞ն... - աբոնենտային բաժնի պետը այնպես զարմացավ, ասես խոսքը պետությունների օդային սահմանների խախտման մասին լիներ, հետո բարձրացավ տեղից ու հեռախոսասեր քաղաքացիների հետ բռնեց դեպի Մանուշյանի փողոց տանող ճամփան: Եկավ, տեսավ, որ իսկապես գծերը քայլում էին սյուների վրայով և կանգ առնում մի հրաշալի, տուֆակերտ շինության մոտ: Սա, սա իսկապես հեռախոսային գիծ է,- գունատված մրմնջաց պետը,- նույնիսկ օդային: Երևի այստեղ մի շատ պատասխանատու ընկեր է ապրում... այնքան պատասխանատու, որ հարկ չեն համարել այս աշխատանքների մասին տեղյակ պահել նույնիսկ ինձ, աբոնենտային բաժնի պետին: Գուցե դուք գիտե՞ք, թե ով է այդ ընկ...

- Գիտենք, գիտենք,- նախանձելի համերաշխությամբ ձայնեցին հեռախոսասերները,- դա ավտոդզող ընկ. Համբարձում Հաբյանի բնակարանն է:

- Ի՞նչ...

Աբոնենտային բաժնի պետը թեթև գլխապտույտ ունեցավ ու հենվեց չարաբաստիկ հեռախոսասյուներից մեկին: Գրասենյակ վերադառնալով, նա փորփրեց բոլոր դարակները, բոլոր գրքերը, բայց նման անուն-ազգանունով մարդ չգտավ նույնիսկ հերթական ցուցակներում:

- Խայտառակություն,- քիչ անց նա բողոքում էր ցանցի գլխավոր ինժեներին,- մենք հսկայական թվով դիմումներ ենք մերժում, մերժում ենք նույնիսկ շատ այնպիսի ընկերների, որոնց խիստ անհրաժեշտ է տանը հեռախոս ունենալ, բայց մեր գրասենյակում նստած ինչ-որ մեկը ապօրինաբար, առանց դիմումի, առանց կարգագրի օդային գիծ է անցկացնում... և այն էլ ո՞ւմ համար...

- Ստո՛պ,- տեղից բարձրացավ գլխավոր ինժեներ Դերձակյանը,- այդ ինչ-որ մեկը ես եմ...

- Դո՞ւք:

- Այո, ես եմ,- Զավադսկոյին, ապա մեզ պատասխանեց Դերձակյանը,- այո, ես եմ, ի՞նչ է, իրավունք չունե՞մ իմ ուզած մարդուն լավություն անելու:

- Խախտելով կա՞րգը, հե՞րթը, էթիկա՞ն...

- Ամեն ինչ,- ասաց Դերձակյանը,- գիտե՞ք նա ինձ ինչ լավություն է արել...

Գիտեինք: Գիտեինք, որ մի երկու տարի առաջ Դերձակյանը իր անձնական ավտոմեքենան վթարի ենթարկելուց հետո այն նորոգման է տվել «ավտոդզող» Համբարձում Հաբյանին և որ-պես հատուցում խոստացել է... հեռախոս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լավություն՝ լավության դիմաց:

Հանկարծ ընկ. Դերձակյանը չմտածի, թե մենք ընդհանրապես դեմ ենք լավություն անելուն: Ո՛չ, ո՛չ, երբեք: Միայն կարծում ենք, հարգելի գլխավոր ինժեներ, որ ավելի ազնիվ կլինի լավություն անել սեփական «շրջանառու» միջոցների և ոչ թե հիմնարկի կամ այն քաղաքացիների հաշվին, ում այսօր անչափ անհրաժեշտ է հեռախոսը:

Թե չէ ի՞նչ կստացվեր: Իր տունը վերանորոգողին որպես լավության հատուցում ընկ.Դերձակյանը կնվիրեր կոմպրեսոր, եթե կոմպրեսորների գործարանում աշխատեր, կարբիդ՝ եթե ղեկավարեր Կիրովի գործարանը և համակցված կերեր՝ եթե գտնվեր նույն անունը կրող գործարանում:

Այդպես չէ՞, ընկ. Դերձակյան: Ով ինչ ունի: Ու քանի որ այսօր ձեր տրամադրության տակ բարեբախտաբար միայն հեռախոսներ են, ուրեմն՝ նրանք ձեզ հեռուստացույց, դուք նրանց հեռախոս, նրանք ձեզ կարի մեքենա, դուք նրանց հեռախոս, նրանք ձեզ ԻԼ-18-ի տոմս, դաշնամուր, օլիֆ և լվացքի հեղուկ՝ դուք նրանց հեռախոս: Ով ինչ ունի: Մենք ձեզ ֆելիետոն, դուք մեզ...

Ասենք, շնորհակալություն, մենք հեռախոս ունենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԽԵՆԹԻ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ

Տպագրվելու հազար և մեկ միջոցներ կան: Առաջին միջոցը լավ գրելն է, իսկ մնացած հազարը... Այդ մնացած հազարին փառահեղորեն տիրապետում է տարիներ շարունակ գրականության շենքի ետնամուտքի դռանը ցեխոտ կոշիկներով դոփդոփող, այսպես կոչված Սուրեն Սիրակը:

Հազար միջոցները իրարից անկախ հանդես չեն գալիս, նրանք նույն սիստեմի հաջորդական օղակներն են, որ սովորական սխեմաների վրա պատկերվում են ուղիղ վարընթաց գծով: Հազարի առաջին միջոցը խեղճ ձևանալն է, երկար ժամանակ աչքերը չթարթելու ընդունակությունը, Սիրակը կանգնում էր Պետհրատի միջանցքում, պատի տակ ու խեղճ-խեղճ նայում անցուդարձ անող խմբագիրներին: Նրա ողջ կերպարանքը հայտարարում էր.

- Խեղճ տղա եմ, ոտանավորս տպագրեք, է՛լի:

Չանցավ: Խմբագիրները խիղճ չունեին, և Սիրակը դիմեց հաջորդ միջոցին: Նույն միջանցքում նա կանգնեցնում էր որևէ մեկի ու նահատակի ձայնով ասում.

- Եթե չտպեն, ուզում եմ ինձ սպանել, ի՞նչ ես կարծում: - Եվ որովհետև ոչ ոք իրկարծիքը անկեղծորեն չէր հայտնում, ոտանավոր գրող երիտասարդը անցավ մյուս միջոցին:

- Ես խենթի վկայական ունեմ,- հայտարարեց նա,- եթե չտպեք, ձեզ կսպանեմ կամ կհասցնեմ առողջությունը քայքայող մարմնական որևէ վնասվածք:

Այս երրորդ միջոցը, այնուամենայնիվ, ազդեց Պետհրատի առանձին աշխատողների վրա, որովհետև մի քանի տարի առաջ հրատարակվեց Սիրակի ոտանավորների մի նիհարագույն բրոշյուր: Եվ, ինչպես ասում են, կենացները քաղցրացան: Անմեղսունակի թղթի փոխարեն բրոշյուրը ձեռքին բռնած, Սիրակը անցավ հաջորդ միջոցներին:

- Ես տաղանդավոր եմ, նախանձում են ինձ, ժողովածուս որ կարդացին, էլ չեն ուզում տպել: Կտեսնենք: Ձեզ հետ մինիստրությունում կխոսենք: Ձեզ հետ Կենտկոմում կխոսենք: Ձեզ հետ ՄԱԿ-ում կխոսենք:

Հետո մի դիմում գրեց ՍՍՌՄ գլխավոր դատախազին, թե ինձ հարկավոր է ձեր սանկցիան՝ բանաստեղծություններս տպագրելու համար: Մի ուրիշն էլ՝ ասում են, ուղարկեց ՍՍՌՄ պաշտպանության մինիստրին, տեղեկացնելով, որ Հայպետհրատում իր ոտանավորները չեն տպում, որովհետև ինքը Հայրենական պատերազմի մասնակից է: Ու մինչև պատասխաններն ստանալը, սկսեց զբաղվել իր բանաստեղծական վարպետության բարձրացման հարցով:

«Ինչո՞ւմն է գաղտնիքը, որ ուրիշները լավ են գրում: Մի՞թե ես չեմ կարող գրել» - մտածեց նա ու անցավ գաղտնիքը որոնելուն: Եվ գտավ: Պարզվեց, որ հանճարեղորեն գրելը ամենադատարկ բանն է: Հարկավոր է միայն Մոպասանի օրինակով նստել ու ոտքերը ջրի մեջ դնել: Մուսան իրեն սպասեցնել չտվեց: Մի քանի օր ոտքերը ջրի մեջ դնելուց հետո Սիրակը ստեղծեց մի ցնցող քառատող, փիլիսոփայական մի զարմանալի տրակտատ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես Սոկրատ չեմ, ոչ էլ Զենոն,
Ոչ իմաստուն Արիստոտել,
Սակայն ինչպես՝ մի Պլատոն
Փիլիսոփա կուզեմ լինել:

Այս խոր միտքը և իր համեստ ձգտումը արտահայտելուց հետո Սիրակը շարունակեց որոնումները: Ջուրը կարծես թե այն չէր: Այո՛, այն չէր: Հետաքրքիր է, իսկ ինչպե՞ս էր գրում, օրինակ, Բալզակը: Ի՞նչ, անընդհատ սո՞ւրճ էր խմում: Ահա մի պարզ ու միաժամանակ արդյունավետ միջոց: Բայց դե հիմա եկ ու իմացիր ի՞նչ սուրճ էր խմում՝ տաճկակա՞ն, թե եվրոպական, կաթո՞վ, թե՞ առանց կաթի, քաղցր, թե՞ կծովի: Թյուրիմացություններից խուսափելու նպատակով, նա փորձեց սուրճի բոլոր տեսակները և իր գրական ժառանգությունը հարստացրեց մի անչափ հետաքրքիր հանգով. «աքացի-քաղաքացի»: Դրանից հետո նա Պուշկինի պես անձրևոտ օրերին նստեց տանը, Չեխովի օրինակով թուղթ ու մատիտ առավ ու ռեստորան գնաց: Շիրվանզադեի նման սկսեց հաշվապահական մատյաններում գրել... Բայց այդ բոլորը այն չէին: Ի՞նչ անել: Եվ կրկին օգնության հասավ պատմությունը: Մեկից լսելով, որ մի քանի տաղանդավոր գրողներ հակում են ունեցել դեպի մանր խուլիգանությունը, Սիրակը հանգեց ամենապարզ մի հետևության: Ուրեմն, եթե ինքը զբաղվի խոշոր խուլիգանությամբ, հնարավոր է, որ նույնիսկ հանճարեղ դառնա:

Արդյունքը չուշացավ: Ճիշտ է, հետևության մի փոքրիկ մասը չկատարվեց, այսինքն՝ Սիրակը բանաստեղծ չդարձավ, բայց փոխարենը անառարկելիորեն դարձավ անբարոյական, բախտախնդիր և խուլիգան: Իր այդ նվաճումները նա փորձեց հանգավորել՝ հիմքում դնելով «աքացի-քաղաքացի» նորարարական հանգը.

Մեղադրում են, հաճախ նախատում,
Որ ես շատ չար եմ ու կնամոլ,
Լեզվիս զսպանակ երբեք չեմ դնում,
Թե խուլիգան եմ ու գինեմոլ:

Ասում են, խոսում, տալիս աքացի,
Վրաս խոսում են փոքր ու մեծ,
Թե, Սիրակ, եղիր լավ քաղաքացի
Հետո նոր որպես բանաստեղծ.

Այս «սարսափելի» պահանջները դնողների դեմ խռոված, Սիրակը վերցնում է իր գլուխգործոցները՝ թվով 200-300 հատ (բանաստեղծությունը հատով հաշվելը նրանից ենք վերցրել), տանում Պետհրատ ու սպառնում.

- Տպեք, թե չէ ինքնասպանություն կգործեմ կամ սպանություն:

- Ես քո ձեռքը չեմ բռնի,- կարդալուց հետո հուսահատված ասում է խմբագիրը,- որովհետև եթե տպեմ՝ ինքս պիտի ինքնասպանություն գործեմ կամ սպանություն: Դրանից հետո ապրել չարժե:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նույն միտքը, մի քիչ ավելի մանրամասնորեն, արտահայտում են նաև գլխավոր խմբագրությունն ու դիրեկցիան: Սիրակն օգտագործում է տպագրվելու 999 միջոցները և իր նուրբ, պոետիկ հոգով զգալով, որ ոչինչ չի օգնում, անցնում է վերջին միջոցին՝ շանտաժին: Թաքուն հանում է իր բոլոր գլուխգործոցները, տեղը դնում Գյոթեի, Հայնեի, Շչիպաչովի և չինական կլասիկների բանաստեղծությունների մի փունջ հաջող և անհաջող թարգմանություններ, ու բղավում միջանցքում, թե Հայպետհրատը Սիրակից բացի չի ընդունում նաև Հայնե և նմանապես Շչիպաչով, և նույնիսկ եղբայրական չին կլասիկներ:

- Էստեղ ինչո՞ւ ես բղավում,- խորհուրդ է տալիս արդեն տարեց մի Սիրակ, որը Պետհրատի միջանցքներում երիտասարդ Սիրակներ է հավաքագրում,- քեզ համար ստեղծված են բոլոր հնարավոր պայմանները: Թո՛ղ պոեզիան, հետևիր ինձ, գրիր արձակ դիմումներ և բողոք-զեկուցագրեր: Դու կգրես, ես կգրեմ՝ կարծիք կստեղծվի: Տասը չի հավատա, մեկը կհավատա...

Եվ Սիրակը գրում է: Ստեղծագործական նման պոռթկում նա կյանքում չի զգացել: Ու հեռագրա-փոստային ուղիներով հոսում են թույնը, մաղձը, գարշահոտ զրպարտությունն ու հայհոյանքը...

Իսկ այնտեղ կարդում են ու զայրանում, կարդում են ու տարուբերում գլուխները, թե ինչպե՞ս կարող է մեկը այդքան ցած ընկնել, ստորանալ, բացարձակ զրպարտել ազնիվ մարդկանց: Եվ ոչ մեկի մտքով չի անցնում բռնել բարոյազուրկ խուլիգանի և զրպարաչի ձեռքը ու օրենքի համաձայն դատել որպես իսկական քրեական հանցագործի:

Խենթ է, ի՞նչ կարող ենք անել,- ասում են նրանք:

Ո՛չ: Եկեք պարզենք: Եթե խենթ է, ապա այդպիսիների համար հատուկ մեկուսարաններ կան, կարելի է մարդասիրությունից ելնելով մեկը հատկացնել նրան և բացառության կարգով նույնիսկ թանաք-գրիչ տալ՝ թող գրի որքան սիրտը կուզի:

Իսկ եթե խենթ չէ, ապա ուրեմն կեղտոտ զրպարտիչ է և նույն մարդասիրությունից ելնելով նրան պետք է խստորեն պատժել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՉԱՐ ԿԱՏԱԿ

Ինֆորմացիայի բաժնի գրական աշխատող Բաբայանին չար լեզուները անվանում էին դանդաղընթաց, բայց նրա բախտը չէր բերում, որովհետև եթե հավատանք ժողովրդական «Դանդաղ գնաս՝ հեռու կգնաս» առածին, ապա նա հիմա խմբագրի տեղակալ պետք է լիներ կամ առնվազն՝ բաժնի վարիչ: Բայց նա խմբագրի տեղակալ չէր, բաժնի վարիչ էլ չէր, այլ միայն գրական աշխատող: Այո, քսան տարի նա առաջնորդող չէր գրել:

Ինքը՝ Բաբայանը, սակայն, դժգոհ չէր իր բախտից ու թեև 20 տարվա ընթացքում ոչ մի անգամ իր ազգանունը տպված չէր տեսել թերթում, փոխարենը աշխատավարձի ցուցակում նրա ազգանվան դիմաց միշտ ավելի շատ հոնորար էր գրված լինում, քան ուրիշներին:

Նա շատ քիչ էր խոսում, «լետուչկաների» ժամանակ երբեք ելույթ չէր ունենում, բարի, անչար ժպիտը դեմքին լսում էր իր հասցեին եղած քննադատական դիտողությունները և գլուխը ծանրորեն շարժում ի նշան այն բանի, որ լիովին ընդունում է, կաշխատի վերակառուցել իր աշխատանքը և առաջիկայում սխալներ թույլ չտալ:

Բայց եթե նա առերես ոչ ոքի հետ չէր խոսում, ապա տաղանդավորապես տիրապետում էր հեռախոսին, գիտեր նրա բոլոր կանոններն ու թուլությունները և նույնիսկ այն, թե ինչպես առանց սկավառակը պտտեցնելու կարելի է հավաքել ուզածդ համարը: Քնքշությամբ, ինչպես սիրած էակին, վերցնում էր լսափողը, սեղմում ականջին այնքան ամուր, որ կոշտուկ էր առաջացրել, և ընկնում էր մի ուրիշ, հետաքրքիր աշխարհ: Այդ ժամանակ ուզում ես խոսիր, ձեռքդ սեղանին խփիր, գոռա նրա հենց մյուս ականջին՝ ոչինչ չի լսի: Կնայի բարի, անչար իր հայացքով և հանգիստ կասի լսափողին.

- Խմբագրությունից է, ձեզ անհանգստացնում է Բաբայանը:

Կամ՝

- Այո՛, Բաբայանը լսում է:

Նրա մոտ սերը դեպի հեռախոսը ծայրահեղության էր հասնում և հենց այդ էլ մի օր կործանեց նրան...

Թերթը տպագրեց մի շատ կարևոր պաշտոնական նյութ՝ բամբակի մասին: Քարտուղարությունն իրար անցավ: Տեղերից արձագանքներ էր հարկավոր տպագրել: Այդ մասին սեփական թղթակիցները տեղյակ պահվեցին, խմբագրության աշխատողները գործուղվեցին հեռավոր շրջանները, իսկ Բաբայանը... Բաբայանին հանձնարարվեց ինֆորմացիա կազմել քաղաքամերձ մի գյուղից:

- Մեքենա պետք չէ, ես ոտքով կգնամ,- ասաց Բաբայանը, քաշվեց իր սենյակը, դուռը փակեց, և քիչ հետո նամակների բաժնի գրական աշխատող Սարգսյանը հարևան սենյակից լսեց Բաբայանի ինքնամոռաց շշունջը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տափարակ գյո՞ւղն է, ընկ. Մկրտչյանին եմ ուզում, ընկ. Մկրտչյա՞ն (նա ընկեր ասելու փոխարեն սովորաբար ընկ. էր ասում), խմբագրությունից է, Բաբայանն է անհանգստացնում: Ինչպե՞ս եք, հեռախոսը լավ աշխատո՞ւմ է, մերսի, իմն էլ ոչինչ: Հա, ընկ. Մկրտչյան, թերթը կարդացած կլինեք, մի քանի թվեր ու ազգանուններ են պետք: Ինչո՞ւ չեմ գալիս, շատ շտապ է, ի՞նչ, չեք կարող, մինչև դաշտում չլինե՞ք, վայ, ախր շտապ է հարկավոր, ի՞նչ, մի ժամից զա՞նգ կտաք, լավ, սպասում եմ:

Նամակների բաժնի գրական աշխատող Սարգսյանը, Բաբայանի խոսակցությունը լսելով, հանկարծ ձեռքը խփեց ճակատին, վեր թռավ տեղից, վազեց գրադարան ու սկսեց փսփսալ գրադարանավարուհու հետ...

Որոշ ժամանակ անց Բարաբանի հեռախոսը ձայնեց: Բաբայանը վերցրեց լսափողը ու հափշտակված այն մոտեցրեց ականջին: Հեռախոսը թշշաց, վշշաց, հետո կանացի մի ձայն հարցրեց.

- 2 - 17 - 48 համա՞րն է, պատասխանեցեք Տափարակին:

- Այո՛,- հալվեց Բաբայանը,- ընկ. Մկրտչյա՞ն, հիմա, մի թուղթ վերցնեմ, այո՛, հեռախոսը ինչպե՞ս է, այո՛, այո՛, լսում եմ: Այսպես, ուրեմն առաջավոր կթվորուհի Փառանձեմ Դադայանը պարտավորվել է յուրաքանչյուր կովից ստանալ 6000 լիտր կաթ, ինչքա՞ն, 6000 լիտր, շատ չէ՞, հա՞, դե լավ է, լավ, ուրի՞շ, բամբակի մասին բան չասա՞ց, ոչինչ, ես կգրեմ, հա, ուրիշ ո՞վ... այդպես... Հո-ռոմ-սիմ Սիրա... ի՞նչ, Կիրա... ի՞նչ...

Մի քանի րոպե անց Բաբայանը թերթում էր անցյալ տարվա կոմպլեկտը: Ահա նա գտավ կենսաթոշակների ավելացման վերաբերյալ արձագանքները ու սկսեց առանց դժվարության արտագրել: Հետո նա ինֆորմացիան տարավ քարտուղարություն՝ մեքենագրելու վիզա ստանալու համար, մեքենագրատանը շշուկով թելադրեց այն ու զգուշությամբ բացեց պատասխանատու քարտուղարի դուռը:

- Ի՞նչ կա, Բաբայան, ինֆորմացիան պատրա՞ստ է,- մռայլ հարցրեց քարտուղարը:

Բաբայանը գլխով արեց:

- Փաստերը լա՞վ ես ստուգել:

Բաբայանը գլխով արեց երկու անգամ՝ իբր կրկնակի է ստուգել:

Պատասխանատու քարտուղարը կարդաց ինֆորմացիան:

- Հիանալի պարտավորություններ են,- քմծիծաղ տվեց նա,- Միության մեջռեկորդային, այսպես, շատ լավ է...Օ՛, ի՛նչ թվեր են...

Բաբայանն ասաց.

- Դե, այսպես ասած, ի պատիվ բամբակի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բաբայանը դուրս եկավ: Եթե նա ետ նայեր, կտեսներ, թե ինչպես քարտուղարն անձայն հայհոյեց ու ինֆորմացիան նետեց զամբյուղը: Բայց նա ետ չնայեց ու գոհ, որ շուտ հասցրեց նյութը, վերադարձավ իր սենյակը, մտածելով. «Կարող է նույնիսկ պարգևատրեն, իսկ եթե չէ՝ մի գրություն կխնդրեմ, որ մեր տանը հեռախոս դնեն, այս անգամ չեն մերժի...»:

Հեռախոսը կատաղի զանգեց: Բաբայանը մոռացավ ամեն ինչ ու վերցրեց լսափողը:

- Բաբայանը լսում է: Ի՞նչ, ընկ. Մկրտչյա՞ն, հաղորդո՞ւմ եք, ի՞նչ, բա մի քիչ առաջ... ես արդեն հանձնել եմ նյութը, ո՞վ, դուք չե՞ք եղել... - նա գունատվեց ու առաջին անգամ կյանքում՝ առանց խոսակցությունը վերջացնելու, ցած դրեց լսափողը:

- Այս ի՞նչ էր... - հուզմունքից դողալով հարցրեց նա բարձրաձայն:

Որպես պատասխան՝ հարևան սենյակից ականջ խլացնող ծիծաղ և ծափեր լսվեցին:

Հաջորդ օրը, այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, Բաբայանը հեռացվեց խմբագրությունից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԻՐԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

- Մուկո՛ւչ ջան, քո ազիզ կենացը:

Ունիվերմագի դիրեկտոր Մկրտիչ Լալայանի հյուրասեր սեղանի շուրջն էին հավաքվել նրա սրտակից ընկերները: Առիթը նրա փոքրիկ աղջկա՝ Լենայի ծննդյան տարեդարձն էր: Թեև օրվա հերոսը վաղուց արդեն քնել էր, բայց քեֆը դեռևս շարունակվում էր: Իրար ետևից սենյակ էին մտնում ունիվերմագի պատասխանատու աշխատողները, ֆիլիալների վարիչները: Նրանք իրենց հետ բերած հաստափոր ծրարները ամոթխածությամբ հանձնում էին տանտիկին Սոնյային, որը հենց դռան մոտ ծանր ու թեթև էր անում ծրարները ու որոշում ժպտա՞ ներս եկողին, կատա՞կ անի, քաղաքավարությամբ նե՞րս հրավիրի, թե՞ առանց նայելու ճանապարհ տա: Բայց եկողները միամիտ չէին և առաջին անգամը չէր, որ ներս էին մտնում իրենց հովանավորի հոյակապ առանձնատան դռներից: Տիկին Սոնյայի դեմքը շպարի տակից հրճվանքից փայլում էր՝ է՛լ կտորեղեն, է՛լ ոսկյա մատանիներ, է՛լ ժամացույց, է՛լ փղոսկրյա փոքրիկ նրբագեղ իրեր, բոլորն էլ նորաձև ու նորահայտ:

- Տղերք ջան,- հանկարծ տեղից վեր թռավ Մուկուչ Կարպիչը, կտրելով Տիգրան Գուրգենիչի ճառը ընտանիքի կոճղի և մատղաշ ճյուղերի մասին,- սաղ հեչ, մենք սաղ ըլնենք, իրար շահենք, իրար պահենք: Կեցցե՛:

- Կեցցե՛, կեցցե՛, Մուկուչ Կարպիչ, մեր հա՛յր,- հառաչեցին ու բացականչեցին բոլորը,- դու մեր գլխից անպակաս ըլնես:

***

Արդեն լուսանում էր, երբ տղերքը ցրվեցին, բայց Մուկուչ Կարպիչի քունը դեռ չէր տանում: Մի խոր ու ծանր վիշտ ալեկոծում էր սիրտը:

- Սիրանուշ,- ձայն տվեց նա իր կյանքի ընկերուհուն և, երբ կինը մոտեցավ՝ավելացրեց,- ի՞նչ պետք է լինի մեր Լիզիկի վերջը: Լիզան՝ Մուկուչ Կարպիչի ավագ դուստրը, ավարտում էր Երևանի ռուսական մանկավարժական ուսումնարանը և շրջան պիտի մեկներ, ահա թե ինչն էր մտատանջում հոգատար հորը:

Կինը խորամանկորեն ժպտաց:

- Ու, դմբլի՛կ,- փաղաքուշ ձայնով ասաց նա,- բա ես կթողնե՞մ, որ իմ կուլտուրական, նեժնի ու կրթված Լիզիկս գյուղ գնա: Մաղարիչ, թե չէ չեմ ասի ինչ պիտի անեմ:

Մուկուչը արագորեն ձեռքը գրպանը տարավ, մի մեծ թղթադրամ հանեց, տվեց տիկին Սիրանուշին ու գինովի աչքերը հառեց նրա կարմիր շրթունքներին:

- Ամուսնացնում եմ,- հուզված շշնջաց վերջինս:

Մուկուչ Կարպիչի համար այդքանն էլ բավական էր: Նա իսկի չհարցրեց էլ, թե ո՞ւմ հետ են ամուսնացնում իր աղջկան, Լիզիկը փրկված էր: Իր տարիքին անհամապատասխան շար-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ժումներով Մկրտիչ Լալայանը մի «շալախո» թռավ երկար սեղանների շուրջը, ապա մոտեցավ կնոջը, քնքշությամբ համբուրեց նրա իմաստուն ճակատը ու հատ-հատ արտասանեց՝

- Դեռ Պուշկինն է ասել. «Աղջիկ մարդու տալն էլ մի փեշակ է»: Ես կպսակեմ Լիզիկիս, հենց էգուց կպսակեմ, պատրաստվիր անգին Սիրանուշ, վաղը գնում ենք խնամախոս:

Նրան Մուկուչ Կարպիչ Լալայան կասեն. ասածն արած է: Իսկապես, հենց մյուս օրը կնոջ ու աներձագերի հետ նա մտավ «փեսացու» Հակոբի տունը: Ճիշտ է, միահարկ տան տեսքը մի փոքր զցեց նրա տրամադրությունը, բայց նա այնպիսի մարդ չէր, որ կես ճանապարհից ետ դառնար:

- Լսիր, տղա՛ս,- դիմեց նա շփոթված Հակոբին,- լսել եմ, դու խելքահան ես արել իմ Լիզիկին, դե լավ, հերիք է ինչքան ման եկաք, ես համաձայն եմ ձեր ամուսնությանը: Մի բարձի ծերանաք:

Հակոբի դեմքը պատի գույն ստացավ.

- Բայց ես... մի ամիս չկա, որ ճանաչում եմ նրան... հետո ես հարսանիքի...

- Վահ, մենակ է՞դ,- զարմացած հարցրեց Մկրտիչ Լալայանը,- էդ ո՞վ է քաղաքում, որ չի ճանաչում ունիվերմագի դիրեկտոր Մուկուչ Կարպիչին: Իսկ փողի մասին անհոգ մնա, տղա ջան: Ես քաղաքում քառասուն տուն եմ պահում, քեզ էլ կպահեմ:

Եվ Լիզա Լալայանն ամուսնացավ Հակոբ Բալայանի հետ: Նորապսակները համակերպվել էին իրենց ճակատագրին: Ապրում էին խաղաղ ու հանգիստ: Բայց Լիզան, որն իր կյանքը անց էր կացրել փարթամ ու ճոխ, որը կյանքում ոչ մի դժվարություն չէր տեսել, ոչ մի պակասություն չէր զգացել, որի բոլոր ցանկությունները կատարվել էին, կարծես թե ձկան հրամանով, հիմա մի սովորական ընտանիքում շատ դժվարություններ էր տեսնում: Այժմ նա ստիպված էր աշխատել (հոր միջնորդությամբ արդեն տեղավորվել էր դպրոցում, որպես ուսուցչուհի), լվացք անել, ասեղ վերցնել ձեռքը, ճաշ եփել և ընտանեկան այլ գործեր: Այս բոլորը Լիզան, ճիշտ է, ո՛չ հաճույքով, բայց կատարում էր ու կկատարեր, եթե ամենակարող Մուկուչ Կարպիչը և տիկին Սիրանուշը չլսեին այդ մասին:

- Ի՞նչ,- միասին դուետ ճչացին նրանք,- մեր վարդի պես պահած, բամբակի մեջ փաթաթած աղջիկը լվա՞ցք անի, հատա՞կ մաքրի, երբե՛ք:

Ու ձեռնամուխ եղան ամուսիններին Հակոբի մոր տանից բաժանելու հարցին:

- Վա՛խ, քոռանամ ես, էդ ի՞նչ օրն ես ընկել, իմ ազիզ բալա,- բացականչեց տիկին Սիրանուշը, տեսնելով իր մոտ հյուր եկած աղջկան,- Մուկո՛ւչ, Մուկուչ, հլա մի տես, մեր սիրուն, մեր փափլիկ, մեր գյոզալ Լիզիկը էս ի՞նչ օրն է ընկել, երեսին գույն չի մնացել: Անխի՛ղճ, գազա՛ն,- հանկարծ գոռաց նա ամուսնու վրա,- ե՞րբ պիտի հանես իմ Լիզիկին այդ պաղվալից, փողդ ես ափսոսո՞ւմ:

Հաջորդ օրը երիտասարդ ամուսինները արդեն ապրում էին քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի մի բազմահարկ շենքում, Մուկուչ Կարպիչի վարձած բնակարանում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շուտով նրանք ծնողներ դարձան, բայց նորածին մանկանը բախտ չվիճակվեց ճանաչել իր ծնողներին, որովհետև տիկին Սիրանուշը նրան իսկույն իր առանձնատունը տարավ, վախենալով, թե երեխան կարող է դաստիարակվել անկուլտուրական մարդկանց մթնոլորտում, Հակոբի անգրագետ մոր մոտ:

Փոքրիկ Լյուսին իր բարի պապիկից նվեր ստացավ մի ոսկյա մատանի, իսկ յոթ ամսական հասակում արդեն չորեքթաթ էր անում մանիկյուրած մատներով:

Փեսան՝ Հակոբ Բալայանը չարդարացրեց Մուկուչ Կարպիչի փայփայած հույսերը՝ «գործնական, շնորհքով» մարդ դուրս չեկավ:

- Ա՜խ, ոնց սխալվեցինք, ոնց սխալվեցինք,- հարևաններին ու հարևանուհիներին, ծանոթներին ու փողոցից անցնող մարդկանց կանգնեցնում ու պատմում էր տիկին Սիրանուշը,- փեսաս անշնորհք է, անշնորհք: Մուկուչս առաջարկում է իր ունիվերմագի սեկցիաներից մեկում վաճառող աշխատել, չի համաձայնվում, գնացել է ինչ-որ ֆիզկուլտ հրահանգիչ է աշխատում: Բա նա ռոճիկով կարո՞ղ է իմ Լիզիկիս պահել:

Նույն բանն էր պատմում նաև Մուկուչ Կարպիչը ունիվերմագի բոլոր հաճախորդներին: Եվ այսպես ամեն օր:

Ասում են համբերությունը կյանք է: Երևի սա ճիշտ է: Բայց Բալայան Հակոբի համար այլևս մահ էր: Ու մի օր նա պահանջեց կնոջից՝ նախ Լյուսիին բերել տուն և երկրորդ այլևս երբեք ոտք չդնել ծնողների տունը:

Երեկոյան Հակոբը հրավիրվեց Մուկուչ Կարպիչի տուն՝ ընտանեկան լուրջ խորհրդակցության, որտեղից վերադարձավ պարտված՝ դեմքին ու կողերին ունենալով լուրջ վնասվածքներ, որոնք հասցրել էին հարգելի աներ Մուկուչ Կարպիչը, նրա որդին ու սրտակից ընկերները:

Իսկ դրանից ուղիղ մեկ ժամ հետո Բալայանների ընտանիքում բարձրաձայն ու խրոխտ հնչում էր Մուկուչ Կարպիչի ձայնը.

- Է՛ս թաշկինակը ես եմ առել, էս մերն է, վերցրու, Սիրանուշ, էս հեծանվի ակն էլ դրանցն է, իրենց կողմը շպրտիր:

Իսկ մա՜յրը... մայրը չէր տեսնում աղջկա դժբախտությունը: Նա ներվային շարժումներով հավաքում էր ամուսնու կողմից դեպի իրեն շպրտվող իրերը՝ հետն էլ մխիթարելով հեծկլտացող աղջկան՝

- Ոչի՛նչ, Լիզիկ ջան, պուպուշ ջան, մի մտածիր, քո հերը որ ուզենա, հենց էգուց էլ քեզ համար մի մարդ կճարի: Էսպես բաներից որ տխրես շուտ կծերանաս: Օրինակ վերցրու քո քեռուց. մի անգամ ամուսնացավ անհաջող, սխալվեց, երկրորդ անգամ՝ սխալվեց, երրորդ անգամ՝ սխալվեց: Ի՞նչ կա որ, սխալները մարդու համար են: Մարդ պետք է իր սխալներից սովորի: Տեսնո՞ւմ ես նրա չորրորդ կինը ինչքան լավը դուրս եկավ: Դե, մի լաց լինի, միլայա, թշերիդ կնճիռներ կառաջանան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ Մուկուչ Կարպիչը, իր հալալ քրտինքով վաստակած իրերի հետ միասին վերցնելով նաև Լիզիկին, սլացավ դեպի իր առանձնատունը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Տարիներ առաջ, փետրվարյան մի օր Աշտարակի շրջանի Լուսակերտի յոթնամյա դպրոցի դիրեկտորի առանձնասենյակի դուռը զգուշությամբ բացվեց:

- Ես հայոց լեզվի մասնագետ եմ,- դանդաղորեն առաջանալով սկսեց ներս մտնողը: - Ինձ ուղարկել է լուսավորության մինիստրությունը:

- Ձեր դիպլոմը....

- Միայն այդ չունեմ,- մրմնջաց գործուղված ընկերը ու մեկնեց դիմումը, որտեղ գրված էր երեք բառ, «խնթրում, ընդունեկ դասատու»:

Դպրոցի դիրեկտորը մտածեց. եթե ուղարկել է մինիստրությունը, ժողկրթբաժինն էլ դեմ չէ, ուրեմն մի բան գիտեն: Բողոքեմ, վայ թե սրանից վատին ուղարկեն: Մինչև տարվա վերջը աստված ողորմած է...

Լեզվաբանը տարվա վերջին ընկավ «դասաժամերի կրճատման տակ»: Նա սիրտ չարեց նոր դասաժամեր խնդրել, բայց փոխարենը ուսուցչուհի Գոհար Զաքարյանից խնդրեց նրա ձեռքն ու աշխատավարձը:

Անցավ երեք տարի:

- Սիրելիս, այսպես ապրել չի լինի, գոնե կոլտնտեսություն մտիր,- սկսեց հորդորել Գոհարը:

- Հա՛յ, հա՛յ, ես, Վարագ Կարագյանս, կոլտնտեսակա՞ն, ձե՞ռ ես առնում ինձ: Թողնեմ, որ տաղանդս կորչի՞: Եթե ես ուզենամ, հենց հիմա որպես ժուռնալիստ կաշխատեմ:

Ասաց ու սկսեց:

- Դիրեկտոր ջան, առածը հո զուր չի ասում՝ լավություն արա, ջուրը գցի: Ինձ մի բնութագիր տուր գնամ ժուռնալիստ դառնամ. կնոջս խոսք եմ տվել:

- Ախր չորս ամիս ես աշխատել,- մոլորվեց դպրոցի դիրեկտորը:

- Դե, դու էլ գրի չորս տարի, մեծ բան է, է՛լի: Եթե վախենում ես, թող ես գրեմ, դու մենակ պեչատը խփի, հը՞:

- Ա՛ռ, ա՛ռ,- զայրացավ դիրեկտորը ու ձեռքի կնիքը ուժգնորեն խփեց Վարագ Կարագյանի պարզած թղթերին,- ա՛ռ, գնա, հոգիս ազատվի...

Ու Վարագը գրեց: Գրեց, որ ինքը երեք տարի աշխատել է Լուսակերտի յոթնամյա դպրոցում, որ «որպես ուսուցիչ լավ է տիրապետում իր գործին, և որպես լավագույն ուսուցիչ միշտ արդարացրել է իրեն», որ մեծ սեր ունի դեպի պատի թերթը: Ինքնակենսագրության մեջ էլ, արհամարհելով ճշմարտության ամենատարրական պահանջները, նշեց, որ ինքը շրջկոմի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քարտուղար է եղել, որ ավարտել է հայկական մանկավարժական ինստիտուտը... Կարճ ասած, իր բոլոր երազները... ու այս ամենը ներկայացրեց ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչությանը:

Երևանում անցկացրած երկամսյա փորձաշրջանը ոչ մի արդյունք չտվեց:

- Նշանակենք Գորիսի թղթակից, լեռնային օդ է, գուցե մի բան դուրս գա,- մտածեցին վարչության ղեկավարները: Վարագ Կարագյանը մեկնեց Գորիս:

Սպասեցին մեկ ամիս՝ ձեն-ծպտուն չկա: Երկրորդ ամսին Կարագյանից ստացվեց մի ինֆորմացիա, որի համար հարկ եղավ նրան Գորիսից կանչել՝ ինֆորմացիայի միտքը անձամբ պարզաբանելու համար: Երրորդ ամսին հաղորդվեց նրա մի այլ ինֆորմացիան, որը, ինչպես պարզվեց, շրջանային թերթի աշխատողներից մեկն էր գրել:

Եվ հանկարծ սկսվեց ծրարների տարափ Գորիսի ու Սիսիանի շրջաններից: Ավա՜ղ, դրանք Վարագ Կարագյանինը չէին: Գրում էին տարբեր մասնագիտությունների մարդիկ, գրում էին մատուցողներ ու գործակատարներ: Եվ բոլորն էլ նույն թեմայով՝ «Աստված սիրեք, ազատեցեք մեզ ձեր թղթակցից»: Նամակները սովորաբար եզրափակվում էին չարաբաստիկ թղթակցի դրամական պարտքերի երկար ցուցակներով: Կարագյանը խրվել էր պարտքերի մեջ, վարում էր շռայլ ու անբարոյական կյանք:

- Կանչենք Երևան, հարցը պարզենք,- համբերությունից դուրս եկած որոշեցին ռադիոյի ղեկավարները:

Մեկ ամիս անընդհատ որոնում էին, բայց արկածախնդիր Վարագը չկար ու չկար: Գորիսի թղթակցին հայտնաբերեցին Երևանում՝ իր զոքանչի տանը...

Ուղիղ երկու շաբաթ հետո կտրվեց Վարագ Կարագյանի թղթակցական կյանքի թելը:

- Լսիր, խելքդ գլուխդ հավաքիր, երեխային վերցնենք՝ գնանք ձեր գյուղը: Ախր ծնողներդ էլ մեղք են, մենակ են: Գնանք, ես դպրոցում կաշխատեմ, դու էլ կոլտնտեսությունում,- նախորդ հորդորանքի համեմատ քիչ ավելի բարձր տոնով համոզում էր կինը:

- Գյուղ գնալը մտքիցդ հանիր,- վիրավորված առարկեց Կարագյանը,- ամեն ինչ կդառնամ, բայց ո՛չ շարքային աշխատող, իմ մասին դեռ կլսեք:

Ու լսեցին...

Հենց հաջորդ օրը նա այցելեց լուսակերտցի իր ծանոթ Նիկոլ Գաբրիելյանին, խանդավառված պատմեց իր «աշխատանքային հաջողությունների» մասին, գիշերեց նրա տանը ու առավոտ վաղ անհետացավ տանելով իր հետ տանտիրոջ ոսկյա ժամացույցն ու մատանին: Հարևան շրջանում էլ մի միամիտ գյուղատնտեսի հավատացնելով, թե ինքը ռադիոյի գյուղբաժնի պատասխանատու խմբագիրն է, նրան առաջարկեց անցնել իր մոտ աշխատանքի՝ որպես տեղակալ: Հետո ամոթխածությամբ 40 ռուբլի պարտք խնդրեց:

Ու ահա նորից Երևանում է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էս ո՞ւմ եմ տեսնում, էս ո՞ւմ եմ տեսնում,- ձեռքերն առաջ պարզելով, դիմավորում է նա իր ամենամոտ ընկերոջը՝ Հրաչյա Հակոբյանին և անմիջապես էլ ընդունում տանջված, հուսահատ կերպարանք,- է՛, Հրաչիկ ջան, չգիտեմ ինչ անեմ:

- Ի՞նչ է եղել:

- Տունը վերանորոգում ենք, չեմ իմանում որտեղ գիշերեմ:

- Մեր տանը,- շտապ ասում է Հրաչիկը, ուրախանալով այն մտքից, որ կարող է օգնել ընկերոջը:

Մի քանի օր հետո Հրաչիկ Հակոբյանն իր տունը գտնում է լրիվ «մաքրված»: «Ընկերը» իր հետ տարել էր անգամ ածելի սրելու քարը, չմոռանալով մի փոքրիկ էլ «պարտք վերցնել» հարևանից ու մի քանի օրով հագնելու համար խնդրել մյուս ընկերոջ կոստյումը:

Վարագ Կարագյանը Երևանում իր «գործը» առայժմ համարելով ավարտված, ստեղծագործական ճանապարհորդություններ է կատարում դեպի Սևան, Էջմիածին, Արտաշատ, Կիրովական, Ալավերդի, Նոյեմբերյան... Օգտվելով մարդկանց բարեհոգությունից, նա մի տեղ ռեսպուբլիկական թերթի ներկայացուցիչ է, մյուսում ռադիոյի պատասխանատու աշխատող, երրորդում՝ ձեռնածու-իլյուզիոնիստ:

Հիմա ոչ ոք, նույնիսկ կինը, որն իր երկու փոքրիկներով ապրում է Վարագ Կարագյանի հայրական տանը, չգիտե, թե որտեղ է նա...

Ձեզանից ոմանք կասեն, ես ճանաչում եմ նման մեկի, բայց նրա անունը Վարագ չէ, այլ - Վոլոդյա, Սարգիս, Գառնիկ, Կոլյա, նա մեզ էլ է խաբել: Իրավացի եք: Նա կրում է նաև այդ անունները, նայած թե որ շրջանում:

Եվ եթե մեկ էլ հանդիպեք այդ խարդախ, անազնիվ մարդուն, որը պրոֆեսիոնալ ստահակությունը գերադասում է իր ուժերին համապատասխան ազնիվ աշխատանքից, չհավատաք նրան, ինչ անունով էլ որ հանդես գա նա, ավելորդ քնքշություն չցուցաբերելով, բռնեցեք նրա ձեռքը և դեպի մոտակա դրուժինայի շտաբը տարեք:

Հանուն մարդասիրության:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԵՐԲ ԼՍԱՓՈՂԸ ԱՆԲԱՆԻ ՁԵՌՔԻՆԷ

Նստել, աշխատում ես եռանդով: Քեզ անհրաժեշտ է շտապել՝ կարևոր հանձնարարություն է: Եվ մեկ էլ «զը՛նգ»...

Վերցնում ես լսափողը՝ թեթև դժկամությամբ: Չվերցնել չես կարող, հենց դրա համար էլ դրված է հեռախոսը: Վերցնում ես ու...ոչ մի ձայն.

- Ալո՛:

Նույնիսկ աղմուկ չկա:

- Ալո՛, լսում եմ:

Ու մեկ էլ «կլըթ»՝ հեռախոսն անջատվում է: Տարակուսած վայր ես դնում լսափողը ու կրկին անցնում աշխատանքի: Մտքերիդ թելն, ինչպես ասում են, արդեն կտրվել է, ճիգ ես գործ դնում կենտրոնանալու, երբ նորից՝ «զը՛նգ»:

- Ալո՛:

Զուր են ջանքերդ: Չորրորդ, թե հինգերորդ զանգից հետո (դիմացիր, եթե կարող ես) ակամայից սկսում ես նյարդայնանալ, ընկնում է տրամադրությունդ, այլևս չես կարողանում կենտրոնանալ, ու երբեմն մտքումդ կամ ցածրաձայն օգտագործում ես այնպիսի խոսքեր, որ քեզ էլ պատիվ չի բերում:

Ու նորից՝ «զը՛նգ»

- Լսում եմ:

Հեռախոսի մեջ հնչում են զսպված ծիծաղ, ինչ-որ ձայներ, իսկ ապա մեկն ասում է.

- Իզուր ես լսում, հա, հա հա,- և անջատվում է հեռախոսը:

Կատակում են... Ինչ-որ մեկը անգործությունից տառապելով, ձանձրույթը փարատելու համար որոշել է զվարճանալ: Եվ ահա զվարճանում է: Նրան զվարճություն է պատճառում քո նյարդայնանալը, նա ուրախանում է, որ քեզ խանգարում է, ստիպում է հուսահատ բղավել... Ահա, իսկ հիմա կարելի է մեկ ուրիշ համար հավաքել...

Բայց եթե նման մեկը պարզապես միացնում ու անջատում է հեռախոսագիծը, ապա ոմանք միայն դրանով չեն բավարարվում: Նրանց զրուցընկեր է հարկավոր, և ահա կրկին հնչում են ազդանշանները: Լսափողը վերցնում ես:

- Բարև ձեզ,- հնչում է մի ձայն, որը սովորաբար հակառակ սեռի ներկայացուցչի է պատկանում:

- Բարև ձեզ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչպե՞ս եք:

- Լավ եմ, ո՞վ է հարցնողը:

- Չճանաչեցի՞ք:

- Ոչ:

- Ի՜նչ, ուրեմն արդեն մոռացե՞լ եք: Այ, այ, այ, չէի սպասում, այդքան շու՞տ: Իսկ ես կարծում էի ճիշտ չեն ոմանք, երբ ձեզ մեղադրում են բյուրոկրատության և մեծամտանալու համար:

- Ո՞վ եք, ընկեր (ուհի):

- Ոչ, չեմ ասի, հիշեցեք:

Բարկանում ես, բայց ի՞նչ արած՝ լարում ես հիշողությունդ, հին մեղքերդ ես մտաբերում... ապարդյուն: Ձայնը ծանոթ չէ:

- Ուրեմն չե՞ք հիշում:

- Լավ դա ի՞նչ նշանակություն ունի, զանգահարել եք, ուրեմն գործ ունեք, ասացեք:

- Ա՜, բարկանում եք, իսկ առաջ չէիք բարկանում: Առաջ դուք այնքան լավն էիք: Ուրեմն չհիշեցի՞ք...

- Ո՛չ,- բղավում ես դու,- ո՛չ, ո՛չ, չեմ ճանաչում, չեմ հիշում, չեմ ուզում ճանաչել, ես ձեզ... ձեր...

Ու վայր ես դնում լսափողը: Բայց անհայտ «երկրպագուդ» չի հուսահատվում, նա նորից է զանգահարում, նորից է խոսում, նորից ինչ-որ չեղած, բաներ է հիշեցնում, մեղադրում քարասրտության, անխղճության և մարդկային ու ոչ մարդկային զանազան թուլությունների մեջ, և ի վերջո, հասնում է իր նպատակին: Իսկապես, քիչ հետո զգում ես, որ ձայնդ արդեն սովորական մահկանացուի ձայնի նման չէ, ծիծաղում ես հիստերիկորեն, պոկում վերնաշապիկիդ կոճակը, թանաքը թափում սեղանին, գրիչի ծայրը ջարդում և... և վերջապես բացում հիմնարկի աղքատիկ դեղարկղը գլխացավի դեմ հաբ ընդունելու համար:

Բայց սա էլ դեռ ամենասարսափելին չէ: Հեռախոսային այդ խուլիգանը քեզ միայն անձնապես է տանջել: Կարելի է յոլա գնալ դեղահաբեր ընդունելով: Իսկ ի՞նչ կասես, երբ աշխատանքից հետո տուն գնալով նկատում ես, որ կինդ նստել է արցունքոտ աչքերով ու, նայելով անկյունում խաղացող երեխաներին, լսելի ձայնով մրմնջում է.

- Խաղացեք, խաղացեք, իմ անբախտ, իմ անմեղ, իմ որբ գառնուկներ:

- Ի՞նչ է պատահել,- անհանգստանում ես դու:

- Որտե՞ղ էիր ժամը 2-ին,- դատախազի ձայնի նման սառը հնչում են կնոջդ խոսքերը:

- 2-ի՞ն, սպասիր, հիշեմ, 2-ի՞ն, հիմնարկում եմ եղել,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ոչ, զանգահարեցի, տեղում չէիր:

- Ինչպես թե, ես այսօր ոչ մի տեղ չեմ գնացել, գուցե դիրեկտորի մոտ էի: Դե, իհարկե, 2-ին:

- Իհարկե, իսկ ինչո՞ւ հենց 2-ին:

- Բայց ի՞նչ կա վերջապես դրանում: Ի՞նչ է պատահել...

- Իսկ ո՞վ է Լուսյան,- արագորեն հարցնում է կինդ՝ նպատակ ունենալով քեզ շփոթեցնել ու պարզել «գաղտնիքը»:

- Ի՞նչ Լուսյա:

- Դու ավելի լավ գիտես: Չգիտես, չէ՞: Իսկ ժամը 2-ին ի՞նչ գործ ունեիր նրա հետ կինոթատրոնում, հը՞: Անմեղ դեմք մի ընդունիր, ես ամեն ինչ գիտեմ: Ահա թե ինչու երեկ հետս կինո չեկար: Դու արդեն քո հետաքրքրությունն ունես, չէ՞:

- Ես կինո չեմ գնացել, ես ոչ մի Լուսյա չեմ ճանաչում, ո՞վ է քեզ այդպիսի հիմարություն ասել:

- Իմ աչքով եմ տեսել,- կտրում է կինդ,

Երկար տանջանքներից հետո պարզում ես, որ նա երբեք էլ «իր աչքով» որևէ բան չի տեսել, նրան պարզապես զանգահարել է ինչ-որ մեկն ու ասել. «Խեղճ կին, դու տանը նստել ես, կարծում ես սիրելի ամուսինդ աշխատում է, այնինչ նա հենց նոր դուրս եկավ կինոյից մի կնոջ հետ թևանցուկ, այդ կնոջ անունը Լուսյա է: Քո ամուսինը վաղուց է նրա հետ... Մի քանի օր առաջ էլ միասին ունիվերմագում էին»:

Եվ որքա՜ն ջանքեր, որքա՜ն փաստարկներ, երբեմն նույնիսկ երդումներ են անհրաժեշտ լինում, որպեսզի կնոջդ համոզես, թե այդպիսի բան չի եղել... Ի վերջո, կինդ համոզվում է, բայց... կասկածը մնում է:

Իսկ այդ զանգահարողին՝ «բարի ընկերուհուն», հենց այդ է պետք... ինչ-ինչ պատճառներով նա տանել չի կարողանում, երբ որևէ ընտանիքում տիրում է համերաշխություն, փոխադարձ հարգանք, երջանկություն: Նա պատրաստ է ամեն միջոցի դիմել, որպեսզի կնոջ կամ ամուսնու մոտ կասկած առաջանա: Մնացածը պարզ է. եթե կասկածը կա, ուրեմն թունավորված է նրանց կյանքը: Իսկ որպեսզի կասկած առաջանա, շատ բան հարկավոր էլ չէ... Պետք է միայն վերցնել լսափողը, ու հավաքել այդ ընտանիքի բնակարանի համարը:

Իհարկե, ոչ բոլորն են ընկնում ծուղակի մեջ, իհարկե, շատ շատերը ծիծաղում, կամ առավելագույն դեպքում զայրանում են նման խուլիգանների կեղտոտ արարքների վրա: Բայց չէ՞ որ կան նաև միամիտներ: Հենց նրանց համար են նախատեսվում այդ զանգերը: Եվ, թող զարմանալի չթվա, եթե ասենք, որ քիչ ընտանիքներում չեն անախորժություններ առաջացել հեռախոսային այդ զանգերի պատճառով:

Հեռախոսը մարդկային մտքի ամենահրաշալի ստեղծագործություններից մեկն է: Այն շքեղություն չէ, այլ անհրաժեշտություն յուրաքանչյուր հիմնարկում, յուրաքանչյուր տան մեջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց այդ նույն հեռախոսը անասելի չարիքի է վերածվում, երբ լսափողը գտնվում է անբանի, դատարկապորտի ձեռքում, չարասիրտ, սևահոգի, թունոտ մարդկանց ձեռքում, որոնք գիտակցաբար, թե անգիտակցաբար ջանում են խանգարել մեր աշխատանքը, անդորրը, խախտել մեր հավասարակշռությունը, թունավորել մեր կյանքը, որոնք, յուրաքանչյուր հեռախոս օգտագործում են միայն նրա համար, որպեսզի շշուկով, կեղծելով ձայնը թույն արտաշնչեն.

- Գիտեք ինչ, ձեր ամուսինը... ձեր կինը... ձեր ընկերը...

Եվ պետք է անմիջապես ասել, որ Երևանի հեռախոսային ցանցի դիրեկցիան էլ, ինչպես հարկն է, չի պայքարում հեռախոսային այդ խուլիգանների դեմ: Հեռախոսից օգտվող բոլոր մարդիկ էլ գիտեն, որ երբ խուլիգանը խոսում ու վայր է դնում լսափողը, դեռևս գիծը չի անջատվում: Նրան հեշտությամբ կարելի է մերկացնել, եթե ինքդ վայր չդնես լսափողը և մեկ ուրիշ հեռախոսով անմիջապես զանգահարես հեռախոսային ցանցի դիսպետչերին:

Բայց փաստերը ցույց են տվել, որ նման դեպքերում հեռախոսային ցանցի աշխատողները հանդես են բերում ծայրահեղ անտարբերություն:

- Մենք իմացանք, թե որտեղից էր,- ասում են նրանք հանգիստ:

- Ես էլ եմ ուզում իմանալ, թե ո՞վ է իմ թշնամին կամ ինձ հետ հիմար կատակներ անողը:

- Չենք կարող ասել:

- Ինչո՞ւ

- Այդպիսի կարգ չկա:

Իսկ կա՞ այնպիսի կարգ, որը թույլատրում է խուլիգաններին հեռախոսը ծառայեցնել կեղտոտ նպատակների համար: Ո՞չ: Ուրեմն, հեռախոսային ցանցի հարգելի ընկերներ, բարի եղեք մեզ հետ միասին պայքարելու այդ խուլիգանների դեմ, դատապարտելու, մերկացնելու նրանց, այլապես…

- Զը՛նգ...,- այդ իմ հեռախոսն է: Մի տող է մնացել, որ ավարտեմ ֆելիետոնը, բայց չեն թողնում: Վերցնում եմ լսափողը:

- Այո՛, լսում եմ...

Գծի այն ծայրում քար լռություն:

- Ալո՛, ալո՛, դե, խոսեք, վերջապես…

Ոչ մի ձայն:

Ես բարկանում եմ սաստիկ, ջղերս լարվում են: Քիչ է մնում վերցնեմ գրածս ու ծայրեծայր կարդամ իմ «համր» զրուցակցին, գուցե հասկանա՞: Հետո մտածում եմ. բայց չէ՞ որ միայն նա չէ, չէ՞ որ քիչ չեն նման դատարկապորտները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես նետում եմ լսափողը ու երերուն քայլերով ֆելիետոնը տանում մեքենագրատուն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՓԻՆԱՉԻՆԵՐԸ

Կոլտնտեսային շուկայի պատի տակ երեք «մինուտնի» ֆոտոապարատներ են դրված, որպիսիք դարեր առաջ բավականին հարգանք էին վայելում:

Մոտենում է մի քաղաքացի: Նրան տեսնելով, նկարիչներից մեկը վեր է կենում, կկոցում մի աչքը, ետ-ետ գնում, դիտում անֆասը, մոտենում, ուսումնասիրում պրոֆիլն ու հրճվանքով բացականչում.

- Իսկական չերքեզացու...

Մարդը շփոթվում է: Նա կյանքում երբեք չերքեզ չի եղել: Նայում է իր կոստյումին, «Երկոշ» արտելից երեք օր առաջ գնած, բայց արդեն հնամաշ տեսք ունեցող կոշիկներին ու ժպտում.

- Կատակո՞ւմ եք:

- Ի՞նչ կատակ, ուզո՞ւմ ես՝ երկու բոպեում քեզ չերքեզ դարձնեմ. գլուխդ հանիր էդ տախտակի անցքից ու պրծավ: Տեսնողը ա՛խ կքաշի: - Բայց անվստահություն նկատելով հաճախորդի աչքերում, նկարիչն ավելացնում է,- կամ մատրոս, հը՞, «ու Չյո՛րնովո մորյա՛»: Մի՛ վախի, գինը նույնն է:

- Ավելի բարձր արժողությամբ մասնագիտություն չկա՞,- հեգնում է հաճախորդը:

- Ինչո՞ւ չէ, խնդրեմ, սամոլյոտի լյոտչիկ ուզո՞ւմ ես,- այս ասելով, նկարիչը վերցնում է աշխարհում առաջին ինքնաթիռի մոդելին հեռավոր նմանություն ունեցող ներկած մի տախտակ ու պահվում նրա ետևում՝ դուրս հանելով միայն գլուխը: - Հը, ո՞նց է,- կանչում է նա ամպերի տակից,- 2 նկարը մի մանեթ: Ի՞նչ, ձեռ չի տալի՞ս, ցած իջնե՞մ,- վերջին խոսքերը նա այնպիսի եռանդով է ասում, կարծես մեջքին պարաշյուտ ունի կապած ու իրոք օդանավից ցած է թռչելու: Հետո նա դուրս է գալիս տախտակի ետևից ու եռանդով շարունակում համոզել. - Որ էդպես է, գետնի վրա ֆայտոնչի դառ, հը՞, էժան է, երկու հատը 80 կոպեկ:

Մարդն ավելի է շփոթվում: Նկատելով, որ անցորդները դիտում են իրենց, նա մոտենում է նկարների ցուցափեղկին ու սկսում ուսումնասիրել նկարչի ստեղծագործությունները:

Ահա ծովի նման մի ինչ-որ բան: Նրա կողքին, ձեռքը ճակատին կանգնել է 70 տարեկան մի ծերունի՝ զարմացած աչքերով (ասենք, աչքերը համարյա չեն երևում): Երկրորդ նկարում նույն ծովի մոտ մի տնային տնտեսուհի է կանգնած. բայց ճակատին դրած ձեռքը տղամարդու է:

Պատկերները փոխվում են: Ահա ինքնաթիռը: Նրա թևին, հաղթական ժպիտը դեմքին, նստել է վզկապով մի մարդ: Ղեկը նա վստահել է առջևում նստած իր կնոջը, որը, սակայն, տանջահար տեսք ունի ու ղեկի փոխարեն ամուսնու ձեռքն է բռնել: Մյուս նկարներում նույն ինքնաթիռն է, բայց տարբեր օդաչուների ղեկավարությամբ՝ մի հաշվապահ (պայուսակը թևի տակ է), արհեստագործական ուսումնարանի երկու վարպետ (իրենց գլխարկներով) և մի ամբողջ մանկապարտեզ (երեխաներից մի քանիսը ինքնաթիռի ծանրաբեռնվածության պատճառով կախվել են օդի մեջ):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Օդաչուներին հաջորդում են ծովայինները՝ բազմազան գլխարկներով և առանց գլխարկների (բացարձակ մեղանչում ծովային նավատորմի կանոնների դեմ), կառապաններ, որոնց ձիերը միկրոսկոպիկ մեծություն ունեն, և, վերջապես, չերքեզները, կարմիր ու դեղին ներկված շորերով, զենք ու զրահի մեջ կորած, արաբական նժույգի վրա և իրենց հպարտ կեցվածքին անհարիր խղճալի դեմքերով:

- Հը, թե փող չունես, պովը դարձնեմ, էժան է, էս թասակն առ ու մտիր էն տախտակի ետևը,- հաճախորդի թևը բռնած՝ հուսահատի համառությամբ շշնջում է նկարիչը:

Մարդը մի շարժում է անում հեռանալու համար: Այդ նկատում են մյուս նկարիչները:

- Արի ինձ մոտ, արի՛, սրտի մեջ նկարեմ՝ դանակներով զարկված,- առաջարկում է մեկը:

- Կոնդուկտոր չե՞ս ուզում,- միջամտում է մյուսը...

Բայց հաճախորդը վճռական շարժումով ազատում է իրեն ու վազելով խառնվում մոտիկից անցնող կուլտուրայի բնագավառի մի խումբ աշխատողների:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՆԱԽԱՆՁԵՑԵՔ, ԲՅՈՒՐՈԿՐԱՏՆԵ՛Ր

Նախանձեցեք, բյուրոկրատնե՛ր, որովհետև, մինչ այժմ ձեր թույլ տված վերաբերմունքը մանկական անհոգ մի խաղ է այն մեծ խաղի համեմատությամբ, որ Երևանի քաղաքային հեռախոսացանցի որոշ աշխատողներ տարիներ ի վեր շարունակում են հեռախոսասեր հասարակության հետ:

Ո՞ւմ մտքով չի անցել, հատկապես որոշ տարիքում, հեռախոս ունենալ: Չկա այդպիսի ընկեր: Համոզվելու համար այցելեք հեռախոսային ցանցի աբոնենտային բաժին և մի թեթև աչք գցեք հսկա պահարաններին, որոնց յուրաքանչյուր արկղիկում իրենց հանգիստն են գտել տասնյակ ու հարյուրավոր հեռախոսատենչ քաղաքացիների «հույժ կարևոր» և «խիստշտապ» դիմումները, այնպիսի ջերմ, խինդաշաղախ ու հուզաթաթավ տողերով, որ սովորական մահկանացուների աչքերում արցունք կառաջացնեին:

Բայց... սովորական մահկանացուների աչքերում:

Հեռախոսային ցանցի աշխատողներից ոմանք, սակայն, այդ կատեգորիային չեն պատկանում: Նման դիմումները նրանց միայն թեթև սրտնեղություն են պատճառում, որովհետև ստիպված պետք է լինեն գրի առնել դրանք և... նետել հավերժության դարակները:

Իսկ միամիտ քաղաքացին, դիմումն ուղարկելուց հետո, հավուր պատշաճի մեկ շաբաթ սպասելով, սրտատրոփ բարձրանում է հեռախոսային ցանցի աստիճաններով ու զգուշորեն մոտենում ընկ. Մեժլումյանի կամ որևէ բաժնի դռանը:

Եթե պատահաբար ղեկավար աշխատողներից որևէ մեկը տեղում է լինում, քաղաքացին ոտների ծայրերի վրա նրա առանձնասենյակն է մտնում ու կամացուկ, խեղդուկ հազալով կանգնում դռան մոտ:

Պատասխանատու ընկերը նրա կողմը չի նայում: Նա զբաղված է, ինչ-որ թղթեր է կարդում երկար, հավերժորեն երկար, կամ էլ խոսում է հենց այն կախարդական գործիքով, որպիսին ունենալ տենչում է նրա առանձնասենյակում արձանացած քաղաքացին:

Բայց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նույնիսկ ամենաղիմացկուն քաղաքացին մեկ ժամից ավելի չի կարողանում մնալ նույն դիրքում: Այնուհետև նա հուսահատական շարժումներ է գործում, օրորվում է տեղում, ջղային ցնցումներով տրորում է գլխարկը կամ տնային կառավարչությունից բերած տեղեկանքն այն մասին, որ ինքը իրոք բնակվում է իր տանը և ոչ թե ինչ-որ պատահական տեղ ու... չերկարացնենք, այնքան է տանջում իրեն, մինչև հեռախոսային պատասխանատու ընկերը հայացքը նրա կողմն է դարձնում:

Այդ անսպասելի երջանիկ պահը չկորցնելու բուռն ձգտումով քաղաքացին խորը գլուխ է տալիս ու ասում է աշխարհի ամենահաճելի, բարակ ձայնով.

- Բարև ձեզ, ընկ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ եք ուզում,- բարևի փոխարեն հարցնում է պատասխանատու ընկերը, թեև քաջ գիտե, որ իր առանձնասենյակը մտնողը դասագիրք չի խնդրելու 6-8-րդ դասարանների աշակերտների համար և ոչ էլ լվացք փռելու պարան:

- Ես... գիտեք ինչ, ինձ հեռախոս է անհրաժեշտ: Իմ աշխատանքն այնպիսին է...Ահա տեղեկանք՝ հիմնարկի վայրից, ահա բնակկառ...

- Որտե՞ղ եք ապրում,- ամենագործնական տոնով հարցնում է հեռախոսային պատասխանատու ընկերը ու առանց պատասխանը լսելու ավելացնում է,- առայժմ չենք կարող բավարարել: Եկեք մի քանի տարի հետո:

Բայց քաղաքացին չի կարող հեռանալ:

- Խնդրում եմ... եթե հնարավոր է: Դուք ինձ մերժեցիք նաև երկու տարի առաջ: Դրանից հետո իմ հարևանները ստացել են: Ես... բողոքի համար չեմ ասում... այլ ուղղակի... գուցե հնարավոր է:

Պատասխանատու ընկերոջը ձանձրացնում են այդ բոլորը: Մերժումը վերջնականապես հաստատելու նպատակով, նա վերցնում է հեռախոսի լսափողը, նայում է ուղիղ քաղաքացու աչքերին ու խորհրդավոր ձայնով հարցնում.

- Տեխ. բաժնի՞ց է: Նայեցեք «բ» տուփը: Ազատ գիծ ունե՞նք: Ո՞չ, շատ լավ:

Ու այլևս քաղաքացուն չի անդրադառնում: Նրա բախտը վճռված է: Միևնույն է այլևս. ինչ ուզում ես արա, պնդիր, որ քո ծանոթ տեխնիկն ասել է, թե կա ազատ գիծ, քեզ կպատասխանեն.

- Հետո՞ ինչ: Ազատ գիծ կա, բայց ազատ համար չկա:

Պնդիր՝ որ ազատ համար կա:

- Նշանակություն չունի,- կասեն,- ազատ համար կա, բայց ազատ գիծ չկա:

Իսկ եթե շարունակես մի քիչ էլ, ապա քեզ ամենակտրուկ կերպով կբացատրեն, որ քո բնակարանում հեռախոսագիծ անցկացնել հնարավոր չէ «տեխնիկական պատճառներով»:

Դե գնա ու իմացիր, թե ինչ բան է այդ «տեխնիկական պատճառ» կոչվածը:

Քաղաքացին գնում է տուն սաստիկ զայրացած ու սոսկալի վրեժ է ծրագրում: «Լավ,- մտածում է նա,- դե թող ինձ գրավոր պատասխանեն, թե ազատ համար չունեն ու դրանից հետո մեր մի հարևանի ևս տան, այն ժամանակ կտեսնեն: Այնպիսի մի դիմո՛ւմ կգրեմ ...»:

Միամիտները կարծում են, թե իրոք հեռախոսային ցանցից պատասխան կստանան:

Պատկերացնում ենք, թե այս տողերը կարդալով ինչքան է զայրանում հեռախոսային ցանցի դիրեկտոր ընկ. Մեժլումյանը: Եթե մենք նրա մոտ լինեինք, նա անպայման կգոչեր.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչպե՞ս թե չենք պատասխանում: Շատ արագ էլ պատասխանում ենք: Նման մի երկու դեպք հիշում եմ: Այ, հիմա ասեմ, վերջերս ես տեսա, որ մեր աբոնենտային բաժնի պետը մի պատասխան էր ստորագրում: Շատ արագ էլ պատասխանում էր... Այսպես ասած՝ ամենակարճ ժամկետում: Սպասեցեք հիշեմ, թե ում...

Մենք չենք ուզում անհանգստություն պատճառել ընկ. Մեժլումյանին ու նրա կոլեգաներին, քաջ գիտակցելով, թե ինչքան դժվար է նրանց համար այդպիսի մի դեպք հիշելը, և ինքներս տպագրում ենք նրանց այդ հազվագյուտ պատասխանը.

«Ալավերդյան փողոցի № 62ա տան բնակիչ Գ. Ներսիսյանին:

9 դեկտեմբերի 1959թ.

Երևանի քաղաքային հեռախոսային ցանցը տեղեկացնում է ձեզ, որ 1955 թվականի սեպտեմբերի 26-ին գրած ձեր դիմումը նայված է (ինչպիսի՜ օպերատիվություն, ինչպիսի սեղմ ժամկետ: Ընդամենը 5 տարի՜): (Բացականչությունները հեղինակինն են:) Ձեր բնակարանում հեռախոս տեղադրելը առայժմ հնարավոր չէ...»:

- Դե, տեսնո՞ւմ եք, որ պատասխանել ենք: Կարճ ժամկետում,- կբացականչի ընկ. Մեժլումյանը: - Պարզ գրել ենք «Հնարավոր չէ…»:

Բայց որքան էլ ծանր լինի ընկ. Մեժլումյանի համար, ստիպված ենք ասել, որ քաղաքացի Գ. Ներսիսյանը արդեն երկրորդ տարին է, ինչ հեռախոս ունի իր տանը: Հարևանի օգնությամբ՝ մեկուսիչ սարքով սովորական հեռախոս, որն ըստ պատշաճի ձևակերպված է նույն այդ հեռախոսային ցանցում:

Ծիծաղելի՞ է: Ո՛չ, ծիծաղելի չէ, ցավալի է:

Դրությունից դուրս գալու մի ելք կա միայն. կտրել դեն նետել բյուրոկրատական այն զարհուրելի պալարը, որ արմատներ է ձգել քաղաքային հեռախոսային ցանցում և խստորեն պատժել այն աշխատողներին, որոնք նման անհոգի վերաբերմունք են հանդես բերում քաղաքացիների և նրանց դիմումների նկատմամբ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Շուկա էի գնում: Քայլում էի Հոկտեմբերյան պողոտայով: Տրամվայները, տրոլեյբուսները, անվադողային ողջ առաջնակարգ տեխնիկան այնպիսի մի հոնդյուն ու զնգոց էին բարձ-բացրել, որ շենքերի բնակիչները ամռան այս տապին խոհեմաբար ծածկել էին լուսամուտները

Բայց... (միշտ մի բայց պետք է, չէ՞), հանկարծ աղմուկը տեղի տվեց երկյուղած, ու փոխարենը լսվեց մի սուր, աղիողորմ ճիչ, սարսափելի մի վայնասուն: Մեկը կանչում էր կոկորդի ամբողջ ուժով.

- Տանո՛ւմ են, մայրի՛կ, գերեզմա՛ն...

Սարսափը պատեց ինձ: Հեքիաթներից լսել էի, որ հանգուցյալները երբեմն հուղարկավորության ճանապարհին կենդանանում են, բայց դա նախ՝ հեքիաթներում է լինում, երկրորդ՝ քաղաքի հուղարկավորության բյուրոյում վերջին չորս տասնյակ տարում նման ոչ մի դեպք արձանագրված չկար:

Ուրե՞մն,

Հանկարծ ձայնը խռպոտվեց, մի վայրկյան լռեց, ապա զարհուրած ճչաց.

- Սաղ-սաղ թաղում են, ազի՛զ ջան:

Ես սնահավատ մարդ չեմ: Անկեղծորեն եմ ասում, նույնիսկ դասախոսական բյուրոյի անդամ եմ և շաբաթական ութ անգամ զեկուցում եմ կարդում աթեիստական թեմայով, բայց սիրտս ուժգին տրոփեց, ու փշաքաղվեցին մազերս:

«Ինչո՞ւ են տանում, ինչո՞ւ են ուզում կենդանի թաղել ընկերոջը» - սրտդողած մտածեցի ես ու այդ, ներեցեք արտահայտությանս, հեթանոսական արարողությանը միջամտելու բարի ձգտումով արագացրեցի քայլերս:

Բայց, զարմանալի բան, առջևում ոչ մի թափոր չկար: Մի խումբ մարդիկ միայն բարձրահարկ շենքի մոտ կանգնած, կիսաբաց բերաններով վերև էին նայում:

- Ես մեռնեմ, խմած ա,- ականջիս հասավ մեկի ձայնը, ու մազ մնաց անվայելուչ քրքջայի:

«Դե, իհարկե, ինչպե՞ս գլխի չէի ընկնում, պարզապես մի հարբած խուլիգան աշխատում է երգել» - հանգստացա ես ու նայեցի հավաքվածների հայացքների ուղղությամբ:

Հավատացեք. եթե տեսնեի, որ բոլոր բնակիչների պատշգամբներում ծաղիկներ կան, այդքան չէի զարմանա: Ո՛չ ավել, ո՛չ պակաս, շենքի ճակատից դեպի անցորդներն էր ուղղված մի հսկայական... ռադիոբարձրախոս: Ձայնը, ամենայն հավանականությամբ, նրանից էր դուրս գալիս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ի դեպ, նախկին ճչացողին արդեն «թաղել» էին, որովհետև նա այլևս բողոքի ցույցեր չէր կազմակերպում ու այժմ ռադիոբարձրախոսի միջից լալիս էր մեկ ուրիշը.

Ծաղիկների աշխարհում, վա՜յ,ման,
Ես միայն քեզ եմ սիրում,ամա՜ն-ամա՜ն,
Բայց դու ինձի մոռացար, ազի՜զ ջան,
Ու, վա՜խ, հեռացար...

Այո՛, մեկը մորթում էր վրացական գողտրիկ «Ճիրիմե»-ն, մորթում էր անամոթաբար, անխղճորեն, աղավաղում էր թե՛ երաժշտությունը, թե՛ խոսքերը և այդ անում էր սադիստի սառնասրտությամբ՝ ամեն մի տողի վերջում կամ մեջտեղում անորոշ քանակությամբ «ման»-ներ ավելացնելով:

Անհատ կատարողներին հետևեց «ժողգործիքների» անսամբլը, հետևյալ կազմով՝ դհոլ, կլարնետ և դամ պահող:

Անսամբլը նախանձելի համերաշխությամբ հինգ րոպեում կատարեց վարիացիաներ փողոցային բոլոր երգերի թեմաներով, դհոլչու «տաշշ» չնոտայագրված բացականչություններով համեմված:

Սրտախառնուք զգացի ու ձեռքս առաջ մեկնեցի պատին հենվելու համար և նոր միայն նկատեցի, թե ով է այս ամբողջ չարաբաստիկ պատմության պաշտոնական հեղինակը: Բավական պատկառելի ցուցատախտակի վրա ոսկեզօծ տառերով գրված էր.

«Երքաղսովետի գործկոմի տեղարդվարչության ֆոտոգեղարվեստական կոմբինատի ֆոտոձայնագրման պավիլիոն»:

Իհարկե, ճաշակից զուրկ, գռեհիկ մարդիկ դժվար թե կարողանային ավելի հարմար օբյեկտ գտնել փողոցային երգերը ձայնագրելու և դրանք փողոցով մեկ պրոպագանդելու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԵՏՔԵՐ... ԿԱՆԱՉԻ ՎՐԱ

(Ամառային տխուր կատակ)

Հիմա դուք չարախնդում եք:

Ահա՛... ծանոթ վերնագիր է: Բոլորն էլ այդպես են սկսում, իսկ հետո պատմում են անհամ մի դեպք՝ կիսախավար սենյակում նստած միլիցիայի լեյտենանտի, նրա զգոն շան և բացբերան հանցագործի մասին, որը կանաչի վրա արյան հետքեր թողնելով ու հենց դեպքի վայրում մոռանալով կրծած սիգարեթը, գնացել է մոտակա խաշարան-խորովածարանը ու հափշտակած դրամներով քեֆ է անում:

Եվ հանկարծ դռան առջև հայտնվում են երկուսը՝ լեյտենանտն ու զգոն շունը:

- Ձեռքերդ վե՛ր:

Եվ բացբերան հանցագործը՝ շտապով վերջին բաժակը խմելով, քաղաքացիների արհամարհանք ու ատելություն արտահայտող հայացքների ներքո, ուղևորվում է դեպի բանտ:

Ո՛չ, ընթերցող, այս արկածային-սարսռեցուցիչ վերնագիրը թող քեզ թյուրիմացության մեջ չգցի: Այստեղ ո՛չ միլիցիայի լեյտենանտ կա, ո՛չ զգոն շուն, ո՛չ էլ բացբերան հանցագործ:

Միայն կա կանաչը և կան հետքեր այդ կանաչի վրա:

Խոսքը Հրազդանի ձորի կանաչի մասին է, երկուշաբթի օրվա առավոտյան:

- Ինչո՞ւ հատկապես երկուշաբթի օրվա առավոտյան,- կհարցնես դու:

- Որովհետև,- կպատասխանեմ ես,- երևանցիները սովոր են միայն կիրակի օրերին լինել Հրազդանի ձորում, այնտեղ անցկացնել իրենց, ինչպես ասում են, կուլտուրական հանգիստը: Իսկ երկուշաբթի օրը այնտեղ համարյա ոչ ոք չի լինում:

Եվ իզուր: Երկուշաբթի օրը լինելով վերոհիշյալ ձորում, առանց որևէ ջանքի կարելի է իմանալ, թե ովքեր են եղել այստեղ կիրակի օրը, ինչով են զբաղվել, ինչ բնավորություն ունեն և ինչպիսի հակումներ:

Հիանալի բազա՝ համալսարանի բանասիրական ֆակուլտետի նախկին հոգեբանության բաժնի ուսանողների համար:

Եվ այդ բոլորի մասին պատմում է կանաչը, ավելի ճիշտ հետքերը կանաչի վրա:

Ահա այստեղ, ծառի տակ, իր կիրակին է անցկացրել փոքրիկ մի ընտանիք՝ հայրը, մայրը և նրանց որդին, 8 -10 տարեկան Ժորան, որին ծնողները փաղաքշորեն Ժոժո են անվանում: Խնդրում եմ՝ առանց ծիծաղի: Հասարակ բան է պարզելը, հարկավոր է միայն ծառի բնին,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գետնից մեկ մետր բարձրության վրա կարդալ մանկան թարմ դանակագրերը՝ «Ժոժո»: Հայտնի է, որ մարդը պատին կամ ծառին գրում է իր հայացքի ուղղությամբ: Այստեղից էլ ենթադրություն՝ եթե Ժոժոն լիլիպուտ չէ, ապա 8-10 տարեկան տղա է: Այդ ընտանիքում դրության տերը ոչ թե ալկոհոլիկ ամուսինն է (հիմք՝ քաղցր գինու երեք դատարկ շիշը՝ կնոջ մատների դիմադրության հետքերով և գետնին թափված գինին), այլ կինը, որ ծխում է և շրթնաներկից կարմրապոչ դարձած սիգարեթները նետում դեսուդեն:

Այո՛, առանձնապես ուրախ ընտանիք չէ:

Այս առանձնապես ոչ ուրախ ընտանիքից ոչ հեռու, տարիներ շարունակ կառուցվող (կարդա՝ չկառուցվող) ռեստորանի շենք-հուշարձանի մոտ քեֆ են արել մի խումբ շատ ուրախ և միաժամանակ շատ սրամիտ տղաներ: Թե որքան են խմել նրանք, կարող է պարզել միայն էքսպերտ հանձնաժողովը, որովհետև ոչ մի կենդանի, այսինքն՝ ավելի ճիշտ՝ ողջ մնացած շիշ չկա:

- Իսկ ի՞նչ են եղել շշերը,- կհարցնես դու:

- Ջարդվել են,- կպատասխանեմ ես,- բավականաչափ հարբելուց հետո տղաներից ամենասրամիտը մի շիշը տարել ու դրել է ծառի ճյուղերի արանքում, վերցրել է մեկ ուրիշ շիշ ու խինդաշաղախ բացականչել.

- Տեսնենք ով կկպցնի:

Ու նետել է իր շիշը, որը դիպչելով ծառի բնին, ախորժալուր պայթյունով ցրիվ է եկել: Այդ հետաքրքիր միջոցառումը ջերմ արձագանք է գտել սեղանակիցների սրտերում, որոնք տեղնուտեղը շշաձգության մրցումներ են կազմակերպել ու, արդյունքները քննարկելով, ուրախ-զվարթ գնացել տուն:

Նրանք գնացել են, իսկ շշերի կտորտանքները մնացել և հրկուշաբթի օրը, ինչպես խանդավառ բանաստեղծը կասեր՝ հուրհրում էին վաղորդյան արևի շողերի ներքո, անշուշտ ծիածանի բոլոր գույներով, ու հաճելիորեն խշխշում գունատված անցորդների ոտքերի տակ:

Այս ուրախ տղաների հարևանները, որոնք գրված են եղել գետի փոքրիկ կղզյակը, ամենայն հավանականությամբ ժլատ մարդիկ են եղել: Նրանք ափսոսացել են շշերը, որոնցից յուրաքանչյուրը 12 կոպեկ արժե՝ գնելիս և 10 կոպեկ՝ խանութին վերադարձնելիս, ու նշանառության մրցումները անց են կացրել պարզապես ոսկորներով:

Բայց ի՞նչ երկարացնենք: Քայլիր Հրազդանի ափերով, և դու այստեղ, կանաչի վրա կգտնես որոշ մարդկանց կենցաղն արտացոլող ամեն-ամեն ինչ՝ շշեր, մսեր, ոսկորներ, լավաշի, բոքոնի, մատնաքաշի կտորներ, պանիր, ձվի կեղև, դարձյալ կեղև, բայց այս անգամ վարունգի, ձմերուկի և սեխի, պահածոյի տուփեր, դեղձի կորիզներ և այլն, և այլն: Եվ ապա թերթե՛ր... Որքա՛ն սեր ունեն այս մարդիկ լրագրերի նկատմամբ: Այստեղ կհանդիպես ռեսպուբլիկայում, Միության մեջ և արտասահմանում լույս տեսնող համարյա բոլոր թերթերի և ամսագրերի պատառիկների ու էջերի և նույնիսկ ամբողջ նպատակային համարների:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Անծանոթ մեկին կթվա, թե որոշ մարդիկ կիրակի օրերին Հրազդանի ձորն են իջնում հնարավորության սահմաններում ամեն ինչ ապականելու համար: Գուցե վրե՞ժ են լուծում ուրիշներից, չեն ուզում, որ իրենցից հետո այլ մարդիկ էլ հանգստանան: Գուցե իրենք այլես այստեղ չե՞ն գալու:

Չէ՛... Հենց իրենք էլ գալիս են, նայում են իրենց թողած հետքերին, վրդովմունքով տարուբերում գլուխները (ի՛նչ տեսակ մարդիկ կան) նախատինքի ու զայրույթի անկեղծ խոսքեր նետում քաղսովետի հասցեին, որին կարծես թե չի մտահոգում Հրազդանի ձորում ստեղծված հակաառողջական վիճակը, ու նոր, խամ ու խոպան վայրեր են փնտրում... ապականելու համար:

Եվ, բնականաբար, նմանվում են առածի այն կկուին, որը...

Ահա թե ինչ է պատմում կանաչը, ավելի ճիշտ՝ ամոթալի հետքերը այդ կանաչի վրա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎՃՌՎՈՒՄԷ ԵՐԵԽԱՅԻ ԲԱԽՏԸ

Մի քանի օր առաջ խմբագրություն զանգահարեց Սպանդարյանի շրջանի ժողովրդական դատավոր Գարեգին Մութաֆյանը.

- Մի հետաքրքիր գործ կա: Կուզեի՞ք լսել:

Քիչ անց արդեն նրա առանձնասենյակում էի: Ժողովրդական դատավորը մենակ էր: Սեղանին, բաց վիճակում դրված էր ստվարածավալ մի մատյան: Երևում էին զանազան թղթեր, տեղեկանքներ, ծննդականներ... Նա զգուշորեն թերթում էր դրանք, կարդում մանրամասն, մռայլվում, ապա նորից ու նորից թերթում:

- Գործեր կան,- ասաց նա,- որոնց լուծումը դժվար է գտնել օրենսգրքում և նույնիսկ լրացուցիչ որոշումներում: Հիմա դատարան կգան մի փոքրիկ տղա և երկու մայր: Մեկը ծնել է նրան, մյուսը պահել ու մեծացրել: Երկուսն էլ իրավունքներ ունեն այդ երեխայի նկատմամբ: Եվ հիմա մենք պետք է որոշենք, թե նրանցից որն է իսկական մայրը: Ո՞ւմ մոտ երեխան ավելի լավ կզգա իրեն:

Առանձնասենյակի դուռը բացվեց: Ներս մտան ժողովրդական ատենակալները, տարեց մանկավարժներ Հ. Խեչումյանը և Շ. Հովհաննիսյանը, շրջանի դատախազի օգնական Ա. Միրզոյանը, Կրուպսկայայի անվան դպրոցի ուսմասվար Հայրապետյանը, քաղժողկրթբաժնի տեսուչ, ծերունազարդ մանկավարժ Արամ Տոնյանը: Փորձված մանկավարժների այդպիսի մի խմբի ներկայությունը հասկանալի էր. վճռվում էր մի երեխայի, փոքրիկ մի քաղաքացու բախտը:

- Սկսենք:

Դատավորի զանգից հետո սենյակը մի վայրկյանում լցվեց մարդկանցով, իսկ քիչ անց քար լռության մեջ հնչեց Մութաֆյանի ձայնը.

- Լսվում է գործ՝ ըստ հայցի Ազնիվ Մարտիրոսյանի ընդդեմ Մարգո Ավետիսյանի՝ երեխայի պահանջի մասին:

Մայրը պահանջում էր իր որդուն...

Բայց ինչո՞ւ է այդպես ստացվել: Ինչո՞ւ է մայրը իր որդուն ուրիշից պահանջում:

Ահա այդ հարցերի պատասխանին էին սպասում մարդիկ, երբ տեղից բարձրացավ Ազնիվ Մարտիրոսյանը և պատմեց...

1947 թվականին ամուսնացել է Կարապետ Ավետիսյանի հետ: 1949 թվականի նոյեմբերի 3-ին ունեցել է երկվորյակ զավակներ: Աղջկան Հասմիկ են կոչել, տղային՝ Աշոտ: Երբ երեխաները 4 ամսական էին, հայրը՝ Կարապետ Ավետիսյանը (որն ավելի շատ Կարլ անունով է հայտնի), դատապարտվում է երկուևկես տարվա ազատազրկման: Ինքը մնում է երկու մանկահասակ երեխաների հետ: Պարի դասատուի իր աշխատավարձը չի բավականացնում երեխաներին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ինչպես հարկն է պահելու համար, այդ պատճառով էլ Լենինականից գալիս է Երևան: Ամուսնու քույրը՝ Մարգո Ավետիսյանը, խնդրում է նրան մի երեխային իրեն հանձնել: Ինքը չի մերժում և վեց ամսական Աշոտիկին, որը տառապում էր ոտքերի արատով, ժամանակավորապես ի պահ է տալիս հորաքրոջը: Ըստ որում, ապահով լինելու նպատակով, աղջկան էլ հանձնում է շուրջօրյա մանկամսուր: Անցնում է երկու տարի: Ինքն այդ ժամանակ արդեն աշխատում է Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում որպես մենապարուհի, բայց դարձյալ որևէ հնարավորության չի ունենում երեխային ետ վերցնելու:

1952 թվականին բանտից վերադառնում է ամուսինը: Բայց դարձյալ ժամանակ չեն ունենում երեխայի հարցով զբաղվելու, որովհետև նախ հարկավոր էր, որպեսզի Կարլը աշխատանք գտներ և երկրորդ՝ որպեսզի լուծեին բնակարանային հարցը:

Ի վերջո ամուսինը վարորդական դասընթացներ է ավարտամ և աշխատանքի անցնում ավտոպարկում: Բայց երկու տարի անց նրան նոր դժբախտություն է պատահում, դատապարտվում է վեց տարվա ազատազրկման: Կալանքից վերադառնում է 1956 թվականի դեկտեմբերին: Ճիշտ է, անմիջապես աշխատանքի է անցնում, բայց դեռ հարկավոր էր մի քիչ դրամ կուտակել երեխաներին ապահովելու համար: Եվս մեկնկես տարի հնարավորություն չունեցան երեխայի մասին մտածելու, իսկ երբ բավականին դրամ էին կուտակել, պարզվեց, որ Կարապետի քույրը՝ Մարգո Ավետիսյանը և նրա ամուսինը՝ Դավիթ Վարդանյանը, հրաժարվում են երեխային վերադարձնել: Այ քեզ զարմա՛նք... Դիմեցին դատարան և, պատկերացնո՞ւմ եք, դատարանը որոշեց երեխային թողնել խնամակալների մոտ: Բայց իրենք հո չէի՞ն կարող նահանջել: Այնքա՛ն են սիրում Աշոտիկին, որ հասան Մոսկվա՝ գործը «քանդեցին», ու հիմա ահա կրկին լսվում է իրենց հարցը:

Ժողդատավորը սկսեց հարցեր տալ.

- Այդ ինչպե՞ս պատահեց, որ երեխային հանձնեցիք վեց ամսական հասակում,երբ դեռ մայրական կաթով էր սնվում, այն էլ ամռանը...

- Բայց ես հնարավորություն անգամ չունեի երկու երեխայի կերակրելու,- աշխատելով ամոթխածորեն ժպտալ, պատասխանեց Ազնիվը:

- Իսկ ինչո՞ւ հիվանդ երեխային հանձնեցիք: Չէ՞ որ նա մայրական խնամքի ավելի էր կարիք զգում:

- Ես ժամանակ չունեի, իսկ նրանք կարող էին բուժել: Հետո ամուսինս բանտարկված էր...

- Բայց 1952 -1954 թվականներին նա ազատ էր, ինչո՞ւ երեխային չէիք վերցնում:

- Դե, մենք չէինք հավատում, թե ետ չեն տա: Ասում էինք՝ թող պահեն, է՛լի...

- Դուք գիտե՞ք, որ երեխային վիրահատել են:

- Այո, լսել եմ, կարծեմ մի անգամ... ես գաստրոլների էի գնալու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ո՛չ, երկու անգամ: Ահա տեղեկանքները: Երկու անգամ ձեր երեխան նարկոզ է ընդունել: Ձեզ չե՞ն ասել վիրահատության մասին:

- Ասել են, բայց ես... գիտե՞ք... արյուն չեմ տանում, վատ է անդրադառնում ինձ վրա... բժիշկները խորհուրդ չէին տալիս:

Այնուհետև սկսում են հարցեր տալ դատախազը, ատենակալները, ժողկրթբաժնի ներկայացուցիչը, պատասխանողները... և Ազնիվ Մարտիրոսյանը առաջվա նման ինքնավստահ չէ այլևս: Նա կմկմում է, անընդհատ վկայակոչում թույլ հիշողությունը, օգնության հրավիրում ամուսնուն...

- Ձեր երեխան տասը տարի ապրել է ուրիշ մի տան: Տասը տարվա մեջ նշվել է տասը ծնունդ, եղել է Նոր տարի ու Մայիսի 1: Ձեր երեխան առողջացել է լիովին, մանկապարտեզ է ընդունվել ու դպրոց: Հիմա նա արդեն չորրորդ դասարանում է սովորում: Երբևէ նշե՞լ եք նրա տոնը, որևէ բան նվիրե՞լ եք նրան:

- Բայց ես... վատ պայմաններում էի ապրում:

- Իսկ մի՞թե դրա համար պայմաններ էին պետք,- դառնությամբ նկատեց ժողովրդական ատենակալ Հովհաննիսյանը:

Մայրը չի պատասխանում:

Ոչինչ չունի ասելու նաև հայրը՝ Կարապետ Ավետիսյանը:

Փոխարենը շատ բան ունեն ասելու պատասխանողները՝ Մարգո Ավետիսյանը և Դավիթ Սարգսյանը:

- Գուցե շատերին տարօրինակ թվա, որ ես և կինս համառորեն չենք ուզում բաժանվել մեր Աշոտից,- ասաց Դավիթ Սարգսյանը,- կկարծեն, երևի, թե մենք երեխա չունենք: Ոչ, Աշոտից բացի մենք երեք երեխա էլ ունենք: Մեծ աղջիկս՝ Սեդան, թատերական ինստիտուտն է ավարտել և այժմ աշխատում է որպես դերասանուհի, նրանից փոքրը՝ Գևորգը, պոլի-տեխնիկական ինստիտուտն է ավարտել, ինժեներ է ժամացույցի գործարանում, ավելի փոքրը՝ Նվարդը, պոլիտեխնիկական ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանողուհի է:

Չէ՛, երեխաներ ունենք մենք: Բայց, միևնույն է, Աշոտին չենք տա: Նա մեր ամենափոքրն է, նա ծնողական սիրո շատ կարիք ունի:

Այն էլ ասեմ,- շարունակեց տարեց մարդը,- որ եթե Աշոտին պատերազմի ժամանակ գտած լինեինք, պահեինք ու մեծացնեինք, ինչպես արել ենք, և հանկարծ ծնողները հայտնվեին, ես, ճիշտ է, սրտի ցավով, բայց կվերադարձնեի երեխային: Կտայի, իմանալով, որ նրանք մեղավոր չեն երեխայի կորստյան համար:

Բայց սրանց, ա՛յ, այս մարդկանց,- նա մատնացույց արեց Ազնիվին ու Կարապետին,- ես երեխա չեմ տա: Նրանք արժանի չեն երեխայի... Ես ախր չեմ կարող մոռանալ այդ օրը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ իսկապես դժվար է մոռանալը:

...Կեսօրից հետո Սարգսյանի տուն եկավ Ազնիվը (կամ Ազան, ինչպես նրան կոչում են բոլորը): Ինչ-որ շորերով փաթաթված 6 ամսական Աշոտին ուղղակի նետեց թախտին ու սկսեց հեկեկալ:

- Ի՞նչ անեմ ես սրանց հետ: Ինքը գնաց բանտ ու ինձ հասցրեց այս վիճակին: Ես երկուերեխա ո՞նց պահեմ:

Մարգոն խուրհուրդ տվեց չհուզվել, ասաց, որ իրենք՝ քույրերով, ամեն ամիս համապատասխան գումար կտան, թող տնային ծառայող վարձի: Բայց Ազան հրաժարվեց ու հայտնեց, որ եթե Աշոտին իրենք չվերցնեն, կտանի մանկատուն:

Հեռանալիս նա չմոռացավ երեխայի հետ թողնել նաև ծննդականը:

Մարգոն դռների մոտ կանգնեցրեց նրան:

- Գոնե Հասմիկին թողնեիր: Ախր Աշոտը բուժման կարիք ունի, եթե մեծանա էլ քայլել չի կարող:

- Բարո՛վ եք եկել,- հեգնեց Ազան,- բուժման կարիք ունի՝ բուժեք: Հասմիկին ես կպահեմ:

Երեկոյան աշխատանքից տուն վերադարձավ Դավիթ Սարգսյանը: Փոքրիկ Աշոտը թախտին լաց էր լինում սրտամորմոք: Ոտքերը բացվել էին, ու երևում էին վերքերը: Մարգոն աշխատում էր բուժել դրանք: Երեխան քաղցած էր, հարկավոր էր կերակրել: Սպասեցին մի փոքր էլ՝ հուսալով, որ մայրը կգա: Բայց չեկավ: Ստիպված մեկին ուղարկեցին Ազայի ետևից, բայց նա հրաժարվել էր գալ:

Ուղիղ մեկ ամիս և ամենօրյա խնամք անհրաժեշտ եղավ, որպեսզի Աշոտը քիչ թե շատ կազդուրվի և հնարավոր լինի նրան հիվանդանոց տանել ոտքերի արատը բուժելու: Յոթ ամսական հասակից մինչև երեք տարեկան դառնալը փոքրիկ Աշոտի ոտքերը մնացին գիպսի մեջ: Սկզբում ամեն օր, ապա շաբաթական մեկ անգամ Մարգո Ավետիսյանը կամ Դավիթ Սարգսյանը Կամոյի փողոցից երեխային գրկած օրթոպեդիայի ինստիտուտ էին տանում: Իսկ երբ ոտքերը արդեն գիպսից ազատվել էին և ուղղվել, մեկ տարի երկու ամիս շարունակ ամեն օր նույն ինստիտուտն էին տանում՝ մասաժի:

Դժվար էր նրանց համար: Տանը երեք երեխա էլ կար, իսկ աշխատում էր միայն Սարգսյանը: Հարկավոր էր պահել և՛ նրանց, և' Աշոտին: Ըստ որում հիվանդին ուժեղ սնունդ էր հարկավոր:

Հետո բժիշկները խորհուրդ տվեցին փոքրիկին առողջարան տանել:

Սարգսյանի երեխաներից և ոչ մեկը առողջարանում չէր եղել: Բայց Աշոտին անհրաժեշտ էր դա: Ու երեք տարի անընդմեջ, տարեկան երկու ամսով փոքրիկ Աշոտը եղավ մանկական առողջարանում՝ առողջացավ և կազդուրվեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այդ ժամանակ Կարապետ Ավետիսյանը վայրագ խուլիգանություն գործելու համար գտնվում էր բանտում, հետո ազատվեց կալանքից ու շրջում էր քաղաքում: Շրջում էր նաև Ազան՝ գաստրոլների էր գնում ու մի քանի տեղ դասեր տալիս: Բայց նրանցից և ոչ մեկը չմտածեց գոնե փոքր-ինչ մասնակից դառնալ երեխայի բուժմանը: Բայց նրանցից և ոչ մեկը չիմացավ, որ Աշոտը արդեն հինգ տարեկան է:

Դա գիտեին միայն Մարգոն ու Դավիթը, որը խաժ աչքերով, շեկ վարսերով իր փոքրիկ որդուն մանկապարտեզ տարավ չմոռանալով նոր, սիրուն հագուստներ գնել այդ առթիվ:

Իսկ այդ ժամանակ Աշոտի հարազատ հայրը երկրորդ անգամ դատարանի առջև էր կանգնել մի այլ երեխայի կյանքից զրկելու համար: Կալինինի փողոցով մեքենան ուժեղ արագությամբ վարելու պատճառով, նա ժամանակին չի կարողանում արգելակել, և դպրոցի մոտ խաղացող մի փոքրիկ ընկնում է մեքենայի անիվների տակ: Կանգնելու, երեխային շտապ օգնության կայան տեղափոխելու փոխարեն, նա արագորեն փախչում է դեպքի վայրից: Երեխան արյունաքամ լինելով մահանում է:

Ասենք, զարմանալու առանձնապես ոչինչ չկա: Դժվար թե օտար երեխային օգնության հասներ այն մարդը, որը հարազատ երեխային էր լքել:

Կարլը և Ազան չիմացան, թե ինչպես Աշոտը դարձավ ութ տարեկան: Այդ գիտեին միայն Մարգոն ու Դավիթը, որն այդ օրը փոքրիկի հետ հուզված քայլեց դեպի Կրուպսկայայի անվան դպրոցը՝ չմոռանալով երեխային ճանապարհին սովորեցնել, որ երբ անցնում է փողոցը, սկզբից պետք է նայի ձախ, հետո՝ դեպի աջ, թե չէ հանկարծ ավտոյի տակ կընկնի...

Կրկին սահեցին տարիները: Եվ հանկարծ... Օ՜, հրա՜շք, Կարապետ-Կարլը և Ազնիվ-Ազան հիշեցին, որ Հասմիկից բացի իրենք մի զավակ էլ ունեին՝ Աշոտ անունով: Գուցե տեսե՞լ էին նրան՝ այդ առողջ, բարեկազմ, գեղեցկադեմ, մաքուր հագնված փոքրիկին՝ դպրոց գնալիս, ու բորբոքվել էր նրանց ծնողական սերը: Կամ գուցե, կոպիտ ասած, մտածել էին, թե ինչո՞ւ տեր չդառնալ մի այդպիսի լավ, պատրաստի բալիկի... Եվ սկսեցին գործել...

Նրանք երեխայի համար 27 ռուբլիանոց վերարկու գնեցին և անգամ մի փոքրիկ հեծանիվ: Հետո Ազան նույնիսկ մի չինական հագուստ գնեց: Բայց այդ մեկը չտվեց տղային: Այլ ուղղակի դպրոցի մուտքի մոտ կանգնեցրեց որդուն, ցույց տվեց նվերն ու ասաց.

- Տես, քեզ համար եմ գնել: Ես քո քեռեկինը չեմ, այլ մայրիկը, իսկ Կարլը քո քեռին չէ, այլ հայրիկը: Թե գաս ինձ հետ, այս հագուստը քեզ կտամ: Չգաս, զոռով կտանեմ:

Երեխան չվերցրեց նվերը ու թաքուն լաց եղավ: Նրան նվեր հարկավոր չէ, նրան նոր հայրիկ ու մայրիկ էլ հարկավոր չեն: Եվ ինքը չի գնա ոչ մի տեղ: Ինքը տուն էլ ունի, հայրիկ էլ, մայրիկ էլ, քույրիկներ էլ, եղբայր էլ...

Ազան չհասկացավ, թե ինչ արեց ինքը, նա մինչև հիմա էլ չի հասկանում, որ ոչ-մայրական բիրտ ձեռքով սեղմել է անմեղ մանկան սիրտը ու ստիպել մտածելու բոլորովին էլ ոչ-մանկական հարցերի մասին: Որ խռովվել է իր իր խաղաղ ու անվրդով կյանքով ապրող փոքրիկի հոգին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ Աշոտը ամբողջ գիշեր մտածում էր: Հետո խնդրեց հորը՝ Դավթին, որ թույլ տա իր մոտ քնելու: Գրկեց նրան ու դողալով հարցրեց.

- Պապ, ինձ ուրիշի չես տա, չէ՞...

Դավիթ Սարգսյանը կտրականապես մերժեց Կարապետի ու Ազնիվի պահանջը՝ Աշոտին նրանց վերադարձնելու մասին:

- Երեխան գնդակ չէ, որ ուզածդ ժամանակ նետես,- ասաց նա:

Ժողովրդական դատավորը ներկա գտնվող բոլոր քաղաքացիներին, ինչպես նաև հայցվորներին ու պատասխանողներին առաջարկեց դուրս գալ սենյակից, որովհետև դատավորական կազմը երեխայի հետ ուզում էր խոսել առանձին:

Սենյակ մտավ Աշոտը ու պայծառ աչքերը հառեց դատավորներին: Դատավորը և նրա օգնականները երեխայի շուրջը ստեղծեցին անկաշկանդ, պարզ մի մթնոլորտ: Թող չիմանա էլ, որ դատարանում է գտնվում...

Իսկ Աշոտը ճռվողում էր, մաքուր հայերենով պատմում իր դասերի մասին, տան մասին, երբ դիմում էին նրան՝ բարձրանում էր տեղից ու ձեռքերը ուղիղ պահում կողքին:

Փոքրիկ Աշոտը ասում էր այն, ինչ անգամ նման վճռական պահին իրենց թույլ չտվեցին ասելու Մարգո Ավետիսյանը ու Դավիթ Սարգսյանը՝ թե ինչպիսի ջերմ, հոգատար, լավ հողում է ընկել ու աճում քամու նետած ծաղկի փոքրիկ սերմը...

Հետո նրան կամացուկ, զգուշությամբ հարցրեցին.

- Սիրո՞ւմ ես Կարապետին:

- Քեռո՞ւս, սիրում եմ, իհա՛րկե:

- Իսկ Ազայի՞ն:

- Ազային էլ եմ սիրում: Ես բոլորին եմ սիրում:

- Եթե սիրում ես, ինչո՞ւ չես ուզում գնալ նրանց տուն, նրանց հետ ապրել:

- Ախր ինչո՞ւ գնամ,- աչքերի մեջ հանկարծ տխրություն՝ մրմնջաց տղան,- ես մեր տանն եմ ուզում մնալ, հայրիկիս, մայրիկիս մոտ:

Դատավորն ի պաշտոնե վերջին փորձն արեց:

- Մաման քեզ ի՞նչ ասաց, երբ եկար այստեղ:

- Ասաց ինչ որ հարցնեն, ճիշտը կասես:

- Եվ դու ճի՞շտն ես ասում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ճիշտը, ազնիվ պիոներական...

- Դե լեզուդ ցույց տո՛ւր:

Եվ այս անգամ արդեն ներկաների արցունքակալած աչքերի առաջ փոքրիկ Աշոտը հանեց լեզուն...

Հետո դատարանը առանձնացավ խորհրդակցության: Բոլորը միջանցք դուրս եկան ու վճռին էին սպասում: Սպասում էին նաև Աշոտի հայրերն ու մայրերը: Բայց պետք չէր անպայման ավանդության Սողոմոն իմաստունի օրինակով առաջարկել կիսել երեխային իսկական ծնողներին որոշելու համար: Այդ պարզ էր բոլորին նույնիսկ միջանցքում :

Դավիթ Սարգսյանը հուզված քայլում էր միայնակ մի հեռու անկյունում: Նրա կինը՝ Մարգոն, կարմրած, չտեսնող աչքերով դեպի դուրս էր նայում: Իսկ Աշոտի հարազատ ծնողները...

Ներկաներից մեկը ասել էր բարձրաձայն, որ նրանք լավ մարդիկ չեն, և Կարլն ու Ազան, մոռացած, որ կողքի սենյակում իրենց «հուզող» հարցն է վճռվում, հարձակվում էին նրա վրա: Կարլը գոռում էր, բարձրաձայն ու անլուր հայհոյանքներ տեղալով փորձում հարվածել մեկին, իսկ Ազան, «ինտելիգենտ», «կրթված» այդ կինը, ոգեշնչում էր նրան:

- Կարլ, տո մի գնա դանակը փորը կոխի, է՛...

Խորհրդակցության սենյակ չէին հասնում ձայները, բայց դատարանը վճռեց...

Երեխան պետք է մնա Դավիթ Սարգսյանի ընտանիքում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏՈՆԱԿԱՆԿԱՏԱԿ

Նախ և առաջ պարզենք մի հարց. ընդունո՞ւմ եք, որ ինչպես ամեն գործի, այնպես էլ երգիծանքի համար, ամենադժվարը սկսելն է: Ծիծաղո՞ւմ եք, ասում եք՝ նայած ո՞ւմ համար. ասում եք, շինգրասենյակները, օրինակ, հեշտությամբ սկսում են, բայց սովորաբար չեն ավարտում: Այո, բայց ներեցեք, երգիծանքը ասֆալտապատում չէ և ոչ էլ վերանորոգում: Եվ այսպես, մտածեցի ինչպես սկսել, բայց չստացվեց, որոշեցի շրջել քաղաքում, ինչպես ասում են՝ թերություններ վեր հանելու համար և... պատկերացնո՞ւմ եք, ոչինչ չգտա:

Նախ՝ դռնապանները թյուրիմացաբար լավ էին մաքրել փողոցները շատ ու շատ երգիծաբանների հետ ինձ էլ զրկելով աղբակույտերի ու փոշու մասին խոսելու հարազատ ու հավերժ թարմ թեմայից, երկրորդ՝ մարդիկ պաշտպանում էին փողոցային երթևեկության կանոնները:

Միակ բացասական տիպը, որին հանդիպեցի, մի հարբած էր. ժամում երկու մետր արագությամբ նա «սլանում» էր դեպի իրենց տուն և, գլուխը մերթ ընդ մերթ բարձրացնելով, ձայնում էր՝ «տաքսի՛» կամ «Շնորհավո՛ր նոր տարի»: Հավանաբար նրան թվում էր, թե ինքն արդեն նոր տարվա հաշվին է «սողում»:

Հանկարծ նայեցի ժամացույցիս ու տեսա, որ ժամը 12-ին մնացել է 15 րոպե: Եվս 15 րոպե, և տոնական սեղանի շուրջը հավաքված կնոջս և երեխաներիս համար հաջորդ բացասական տիպը ես էի դառնալու: Ելք չկար: Պետք էր շտապել, դրա համար էլ տրանսպորտի որևէ միջոց չընտրելով, վազեցի: Եվ հանկարծ տեսա, որ փողոցների խաչմերուկում, միլիցիոների մոտ, կանգնած էին մի տղա ու մի աղջիկ: Նրանք վիճում էին: «Վերջապես», ուրախացած մտածեցի ես ու մոտեցա...

Տղայի անունը Վարդ էր, աղջկանը՝ Վարդուհի: Աշխատում էին միևնույն գործարանում, ապրում տարբեր հանրակացարաններում: Իսկ և իսկ որոշ գրողների սիրած հերոսներին էին նման, տղան չէր խմում, աղջիկը չէր սարքում հոնքերը, տղան նորարար էր, աղջիկը հասարակական ակտիվ աշխատող, տղան ատլետիկ կազմվածք ուներ, սև հոնքերի տակից նայում էին սև աչքերը, աղջիկը նրբագեղ էր և կանոնավոր մուծում էր արիմիութենական անդամավճարները:

«Իսկ արտադրական պլաննե՞րը, իսկ փոխադարձ սոցիալիստական մրցությո՞ւնը» - կբացականչեն վերոհիշյալ գրողները: Ի՞նչ թաքցնենք, այդ մեկը չէ: Աղջիկը նույնիսկ վերջին եռամսյակի իր արտադրական պլանն ընդամենը 98 տոկոսով էր կատարել: Բայց տղան, այնուամենայնիվ, չհիասթափվեց ու աղջկան առաջարկեց ամուսնանալ: Դա դեկտեմբերին էր: Առաջարկը, որովհետև ռացիոնալիզատորական չէր, իսկույն ընդունվեց: Դրան նպաստեց նաև այն, որ գործարանի դիրեկցիան Վարդին մի առանձնացված սենյակ հատկացրեց գործարանի նորակառույց շենքի 5-րդ հարկում, որի վերելակը գործում էր:

Վարդն ու Վարդուհին համբուրվեցին հանրակացարանի իրենց ընկերների հետ: Վարդը լիազորին շնորհակալություն հայանեց նրա նվիրած անկողնու համար, որի կեսը հանրակացարանի կնիքն էր բռնում, վերցրեց սափրվելու պարագաները, պատից իջեցրեց Կոտովսկու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նկարը ու դուրս եկավ: Վարդուհու օժիտն ավելի հարուստ էր՝ ասեղնագործ երկու բարձ, ասեղնագործ երեք եղջերու, ասեղնագործ ութ թաշկինակ, ասեղնագործ, ոչ, «Մետաղագործ» արտելի մի մահճակալ և մի սրտաձև հայելի, որի ետևի մասում Վարդի նկարն էր:

Նրանք նորակառույց շենքը տեսան եռուզեռի մեջ՝ մեքենաներ էին գալիս, մեքենաներ էին գնում: Երկու ընտանիքի հայրեր, միևնույն բնակարանի երկու օրդերով բանավեճի էին մտել և օդում թափահարում էին օրդերները: Վարդն ու Վարդուհին նրանց մոտով իրենց սենյակը բարձրացան, հիացան, հետո տխրեցին, որ համարյա ոչինչ չունեն սենյակը զարդարելու համար և, աշխատանքի բաժանում կատարելով, նորից դուրս սլացան երկու երթուղով: Վարդը՝ արդյունաբերական ապրանքների ետևից, Վարդուհին՝ սննդարդյունաբերական:

Հանդիպեցին պատահաբար երկու ժամ հետո և քրտնաթոր ցույց տվեցին շրջագայության արդյունքները: Տղան չէր հանդիպել ծաղիկ ծախող Կարաբալային և ստիպված ինչ-որ թիթեղյա վարդեր էր գնել, ձեռք էր բերել նաև մի պատեֆոն և լուսանկարչական ապարատ՝ իր լուսարձակով, որը, սակայն, լամպ չուներ: Աղջկա ձեռքին պահածոներ էին:

- Քի՛չ է,- ասաց Վարդը:

- Քի՛չ է,- ասաց Վարդուհին:

Ունիվերմագ նրանք միասին մտան: Կահույքի բաժինը սպորտային հրապարակի էր նման, ընդարձակ էր ու դատարկ: Ցուցահանդեսային էքսպոնատի նման միայն մի բարձրարժեք զգեստապահարան կար: Իհարկե, նրանք կարող էին գնել այն, բայց այդ դեպքում պետք է Նոր տարին դիմավորեին միայն զգեստապահարանին նայելով: Իսկ նայելու համար՝ նստելու աթոռներ էին պետք: Աթոռներ չկային: Չկային նաև էժանագին և ոչ էժանագին փոքրիկ պահարաններ: Այդտեղից անցան ապակեղենի բաժինը: Հիանալի ու ցնցող էին հախճապակյա և բյուրեղապակյա իրերը, որոնց նպատակը դժվար էր որոշել: Չկային միայն հասարակ, էժանագին և ճաշակով թեյի, գինու բաժակներ և ափսեներ: Փոխարենը գնեցին Լոմոնոսովի կիսանդրիները՝ չորս դիրքով: Արդեն ուզում էին հեռանալ, երբ մեկը շշնջաց.

- Տաշովի բաժակներ տա՞ մ:

- Տո՛ւ ր,- ուրախացան Վարդերը, ներողությո՛ւն, Վարդն ու Վարդուհին և տեր դարձան 12 բաժակի:

- Այժմ անցնենք սննդարդյունաբերության բնագավառը,- առաջարկեց Վարդուհին:

Նրանք մտան գաստրոնոմի հոյակապ խանութը: Այստեղ, ինչպես ասում են, դրությունն ավելի բարվոք էր, շատ բան կար, բայց խիստ նման էր որոշ անսամբլների ռեպերտուարին՝ սահմանափակ էր ու միապաղաղ: Համեմատաբար հարուստ էր խմիչքների բաժինը: Կային բազմատեսակ ու բազմապիսի կոնյակներ՝ ռոստովյան, մոսկովյան, լենինգրադյան, թբիլիսյան: Միայն հայկական կոնյակ չկար:

- Ինչո՞ ւ,- հարցրին Վարդն ու Վարդուհին:

- Մեր լիմիտը... - պատասխանեց վաճառողուհին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ գործը հասավ լիմիտին, նորապսակները գերադասեցին սուսուփուս հեռանալ և նստեցին մի տրամվայ, որը պարկ էր գնում, հետո մի տրոլեյբուս, որը նույնպես պարկ էր գնում: Ավտոբուս չկար:

Նայեցին ժամացույցին: Հրապարակի մոտ ժամը 11-ին պակասում էր 45 րոպե, արագացրին քայլերը, հաջորդ ժամացույցով 11-ին պակասում էր 50 րոպե: Հուզված էին: Թիթեղյա վարդը չանգռեց Վարդուհու այտը: Արյուն եկավ:

- Վարդեր և արյուն,- կատակեց տղան:

- Հիանալի ներկայացում է,- արձագանքեցին զբոսայգուց դուրս եկած մի խումբ արտիստներ,- և մեր թատերաշրջանի մյուս ներկայացումներից լավ է հատկապես նրանով, որ վերջանում է ժամը 10 և կեսին: Մենք կարող ենք Նոր տարին դիմավորել համենայն դեպս ո՛չ թատրոնում կամ հերթապահ միլիցիոներների հետ:

Վարդն ու Վարդուհին վազեցին: Ահա և ծանոթ խաչմերուկը, շենքը: Նրանք անցան խաչմերուկի հենց մեջտեղով և... և սուլոց լսվեց:

Մոտեցավ միլիցիոները: Ջերմորեն բարևեց և տեղեկացրեց, որ նրանք տուգանված են փողոցային երթևեկության կանոնները խախտելու համար:

- Ընկեր, հինգ րոպե է մնացել, Նոր տարի է,- աղաչեց Վարդը:

- Քաղսովետի որոշումը ուժի մեջ է մինչև 19... թվականի... – հանգիստ պատասխանեց ընկերը:

Այդ ժամանակ, ահա՛, մոտ եկա ես: Մամուլի աշխատողը պետք է միջամտի: Ես միջամտեցի, միլիցիոներին համոզեցի տուգանքը ստանալ տուգանվածների տանը, և մենք միասին սլացանք վեր: Վարդն ուզեց բացել իր սենյակի դուռը, բայց այն արդեն բաց էր: Ներսից աղմուկ էր լսվում: Տղայի աչքի առաջ պատկերացան օրդերները թափահարող քաղաքացիները, և նա գունաթափ իրեն ներս նետեց: Նրան հետևեցինք մենք:

Սենյակի կենտրոնում մի սեղան կար վրան՝ ուտելիք, սեղանի շուրջը՝ մարդիկ: Սենյակի անկյուններում դրված էին մի զգեստապահարան, վրան ցուցանակ՝ «Արհմիութենական կոմիտեի կողմից», մի բուֆետ՝ «Մի խումբ ընկերների կողմից», մի դեղարկղ «Կարմիր խաչի սկզբնական կազմակերպության կողմից» և երեք դույլ «Տեղական հակաօդային պաշտ-պանության խորհրդի կողմից»:

- Եկա՛ն,- աղաղակեց թամադան, նույն ինքը՝ գործարանի արհմիութենական կոմիտեի նախագահը:

Բոլորը ոտքի կանգնեցին: Բաժակ բարձրացրին Նոր տարվա կենացը: Թամադան ասաց.

- Ընկերնե՛ր, թույլ տվեք ծերության թոշակի անցնելու կապակցությամբ խմել19... թվականի կենացը: Նա աշխատեց շատ լավ, բարեխիղճ, խաղաղ ու ազնիվ և չխախտեց սոցիալիստական համակեցության կանոնները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուռա՛,- բացականչեցին բոլորը և, որովհետև նոր երգեր չկային, հնչեցրին«Սեղանն է առատ» պահեստային երգը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«ԱՐԴՅՈՔ ԽՄՈ՞ՒՄԷՐ...»

Հիշո՞ւմ եք բանաստեղծ-կոմպոզիտորի այն հրաշալի եղնիկին, որ եկել, կանգնել էր աղբյուրի ակի մոտ ու դունչը մոտեցրել ջրին: «Արդյոք խմո՞ւմ էր, թե՞...» - սքանչացած հարցնում է հեղինակը:

Չգիտեմ, ազնիվ խոսք, ես էլ չգիտեմ. եղնիկը խմո՞ւմ էր, թե՞...

Բայց որ Երևանի «Եղնիկ» ռեստորանի դիրեկտոր Բարեղամ Գեղամյանը խմում էր՝ դա ապացուցված է վկաների ցուցմունքներով և քննչական նյութերով:

Բայց... արդյոք միայն խմո՞ւմ էր: Դարձյալ ոչ: Խմելու հետ միաժամանակ Բարեղամ Գեղամյանը նաև ուտում էր և ՈՒՏՈՒՄ:

Նա ընդհանրապես դեմ չէ սոցիալիզմին: Նրան միայն դուր չի գալիս սոցիալիզմի այն դրույթը, թե ուրիշի աշխատանքը չի կարելի շահագործել:

«Ինչպե՞ս թե չի կարելի,- անկեղծորեն ապշում է Բարեղամը,- ուրեմն ես դիրեկտոր լինեմ ու իմ աշխատողներին չշահագործե՞մ: Էլ ի՞նչ դիրեկտոր»: Նա այդ մտքերն, իհարկե, նպատակահարմար չի գտնում որևէ ամբիոնից կամ տակառի վրայից բարձրաձայն արտասանել, բայց երբ նշանակվում է «Եղնիկ» ռեստորանի դիրեկտոր, սկսում է իրագործել:

Ասենք թե գալիս է մի քաղաքացի, գրպանից հանում է մի փունջ փաստաթղթեր և խնդրում իրեն աշխատանքի ընդունել որպես բուֆետապան:

- 100 ռուբլի,- հայտնում է Բարեղամ Խաչատուրովիչը:

- Իմ աշխատավար՞ձն է,- հարցնում է, քաղաքացին:

- Ո՛չ, քո կանխավճարն է,- ժպտում է դիրեկտորը:

Եթե քաղաքացին մինչև այդ մեկ ուրիշ Բարեղամի էլ է հանդիպել, լուռումունջ մուծում է կանխավճարը ու հպարտ կանգնում վաճառասեղանի ետևում: Իսկ եթե չի հանդիպել, ապա պարզում է, որ այդտեղ աշխատանքի տեղ չկա:

Կանխավճարներն ու կաղրերն ընդունելուց հետո, ավելորդ թյուրիմացություններից խուսափելու համար, Բարեղամ Գեղամյանը ստեղծում է դիրեկտորական «տուրք»-ի հատուկ կայուն սակագին, որը, եթե գրավոր լիներ, ունենալու էր հետևյալ պաշտոնական տեսքը.

«Իմ ընտանիքի անդամների օրավուր աճող պահանջմունքները բավարարելու նպատակով, հրամայում եմ ինձ ներկայացնել որոշակի գումարներ՝ հետևյալ սակագնով.

Մատուցող - յուրաքանչյուրը ամիսը 40 ռուբլի:

Բուֆետապան - մեկ աշխատանքային հերթափոխությունից՝ 50 ռուբլի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խոհարար - (նույն ժամանակաշրջանի համար) 35 ռուբլի:

Դրամական գործառնությունից բացի, ռեստորանի յուրաքանչյուր աշխատող՝ առանց պաշտոնի, գույնի, սեռի, տարիքի և ազգության խտրության, ամեն ամիս, որպես բնամթերք, ինձ պետք է տա 2 շիշ կոնյակ և ամեն առավոտ ևս՝ 100-ական գրամ:

Քանի որ ապագայում մեզ մոտ հասարակական սնունդը դառնալու է ձրի, և գիտենալով, որ ես հենց այսօր ի վիճակի եմ այդ պատվավոր գործի նախաձեռնողը դառնալ, իմ սնունդը ռեստորանում համարում եմ ձրի:

Սույն հրամանը խախտողները կենթարկվեն պատժի առավելագույն չափով՝ առևտրի ցանցից ազատվելով:

Հրամանը հասցնել իմ յուրաքանչյուր աշխատողի գիտակցությանը: Հրապարակման ենթակա չէ:

Ռեստորանի դիրեկտոր՝ Բ. Գեղամյան»:

Հրամանը խախտողներ չեղան: Եղան միայն թույլ առարկողներ:

- Այս ամիս թույլ տվեք 40-ի փոխարեն 30 ռուբլի վճարել, ընկերԳեղամյան,- խնդրեց մատուցողներից մեկը:

Գեղամյանը կարմրատակեց.

- Ի՞նչ է, մենք այստեղ առևտո՞ւր ենք անում: Սև շուկա՞ է, ինչ է, թե՞ Շարաշկինի կոնտորա: Վերջապես մեզ մոտ պե՞տք է լինի անհրաժեշտ կարգ ու կանոն, թե՞ չէ:

- Ախր չունեմ, ի՞նչ անեմ:

- Հաճախորդից վերցրու,- խորհուրդ տվեց դիրեկտորը:

- Չեն տալիս:

- Չեն տալիս, իսկ դու վերցրու: Դու էլ չես տալիս, բայց ես վերցնում եմ, չէ՞: Ի՞նչ է, կարծում ես կապույտ ժապավենով կապած, ափսեի մեջ դրված պիտի նվիրեն քե՞զ:

- Գոնե այս ամիս...

- Չվիճենք, պարտք վերցրու, տուր: Չե՞ս կարող՝ տանդ խալի ունես...

Եվ մատուցողը ստիպված գորգը տարավ վաճառելու...

Եվ այսպես, Բարեղամ Գեղամյանը ամենայն հանգստությամբ գրպանը դրեց գորգի վաճառքից առաջացած գումարը՝ համաձայն հաստատված սակագնի, ու գորգեր գնեց իր տան համար, թանկարժեք շատ իրեր գնեց, որպեսզի ուրիշների հաշվին բավարարի իր ընտանիքի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անդամների ժամ առ ժամ աճող պահանջմունքները և ավելին, քան պահանջմունքները: «Թող իմ տունը դառնա առևտրի աշխատողի նվաճումների ցուցահանդես» - վճռեց նա:

Մատուցողներից «տուրքի» գանձումը Բարեղամը համարում էր շատ բնական մի բան: «Եթե մի տեղ այսքան հոգի մատուցում են, մեկը պե՞տք է ընդունի, թե՞ ոչ: Ես ինձ նշանակում եմ ընդունող»:

Նա նորամուծություն հանդես բերեց նաև «բնամթերքի», այսինքն՝ կոնյակի օգտագործման հարցում, որ նրան բերում էր յուրաքանչյուր աշխատող՝ 100 գրամանոց բաժակով: Ի՞նչ անել: Մի մասը նա, իհարկե, խմում էր, իսկ մյուս՝ մեծ մասը, մոտ 10 բաժակը... Եվ այստեղ անհնար է կրկին չհիշել «Արդյոք խմո՞ւմ էր, թե՞...» հուզիչ խոսքերը: Ո՛չ, «Եղնիկ» ռեստորանի դիրեկտորը այդ կոնյակը չէր խմում: Նա 10 հատ հարյուր գրամանոցները դարձնում էր երկու հատ կեսլիտրանոց և հանձնում բուֆետապանին՝ ռեստորանային գներով վաճառելու:

Կարո՞ղ եք անսխալ որոշել, թե ումն էր տրվելու այդ վաճառքից գոյացած գումարը:

Բայց այստեղ չի կարելի չհիշել մեկ ուրիշ սքանչելի երգի խոր լավատեսությամբ համակված խոսքերը.

«Ամեն մի գիշեր ունի լուսաբաց…»:

Թե մնար Բարեղամ Գեղամյանին, նա երբեք չէր ուզի, որ լուսաբաց լինի՝ երկու հիմնական պատճառով: Նախ՝ որովհետև նա և նրա տիպի մարդիկ գործելու համար նախընտրում են գիշերը: Եվ երկրորդ՝ որպեսզի չլիներ այս տարվա սեպտեմբերի 7-ի լուսաբացը:

...Պայծառ ու անամպ առավոտ էր: Արեգակի ոչ առաջին շողերի հետ իր առանձնասենյակը մտավ «Եղնիկ»-ի դիրեկտոր Բարեղամ Գեղամյանը: Նրա դեմքից չէր իջնում աշնանային ժպիտը: Հարկահավաքի օրն էր: Հետո բացվեց դուռը, ու մեկը մյուսի հետևից ներս մտան ռեստորանի նազիրան մատուցողուհիները՝ ձեռքներին բռնած «տուրք»-ի ավանսը՝ 10-ական ռուբլի:

- Դե, լա՛վ, գնացեք, գնացեք աշխատեք,- բարեհոգաբար ժպտաց դիրեկտորը և, խաղաղ տրամադրությամբ, սպասելով վաղորդյան հերթական 100 գրամանոց կոնյակներին, դարակի մեջ թաքցրեց դրամները:

Հետո նա լսեց, թե ինչպես բացվեց դուռը և առանց գլուխը բարձրացնելու մեղմորեն ասաց.

- Կոնյակնե՞րն են, դրեք սեղանին և բերեք երկու դատարկ շիշ:

Սակայն պարզվեց, որ ներս մտնողները նազիրան մատուցողուհիները չէին, այլ Սպանդարյանի շրջանի միլիցիայի բաժնի ՕԲԽՍՍ-ի աշխատողները, որոնք կոնյակ չէին բերել, այլ ընդամենը խուզարկություն կատարելու արտոնագիր:

- Սա տուրք չէ, նվեր է,- համարակալած դրամները հանելով, մրմնջաց դիրեկտորը,- ուրեմն դուք տուրքն ու նվերը իրարից չե՞ք տարբերում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ քանի որ միլիցիայի աշխատողները տարբերում էին դրանք, դրա համար էլ Բարեղամ Գեղամյանը նրանց ուղեկցությամբ դուրս եկավ ռեստորանից, կարոտով մի վերջին անգամ հայացք ձգեց իր «Եղնիկ»-ին ու կամացուկ մրմնջաց.

- Ես չգիտեմ, ո՞ւր են տանում հեռավո՛ր...

Բայց Բարեղամ Գեղամյանը դարձյալ խաբում էր: Նա քաջ գիտեր, թե ուր են տանում իր և իր նմանների ճանապարհները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«ՎԱՍՏԱԿԱՎՈՐ» ԶՐՊԱՐՏԻՉԸ

Նիհար, բարձրահասակ մի մարդ մոտեցավ փոստարկղին, գողունի նայեց շուրջը ու պայուսակից հանելով հինգ միանման հաստ ծրար, հերթականությամբ անցքից նետեց ներս: Հետո նորից զգուշորեն նայեց շուրջը, ապա չարախնդաց…

- Թռե՛ք, աղավնյակնե՛րս...

Նա մի պահ պատկերացրեց, թե ինչպես են մռայլվելու ծրարները բացողների դեմքերը, ինչպես են հնչելու զանգերը, հուզված ներս ու դուրս անելու քարտուղարուհիները, չխկչխկալու գրամեքենաները... ու ժպտաց...

Հետո հաճույքով հաշվեց, թե այդ ծրարները որքան ժամանակ կարող են զբաղեցնել պետական ապարատների աշխատողներին, արդյունքից գոհ մնաց ու, լուրջ դեմք ընդունելով, մտավ Շահումյանի պուրակ:

Երկու հոգի նստարանի մոտ կանգնած զրուցում էին ու նայում հայկական ՍՍՌ Գերագույն դատարանի շենքին:

- Ուզում եմ դիմել,- ասում էր մեկը,- ախր տղաս դեռ 30 տարեկան էլչ կա,երեխա է: Ճիշտ է, սխալվել է, գողություն է արել, բայց արժե՞ր դրա համար երկու տարի տալ:

Նիհար, բարձրահասակ մարդը մոտեցավ բողոքող ընկերոջը.

- Ուրեմն, ասում եք երկու տարի, հա՞... Որտե՞ղ ես, արդարությո՛ւն, ինչո՞ւ քո քարավանը զանգակները հնչեցնելով չի անցնում Երևանի փողոցներով: Ինչո՞ւ ես լռել, ծածկել քո դեմքը մարդկանց առաջ: Ասում ես երկու տարի, հա՞:

- Այո՛, երկու տարի,- վախեցած արտասանեց բողոքողը՝ խոհեմությամբ մի քանի քայլ ետ գնալով ու ապարդյուն փորձելով փողոց դուրս գալ:

- Սպասիր, մա՛րդ, ասաց բարձրահասակը,- եթե ուզում ես գործդ շահել, բռնիր ինձնից: Բռնի՛ր, ասում եմ քեզ: Ես իրավաբան Հովհաննես Գազազյանն եմ: Այ, հիմա մենք կնստենք այստեղ, և ես դիմումներ կգրեմ: Ո՞ւմ... միամի՛տ, երբե՛ք: Կգրենք բարձր տեղեր, ավելի բարձր: Իմացիր, քարն ինչքան բարձր տեղից է ընկնում, այնքան ուժեղ է լինում հարվածը:

Նա նստեց նստարանին, բողոքող ընկերոջը ստիպեց նստել իր մոտ, պայուսակից թղթեր հանեց ու սկսեց գրել... Ու հորդե՛ց, վարարե՛ց սուտն ու զրպարտությունը, բամբասանքն ու կեղծիքը:

- Ընկ., ընկ... (ազգանուններ է նշում) կաշառակերներ են, ընկ.,ընկ...անբարոյականությամբ են զբաղվում: Իմ աչքով եմ տեսել: Ընկ., ընկ... ծեծեցին որդուս, ստիպեցին ասել, թե ինքն է գողացել: Տղաս երկու տարեկան է: Ընկ., ընկ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այդ ի՞նչ եք գրում,- զարմացավ քաղաքացին,- ես այդպիսի բաներ չասացի, ես այդ մարդկանց չեմ ճանաչում: Հետո տղաս 28 տարեկան է:

- Լռի՛ր, երբ քեզ հետ խոսում է իրավաբան Հովհաննես Գազազյանը, ես դրանց տասը մատիս պես գիտեմ: Դու մի բան իմացիր, ինչքան սուտը շա՛տ լինի, այնքան ավելի կհավատան, աղմուկ կբարձրանա:

Մինչ նա հերթական դիմումների վրա գրում էր վերադաս օրգանների հասցեները և այս ու այն հիմնարկում ռուսերեն լեզվի մեքենագրուհի որոնում՝ գրածը ավելի ազդեցիկ դարձնելու համար, նախորդ հինգ ծրարները՝ «աղավնյակները», թռան տարբեր ուղղություններով և հայտնվեցին հինգ ղեկավար ընկերների սեղանների վրա:

Մարդիկ կարդացին, զայրացան ու վշտացան: Եվ իրոք, արժեր վշտանալ: Նամակում Երևան քաղաքի բնակչուհի Տատյանա Սամոշկինան գրում էր, որ թեև ինքը 1936 թվականից դիմել է բնակարան ստանալու, բայց իրեն խաբել են, սուտ խոստումներ են տվել, հալածել են: «Նացիոնալիստները, կաշառակերները, բյուրոկրատները հաշվի չեն առնում իմ արցունքը, աղաչանքը, բողոքը, ծերացել են ոտքերս, թուլացել սիրտս...»:

Նամակին կցված էին յոթ փաստաթղթերի պատճեներ, հաստատված ինչ-որ ազդեցիկ ստորագրությամբ, որոնք ասում էին, թե սկսած 1947 թվականից, քաղսովետի գործկոմի բնա-կարանային բաժինը Սամոշկինային խոստացել է ապահովել բնակարանով:

Ղեկավար ընկերների մակագրությունների հիման վրա քաղսովետի գործկոմում իսկույն հանձնաժողով կազմվեց՝ Սամոշկինայի բնակարանային հարցով զբաղվելու, մեղավորներին պատժելու համար:

Եվ... պարզվեց, որ Սամոշկինան կյանքում ոչ մի անգամ բնակարանի հարցով չի դիմել ո՛չ քաղսովետի, ոչ էլ որևէ շրջսովետի գործկոմի: Պարզվեց նաև, որ նամակին կցված յոթ գրությունների պատճեներն էլ կեղծ են, և դրանք կեղծել ու դրանց տակ ստորագրել է նամակը հորինող «իրավաբան» Հովհաննես Գազազյանը:

Ինչո՞ւ: Ի՞նչն է ստիպել այդ 55-ամյա մարդուն, որն իր կյանքում անընդհատ խարդախությամբ է զբաղվել, բայց որին միշտ էլ մեծահոգությամբ ներել են, շարունակել անազնվության ու զրպարտության ճանապարհը, կորցնել իր մարդկային ու քաղաքացիական արժանապատվությունը, վարկաբեկել շատ ու շատ քաղաքացիների ու ղեկավարների: Ինչո՞ւ:

Այդ հարցը պարզ կդառնա բոլորին, եթե նրանք ծանոթանան Հովհաննես Գազազյանի կենսագրությանը, որը խաբեությունների, ստորաքարշության, երկերեսանիության, կեղծիքի ու զրպարտության մի խոշոր կծիկ է: Հովհաննես Գազազյանը ոչնչի չի հավատում, նրան ոչինչ դուր չի գալիս: Դուր չի գալիս, օրինակ, որ մարդիկ պայքարում են կաշառակերության դեմ, որ չեն թողնում, որպեսզի ինքը ուզած ձևով զրպարտի սրան-նրան: Ինքը լինելով զրպարտիչ ու կաշառակեր, չորս կողմը միայն կաշառակերներ ու զրպարտիչներ է տեսնում և սկսում է գրել...

1943 թվականին, երբ մասնագետներ քիչ կային, Հովհաննես Գազազյանը ավարտում է իրավաբանների եռամյա դասընթացները և աշխատանքի նշանակվում Կրասնոսելսկի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

շրջանամ՝ որպես ժողդատավորին փոխարինող: Երեք ամիս հետո, սակայն, նրան շտապ ետ են կանչում, քանի որ ամեն ինչ խառնում է իրար և աշխատում է շրջանցել հոդվածները: Նշանակում են փաստաբանների կոլեգիայում աշխատելու, բայց այստեղ էլ հոնորարից բացի, հաճախորդներից գյուղատնտեսական մթերքներ և զանազան իրեր վերցնելու համար, անում են խիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացումով, և նրա գործունեությունը վերցնում հատուկ հսկողության տակ:

- Ախ, այդպե՞ս,- զայրանում է Գազազյանը ու մի տարի չանցած՝քաղաքացի Պողոսյանից վերցնում է 400 ռ. կաշառք:

Նրան, որպես խաբեբայի, դատապարտում են մեկ տարվա ուղղիչ աշխատանքների:

- Ախ, այդպե՞ս,- չարախնդում է Գազազյանը, թանաք ու գրիչ է վերցնում, քաշվում է մի անկյուն ու մի քանի հասցեներով գրում, թե բոլորը կաշառակեր են:

Մոսկվայի հանձնաժողովը տեղում ստուգում է ու պարզում, որ փաստերը ծայրեծայր սուտ են: Եվ Հովհաննես Գազազյանը երկրորդ անգամ կանգնում է ժողովրդական դատարանի առջև որպես զրպարտիչ:

Նրանից բացատրություն են պահանջում, և Գազազյանը չի կարողանում թաքցնել իր սրտի թույնը: Նա գրում է՝ «Բանտից դուրս գալուց հետո ես լցվեցի բուռն ատելությամբ... Իմ մեջ սկսեց աճել օպոզիցիոն տրամադրությունը... Ես սկսեցի գրել՝ իմ ձեռքի տակ չունենալով ապացույցներ ու փաստեր»:

Իսկ հետո, թե՝ «Ես անվերջ դիմել եմ հարձակման, թեև հարձակումը շատ լավ բան է, այնուամենայնիվ, իմ հարձակումները չեն եղել հիմնավորված, ստրատեգիական, զինված»:

Եվ այսքանից հետո երիցս զրպարտիչը անչափ զարմանում է, երբ նրան դատապարտում են մեկ տարվա ուղղիչ աշխատանքների ու հեռացնում փաստաբանների կոլեգիայից:

- Ախր ինչի՞ համար է ... Որ մեղքիս համար: Երկու տարվա ուղղիչ աշխատանքները անկարող եղան ուղղելու փորձված խաբեբային: Նա քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության անունից բարոյականության մասին զեկուցումներ էր կարդում, դույլերով թանաք էր գնում, զինվում չմաշվող գրիչներով և հեղեղում միութենական և ռեսպուբլիկական բոլոր ղեկավար օրգանները:

Իր 17 էջանոց մոնումենտալ մի նամակում, որը կրում է «Աշխատանքի և հացի համար» սարսռեցուցիչ վերնագիրը, նա ՍՍՌՄ արդարադատության մինիստրին հայտնում է, որ ուղարկում է նրան հասցեագրված 21-րդ բողոքը և սպառնում է, որ կգրի 22-րդը, եթե մինիստրը չփոխի իր 21 պատասխանների բովանդակությունը և նրան չվերականգնի փաստաբանների կոլեգիայում:

Բայց նրան արդեն ճանաչում են բոլորը: Փաստաբանների կոլեգիայի նախագահությունը մերժում է վերականգնել նրան: Գազազյանը հեռացվում է պարտիայից՝ իր դատվածությունները թաքցնելու, անազնվության և զրպարտությունների համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու թեև երբեք առանց աշխատանքի չի մնում և մի շարք հիմնարկություններում վարում է իրավախորհրդատուի պաշտոնը, բայց շարունակում է գրել ավելի ու ավելի բարձր տեղեր, երկար-բարակ տեքստերով հեռագրեր է ուղարկում պարտիայի ու կառավարության ղեկավարներին և անձամբ մեկնում Մոսկվա:

Իր «վրիժառությունը» բավարարելու ճանապարհին Հովհաննես Գազազյանը կանգ չի առնում ոչ մի միջոցի առաջ՝ ստում է, կեղծում, խաբում:

Մինչև ուղն ու ծուծը խրվելով իր իսկ հորինած կեղծիքի ու խաբեության մեջ, Գազազյանը սկսում է մերկացնել իրեն: Մի տեղ գրում է, որ այսքան տարի անգործ է մնացել, մյուսում՝ թե նույն թվերին աշխատել է այսինչ-այնինչ հիմնարկներում: Մեկում. թե՝ դատված է, մյուսում՝ ոչ: Մեկում. թե՝ ավարտել է համալսարանը և մանկավարժական ինստիտուտը, մյուսում. թե՝ չի ավարտել ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը:

Զգալով, որ արդեն իրեն ճանաչում են, ձախողակ «իրավաբանը» ընդհատակ է անցել:

Նա հիմա իր անունից չի գրում: Բայց իր սրտի մաղձն ու թույնը, իր խավար հոգու ողջ ատելությունը լցնում է միամիտ մարդկանց դիմումների մեջ, նրանց անունից բողոքներ է հորինում, ստում ու կեղծում է, ջանում որքան հնարավոր է վարկաբեկել մարդկանց՝ բոլորին, բոլորին, ովքեր ապրում ու աշխատում են ազնվաբար:

Եվ հենց դրա համար էլ նրան նորից ներել չի կարելի:

Իր մի բողոք-սաեղծագործության մեջ Հովհաննես Գազազյանը գրում է. «Ես ընկել եմ կյանքի աղբարկղը»:

Սա է այն միակ ճշմարիտ նախադասությունը, որ նա գրել է իր ողջ, եթե կարելի է ասել, գիտակցական կյանքում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Բ-Ի ՄԱՍԻՆ

Արվեստի աշխատողների տան պատին փակցված պատկերազարդ հայտարարությունը ազդարարում էր. «Այսօր այստեղ Ա-ն հետաքրքիր հիշողություններ կպատմի մեր հայրենակից, հռչակավոր գրող Բ-ի մասին: Վերջում՝ գեղարվեստական կինոնկարի ցուցադրում»:

Խումբ-խումբ արվեստի աշխատողների վերոհիշյալ տունն էին մտնում սկսնակ գրողներ, ծեր-երիտասարդ գրողներ, երիտասարդ-ծեր գրողներ և պարզապես գրողներ: Նրանց հետևում էին տարբեր մասնագիտություն ունեցող և առանց որևէ մասնագիտության առանձին քաղաքացիներ՝ կինոնկարի ցուցադրմանը ներկա լինելու համար:

Դահլիճը, ինչպես ասում են, լեփլեցուն էր, եթե հաշվի չառնենք պատշգամբների դատարկությունը (դրանցում մաքրություն պահպանելու նպատակով դռները փակել էին) և առաջին չորս շարքում միայն մեկական հսկիչների ներկայությունը: Դահլիճի հիմնական կոնտինգենտը համեստաբար վերջին պլանում էր՝ կինոնկարի ֆոկուսից չընկնելու համար:

Ամբիոն բարձրացան երկու մարդ: Մեկը բոլորին շատ հայտնի մի, այսպես ասած, գրող էր՝ Բադալյան ազգանունով, որը իր գիտակցական, եթե կարելի է այդպես ասել, կյանքի երեք քառորդը անց է կացրել ամբիոններում ու տրիբունաներում, զանազան խորհրդակցություններ, կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլ ընթացներ անցկացնելով: Որոշ մարդիկ սոսկ նախանձից չարախոսում էին, թե նա միշտ դեպի ամբիոն է ձգտում՝ շաքարով տաք թեյ խմելու համար, ովհետև կինը մի քանի տարի առաջ բաժանվել էր նրանից: Բայց հազիվ թե այդպես լիներ:

Մարդիկ պարզապես սովորել էին նրան միշտ բեմում տեսնել, դրա համար էլ համարյա առանց բացառության նախագահության կազմում էին ընտրում՝ անկախ նրանից արտադրական խորհրդակցությո՞ւն էր, թե՞ կարմիր խաչի կազմակերպության հերթական կոնֆերանս, փոդի ժողո՞վ էր, թե՝ ճագարաբույծների ռեսպուբլիկական հավաք, «Արագ հանգցնենք» կամավոր ընկերության սեսիա՞ն, թե՞ ...

- Հարգելինե՛ր,- տեղից բարձրացավ Բադալյանը,- այսօր, այո՛, այսօր մեզ մոտ հյուր է եկել, այո, հյուր է եկել մեր շատ հարգելի... շատ պատվարժան, շատ...

Այստեղ Բադալանը թեքվեց դեպի իր սեղանակիցը ու կամացուկ, դահլիճին հազիվ լսելի հարցրեց.

- Ձեզ... ձեր... ի՞նչ մասնագիտություն ունեք:

- Մասնագիտությո՞ւն, նու, գրող եմ,- ասաց սեղանակիցը:

- Այո՛, իհարկե, գրող ընկ. Ա-ն: Այո՛

Դահլիճում մի քանիսը ծափահարեցին: Ա-ն հարգանքով պատասխանեց դահլիճի ողջույնին:

- Հիմա ընկ. Ա-ն կպատմի իր հիշողությունները հանրահռչակ Բ-իմասին: Խնդրեմ,ընկ. Ա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ձեռքի «համեցեք» շարժման հետ Բաղալյանը ճարպկորեն իր մոտ քաշեց քաղցր թեյի բաժակը ու, այլևս անտարբեր ամեն ինչին, սկսեց կամացուկ խմել: Նա գիտեր, իրեն այլևս ոչինչ չէր մնում անելու: Կարող էր, օրինակ, բաց աչքերով քնել կամ աջ ձեռքով ծածկել աչքերը, իբր շատ է խորասուզված ու նոր միայն քնել: Քնել մինչև զեկուցման վերջը, երբ հարկավոր է մի քանի ջերմ խոսքով շնորհակալություն հայտնել զեկուցողին «վառ, բովանդակալից, շատ հաճելի, անմոռաց ելույթի համար»:

- Հարգելի ընկերներ, կոլեգաներ, ես ձեզ կպատմեմ մեր բոլորի սիրելի գրող Բ-ից իմ ստացած ցնցող տպավորության մասին, դա անկրկնելի է, չտեսնված ու չլսված բան է դա...

Այսպես, ուրեմն. տասնհինգ տարի առաջ էր, այո՛, ուղիղ տասնհինգ տարի, ո՛չ ավել, ո՛չ պակաս: Այն ժամանակ ես ապրում էի լեռնային մի փոքրիկ քաղաքում: Չկարծեք, թե դա իմ ծննդավայրն է, ո՛չ, ես այնտեղ էի գնացել իմ մի բարեկամին տեսնելու: Իսկ նա ինձ ասում է՝ «Ա, սիրելի, իմ լավ ընկեր, ի՞նչ միտք ունի քո այստեղից գնալը, մնա մեզ մոտ, այստեղ այնպիսի հիանալի մոշուտներ կան: Նու, մոշը դա ուտելու բան է, ես անկեղծորեն կասեմ, շատ եմ սիրում: Մանուկ հասակում, հիշում եմ, հայրս մեզ ամառանոց էր տարել, այնտեղ էլ ա՛յ այսպիսի մոշի ծառեր կային, այսինքն՝ ոչ թե ծառեր, նու, այլ թփեր: Ես մոշը շատ սիրեցի և, անկեղծորեն կասեմ, ինձ միայն մի բան չէր դուր գալիս. ինչո՞ւ փուշ ունի: Այո՛, այո՛, փուշ, դրանք, ա՛յ, այսքան են ու ծակում են: Սարսափելի է, չտեսնված, անկրկնելի, նու, կարճ ասած՝ դրանք ծակեցին ինձ ու ես լաց եղա: Դե, երևի չափն անցկացրի, որովհետև հայրս բարկացավ, նա ընդհանրապես շատ ջղային մարդ էր, սարսափելի, հա՛, հա՛, հա՛... ճիշտն ասած, այն ժամանակ շատ էի վախենում նրանից, հա՛, հա՛, հա՛...

Երբ մեծացա, մի պատմվածք գրեցի այդ մասին, որն իմ առաջին վեպի հիմքը հանդիսացավ: Նու, բնական է, պատմվածքը ձեռքից-ձեռք խլեցին: Հրատարակիչները ուղղակի սպանում էին ինձ, «Էլի՛ գրեք,- աղաչում էին նրանք,- մենք ձեզ բաց չենք թողնի»: Իսկ գիտե՞ք ինչ հրատարակիչներ էին: Նրանցից մեկը իմ մոտ բարեկամն է, այսինքն՝ քրոջս ամուսինը, և մեծ պատիվ ունի: Նա ինձ միշտ ասում էր. «Ես,- ասում էր,- երկու բան եմ սիրում, քո քրոջը և քո գրքերը...»:

Դե, իմ գրքերի մասին ի՞նչ ասեմ, դուք բոլորդ էլ անպայման կարդացած կլինեք: Ընդհանրապես ինձ շատ են կարդում: Ոչ թե նրա համար, որ ճանաչում են և իմ անունը շատ բան է ասում, ո՛չ: Դա արդեն անհամեստություն կլիներ: Ես ուղղակի կյանքից եմ գրում, ահա թե ինչ, նու, ջերմ է ստացվում մի տեսակ, նու, չտեսնված, նու...

Ես ձեր քաղաքը գալով հետս բերել եմ, իհարկե, իմ չտպագրված վեպերից երկուսը: Հույս ունեմ, իհարկե, որ դրանք մեծ ընդունելություն կգտնեն մեր, ձեր, այսինքն մեր բարձրաճաշակ հասարակության մոտ: Նու, այսքանը:

«Այսքանը» բառի հետ նախագահող Բաղալյանը բնազդաբար արթնացավ, ճակատին դրած աջ ձեռքի մատներով խաղաց մազերի հետ, որպեսզի ներկաներին համոզի, թե քնած չէր, ու վեր կացավ.

- Ինձ թվում է, որ հարցեր չկան, քանի որ մեր շատ հարգելի...

- Ես մի հարց ունեմ,- ասաց առաջին շարքում նստած հսկիչը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Խնդրեմ, խնդրեմ,- մռայլ քրթմնջաց նախագահը՝ անհամբերությամբ նայելով ժամացույցին: Նրա հայացքն ասում էր. «Խիղճն էլ լավ բան է, չէ՞ որ սրանից հետո արհմիության ժողովի էլ եմ գնալու»:

- Ի՞նչ կապ ուներ մոշը և ընդհանրապես այս բոլորը գրող Բ-ի հետ:

- Մո՞շը, ինչո՞ւ հենց մոշը,- զարմացավ զեկուցողը,- մոշը ուտելու բան է: Ախ,հա՛, մեր սիրելի գրող Բ-ի մասին է խոսքը: Դե, իհարկե, ցնցող, նու, անկրկնելի, նու... տպավորություն թողեց: Այո, ուղիղ տասնհինգ տարի առաջ էր, դե, իհարկե, մոտեցավ ինձ, ձեռքով, այ, այսպես, բարեկամաբար թփթփացրեց մեջքիս ու ասաց. «Ես հիացած եմ քեզնով»: Այսքանը:

- Թույլ տվեք... - ասաց նախագահը:

Դահիճը սիրով թույլ տվեց, որ նրանք հեռանան, ու աշխույժով սպասեց նոր կինոնկարի ցուցադրմանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԿՈՐԱԾ ԱԹՈՌԻ ԵՏԵՎԻՑ

Եթե այս օրերին փոքր-ինչ ուշադիր լինեք վարսավիրանոցում, ապա անկասկած կտեսնեք, որ վարսավիրանոց կմտնի միջահասակ, թուխ դեմքով մի մարդ, գրպանից կհանի լայնածավալ մի թուղթ ու կկանչի կերկերուն ձայնով.

- Վարպետ Սարգի՛ս (Կարո, Մանուկ, Օնիկ և այլն):

- Ի՞նչ կա,- գլուխը կթեքի վարպետ Սարգիսը (Կարոն, Մանուկը, Օնիկը և այլն):

- Հիշո՞ւմ ես, անցյալ տարի քեզ ուզածդ ժամանակ արձակուրդ տվեցի:

- Է, հետո՞...

- Մի փոքրիկ խնդիր ունեմ...

- Ինչ է, էլի՞ պետք է վճարեմ...

- Ոչ, ոչ, այս թղթի տակ պետք է ստորագրես:

- Ինչո՞ւ:

- Ինձ նորից վերականգնում են, քո կարծիքն էլ են հարցնում, տեսնո՞ւմ ես, շատերն արդեն ստորագրել են: Ով ստորագրել է՝ փառքի մեջ կպահեմ, նորից դիրեկտոր դառնալուց հետո, ով չէ՝ կլացացնեմ:

Կամ վարպետ Սարգիսը, մտքում անիծելով իր փափկասրտությունը, ստորագրում է այդ «խնդրագիրը», կամ, որ ավելի հաճախ է պատահում, հրաժարվում է, ու մարդը շարունակում է քայլել դեպի ուրիշ վարսավիրանոցներ: Նրան օգնում են նաև իր մի քանի ընկերները և այստեղ ու այնտեղ, խնդրելով ու սպառնալով, ստորագրել տալիս մի թուղթ, ըստ որի քաղաքի բոլոր վարսավիրները խորապես վշտացած են իրենց միավորման գրասենյակի սիրելի և անմոռանալի դիրեկտոր Ստեփանյանին դիրեկտորական աթոռից վաղաժամ հեռացնելու առթիվ և խնդրում են կրկին իրենց գիրկը վերադարձնել նրան:

Միջահասակ, թուխ դեմքով մարդը, որն անխոնջ շրջում ու ստորագրություններ է հավաքում, նույն ինքը՝ քաղաքի վարսավիրների միավորման գրասենյակի նախկին դիրեկտոր Ստեփանյանն է:

Թեև Ստեփանյանը ընդունակություններով առանձնապես չի փայլում և, օրինակ, վարսավիր բառի փոխարեն գրում է վարսավեր, բայց դեռևս կարող էր մի քանի տարի էլ մնալ ՆԵՐԿԱ և ոչ թե ՆԱԽԿԻՆ դիրեկտոր: Ինչո՞ւ, որովհետև նախ նա միակը չէր իր տեսակի մեջ և երկրորդ ուներ մի այնպիսի փայլուն պաշտպան, ինչպիսին քաղսովետի գործկոմի կոմունալ ձեռնարկությունների վարչության պետն էր: Բայց դարձավ նախկին, որովհետև դիրեկտոր աշխատելու ժամանակ բոլոր իր մեղքերին գումարեց մեկը ևս՝ ցրվածությունը: Ինչպես ինքն է ասում, պարզապես ցրվածությունն է եղել պատճառը, որ պետական, անձնական և ուրիշի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գրպանները միշտ շփոթել է ու այնտեղ, որտեղ ձեռքը իր գրպանը պետք է տաներ, պետության կամ ուրիշի գրպանն է մտցրել: Ուրիշ դեպքերում այդ կարելի է անվանել նաև գողություն, բայց Ստեփանյանի մոտ, առանց ավելորդ ձևականությունների, կոչվում է ցրվածություն:

Եվ իսկապես ցրվածության նման է: Հիմնարկի «Վիլիս» ավտոմեքենան պետք է «Երարդառ»-ին տրվեր վաճառքի: Անհրաժեշտ էր կապիտալ վերանորոգման ենթարկել ու նոր միայն հանձնել: Բայց Ստեփանյանը անցյալ տարվա հունիսի 6-ին, մոռանալով վերանորոգման ենթարկել, մեքենան հենց այնպես հանձնում է «Երարդառ»-ին ու ինքն էլ գնում է այն՝ 2360 ռուբլով (հին դրամով): Հետո ձեռքը ճակատին է խփում ու բացականչում:

- Վայ, ո՞նց էի մոռացել, այս ի՞նչ եմ արել:

- Ի՞նչ է եղել,- իսկույն անհանգստացած՝ պետի առանձնասենյակն են նետվում հաշվապահը, պարտկազմակերպության քարտուղարը ու տեղկոմի նախագահը,- ինչո՞վ օգնենք, որտեղ ընկնենք՝ կրա՞կը, թե՞ ջուրը:

- Ո՛չ, բարեկամներ,- շոյվում է դիրեկտորը,- ծայրահեղ միջոցների հարկ չկա: Պարզապես մոռացել էի վերանորոգել ավտոմեքենան ու նոր գնել: Ուշ կլինի՞, եթե հիմա վերանորոգենք:

Հավաքի մասնակիցները ամոթխած ժպիտով իրար են նայում, շփոթվում.

- Մի՞թե ձեր հաշվին:

- Իհարկե, մեր, հիմնարկի հաշվին,- անկեղծ զարմանում է դիրեկտորը,- հապա էլ ո՞ւմ, հո ուրիշի հաշվին չե՞նք նորոգելու: Պահեստում ավտոմեքենայի մասեր ունե՞նք:

- Ունենք:

- Բոլորը դուրս գրեք:

Հետագա երկու-երեք ամիսներին հիմնարկի ավտովարորդը պահեստից դուրս գրած մոտ 6 հազար ռուբլու պահեստամասերը տեղադրում է Ստեփանյանի սեփական մեքենայի վրա, հանում հին անվադողերը ու զցում հիմնարկի հաշվին ստացած, մոտ երկու հազար ռուբլու արժողությամբ, նորերը և, մի խոսքով, մեքենան հիմնարկի հաշվին ենթարկում լրիվ կապիտալ նորոգման: Ու քանի որ ցրվածության պատճառով Ստեփանյանը կրկին մոռացած է լինում՝ մեքենան իր անձնակա՞նն է, թե հիմնարկինը, դրա համար էլ կատարված նորոգման համար ավտովարորդին աշխատավարձ է վճարում ոչ թե իր, այլ պետության գրպանից: Հետո՞: Հետո կանչում է վարորդին ու ասում.

- Եթե հիմնարկը մեքենա չունի, վարորդ էլ չպետք է ունենա, չէ՞:

Վարորդը տխուր գլխով է անում:

- Բայց եթե ես մեքենա ունեմ, վարորդ էլ պետք է ունենամ, չէ՞:

Վարորդը, ինչ-որ քան կռահելով, ուրախ գլխով է անում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ուրեմն, սրանից հետո դու կլինես իմ անձնական վարորդը: Գուցե ես մոռանամ վճարել, դրա համար էլ դու աշխատավարձ կստանաս ուղղակի հիմնարկից: Հո չե՞ս նեղանա, եթե պահեստի բանվոր նշանակեմ ձևի համար:

Ու քանի որ վարորդը չի նեղանում, Ստեփանյանը ավտոմեքենայի հարցը համարում է լուծված ու անցնում է իր հերթական գործերին:

Իսկ գործե՛րը... Օ՛, դրանց վերջ չկա: Պետք է կոպտել մի հինգ-տասը վարսավիրի, մի քանի հոգու պետք է անպայման հայհոյել, քարտուղարուհուն պետք է զգուշացնել, որ չխանդի իրեն, իսկ այն մյուսին էլ՝ որ չխանդի քարտուղարուհուն: «Այսինքն՝ ավելի լավ չի՞ լինի, եթե քարտուղարուհուս իմ, այսինքն հիմնարկի հաշվին տամ արձակուրդ: Թող տանը նստի իմ, այսինքն հիմնարկի հաշվին արձակուրդային գումարներ ստանա և ո՛չ ինձ խանդի, ո՛չ էլ խառնվի հիմնարկիս ներքին գործերին: Կեցցես, լավ գտար. Սիրելի քարտուղարուհի, հիմա գո՞հ ես. թե՛ քեզ թե' ինձ: Մի երկու-երեք հոգի էլ կան այն №30 վարսավիրանոցում, սկսել են քննադատել: Պետք է կրճատել վարիչի հաստիքը, մյուսներին էլ տեղափոխել, ցրել, ուղարկել ծայրամասերը: Կբողոքե՞ն: Ոչի՛նչ: Վերադասը կօգնի, առաջին դեպքը չէ: Ախ, հա՛, ներկարարները: Ասում են այդ ինչպե՞ս ես անում, որ քո ամեն մի ներկարարը ամիսը 2500 - 2600 ռուբլի աշխատավարձի դիմաց ստորագրում է: Հո գումարի կեսը դու չե՞ս վերցնում: Կասկածո՞ւմ են: Հետո՞ ինչ: Կարո՞ղ ես ապացուցել: Ի՛նչ, մի քանի տեղ ահռելի հավելագրումնե՞ր կան, աշխղեկը հանդերձապահի հաստիքո՞վ է: Դե, դրանք դատարկ բաներ են: Վերադասը... կխնդրեմ, որ այս տարի էլ ստուգումներ չանցկացնի, ինչպես նախորդ չորս տարում: Թող նա էլ ինձ նման ասի՝ ցրված էի...»

...Բայց... բայց տարօրինակ բան՝ շրջկոմի բյուրոյում ոչ ոք չհավատաց Ստեփանյանի ցրվածությանը: Ոչ ոք: Բնավորության այդ անմեղ թերությունը նույնիսկ անվանեցին գողություն և խարդախություն: «Դուք, ընկե՛ր,- ասացին,- այդ բոլորից բացի, դիտավորյալ այրում եք վարսավիրների մեկօրյա չեկերը, որպեսզի ձեր խարդախությունները չբացահայտվեն: Թանկարժեք օծանելիքների անունները չեք գրում վարսավիրանոցներին հանձնելու ժամանակ, այլ նշում եք միայն քանակը: Փոխարենը էժանագիններն եք հանձնում, իսկ թանկարժեքները վաճառում ու գրպանում եք գումարը: Դուք, ընկե՛ր,- ասացին,- պաշտոնը չարաշահելու, խարդախությունների և անազնվության համար հեռացվում եք թե՛ աշխատանքից, թե' պարտիայից: Ձեր վերաբերյալ նյութերը կուղարկվեն քննչական օրգաններին»:

Ցնցված դիրեկտորը մի վերջին հույսով դարձավ դեպի իր պաշտպան ու բարերար վերադասը, բայց նա էլ զբաղված էր իր վերաբերյալ որոշումը լսելով. նկատողություն գրանցելով անձնական գործում: Դե, փա՛ռք աստծո, ինքն ավելին էր սպասում:

Ու առաջին անգամ՝ վերջին տարիներին, Ստեփանյանը մնաց մենակ: Նախկին դիրեկտորի հետ զրուցելը մի առանձնակի հաճույք չէ: Նա քայլեց փողոցով՝ դիտելով վարսավիրանոցների ցուցանակները, որոնք մի քանի տարի հոյակապ կյանք էին ստեղծել նրա համար և հիմքեր տվել՝ էլի մի քանի տարի ապահով ապրելու: Ու անասելի ցավ զգաց կրծքի այն կողմում, որտեղ ըստ բնագիտական դասագրքերի՝ սիրտը պետք է լիներ: Բայց դա խղճի խայթ չէր, դա պարզապես դիրեկտորական աթոռի կորստյան ցավն էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ասում են, թե այդ գիշեր Ստեփանյանը չի քնել, երկար մտածել է «կորուսյալ դրախտը» վերադարձնելու մասին ու ակամայից հիշել է սևիլյան սափրիչին. «Եթե սովորական երրորդ կարգի մի սափրիչ լինելով, այդ Սևիլյանը կարողացել է ամեն ինչի տակից դուրս գալ, ինչո՞ւ պետք է խեղճանամ ես՝ Ստեփանյանս, որ քաղաքի բոլոր սափրիչների դիրեկտորն եմ... եղել»:

«Եղել» բառի վրա նորից ցնցվել է նա ու սկսել իր երթը վարսավիրանոցներում՝ ստորագրություններ հավաքելու, վերադաս օրգաններին բողոքելու, կրկին դիրեկտոր դառնալու համար:

Ու անխոնջ շրջում է մինչև այսօր՝ կորած աթոռի ետևից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՐԳԻԾԱՆՔ

ՍԱՀՄԱՆԻՎՐԱ

(Կատակերգություն մեկ գործողությամբ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Հեղինակ
Անդրանիկ Գասպարյան - նկարիչ
Աստղիկ - նրա կինը: Արտիստուհի
Վաղարշակ Հակոբյան - խանութի վարիչ
Լուսիկ - Վաղարշակի մայրը
Աղավնի - նրա կինը: Բժշկուհի
...և ուրիշներ

Գործողության ժամանակը՝ ցավոք սրտի մեր օրերը:

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Շահագործման է հանձնվում նորակառույց քառահարկ մի շենք: Հռնդալով կանգ են առնում ավտոմեքենաներ:

ՀԵՂԻՆԱԿ - Դուք տեսնում եք սովորական մի պատկեր: Երևանում, Կոմիտասի փողոցի վրա, շահագործման է հանձնվել ևս մի շենք, ինչպես լրագրերում է գրվում՝ տուֆաշեն և հոյակերտ: Այստեղ այսօր իրենց նոր, հարմարավետ բնակարաններն են տեղափոխվում տասնյակ բանվոր-ծառայողների ընտանիքներ: Բնական է նրանց խնդությունը, ժպտուն, ծիծաղկոտ դեմքերը: Այդ ուրախությունը կրկնապատկվել է նրանով, որ այս շենքը, թյուրիմացաբար, շինարարական ոչ մի թերություն չունի՝ դռները զարմանալիորեն ուղիղ են, ծեփը չի թափվում, պարկետը փայլում է հայելու պես, ջուրը ոչ թե հատակին է հոսում, այլ խստորեն նշանակված տեղը, և որ ամենաապշեցուցիչն է՝ դռների ու պատուհանների բոլոր բռնակներն էլ իրենց տեղում են: Կարճ ասած՝ ոնց որ հեքիաթում:

ԱՆԴՐԱՆԻԿ - *(բանվորներին):* Զգույշ, այդ ի՞նչ եք անում: Այդ ինչպե՞ս եք տանում: Դա ֆաներկա չէ, ընկեր, դա արվեստի նմուշ է:

ԲԱՆՎՈՐ - *(չի կարողանում կտավը ներս մտցնել դռնից):* Ա՛յ ընկեր, իսկ ի՞նչ կլինի, որ ձեր այդ նմուշը ծալենք ու նոր մտցնենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԴՐԱՆԻԿ - Ինչպե՞ս թե ծալեք... Թողեք այդտեղ, բակից կբարձրացնենք պատշգամբ: Ծալե՛նք... Իմ մտքերի արգասիքը... պասմատրիտե նա նեվո*... (դեմքը մոտեցնում է էկրանին):* Ես ասում եմ նրան նայեք, ինչո՞ւ եք ինձ նայում...

ՀԵՂԻՆԱԿ - Ահա և մեր տխուր կատակերգության գործող անձերից մեկը՝ նկարիչ Անդրանիկ...

ԱՆԴՐԱՆԻԿ - Գասպարյան: Եթե ձեզ շատ է հետաքրքրում:

ՀԵՂԻՆԱԿ - *(Աստղիկին):* Շրջվեցեք, խնդրում եմ, միևնույն է, ձեզ քչերն են ճանաչում, որովհետև տիկնիկային թատրոնի դերասանուհի եք, այնպես չէ՞, տիկին Աստղիկ:

ԱՍՏՂԻԿ - Այո՛, առայժմ... բայց խոստացել են...

ՀԵՂԻՆԱԿ - Այս մեկին արդեն ես լավ եմ ճանաչում: Դե, իհարկե, սննդառի խանութի վարիչ Վաղարշակ Հակոբյանն է: Բարև ձեզ, հարգելի ընկ. Հակոբյան:

ՎԱՂԱՐՇԱԿ - Բարև: Ներողություն, դո՞ւք ինչու եք այստեղ:

ՀԵՂԻՆԱԿ - Հենց այնպես, նայում եմ, ծանոթանում եմ...

ՎԱՂԱՐՇԱԿ - Նայո՛ւմ է, ծանոթանո՛ւմ է, իսկ վաղը մեկ էլ տեսար մի ֆելիետոն գրեց: Սրիկա՛:

ՀԵՂԻՆԱԿ - Այս տարեց կինն էլ հավանաբար Վաղարշակի մայրն է, տիկին Լուսյան:

ԼՈՒՍԻԿ - Զարմանալի է, իսկ ինչո՞ւ հավանաբար...

Էկրանին է մոտենում մեկը: Դիմակին աղավնի է նկարված:

ՀԵՂԻՆԱԿ - Սա էլ Վաղարշակի ապագա կինն է, բժշկուհի: Նա սկսում է գործել միայն երրորդ պատկերից, դրա համար էլ առայժմ նպատակահարմար է համարում թաքցնել իր իսկական դեմքը:

ԱՂԱՎՆԻ - Ի՞նչ տարբերություն, խնդրեմ, ծանոթանանք՝ Աղավնի:

ՀԵՂԻՆԱԿ - Եվ այսպես... կատակերգությունն սկսված է...

ՈՒՐԻՇՆԵՐ - Իսկ մե՞նք, մե՞զ ինչու չեք ծանոթացնում:

ՀԵՂԻՆԱԿ - Ներեցեք, սակայն դուք երկրորդական գործող անձինք եք:

ՈՒՐԻՇՆԵՐ - Դե, իհարկե, ամեն տեղ ձեր ծանոթներին եք անցկացնում, երկրորդակա՛ն...

ՀԵՂԻՆԱԿ - Թողեք, խնդրում եմ: Սկսվեցին բողոքները... Տանել չեմ կարողանում այդ քննադատություն և ինքնաքննադատություն կոչվածը: Եվ այսպես... կատակերգությունն սկսված է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է ընդհանուր հարմարություններով մի բնակարանի միջանցքը, որի ուղիղ մեջտեղում մուտքի դուռն է: Երկու կողմերից երևում են սենյակների, խոհանոցի և զուգարանի դռներ: Սենյակների դռները բաց են, աջ կողմի դռան մեջ հայտնվում է Վաղարշակը, կանգնում, ուղղում է փողկապը, ապա թեթև քայլերով մոտենում դիմացի դռանը:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ընկեր Գասպարյան, խնդրում եմ ձեզ և հանձինս ձեր՝ մեր լավ հարևաններին, այս ուրախ օրը, այսինքն հիմա, հաճեցեք գալ մեր տուն: Մայրիկս մի այնպիսի քյուֆթա է եփել, որ ինչպես ասում են «մատներդ...

ԱՆԴՐԱՆԻԿ - *(հայտնվում է դռան մեջ):* Հարգելի Վաղարշակ, դուք ինձանից ավելի երկար եք ապրելու:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ինչո՞ւ:

ԱՆԴՐԱՆԻԿ - Քանի որ ես հենց դուրս էի գալիս, որպեսզի ձեզ և ձեր հարգելի մայրիկին հրավիրեմ մեր տուն: Աստղիկը բաց է արել երեք տեսակ կոմպոտ: Այդ հազվագյուտ է պատահում, պետք է օգտվել:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ո՛չ, մեզ մոտ, խնդրում եմ:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ո՛չ, ո՛չ, մեզ մոտ, խնդրում եմ:

ՎԱՂԱՐՇԱԿ - Հարգելի ընկ. Գասպարյան, չէ՞ որ առաջինը ես հրավիրեցի:

ԱՆԴՐԱՆԻԿ - Սիրելիդ իմ, Վաղարշակ, չէ՞ որ հոգով ես էի ուզում առաջինը հրավիրել:

ՎԱՂԱՐՇԱԿ - Բայց ես մարմնով...

ԱՍՏՂԻԿ - Ա՛խ, տղամարդիկ, տղամարդիկ, դուք միայն վիճել կարող եք: Իսկ ես ահա թե ինչ եմ առաջարկում. եկեք սեղանը դնենք միջանցքում և միասին շնորհավորենք մեր այս բնակարանը:

ՎԱՂԱՐՇԱԿ, ԱՆԴՐԱՆԻԿ - Ուռա՛... հիանալի առաջարկություն է, քեֆս բերեց:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ա՛սյա, դու սքանչելի ես, թույլ տուր համբուրեմ քեզ:

ԱՍՏՂԻԿ - Անդրանի՛կ...

ԱՆԴՐԱՆԻԿ - Ա՛սյա...

Ծիծաղում են ու համբուրվում: Վաղարշակը սկզբում մտադրվում է երեսը շրջել և թեքում է գլուխը, հետո ինչ-որ բան մտածելով ետ է դառնում և ուշադիր ուսումնասիրում ամուսինների գրկախառնությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՂԱՐՇԱԿ - Ո՛չ, պետք է տեսնել, շուտով ինձ պետք կգա:

Աղմուկի վրա հայտնվում է նաև տիկին Լուսյան: Աստղիկն ու տիկին Լուսյան իրենց հետ զանազան ուտելիքներ են բերում:

ԱՆԴՐԱՆԻԿ - Այնպես, ինչպես Իրանի շահի մոտ: Մի դռնից բերում են քյուֆթան, մյուս դռնից զանազան անուշահամ խորտիկներ... Իսկ մի այլ դռնից... (արագորեն ներս է մտնում և դուրս գալիս, ձեռքին կոնյակի մի շիշ) այս անմահական խմիչքը, որ Հայաստանի արևն է պարունակում իր մեջ:

ՎԱՂԱՐՇԱԿ - *(վախեցած):* Էդ հո մեր խանութից չե՞ք առել:

(Վերցնում է շիշը, ուշադրությամբ դիտում զմուռսը, կնիքը, ապա պահում լույսի տակ: Մեկուսի): Թե մեր խանութինը կլիներ, մեջն իսկի նավթի ճրագ էլ չէիք գտնի... *(բարձրաձայն):* Ամեն ինչ կարգին է... մնում է միայն երգել:

ԲՈԼՈՐԸ - Ճիշտ է, ճիշտ է, երգենք, երգենք:

ԱՍՏՂԻԿ - Բայց ի՞նչ երգենք:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ճիշտ որ, ի՞նչ:

ԱՆԴՐԱՆԻԿ - Եկեք «Հով արա, եզո»-ն երգենք, ես սոլո կտամ...

ՎԱՂԱՐՇԱԿ - Էդ վերջում լավ է, ընկեր Գասպարյան:

ԼՈՒՍՅԱ - Ուրեմն՝ ի՞նչ:

ԱՍՏՂԻԿ - Եվ ինչո՞ւ եք այդքան երկար մտածում, տե՛ր աստված, սեղանի միայն մեկ երգ ունենք, էլի: Ահա.

- Լցրե՛ք: Ընկերնե՛ր...

Բոլորը վերցնում են լի բաժակները ու սկսում երգել: Շիշը Վաղարշակի ձեռքին է: Նա հասցնում է ընդմիջումներով մի քանի բաժակ խմել...

ԱՆԴՐԱՆԻԿ - Ըստ մեր ժողովրդական տրադիցիայի, խոսքը պատկանում է մեծերին:

ՎԱՂԱՐՇԱԿ - Իսկ խմիչքը փոքրերին:*(Մի բաժակ էլ է խմում):* Կներեք...

ԱՍՏՂԻԿ - Լսում ենք, տիկին Լուսյա:

ԼՈՒՍՅԱ - Ի՞նչ ասեմ, զավակներս: Թող շնորհավոր լինեն բնակարանները: Թող միշտ ուրախություն լինի այս հարկի տակ և բոլոր հարկերի տակ: Թող խաղաղություն լինի աշ-խարհում: Ողջ լինենք ու առողջ:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ուռա՛, էքստրա իմ կոլեկտիվ ագիտատոր մայրիկի կենացը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԴՐԱՆԻԿ, ԱՍՏՂԻԿ - Ձեր կենացը, մայրի՛կ, երկար կյանք, տիկին Լուսյա:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ես պետք է ծաղկեցնեմ այս կենացը: Թույլ տվեք:*(Նայում է ժամացույցին):* Ահա, համերգի ժամն է, հիմա ես կմիացնեմ ընդունիչը, և եթե իմ բախտից մի շալախո...

ՁԱՅՆ - Ուշադրություն, այժմ կհաղորդենք...

ԲՈԼՈՐԸ – Ահա՛...

ՁԱՅՆ - Բժշկական զրույց՝ քաղցկեղի առաջացման ֆակտորները և պայքարը նրանց դեմ:

ՎԱՂԱՐՇԱԿ - Չէ՛, սա շալախո չէր: Այսինքն՝ կներեք, համերգ չէր, երևի էլի տեխնիկական պատճառով...

Բոլորը ծիծաղում են:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ես ամբողջ կյանքում երազել եմ նման հարևանների, չեմ հանդիպել, հուսացել, հառաչել եմ և շարունակել երազել: Եվ, ի վերջո, ողջ ժողովրդի երազը այս չի՞ եղել միթե: Թերթենք մեր պատմության էջերը, անդրադառնանք ժողովրդական ասացվածքներին: Ո՞վ է ասել, թե. «Լավ հարևանը բարեկամից էլ լավ է»: Ժողովուրդը: Կամ՝ «Հարևանով մահը հարսանիք է: Այսինքն, կներեք, սա ընկերոջ մասին է: Սակայն ի՞նչ տարբերություն: Այդ մասին են խոսում բոլոր հոլովները: Հարևանն էլ հոլով է, այսինքն՝ ընկեր է:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ես քո ցավը տանեմ, ընկեր Գասպարյան:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ո՞վ է մեզ բարի լույս մաղթում առավոտյան: Հարևանը: Ուղղական: Ո՞ւմ ուրախությամբ ենք մենք ուրախանում: Հարևանի: Սեռական: Ո՞ւմ ենք մենք դիմում, երբ մեր հոգին պարուրվում է խինդով կամ երբ նույն հոգին կեղեքում են վշտերը: Հարևանին: Տրական կամ ավելի ճիշտ՝ հայցական: Նայած թե ինչ հարցով ենք դիմում:

ԱՍՏՂԻԿ - *(ծիծաղում է):* Դե, լա՛վ, Անդրանիկ, դու արդեն խառնում ես:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ոչինչ, դրա համար կարիք չկա ամաչել հարևանից: Բացառական...

ՎԱՂԱՐՇԱԿ - Հարգելի ընկեր Գասպարյան, հարգելի սեղանակիցներ, մարդ հարևանի հարցում էլ պետք է բախտ ունենա: Ես այդ բախտը մինչև այսօր չեմ ունեցել: Ում հետ ապրել ենք, միշտ աչքը մեր դռանն է եղել: Ի՞նչ բերեց, ի՞նչ միջոցներով, ո՞ւմ տուն գնաց, էս ո՞վ էր, որ եկավ իրենց տուն: Էն մի կտոր հացն էլ հարամ են արել զլխիս տվյալ սիտուացիայում: Բայց հիմա, հարգելի ընկեր Գասպարյան... Հարգելի ընկեր Գասպարյան, թույլ տվեք, որպես մոտիկ մարդու, ձեզ անունով կոչեմ:

ԱՆԴՐԱՆԻԿ - Խնդրեմ, խնդրեմ, բարեկա՛մս:

ՎԱՂԱՐՇԱԿ - Այ, շատ շնորհակալ եմ, տվյալ սիտուացիայում մի տեսակ չի սազում ընկերը: Ուրեմն, Անդրանիկ ջան, դրա համար էլ շատ ուրախացա, որ տեսա ձեզ նման ազնիվ ու բարձրագույն մարդիկ են մեր հարևանները, այսինքն՝ կրթությամբ: Ոնց որ ես, որովհետև ես

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

էլ առևտրի ինստիտուտն եմ ավարտել, այսինքն՝ հեռակա: Մենք իրար լավ կհասկանանք: Ես չեմ կասկածում, որ մենք նախանձելի հարևաններ կլինենք, որովհետև ձեզ ասեմ, լավ հարևան ունեցողի մեջքը... Անդրանիկ ջան, թույլ տուր ձեզ հետ ձեզով չխոսեմ, քեզ էնքան եմ հավանում, ոնց որ ախպորս:

ԱՆԴՐԱՆԻԿ - Խնդրեմ, ինչպես ձեզ հաճելի է, «դու»-ով խոսեք: *(Մեկուսի):* Սա վերջը ինձ «Անդո»-ի է հասցնելու:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ուրեմն, Անդո ջան... հո չե՞ս նեղանում, որ քեզ Անդո եմ ասում, չէ՞: Հա, ուրեմն, Անդո ջան, ինչի՞ վրա կանգնեցի:

ԱՆԴՐԱՆԻԿ - Մեջքի:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ի՞նչ մեջքի, ո՞ւմ... Հա, ասում եմ լավ հարևան ունեցողի մեջքը ամուր կլինի: Էս բաժակով, Անդո ջան, ախպեր ջան, խմում եմ իմ էս մեջքի, այսինքն՝ քո կենացը: Իմ խանութը քեզ հալալ... *(խմում են):*

ԱՍՏՂԻԿ - Տիկին Լուսյա, դուք ինձ կսովորեցնեք, չէ՞, Բայազետի քյուֆթա պատրաստել...

ԼՈՒՍՅԱ - Իհարկե, աղջիկս, այնպիսի քյուֆթա՜ կպատրաստենք...

ԱՍՏՂԻԿ - Իսկ ես մի բան եմ որոշել, ես նկատեցի, որ ձեր հեռուստացույցը ծածկոց չունի, եթե թույլ տաք, ես ձեզ համար կասեղնագործեմ:

ԼՈՒՍՅԱ - Օ՜, աղջիկս, չգիտեմ ինչպես շնորհակալ լինել...

ԱՍՏՂԻԿ - Դե, ինչ եք ասում, ինչ եք ասում. բա հարևանը էլ ո՞ր օրվա համար է...

ԱՆԴՐԱՆԻԿ - Ահա թէ ինչ, սիրելի Վաղարշակ. բարդ են մեր այսօրվա խնդիրները և միանգամայն բնական է, որ եթե մեզ մոտ գեղանկարչական արվեստը ծաղկում ու զարգացում է ապրում, որ եթե մեր արվեստագետները միջոցներ են որոնում ու կիրառում այսօրվա մեր կյանքի հրատապ ու վեհ խնդիրները կտավների վրա պատկերելու համար, այնտեղ արևմուտքում տիրում է քաոս, տիրում է անարխիա և ապոլիտիզմ: Կապիտալի աշխարհում, դոլլարի գերիները զարկ են տվել աբստրակցիոնիզմին և ահա, խնդրե՛մ, այնտեղ հիմա կապիկներ են նկարում:

ՎԱՂԱՐՇԱԿ - Իսկ ի՞նչ է, մեզ մոտ կապիկներ չկա՞ն...

(վերցնում է մի խնձոր և ուզում է կծել):

ԱՆԴՐԱՆԻԿ - Ո՛չ, հարցը դրանում չէ, արվեստը...

Հնչում է դռան զանգը, բոլորը վազում են դուռը բացելու: Ներս է մտնում մի ջահել աղջիկ. ձեռքին փոքրիկ ճամպրուկ ունի:

ԱՂՋԻԿԸ - Ներողություն, ձեզ մոտ կրծողներ չկա՞ն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՂԱՐՇԱԿ - Ի՞նչ... *(խնձորը ձեռքից վայր է նետում, բոլորը զարմացած են):*

ԱՂՋԻԿԸ - Ես դեզկայանի աշխատող եմ, ուզում եմ իմանալ, թե ձեր բնակարանում կրծողներ չկա՞ն, այսինքն՝ մկներ, առնետներ կամ ասենք՝ միջատներ զանազան:

ԲՈԼՈԸ - Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում, համեցեք միասին ընթրենք:

ԱՂՋԻԿԸ - Շնորհակալություն, այդ դեպքում այստեղ ստորագրեք *(հեռանում է):*

ԱՆԴՐԱՆԻԿ - Ահա քեզ բարքեր, 15 տարի ապրում էի մի սենյակում, որտեղ առնետները կրծում էին իմ գլուխգործոցները: Բայց ոչ մի անգամ այդ դեզկայանից չեկան: Հիմա գիտեն, որ նոր տուն է, չի լինի, խնդրե՛մ, կրծողնե՛ր...

ԼՈՒՍՅԱ - Ես մի խոսք եմ ուզում ասել, բարեկամներս: Իմ տունը լիովին ուրախ տուն լինել չի կարող, որովհետև պակասում է...

ՎԱՂԱՐՇԱԿ - Ա՛յ մեր...

ԱՆԴՐԱՆԻԿ - Ա՛, կռահեցի, դե, իհարկե, Վաղարշակը դեռևս ամուսնված չէ: Օ՛հ ուրախություն է սպասվում, խնջույք, ես սիրում եմ խնջույք: Որոշեցինք, Վաղարշակը պետք է ամուսնանա:

ԱԱՏՂԻԿ - Հետաքրքիր է, կա՞ որևէ թեկնածու:

ԼՈՒՍՅԱ - Կա, թեև Վաղոս թաքցնում է:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ա՛յ մեր...

ԱԱՏՂԻԿ - Ո՞վ է, ի՞նչ աղջիկ է, ինչպե՞ս է անունը:

ԼՈՒՍՅԱ -Բժշկուհի է, անունն Աղավնի...

ԱՆԴՐԱՆԻԿ - Իսկականն է, բժիշկ չկար մեր բնակարանում, և պակասում էր խաղաղության աղավնին:

ԱՍՏՂԻԿ - Ես էլ արդեն իմ ընկերուհին կունենամ:

ԼՈՒՍՅԱ - Իմ ապագա հարսի կենացը:

ԲՈԼՈՐԸ - Ուռա՛, որ ավելի ամուր լինի մեր բարեկամությունը, մեր հարևանությունը:

ԱԱՏՂԻԿ - Ես դեռ հիմա էլ մտածում եմ. ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե առանձին բնակարան լիներ, հարևաններ չունենայինք:

ԱՆԴՐԱՆԻԿ - Սարսափելի, սարսափելի, ես չեմ սիրում միայնակ լինել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼՈՒԻՍՅԱ - Մեր հարսի կենացը: Թող շուտ գա ու իր հետ նոր ուրախություն բերի Աղավնին, ողջ լինեք, թանկագին հարևաններ: Ես գիտեմ, ամեն ինչ լավ կլինի:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ամե՛ն:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Նույն տեսարանը: Ոչ ոք չկա: Վերևից, ինչ-որ տեղից ընկնում են օրացույցի թերթիկներ...

ՀԵՂԻՆԱԿ - Անցան խաղաղության, փոխադարձ հարգանքի և տնտեսական բարգավաճման մի քանի ամիսներ: Հարևանները շարունակում էին ապրել նախանձելի համերաշխությամբ: Եվ համարյա ամեն շաբաթ խոհանոցի մեծ սեղանը առաջին օրվա նման միջանցքում էր դրվում, և նրա շուրջն էին հավաքվում երկու ընտանիքները: Ճաշում էին միասին, կատակում ու ծիծաղում, իսկ երբ տղամարդիկ օգտագործում էին բավականաչափ ոգելից խմիչքներ, արդեն բնականաբար սկսում էին զրուցել լուրջ թեմաների շուրջը. բարձրացնել բարդ խնդիրներ: Երեք-չորս ամսվա ընթացքում, օրինակ, խանութի վարիչ Վաղարշակ Հակոբյանը առանց մեծ դժվարության Ռեմբրանդտի կոմպոզիցիոն կտավները տարբերում էր Սերգեյ Արուտչյանի պլակատներից և լրիվ պատկերացում ուներ ամերիկացի կապիկ նկարիչ Բեսիի ստեղծագործական հնարքների մասին:

Փոխարենը նկարիչ Անդրանիկ Գասպարյանը իմացավ, թե ինչ բան է բնական պակասորդը և հասկացավ, որ առևտրի աշխատողների հավելյալ եկամուտը ոչ թե կշեռքից է առաջանում, այլ սորտախառնումից, թղթից և բազայի ավել քանակությամբ ապրանք բերելուց: Լավ հարևանությունը այդ բոլորի հետ միասին երիտասարդ նկարչի համար հանդիսացավ ստեղծագործական խթան: Այդ ժամանակամիջոցում նա ստեղծեց բավականին հաջողված մի գործ, որտեղ պատկերված էին իր հարևաններն ու իր ընտանիքը՝ միասին ճաշելիս: Նրանց գլխավերևում թևածում էր խաղաղության աղավնին: Նկարի ներքևում, արծաթե փոքրիկ սալատախտակի վրա գրված էր. «Նույն հարկի տակ», գործ՝ նկարիչ Անդրանիկ Գասպարյանի:

Բայց... ա՛խ այդ բայցերը: Ամեն վատ բան հենց այդ բայցերից է սկսվում: Մեղավորը հենց իրենք էին: Խանութի վարիչ Վաղարշակ Հակոբյանին այնքան ստիպեցին ամուսնանալ, այնքան բացատրեցին ամուսնական կյանքի քաղցրությունը, որ ի վերջո դժբախտ երիտասարդը չդիմացավ հրապույրներին ու ամուսնացավ:

Լսվում է ուրախ նվագի ձայն, բացվում է դուռը, երևում են երկու գույգ ոտքեր, շրխկոցով ջարդվում են երկու ափսեներ: Ներս են մտնում Վաղարշակ Հակոբյանը և նրան թևանցուկ՝ Աղավնին, աղավնու դիմակով: Ներկաների ցնծագին աղաղակների տակ Աղավնին հանում է դիմակը, երևում է գեղեցիկ, բայց չար մի դեմք:

ՀԵՂԻՆԱԿ - Եվ այսպես, Հակոբյանների ընտանիքում տեղի է ունենում փոփոխություն: Տուն է մտնում նորահարս Աղավնին: Սկսվում է հարսնական մեծ պատերազմը: Մի քանի շեշտակի և խորապես մտածված հարձակումներից հետո տեղի է ունենում վճռական և գլխավոր ճակատամարտը, որն ավարտվում է Աղավնու փառահեղ հաղթանակով: Այդ ճա-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կատամարտն էլ վճռում է կառավարության բախտը: Հակոբյանի ընտանիքում հաստատվում է հարսնիշխանություն: Նոր կառավարչուհին իր առաջին իսկ հրովարտակով սկեսուրին առաջարկում է 24 ժամվա ընթացքում թողնել բնակարանի սահմանները: Դուք տեսնում եք տիկին Լուսիկի հեռանալը: Որդին և հարսը չեն ուղեկցում նրան: Միայն նկարիչն ու իր ընտանիքի անդամներն են գաղտագողի ձեռքով հրաժեշտ տալիս:

Լուսիկը բացում է դուռը ու մեծ ճամպրուկը ձեռքին հեռանում:

Եվ եթե ճիշտը կուզեք իմանալ, հենց այստեղից է սկսվում մեր տխուր կատակերգությունը:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Հակոբյանի բնակարանը: Սեղանի մոտ նստած է Վաղարշակ Հակոբյանը և հաշվիչի հատիկներն է զցում: Կինը՝ Աղավնին, թախտին նստած, ձեռքը ճակատին մտածում է.

ԱՂԱՎՆԻ - Վաղարշա՛կ:

ՎԱՂԱՐՇԱԿ - 150, 80, 37... Էս քեզ, չէ էս ինձ՝ 267, հիմա՛, Աղունիկս, 64, 43...

ԱՂԱՎՆԻ - Վաղո՛ , դռան զանգն ո՞վ է առել, դո՞ւ, թե այդ նկարիչ Անդոն:

ՎԱՂԱՐՇԱԿ - Էս քեզ 265... Ե՛ս, ինչի՞ համար ես հարցնում:

ԱՂԱՎՆԻ - Ախր այդպես էլ գիտեի, որ նրանք քեզ հիմարի տեղ են դնում:

ՎԱՂԱՐՇԱԿ - 21... Ո՞վ *(սթափվում է),* էդ ո՞վ է ինձ հիմարի տեղ դնում, հը՞:

ԱՂԱՎՆԻ - Հենց քո հարևան Անդրանիկ Գասպարյանը:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ա՛յ կնիկ, դե վերջ տուր, է՛, ի՞նչ ես ուզում այդ խեղճ մարդուց, քեզ ի՞նչ է արել, ամբողջ օրը նստած իր համար ներկ է քսում:

ԱՂԱՎՆԻ - Հենց բանն էլ այն է, որ իր համար... Իսկ օգտագործում է քո զանգը: Ինչի՞ են իրենք զանգ տալիս... ինչո՞ւ իրենց համար առանձին զանգ չեն դնում... Թե՞ փող չունեն: Գիտե՞ս, որ էն մի երկու ծաղկի համար, որ իսկի ծաղկի նման էլ չէին, քո այդ հարևանը հազար ռուբլի ստացավ:

ՎԱՂԱՐՇԱԿ – Հազա՞ր: Տես դու:

ԱՂԱՎՆԻ - Բա չե՞ն կարող մի զանգ էլ իրենք դնել, մանավանդ, որ իրենց ծանոթներն ավելի շատ են:

ՎԱՂԱՐՇԱԿ - Իհարկե, տվյալ սիտուացիայում կարող են:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՂԱՎՆԻ - Դե, ուրեմն, թող մեզ հիմարի տեղ չդնեն, վերցրու այս թուղթը...

ՏԵՍԱՐԱՆ

Բնակարանի մուտքը: Վաղարշակ Հակոբյանը մի թուղթ է փակցնում զանգի տակ: Վերջացնում է ու գոհ նայում: Թղթի վրա գրված է. «Հայտարարություն: Այս զանգը իմն է, կողմնակի անձանց կոճակը սեղմել խստիվ արգելվում է: Վաղարշակ Հակոբյան»: Թղթի ներքևում երևում է խանութի մեծ կնիքը:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ափսո՛ս, պլոմբը մոտս չէ, կարելի էր պլոմբել, իսկ հիմա... (մի նման հայտարարություն էլ փակցնում է միջանցքում): Եվ որպեսզի ավելի ազդվեն, ահա՛... *(հայտարարության տակ մի նոր թուղթ էլ է փակցնում: Մտնում է Աղավնին, կարդում է):*

ԱՂԱՎՆԻ - Իմ զանգի կոճակը չարամտորեն սեղմողները կենթարկվեն խիստ, քրեական պատասխանատվության: Հակոբյան... (ծիծաղում է): Հիմա տեսնենք, թե ով է հիմարը:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ես...

ԱՂԱՎՆԻ - Ինչո՞ւ:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ես, այսինքն ես չէ, ուզում եմ ասել՝ ես կարծում եմ, որ կբողոքեն...

ԱՂԱՎՆԻ - Չմտածե՛ս, չեն բողոքի... Ես ճանաչում եմ նկարիչներին...

ՎԱՂԱՐՇԱԿ - Ի՞նչ, որտեղից, հը՞...

ԱՂԱՎՆԻ - Օ՛, իմ Օթելլո, դե լավ, լավ, կտեսնես, ամեն ինչ լավ կլինի...

Դուռը ձեռքով թակում են: Վաղարշակը դուռը բացում և արագորեն հեռանում է: Ներս է մտնում Անդրանիկ Գասպարյանը: Սաստիկ շփոթված է:

ԱՆԴՐԱՆԻԿ - Հարևանուհի, կներեք, դա այնքան արտառոց է: Ինչի՞ համար եք սարքել այդ բոլորը: Տանը չէ՞ ընկեր Վաղարշակը: Մի՞թե նա էլ է մասնակցում այս կոմեդիային:

ԱՂԱՎՆԻ - Խնդրում եմ, մի քիչ չափավոր: Դերասանուհին ձեր կինն է: Իսկ զանգը մերն է, ձեզ համար զանգ դրեք:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ի սեր աստծո, ի սեր մեր հարևանության, մի բղավեք: Ես հենց հիմա մի զանգ կբերեմ: Միայն թե հանեք դռնից այդ... այդ տեղեկանքը: *(Նկատում է միջանցքինը ևս)* Օ՛…*(արագ դուրս է գնում):*

ՎԱՂԱՐՇԱԿ - Գնաց:

ԱՂԱՎՆԻ - Հիմա ի՞նչ կասես, ճանաչո՞ւմ եմ նկարիչներին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՂԱՐՇԱԿ - Բայց չասացիր որտեղից, չէ՞,միևնույն է, ես վերջը կիմանամ...

ԱՂԱՎՆԻ - Օ՜, խանդոտ... բայց, միևույն է, ես սիրում եմ քո խանդը:

Դուռը կրկին թակում են:

ԱՂԱՎՆԻ - Այ, այդպես, խնդրեմ, եթե թակում են ուրեմն պարզ է, նրանց են ուզում, թե չէ ի՞նչ էր, կարծես նրանց աղախինը լինեի:*(Դուռը կրկին բախում են, ավելի ուժգին):* Այդպե՜ս, տանջվեք, տանը չեն:

ՎԱՂԱՐՇԱԿ - Լսիր, իսկ եթե նրանք լինեն՝ Աստղիկը կամ Անդրանիկը:

ԱՂԱՎՆԻ - Միևնույն է, ես չեմ բացի՝ սկզբունքի տեսակետից: Դո՛ւ բացիր:

Վաղարշակը բացում է դուռը: Արագորեն ներս են մտնում Աստղիկն ու Անդրանիկը: Աստղիկը արհամարհական հայացք է նետում, ապա բարձրացնում է գլուխը ու շտապ-շտապ իր սենյակն ուղղվում: Անդրանիկի ձեռքին մի տուփ կա:

ԱՆԴՐԱՆԻԿ - *(թունոտ ժպիտով):* Ահա՛, սիրելի հարևաններ, զանգը բերեցի:

ԱՂԱՎՆԻ - Ապրես, աննման հարևան:*(Ծիծաղում է)*

ԱՍՏՂԻԿ - *(կիսաբաց դռան արանքից):* Եկ, Անդրանիկ, չարժե խոսել այդպիսիների հետ:*(Վաղարշակը ձեռքի շարժումով հրաժեշտ է տալիս, երկուսով ծիծաղում են):*

Հնչում է դռան զանգը

ԱՂԱՎՆԻ - Իսկ հիմա պարզ է, մեզ են ուզում:*(Մոտենում է դռանը և բացում: Դռան ետևում կանգնած է մի կին):*

ԿԻՆԸ - Ներեցեք, ես Աստղիկին եմ ուզում, տանը չէ՞:

ԱՂԱՎՆԻ - Օ՜, ինչպիսի աներեսություն:

ԿԻՆԸ - Ներողություն, ես ձեզ չեմ հասկանում:

ՎԱՂԱՐՇԱԿ - Իսկ հայերեն հասկանո՞ւմ եք:

ԿԻՆԸ - Այո՛, կարծում եմ:

ԱՂԱՎՆԻ - Ուրեմն կրկին կարդացեք զանգի մակագրությունը:

ԿԻՆԸ - *(շփոթված):* Ներեցեք, ուրեմն ես սխալվել եմ...

ԱՂԱՎՆԻ - Կռահեցիք: Մի քիչ ետ քաշվեք, ես կփակեմ դուռը, իսկ դուք մատով թակեք, ա՛յ, այսպես, մատով: Ցտեսություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՂԱՐՇԱԿ - Ցտեսություն, հարգանքներս:

Աղավնին ու Վաղարշակը դուռը փակելուց հետո իրենց տուն են մտնում: Կինը նորից թակում է դուռը: Անդրանիկը դուրս է գալիս իր սենյակից:

ԱՍՏՂԻԿ - Տես, ուրեմն մեզ են ուզում, եթե ձեռքով են թակում: Մոռացել էի, որ զանգ չունենք... *(բացում է դուռը: Դռան ետևում նույն կինն է)*: Ա՜, ներս արի, ներս արի Արմիկ: Անդրանի՜կ...

ԿԻՆԸ - Պետք չէ, խնդրում եմ, ես միայն մեկ վայրկյանով, եկա ասելու, որ վաղը դպրոց ենք գնալու ներկայացման: Քեզանից հետո որոշեցին:

ԱՍՏՂԻԿ - Բայց ի՞նչ ես այդպես այլայլված, ի՞նչ է պատահել, գայիր, միասին կճաշեինք:

ԿԻՆԸ - Ես արդեն կշտացա ձեր հարևանների վերաբերմունքից, շնորհակալ եմ:

ԱՍՏՂԻԿ - Ուրեմն նրանք վիրավորե՛լ են... ստո՜ր, և դեռ բժշկուհի է:

ԿԻՆԸ - Ինչևիցե, չէր խանգարի, եթե դուք առանձին զանգ ունենայիք... կներե՛ս, իհարկե, դա իմ գործը չէ...

Կնոջ հետևից հայտնվում է մի տղամարդ:

ՎԱՐՊԵՏԸ - Ներողություն, այստե՞ղ պետք է զանգ անցկացնեմ: Կանչել եք:

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Խոհանոցը: Մեջտեղում, պատի մոտ, գազավառարանն է: Անկյունում ջրի ծորակը: Երկու-երեք աթոռ: Գազավառարանի մոտ ճաշ է պատրաստում Աստղիկը: Անդրանիկը լվացվում է: Խոհանոց է մտնում վարպետը:

ՎԱՐՊԵՏ - Վերջացրի, զնգում է, գնա՞մ:

ԱՍՏՂԻԿ - Շատ, շատ շնորհակալություն:*(Հանկարծ դեմքը ավելի է աշխուժանում):* Ընկեր, վարպետ ընկեր, իսկ դուք էլեկտրական գծեր չե՞ք կարող անցկացնել:

ՎԱՐՊԵՏ - Բա էլ գործիս անունն ի՞նչ է*: (Ցույց է տալիս ձեռքի ճամպրուկը):*

ԱՍՏՂԻԿ - Դե որ այդպես է, հենց հիմա մի լապտեր կախիր, ա՛յ, այստեղ, մյուսը զուգարանում, երրորդը միջանցքում, չորրորդը լողասենյակում...

ԱՆԴՐԱՆԻԿ - *(զարմացած):* Աստղիկ, այդ ի՞նչ է, հրավառությո՞ւն ես ուզում սարքել:

ԱՍՏՂԻԿ - Այո՛, թող հուրհրան: Սկսիր, սիրելի վարպետ: Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ինչպես ասում են մի շարք հերոսներ մի շարք պիեսներում: Այդպե՛ս, զանգ, չէ՞, ես զանգ ցույց կտամ, թող վառվեն, թող հուրհրան լապտերները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԴՐԱՆԻԿ - Աստղիկ, ի՞նչ է պատահել: Դու տենդ ունես, սիրելի՛ս, հանգստացիր:

ԱՍՏՂԻԿ - Այո, տենդ ունեմ և ուզում եմ, որ քո սիրելի հարևաններն էլ տենդ ունենան, թող դողա՛ն... Այդպես, ընկեր վարպետ...

ԱՆԴՐԱՆԻԿ - Եվ մի՞թե դու էլ ես իջնում նրանց մակարդակին, չէ՞ որ դու արհմիության անդամ ես:

ԱՍՏՂԻԿ - Իսկ ի՞նչ է, նրանք արհմիության անդամ չե՞ն: Կամ ով չի արհմիության անդամ: Ո՛չ, բավական է, մի զանգի համար են խոսում: Իսկ իրենք ժամերով դուրս չեն գալիս լողասենյակից և... և զուգարանից:

ԱՆԴՐԱՆԻԿ - Աստղի՞կ...

ԱՍՏՂԻԿ - Իսկ հիմա կտեսնես, հինգ րոպե էլ չեն մնա, չէ՞ որ այժմ իրենք են վճարելու իրենց օգտագործածի համար: Իսկ ես մեր բոլոր լապտերների անջատիչները կտեղավորեմ մեր սենյակում: Եվ կստեղծեմ, այսպես ասած, ղեկավարման վահան: Մեծ գործարաններում այդպես են անում: Այդպե՛ս... ընկեր վարպետ:

ԱՆԴՐԱՆԻԿ - Աստղի՛կ... ա՛խ, Աստղիկ... ա՛խ կանայք, դուք Բաբելոն կդարձնեք այս կոմունալ բնակարանը: (Գլուխը ափերի մեջ առած դուրս է գալիս):

Խոհանոցը մթնում է: Հետո վառվում է նոր լապտերը: Աստղիկը գոհունակությամբ իր ստեղծագործությանն է նայում: Ներս է մտնում Աղավնին: Աստղիկը ատելությամբ լի մի հայացք է նետում Աղավնուն ու ընդգծված քայլերով դուրս է գալիս: Քիչ անց խոհանոցի լույսը անսպասելիորեն հանգում է:

ԱՂԱՎՆԻ - Վա՛յ, այս ի՞նչ էր, էլի վառվեց թելը: Վաղո՛, Վաղարշա՛կ...

ՎԱՂԱՐՇԱԿ - *(ձայնը հեռվից է լսվում):* Աղո՛ւն, Աղավնյա՛կ…

ԱՂԱՎՆԻ - Վաղո, այդ ի՞նչ է, ես քեզ եմ կանչում, դու՝ ի՞նձ: Ա՛խ, ախր նա լողարանում է: Բայց ես ո՞նց դուրս գամ: Վաղարշա՛կ...

ՎԱՂԱՐՇԱԿ - Եկա, որտե՞ղ ես, լույսն ինչի՞ հանգավ: Խոհանոցինն էլ է հանգել: Ուրեմն գծից է, գնամ լար ճարեմ: Բաղնիքս հարամ եղավ... անիծա՛ծ: Վա՛յ, մեր սենյակի լույսը վառվում է, ուրեմն անջատիչից է...

ԱՂԱՎՆԻ - Դե, պտտիր:

Խոհանոցի մյուս լապտերը վառվում է: Վաղարշակը կանգնած է բաց գլխով, բլուզը թարս հագած, փայտե կոշիկներով:

ՎԱՂԱՐՇԱԿ - Յա՛, էս ի՞նչ բան *է (տեսնում է նոր լապտերը):* Յա՛, յա՛, յա՛, մի տես, Աղավնի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՂԱՎՆԻ - Տեսնում եմ, դու տես: Ահա քո հարևանները: Հիմա ընդունո՞ւմ ես, որ նրանց պետք է միշտ ճնշված պահել, հիմա ընդունո՞ւմ ես, որ ես ճանաչում եմ բոլոր նկարիչներին:

Հեռվից հնչում է Աստղիկի ծիծաղը:

ԱՂԱՎՆԻ - Ըհը՛, ծիծաղում են, բայց լաց են լինելու, ազնիվ խոսք:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ես նրանց կլացացնեմ... հլա սպասիր...

ԱՂԱՎՆԻ - Չեմ սպասի, սիրտս կպայթի, մի բան մտածիր:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ըմմ, ահա, գտա՛, մի մուկ կբերեմ ու բաց կթողնեմ դրանց սենյակում: Թող կրծի Անդոյի գլուխ-գործոցները:

ԱՂԱՎՆԻ - Ջա՞ն... չէ՛, Վաղո, մեկ էլ տեսար մուկը փախավ մտավ մեր սենյակը: Նրանց տանը ի՞նչ կա: Ուրիշ բան: Այնպես, որ վառվեն...

ՎԱՂԱՐՇԱԿ - Ճաշի մեջ բիբար լցնե՞մ:

ԱՂԱՎՆԻ - Է՛... որ դողան, դողերոցք ընկնեն...

ՎԱՂԱՐՇԱԿ - Գիշերը դուռը բա՞ց թողնեմ... Դե, բա ի՞նչ անեմ, է՛, բա ո՞նց անեմ, որ դողան, հո չե՞մ գնալու դրանց համար մալարիայի մոծակ ճարեմ:

ԱՂԱՎՆԻ - Է՛, Վաղո, չեմ ասում ֆիզիկապես, թող բարոյապես դողան... սպասիր, գտա, կիսենք խոհանոցը:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ինչո՞վ...

ԱՂԱՎՆԻ - Ներկ չունե՞նք: Սպասիր, կոշիկի ներկը այստեղ պետք է լինի: Վերցրու, սևով գծիր... այդպե՛ս... բեր, բեր, բե՛ր, իջիր պարկետի վրայով, տար, տար, տա՛ր, այդպե՛ս... մինչև դռան կեսը: Թող կողքի վրա մտնեն: Հա՛, հա՛, հա՛:

ՎԱՂԱՐՇԱԿ - Իսկ ջուր ո՞նց են վերցնելու: Ծորակը մեր սահմանում է:

ԱՂԱՎՆԻ - Թող նոր ծորակ գնեն կամ հեռվից վերցնեն: Մե՞նք պետք է մտածենք, ինչ է: Իսկ հիմա վերցրու մի թղթի կտոր ու գրի...

ՎԱՂԱՐՇԱԿ - Դիմո՞ւմ:

ԱՂԱՎՆԻ - Ի՞նչ դիմում: Գրիր, թելադրում եմ. «Հայտարարություն: Այս գծից դեպի աջ իմն է: Հակոբյան»:

ՎԱՂԱՐՇԱԿ - Կուզե՞ս ավելացնեմ՝ «Իսկականի հետ ճիշտ է, Աղավնի»:

ԱՂԱՎՆԻ - Կարիք չկա, առանց դրա էլ կհասկանան:*(Վառվում է խոհանոցի երկրորդ լույսը):* Ահա՛, վառեցին, հիմա կգան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ներս է մտնում Աստղիկը, առանց նայելու հարևաններին. չնկատելով գիծը, վերցնում է դույլը ու գիծը տրորելով մոտենում ծորակին: Աղավնին ճչում է:

ԱՂԱՎՆԻ - Աա՜...

ՎԱՂԱՐՇԱԿ - Յա՞...

ԱՍՏՂԻԿ - *(սարսափելի վախեցած ու զարմացած):* Ի՞նչ է, ի՞նչ է պատահել...

ԱՂԱՎՆԻ - Սահմա՛նը...

ՎԱՂԱՐՇԱԿ - Դուք խախտեցիք սահմանը: Գիտե՞ք, որ սահմանի համար պետությունը պետությանն էլ չի խնայում:

ԱՍՏՂԻԿ - *(ետ-ետ է գնում ու փարվում ներս ընկած ամուսնուն):* Անդրանի՛կ, ի՞նչ են անում սրանք մեզ հետ: Ես կխելագարվեմ... սահմա՛նը... ա՛խ, քիչ մնա նոտա կուղարկեն...

ՎԱՂԱՐՇԱԿ - Եվ կուղարկենք... բա ի՞նչ եք կարծում, սիրելի հարևաններ...

ԱՆԴՐԱՆԻԿ - Սա, սա, սա...

ԱՂԱՎՆԻ - Խոնարհո՞ւմ եք: Չգիտե՞ք: Սա, հետո՝ դա, հետո՝ նա: Սա, դա, նա...

ԱՆԴՐԱՆԻԿ - Սա, սա, թեմա է: Չեն հավատա, կասեն տիպական չէ: Ես կնկարեմ այս խոհանոցը, գիծը, սահմանը: Օ՜, խանութպանը սահմանի վրա... հա, հա, հա... ու կվերնագրեմ՝ դժոխք, դժոխք:

ԱՂԱՎՆԻ - Գիտեմ, քեզ չես կորցնի, փող աշխատելու համար ամեն ինչ կնկարես, մալյա՛ր:

ԱՆԴՐԱՆԻԿ - Օ, չեն հավատա, չեն հավատա, կասեն տիպական չէ: (Հիստերիկորեն ծիծաղում է): Դժո՛խք...

ՎԱՂԱՐՇԱԿ - Սա դեռ դժոխք չէ, հարևան ջան, քավարանն է, դժոխքը հետո կնկարես...

ՏԵՍԱՐԱՆ

Նույն խոհանոցը: Ոչ ոք չկա: Սահմանագծի տեղում շեղակի տախտակներ են խփված: Ջրի մի ծորակ էլ դրված է մյուս կողմում: Պատի մի կեսը սև է ներկված, մյուսը՝ սպիտակ: Պարկետը քանդված է: Անդրանիկ Գասպարյանի սահմանում մի տաշտ է դրված, որից գոլորշի է բարձրանում:

ՀԵՂԻՆԱԿ - Սա նոր բնակելի շենքի ձեզ ծանոթ բնակարանի խոհանոցն է՝ շահագործման հանձնելուց երեք ամիս անց: Մարգարեական էին նկարիչ Գասպարյանի խոսքերը, երբ գուշակում էր կոմունալ բնակարանի ապագան և այն համեմատում պատմական Բաբելոն քաղաքի ճակատագրի հետ: Այդ հոյակապ բնակարանը այցելողները չգիտես ինչու ակամա

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներն էին հիշում և մանր-մունր քաղաքացիական կռիվները: Միջադեպը խոհանոցի սահմանի վրա շարունակվեց մի քանի օր, ապա՝ կռիվները տեղափոխվեցին մյուս ընդհանուր հարմարությունները: Պետք է հենց սկզբից ասել, որ մարտերը մղվում էին փոփոխական հաջողություններով: Զոհեր չկային: Եթե չհաշվենք Երսնդառի խանութի վարիչ Հակոբյանի կատուն, որին մի օր սաստիկ ցասման պահին նկարիչ Գասպարյանը հարվածել էր մուրճով: Ի միջի այլոց բոլոր նկարիչներն էլ նույն կերպ կվարվեին: Կատուն մեջքով սրբել, խառնել էր Գասպարյանի նոր կտավի որոշ ներկերը: Հիմնական զոհը հանդիսացավ բնակարանը: Հարևանների փոխադարձ հարձակումները և պաշտպանական կառույցները վերջնականապես փչացրին ողջ պարկետը և ներքին հարկի բնակարանի առաստաղը: Ջրամատակարարումը կանգ առավ, կոյուղին դադարեց գործելուց, լողասենյակի դուռը մեխվեց՝ «Ոչ ինձ, ոչ քեզ» սկզբունքով: Վրա հասան ծանր, մռայլ օրեր:

Աստղիկը ներս է մտնում ու սկսում է լվացք անել: Քիչ անց խոհանոց է գալիս նաև Աղավնին:

ԱՂԱՎՆԻ - Ֆո՛ւ, նա՛գլոստ, գոլորշին գցել է ամբողջ խոհանոցը:

ԱՍՏՂԻԿ - Տուգանիր, գոլորշին խախտել է ձեր սահմանը տիկին...

ԱՂԱՎՆԻ - Դե, դերասանություն մի՛ արա, թե չէ պարկետը...

ԱՍՏՂԻԿ - Ի՞նչ, չլինի՞ կրկին ուզում ես բանտ նստել մանր խուլիգանության համար:

ԱՂԱՎՆԻ - Երանի ծանր մարմնական վնասվածք հասցնելու համար նստեցնեին:

ԱՍՏՂԻԿ - Այդ օրին էլ կհասնես:

ԱՂԱՎՆԻ - Ոչինչ, միայն թե քո կյանքի գնով...

ԱՍՏՂԻԿ - Ով մեր դեմ սրով գա, նա սրից էլ կընկնի:

ԱՂԱՎՆԻ - Մի մտածիր, սրով չենք գա: (Կանչում է): Վաղո՛, Վաղարշա՛կ:

ՎԱՂԱՐՇԱԿ - Լսում եմ, Աղունիկս:

ԱՂԱՎՆԻ - Մոտ եկ, ականջիդ բան եմ ասում: Դե, մոտ եկ, վահ, չեմ կծի:

ՎԱՂԱՐՇԱԿ - Ի՞նչ կա, ֆո՛ւ, ինչ սապնահոտ է: Հը՞... *(լսում է կնոջը)*: Դե... վա՛յ, այ կնիկ... հա, հա, հա, հա... Բա մենք... բամբա՞կ... հա, հա, հա... Իսկական ռացիոնալիզատոր ես, արևս վկա: Ու ո՞նց ես էդքանը հնարում: Ամոթ ինձ, թե սուտ եմ ասում՝ դու զորավար ես ծնվել կամ էլ շախմատիստ: Ի՛նչ քայլեր ես մտածում...

ԱՂԱՎՆԻ - Դու բամբակ մտցրու ականջներդ, ինձ համար էլ բամբակ բեր... Հետո էն, որ ասացի...

ՎԱՂԱՐՇԱԿ - *(անընդհատ ծիծաղում է):* Ազնիվ խոսք, մեղք են... Մի անգամ էլ հարցրու... էլ չեմ կարող... վա՛յ, գուցե զինադադար...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՂԱՎՆԻ - Լավ:*(Աստղիկին):* Տիկնիկային ընկերուհի, վերջ տալո՞ւ ես քո թերությունները լվանալուն, թե՞ չէ: Ճաշ եմ եփում:

ԱՍՏՂԻԿ - Ի՞նչ աներեսություն: Տեսնո՞ւմ եք, որ բանի տեղ չեմ դնում, չեմ ուզում ձեզ հետ խոսել: Ես արհամարհում եմ ձեզ:

ԱՂԱՎՆԻ - Օ՜յ, ուրեմն ինձ չե՞ք սիրում: Ես ինչպե՞ս ապրեմ այսուհետև առանց սիրո... *(երգում է):* «Առա՜նց սիրո կյանք չկա՜»:*(Բարկացած):* Վերջին անգամ եմ հարցնում՝ լվացքը...

ԱՍՏՂԻԿ - Պիտի լվանամ մինչև առավոտ, հենց դիտմամբ, նոր հագուստներ էլ եմ բերելու...

ԱՂԱՎՆԻ - Ախ, այդպե՞ս... Վաղարշա՜կ... անցնում ենք հարձակման ընդհանուր ճակատով: Բե՜ր թնդանոթը:

ՎԱՂԱՐՇԱԿ - Այս վայրկյանին*: (Հեռանում է, քիչ անց խոհանոց է գալիս՝ գրկած մի հսկա ռադիոընդունիչ: Դնում է սեղանին ու միացնում):*

ԱՂԱՎՆԻ - Անտենան, անտենան չմոռանաս: Լարը միացրու ջրի ծորակին: (Աստղիկը զարմացած մի պահ լվացքը թողնում է ու նայում ռադիոընդունիչին): Համերգն սկսված է: *(Ընդունիչից լսվում է մի աղմկոտ, վայրագ երաժշտություն: Աղավնին գաղտագողի բամբակ է խրում ականջների մեջ):* Վաղարշակ, բա՜րձր, ավելի բարձր, չեմ լսում... էլի, մինչև վերջ:

ԱՍՏՂԻԿ - *(Փակում է ականջները: Ինչ-որ բան է ասում, բայց ոչինչ չի լսվում: Միայն շրթունքներն են շարժվում: Հետո հանկարծ ճչում է սաստիկ):* Բարբարոսնե՜ր... ես խլանում եմ:*(Փորձում է մոտենալ ռադիոընդունիչին, նվագը փոքր-ինչ մեղմանում է):*

ԱՂԱՎՆԻ - Սահմանը...

ՎԱՂԱՐՇԱԿ - Սահմանը իրավունք չունեք խախտելու... Լուրջ նախազգուշացնում եմ:

ԱՍՏՂԻԿ - *(Ետ-ետ է գնում՝ ականջները շարունակ ծածկած):* Խլանո՜ւմ եմ:

ԱՆԴՐԱՆԻԿ - *(Խոհանոց է գալիս ականջները մատներով խցանած, կրկին անձայն շարժվում են շրթունքները):* Սա, սա ի՞նչ է, Սոդոմ-Գոմո՞ր է... Սա, սա, չլսված, չտեսնված, չզգացված, աներևակայելի...

ՎԱՂԱՐՇԱԿ - Ուրեմն, սիրելի հարևան Անդո, դերասանուհուդ ասա փալաս-փուլուսի լվացքը սեյակ տանի, թե չէ հիմա կգնամ՝ հեռուստացույցս էլ կբերեմ:

ԱՆԴՐԱՆԻԿ - Վայրենինե՜ր… Դուք ի՞նչ մարդ եք: Դուք մարդասպան եք: Աստղիկ, վերցրու տաշտը, բռնիր մի կողմից, դուրս գանք այս, այս դժոխքից:

ԱՍՏՂԻԿ -Փախչե՞լ, սրանց առջև՞: Երբե՜ք:

ԱՂԱՎՆԻ - Վաղո՜, հեռուստացույցը բեր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԴՐԱՆԻԿ - Հարկավոր չէ... մի րոպե, մի րոպե: Աստղիկ, ես չեմ կարող: Ա՜խ, բնակարան բաշխողներ, ա՜խ, ընդհանուր հարմարությունների ջատագովներ ու պրոպագանդիստներ: Ի՞նչ խոսքերով անիծեմ ձեզ, որ հանգստանա հոգիս: Ի՞նչ պատիժ ցանկանամ ձեզ: Ահա, գտա՛, ընդհանուր հարմարություններով բնակարանում ապրեք դուք: Գնանք, գնանք, Աստղիկ:

ԱՍՏՂԻԿ - Ո՛չ, փախուստի մասին ոչ մի խոսք: Հեռվից քարով խփիր դրանց ռադիոընդունիչին: Ա՜խ, թե ես տղամարդ կլինեի: Ո՛չ, ո՛չ, փախո՞ւստ, երբեք:

ԱՆԴՐԱՆԻԿ - Սա փախուստ չէ, հոգիս, սա նահանջ է, կազմակերպված նահանջ: Մանյովր է: Մեզ հարկավոր է ժամանակ շահել: Գնանք տուն, մտածենք, այլևս հերիք է, ես կթողնեմ կերպարվեստը ու ինձ կնվիրեմ որոգայթներ լարելու պատվավոր գործին: Նրանք կիմանան, թե ով է նկարիչ, այսինքն՝ երբեմնի նկարիչ Անդրանիկ Գասպարյանը:

ԱՍՏՂԻԿ - Ուրեմն միայն նահա՞նջ է:

ԱՆԴՐԱՆԻԿ - Այո, սիրելիս, Նապոլեոնն էլ է նահանջել: Ամոթ բան չկա:*(Վերցնում են տաշտը և ուզում են դուրս գալ):*

ԱՂԱՎՆԻ - Խուճապ է թշնամու դիրքերում: Առա՛ջ, Վաղո, դեպի հեռուստացույց...

ՎԱՂԱՐՇԱԿ - Փախչում են, ուռա՜...

ԱՆԴՐԱՆԻԿ - Ո՛չ, սա նահանջ է...

Հանկարծ միջանցքի զանգերը հնչում են բարձր, միասին:

ԱՂԱՎՆԻ - Մեր զանգն էր:

ԱՍՏՂԻԿ - Մեր զանգն էր:

ՎԱՂԱՐՇԱԿ - Թող իրենք բացեն դուռը:

ԱՆԴՐԱՆԻԿ - Ո՛չ, թող իրենք բացեն: Առաջ իրենց զանգն էր:

Զանգերը կրկին են հնչում, ավելի ուժգին:

ԲՈԼՈՐԸ - Լավ, լավ, միասին բացենք...

Մոտենում են դռանը, բացում: Ներս է մտնում թաղային կոմիտեի մի պատկառելի նախագահ, խոժոռ աչքերով, ազդու ձայնով:

ՆԱԽԱԳԱՀ - Եկել եմ ասելու, որ վերջ տաք այս տխուր կատակերգությանը, այս կոմեդիային: Վաղը ձեր հարցը քննելու է թաղային կոմիտեն: Մեղավորներին կվտարենք քաղաքից: *(Բոլորը քարացել են տեղում):* Դա ձեզ էլ է վերաբերում, ընկեր հեղինակ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԵՂԻՆԱԿ - Ի՞նչը... քաղաքից վտարե՞լը:

ՆԱԽԱԳԱՀ - Առայժմ ոչ: Միայն խնդրում եմ վերջ տաք այս կոմեդիային:

ՀԵՂԻՆԱԿ - Լսում եմ, թաղային կոմիտեի ընկեր նախագահ:

ՎԵՐՋ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

Բեմը ներկայացնում է տիեզերականի սրահը: Մի կողմում դուռ է, որի ճակատին գրված է. «Թռիչքն այստեղից», նկարված է արբանյականավ: Բոլորից բարձր, խոշոր տառերով գրված է. «Երևան» կայարան: Սրահն ունի մուտքի դուռ, որից ելումուտ են անում դերակատարները: Աջ կողմում, սովորական գրասեղանի ետևում նստած է կապավոր և գանձապահ Բալյանը: Նրա առջև միկրոֆոն կա, հեռախոս և հեռուստացույց:

ԲԱԼՅԱՆ - *(միկրոֆոնի մեջ):* Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն, խոսում է «Երևան» տիեզերականը: Մեկ-երկու ժամից հետո տրվելու է տարեմուտի տիեզերական զբոսանքի ստարտը «Երևան» կայարանից: Հարգելի ընտրյալ-ուղևորներ, խնդրվում է ներկայացնել համապատասխան փաստաթղթերը և պատրաստվել թռիչքի: Կրկնում եմ... *(Նրա հետագա խոսքերը չեն լսվում):*

Մոտեցող պլանով երևում է այն դուռը, որի ճակատին գրված է «Թռիչքն այստեղից»: Դուռը բացվում է, և տիեզերագնացի հագուստով մեծ դժվարությամբ ներս է մտնում Մալյանը: Մոտենում է դանդաղ, ծանր քայլերով, կանգնում է Բալյանի սեղանի մոտ, ինչ-որ բան է ասում: Բալյանը ձեռքը դնում է ականջին, ոչինչ չի լսում, մոտենում, ականջը հպում է սկաֆանդրին, անհուսորեն թափ է տալիս ձեռքը, հասկացնում, որ չի լսում: Մալյանը հանում է սկաֆանդրը:

ՄԱԼՅԱՆ - Ընկեր Բալյան, այս ի՞նչ է, ուղևորները դեռ չե՞ն հավաքվել:

ԲԱԼՅԱՆ - Հինգ րոպեն մեկ-երկու անգամ ռադիոյով հայտարարում եմ:

ՄԱԼՅԱՆ - Գուցե չե՞ն լսում:

ԲԱԼԱՅԱՆ - Ի՞նչ է, ձեր կարծիքով բոլորն էլ այդ բանից հագե՞լ են, ինչո՞ւ չպետք է լսեն: Եվ վերջապես իմ ի՞նչ գործն է, ես հայտարարելու համար եմ աշխատավարձ ստանում, հո չե՞մ գնալու իրենց փոխարեն էլ լսեմ:

ՄԱԼՅԱՆ - Ես միայն զարմանում եմ, թե ինչու են քեզ այստեղ նշանակել:

ԲԱԼՅԱՆ - Կարծում եք ես չե՞մ զարմանում: Է՛, բարեկամ տիեզերագնաց, ես վաղուց զարմացած եմ: Ասեմ ինչպես եղավ: Հանգիստ ու խաղաղ ինձ համար բուֆետապան էի աշխատում, բուֆետչիկ: Սխալմամբ երեքաստղանի կոնյակը հինգաստղանիի գնով էի վաճառել: Բռնեցին և ասացին. «Քեզ ոչ ոք թույլ չի տա այսուհետև աստղերը խառնել: Ուրիշ գործ ուզի: Չի լինի, ասացի, կամ բուֆետչիկ պիտի աշխատեմ, կամ գանձապահ: «Դե որ այդպես է՝ գանձապահ-կապավոր աշխատիր» - ասացին: Կաշխատեմ, ասացի: «Որտե՞ղ» - ասացին: Թեկուզ լուսնի վրա, ասացի: «Չէ, լուսնի վրա տեղ չունենք, լուսնի ճանապարհին կաշխատես» - ասացին ու քմծիծաղ տվեցին: Կարծեցի կատակում են, վերցրեցի ուղեգիրը, կարդացի՝«Երևան» կայարան: Ա՛յ քեզ բախտ, առաջին կարգի ռեստորան է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱԼՅԱՆ - Հետո՞:

ԲԱԼՅԱՆ - Էլ ի՞նչ հետո: Բանից դուրս եկավ որ «Երևան» կայարանի վերևում գրած է եղել «Տիեզերական»: Չէի կարդացել:

ՄԱԼՅԱՆ - Ուրեմն լուսնի վրա էիր ուզում աշխատել, հա՞ (ծիծաղում է): Չէ՛, տիեզերքում աստղերը կխառնեիր, սովոր ես, վատ բան դուրս կգար: Դրանք կոնյակի աստղերը չեն, բարեկամ: Ասենք աստղերը դեռ մի կողմ, օգուտ չէիր ունենա:

ԲԱԼՅԱՆ - Ի՞նչ, բուֆետչիկն օգուտ չունենա՞: Է՛դ, ախպեր ջան, գնա լուսնոտներին, այսինքն՝ լուսնի վրա ապրողներին պատմիր:

ՄԱԼՅԱՆ - Լուրջ բան եմ ասում, այնտեղ ամեն ինչ վեց անգամ թեթև է կշռում, քան երկրի վրա: Դու քանի՞ կիլոգրամ ես:

ԲԱԼՅԱՆ - Վաթսուն:

ՄԱԼՅԱՆ - Ուրեմն այնտեղ կդառնաս տասը կիլոգրամ:

ԲԱԼՅԱՆ - Ե՞ս:

ՄԱԼՅԱՆ - Անշուշտ: Դե հիմա պատկերացրու՝ մեկ կիլոգրամ խորոված ես վաճառելու և ստանալու 160 գրամի արժեքը:

ԲԱԼՅԱՆ - Էդ չեղավ, ուրեմն երկրի վրա ավելի լավ է, էլի... *(Դուռը բացվում է, ներս է մտնում մի քաղաքացի՝ ճամպրուկով):* Բա էլ այս մարդկանց ինչո՞ւ եք հավաքում, տանում Լուսին...

ՄԱԼՅԱՆ - Հարցրու հենց իրենց, ահա նրանցից մեկը:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Ներողություն, այստե՞ղ են ձևակերպում տիեզերական զբոսանքի տոմսը:

ԲԱԼՅԱՆ - Իսկ դուք ո՞ր կազմակերպությունից եք, ընկեր:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Կիրովի անվան գործարանից:

ՄԱԼՅԱՆ - Ա՛, խնդրեմ, խնդրեմ, մեր հինավուրց և փառապանծ գործարանից: Ինչպես միշտ, Նոր տարին դիմավորում եք պլանները կատարած, այնպես չէ՞:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Ո՛չ:

ՄԱԼՅԱՆ - Ինչպե՞ս թե... Բայց չէ՞ որ ամեն եռամսյակ... փոխանցիկ կարմիր դրոշներ: Այդ ինչպե՞ս պատահեց:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Պատահում է, էլի: Չկարողացանք միայն կատարել, ստիպված գերակատարել ենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱԼՅԱՆ - Դե՛, կատակում եք, հա՞, անկեղծորեն զարմացա: Որ մեր կիրովցիները ետ մնան... անհնար է: Ամբողջ հայ ժողովուրդն է ճանաչում ու հիացմունքով հետևում ձեր աշ-խատանքին: Այո, շատերին ենք ճանաչում՝ Լենինի շքանշանակիր, ապարատավարուհի Վերգինե Շահինյանին, անվանի կարբիդագործներ Պատվական Ռուշանյանին, Թոռչյան եղ-բայրներին, Սոցիալիստական աշխատանքի հերոս Սերգեյ Ամիրխանյանին...

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ -Այդ դեպքում ավելի մոտիկից ծանոթանանք: Ամիրխանյանը ես եմ:

ԲԱԼՅԱՆ - Ազնիվ խո՞սք: *(Մոտենում է, կամացուկ):* Բա ի՞նչ է պատահել, յոլա չգնացիք դիրեկտորի հետ, հա:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Ո՛չ, ի՞նչ եք ասում, ինչո՞ւ:

ԲԱԼՅԱՆ - Բա էլ ինչո՞ւ եք լուսին թոչում...

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - *(ծիծաղում է):* Ի՛նչ կատակասեր աշխատող ունեք, ընկեր տիեզերագնաց...

ՄԱԼՅԱՆ - Այո, շատ կատակասեր է: *(Մի կողմ, Բալյանին):* Անցիր տեղդ: Ընկեր Ամիրխանյան, կրկին 30 - 30ա ցեխո՞ւմ եք աշխատում:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Այո, այնտեղ: Իմ աշխատանքային ընկերների՝ Ռաֆիկ Հովհաննիսյանի, Պարույր Եղիազարյանի, Սանասար Պետրոսյանի և մյուսների հետ: Դուք պետք է տեսնեք նրանց աշխատանքում, կյանքում, որ պատկերացնեք: Նրանց աշխատանքը երգ է, իսկական երգ:

ԲԱԼՅԱՆ - Երգ ասաց, հիշեցի: Ընկեր Մալյան, մի լավ երգ չմիացնե՞մ:

ՄԱԼՅԱՆ - Ինչո՞ւ չէ, ընկեր Ամիրխանյան, տիեզերք զբոսանքի գնալուց առաջ ի՞նչ կուզեիք լսել կամ տեսնել, երկրային մի ինչ-որ բան:

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Եթե կարելի է՝ «Իմ անուշ տավիղը»:

ՄԱԼՅԱՆ - Խնդրեմ, դրանից հեշտ բան չկա:*(Միացնում է հեռուստացույցը):*

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ - Ճիշտն ասած, դժվար է ասելը՝ սա երկրային է, թե երկնային: Շատ շնորհակալություն: Այստեղի՞ց պետք է դուրս գալ: *(Հեռանում է):*

Ներս է մտնում մի կին:

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ - Բարև ձեզ, ես Չարլեի մորաքույրն եմ:

ԲԱԼՅԱՆ - Շատ-շատ ուրախ եմ: *(Մեկուսի):* Չարլեն ո՞վ է: Ի՞նչ ես ուզում, մորաքույր:

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ - Ուզում եմ թռչել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱԼՅԱՆ - Ի՞նչ: Այ մարդ, էս բոլորը ձեռքից գնացել են: Քեզ ի՞նչ է եղել, ա՛յ հոգիս, գնա տուն, հանգիստ քեզ համար ապրիր, թոռ կունենաս, օրոր ասա: Դե լավ, լավ, գնա, գնա մորաքույր:*(Մեկուսի, ձեռքը քունքին է տանում):* Դրա շորե՛րը...

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ - Բայց միևնույն է, ես որոշել եմ և կթռչեմ...

ԲԱԼՅԱՆ - Տեր կոսմոս, ի՞նչ անեմ ես սրա հետ, էս Մալյանն ո՞ւր գնաց: Ընկեր Մալյան, ընկեր Մալյան...

ՄԱԼՅԱՆ - *(Ներս է, մտնում):* Ի՞նչ կա, Բալյան:

ԲԱԼՅԱՆ - Էս կնիկն եկել է, ասում է՝ պիտի թռչեմ, ասում է ես Չարլեի մորաքույրն եմ: Չարլեն ո՞վ է, հո մեր ղեկավարներից չի՞:

ՄԱԼՅԱՆ - Չարլե՞ն, ա՛խ, սպասիր...

ԲԱԼՅԱՆ - Հետո աչքիս մի տեսակ ուրիշ է երևում, ճիշտն ասած, մեղա քեզ, կոսմոս, ոնց որ կնկա շոր հագած տղամարդ լինի:

ՄԱԼՅԱՆ - Ինչի՞ց եզրակացրիր *(քմծիծաղ է տալիս):*

ԲԱԼՅԱՆ - Ոնց որ ձայնը փոխում է, մեկ-մեկ տղամարդու ձայներ է հանում: Այսինքն, ճիշտն ասած, հիմա դժվար է ջոկելը, մոդան փոխվել է տղամարդիկ կնկա ձայներ են հանում, կանայք՝ տղամարդու... Այսինքն՝ էդ հեչ, ասում եմ, հանկարծ շպիոն չլինի:

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ - Բարեկամներս, վերջ տալո՞ւ եք ձեր զրույցին: Ես թռչելո՞ւ եմ, թե՞ ոչ:

ՄԱԼՅԱՆ - Անշուշտ, անշուշտ, ընկեր Կարապետ Խաչվանքյան:

ԲԱԼՅԱՆ - Ի՞նչ, ի՞նչ, Կարապետ: Էսքան տարեկան մարդ եմ, բայց առաջին անգամ եմ լսում, որ կնկա անունը Կարապետ լինի, վա՛խ, վա՛խ, վա՛խ, ուրեմն Կարապետ մորաքույր, հա՞:

ՄԱԼՅԱՆ - Այ թե ինչ է նշանակում արվեստից հեռու լինելը: Ընկեր Բալյան, չէ՞ որ ձեր առջև կանգնած է մեր երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի հիանալի դերասաններից մեկը՝ վաստակավոր արտիստ Կարպ Խաչվանքյանը:

ԲԱԼՅԱՆ - Վա՛յ, ներողություն, քույր... ախպեր ջան, չճանաչեցի: Բայց դե... Լավ, ընկեր Խաչվանքյան, խաբելու ի՞նչ կարիք կա, ինչի՞ էիր ասում, թե Չարլեի մորաքույրն ես: Կամ էս շորերը...

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ - Որովհետև որոշել էինք իմ ընկերներով լուսնի վրա մի փոքրիկ պատկեր ներկայացնել «Չարլեի մորաքույրը» կատակերգությունից, էլ չուզեցինք ժամանակ կորցնել հագուստները փոխելու վրա:

ՄԱԼՅԱՆ - Դե, եթե այդպես է, խնդրում ենք մեզ համար ներկայացնել հենց այն պատկերը, երբ դուք Չարլեի մորաքրոջ փոխարեն կերպարանափոխված գալիս եք: Խնդրում ենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ - Բայց իմ ընկերները...

ԸՆԿԵՐՆԵՐ - Մենք այստեղ ենք...

ՊԱՏԿԵՐ

ԲԱԼՅԱՆ, ՄԱԼՅԱՆ -Հրաշալի է, սքանչելի է, այ թե ուրախություն կլինի Լուսնի վրա:*(Ծափահարում են):*

ԲԱԼՅԱՆ - Շատ լավն էր, բայց ամեն անգամ մարդու բախտը չի բերի, որ ուրիշի տեղը ներկայանա ու անվնաս պրծնի:

ՄԱԼՅԱՆ - Գուցե:

ԲԱԼՅԱՆ - Առանց գուցեի: Մեզ մի բարեկամի տղա ունենք, Սմբատ է անունը, երեք ամիս առաջ շատ կատակասեր տղա էր...

ՄԱԼՅԱՆ - Ինչո՞ւ, ամիսներով բնավորությունը փոխո՞ւմ է, ինչ է:

ԲԱԼՅԱՆ - Դու էլ կփոխեիր, հլա լսիր: Էս Սմբատիս շենքի մյուս մուտքում մի ուրիշ տղա էր ապրում Վահան անունով: Ուրեմն մի օր Սմբատիս տան դռան զանգը տալիս են: Դուռը բացում է, տեսնում է լավ հագնված երկու հոգի կանգնած են դռան ետևում: Էս մարդիկ շատ քաղաքավարի բարևում են ու մեղմ հարցնում.

- Այստե՞ղ է ապրում Վահանը:

Էս մեր կատակասեր Սմբատն էլ հանկարծ մտածում է, թե արի ասեմ ես եմ, տեսնենք ինչ կլինի: Գոնե մի լավ կծիծաղեմ:

- Վահանը ես եմ, համեցեք,- ասում է նա:

- Դո՛ւ համեցիր,- ժպտում են էս երկու մարդիկ, ու մեկը Վահանի մի ձեռքից է բռնում, մյուսը՝ մյուս: Դո՛ւ համեցիր ասում են, միլբաժին...

- Ինչո՞ւ,- զարմանում է Սմբատը:

Նրանք թե՝

- Էնտեղ կիմանաս:

- Այ մարդիկ, հանաք եմ անում, Վահանը ես չեմ, ես Սմբատն եմ, Սմբատը,- համոզում է Սմբատը:

Բայց լսողն ո՞վ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գիտենք, գիտենք, քո մյուս անունն էլ Սմբատ է, էն մյուսն էլ Վալոդ, էն մյուսն էլ Զուբ,- քմծիծաղ են տալիս այդ երկու մարդիկ, որ ինչպես դու կռահեցիր միլիցիայի քրեական հետախուզության բաժնից էին ու էս իմ Սմբատիս ավտո են նստեցնում, տանում քաղմաս:

ՄԱԼՅԱՆ - *(ծիծաղում է):* Ա՛յ քեզ կատակ... Հուսով եմ վերջը թյուրիմացությունը պարզվում է:

ԲԱԼՅԱՆ - Պարզվում է, բա ո՞նց: Ու հենց այդ կատակի համար Սմբատիս տասը օր նստեցնում են մանր խուլիգանության համար:

Երկուսն էլ ծիծաղում են: Հետո նկատում են, որ մեկն էլ է ծիծաղում: Իրենք չէին տեսել, թե ինչպես է ներս եկել:

ՄԱԼՅԱՆ - Համեցեք, համեցեք, ընկեր:

ԲԱԼՅԱՆ - Չէ, դու սպասիր, ընկեր Մալյան *(մոտենում է քաղաքացուն, ուշադիր դիտում, հետո կտրուկ հարցնում):* Հլա մի բան ասա...

ՔԱՂԱՔԱՑԻ - *(զարմացած):* Ի՞նչ ասեմ: Ես եկել եմ...

ԲԱԼՅԱՆ - Ստո՛պ:*(Քանդում է քաղաքացու պիջակի կոճակը, դիտում, շրջվում է, նայում ետևից, ապա ուրախացած ասում է)*: Չէ՛, սա կնիկ չի, այսինքն՝ դերասան չի, ընկեր Մալյան:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ընկեր, ի՞նչ դերասան: Ես Ժողտնտխորհի քիմիայի ինստիտուտից եմ: Ինձ ընտրել են տիեզերական զբոսանքի գնալու համար: Ահա իմ փաստաթղթերը: Ընկեր Մանվելյանը շատ էր զբաղված...

ՄԱԼՅԱՆ - Ներողություն, մի փոքր թյուրիմացություն էր: Համեցեք, անչափ ուրախ եմ: Ափսոս, որ ընկեր Մանվելյանը ժամանակ չի ունեցել: Նրա և ինստիտուտի անունը բոլորին է հայտնի: Լսո՞ւմ ես, Բալյան, դա այն ինստիտուտն է, որ Հայաստանի քարերից արհեստական մետաքսաթել է ստանում, հասկանում ես:

ԲԱԼՅԱՆ - Քարերից թե՞լ: *(Մեկուսի):* Չէ՛, սրան էլ բան պատահեց:

ՄԱԼՅԱՆ - Այո՛, քարերից: Հիմա գործարան է կառուցվում, արհեստական մետաքսաթելի գործարան, որտեղ մշակելու են Հայաստանի քարերը: Ահա քեզ հարստության, առատության մի նոր աղբյուր: Հիշում եմ, ընկեր Մանվելյանն ասել է. «Հայաստանի քարերը պետք է խոսեն»: Ճի՞շտ է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ճիշտ է: Հենց այդպես էլ կա: Հայաստանի քարերը պետք է խոսեն:

ԲԱԼՅԱՆ - Խոսե՞ն: Լավ, թել ստանալը դեռ մի կերպ հասկացանք: Բայց քարերն ինչո՞ւ պետք է խոսեն: Խոսացող քի՞չ կա:

ՔԱՂԱՔԱՑԻ - Ո՛չ, ո՛չ, ընկեր, դա պատկերավոր արտահայտություն է, որ նշանակում է, թե տես դեռ ինչի են վերածվելու Հայաստանի քարերը: Այո՛, դա իսկական հրաշալիք կլինի: Մեր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քարային վիթխարի հարստությունները հումքի անսպառ աղբյուր են: Նույնիսկ դժվար է պատկերացնել, թե որքան կզարգանա քիմիական և տեքստիլ արդյունաբերությունը:

ՄԱԼՅԱՆ - Այո, դա իսկապես հրաշալի կլինի... Դե, ուրեմն, թույլ տվեք տարեմուտի այս օրը ընկեր Մանվելյանին, ձեզ և ինստիտուտի բոլոր աշխատողներին նոր, փայլուն հաջողություններ ցանկանալ:

ՔԱՂԱՔԱՑԻ - Շատ շնորհակալություն մեր ինստիտուտի կոլեկտիվի անունից: Դե, ցտեսություն... (հեռանում է):

ԲԱԼՅԱՆ - *(հասնում է նրան):* Ընկեր, ընկեր, մի րոպեով կարելի՞ է:

ՔԱՂԱՔԱՑԻ - Խնդրեմ, լսում եմ:

ԲԱԼՅԱՆ - Հայաստանում քար շա՞տ կա:

ՔԱՂԱՔԱՑԻ -Որքա՜ն ուզեք: Անվերջանալի են մեր հարստությունները:

ԲԱԼՅԱՆ - Դե, մի բան հարցնեմ, չնեղանաս: Որ էստեղ այդքան քար կա, էլ ինչո՞ւ ես լուսին բարձրանում:

ՔԱՂԱՔԱՑԻ - Դե, իհարկե, զբոսնելու: Դա սքանչելի բան կլինի: Հետո, անշուշտ, չի խանգարի նաև լուսնաքարերից նմուշներ բերելը, ուսումնասիրելը...

ԲԱԼՅԱՆ - Ահա, հասկացա, հաջողություն, ընկեր: Բարով գնաս: (Մեկուսի): Թե որ սրանք մի օր լուսնյակը թելի մի կծիկ դարձրած երկիր չբերեն, ամոթ ինձ: (Երգում է): «Ով լուսի՜ն, լուսի՜ն, չգտա՞ր յարիս...»:

ՄԱԼՅԱՆ - Ի՞նչ պատահեց...

ԲԱԼՅԱՆ - Մտածում եմ. հետաքրքիր է, իսկապես, եթե հանկարծ լուսինը սրանք թել սարքեն, բանաստեղծներն ու երգիչները ի՞նչ են անելու:

ՄԱԼՅԱՆ - Մի մտածիր, մի ուրիշ լուսին կստեղծեն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - *(ներս է, մտնում):* Այստեղ ո՞վ էր խոսում լուսնի մասին:

ԲԱԼՅԱՆ - Ես... Հենց այնպես... Երգում էի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Դո՞ւ, լուսնի՞ն էիր երգում:

ԲԱԼՅԱՆ - Չէ, ինչ ես ասում, այստեղ, երկրի վրա...

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Հասկանում եմ, լուսնի մասի՞ն էիր երգում:

ԲԱԼՅԱՆ - Այո, մի երգ կա, է՜. «Լուսին, ո՜վ լուսին...»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Արտասանում ես իմ երգի կեսը, քեզ հետ խոսում է բանաստեղծ Վեսը: Ի՜նչ հանգ, ի՜նչ հանգ, հանճա՛ր...

ԲԱԼՅԱՆ - Վահ, ի՞նչ ես ասում... Ուրեմն դո՞ւ ես գրել «Լուսին, ո՜վ լուսին, չտեսա՞ր յարիս»-ը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Ո՛չ, այդ գրողը գողացել է ինձնից, լուսինն իմն է:

ԲԱԼՅԱՆ - Քո՞նը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Այո, ես եմ ստեղծել, ես եմ երգել լուսինը:

ԲԱԼՅԱՆ - *(մեկուսի):* Ախպեր, սրանց ինչո՞ւ են հիվանդանոցից բաց թողնում, է՜: Էն օրն էլ մի բանաստեղծ ասում էր, թե մեծ գյուտ է արել: Ի՞նչ գյուտ: Թե՝ տեսել եմ ոնց էր երկրագունդը պտտվում: Ե՞րբ, հարցնում եմ: Երեք օր առաջ, լավ խմած էի... ասում է: Ու զարմանում եմ, ասում է, ուրիշներն էլ են խմում, ո՞նց է, որ մինչև հիմա ոչ ոք չի նկատել:*(Բանաստեղծին):* Ախպեր ջան, ուրեմն քեզնից առաջ լուսնյակի մասին չեն գրել, հա՞...

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Դրանք թոթովանքներ են եղել: Առաջինը ես եմ նկատել, օրինակ, որ լուսինը սովորաբար նստում է սարերի ուսին: Ահա՛.

Լուսին, ո՜վ լուսին,
Որ արդ թիկնել ես սարերի ուսին.
Թիկնել, շիկնել ես ու զրուցում ես,
Արդյոք հիշո՞ւմ ես...

Երբ որ տասնամյակ ընդունվեցի ես,
Դու, շենշող լուսին,
Թիկնել էիր մեր սարերի ուսին
Եվ ասում էիր՝ Բարի ճամփա, Վես:

Երբ ավարտեցի վեց դասարանը
Ու մեծ Պառնասի ճամփան բռնեցի,
Դու էն սարերի ուսի քո տանը,
Օ՜, մեծ բանաստեղծ, երգի՛ր, ասացիր:

Ու ես երգում եմ՝ գիշեր թե լուսին,
Ա՜խ, կարոտ եմ քեզ,
Քամու նավակով սիրտս ողջակեզ
Կգամ դեպի քեզ,

Որ գրկեմ դեղին պատկերդ, լուսին,
Ու մի լավ խմենք սարերի ուսին...

ԲԱԼՅԱՆ - Էդ մեկը դուրս եկավ: Ուտող-խմող տղա ես երևում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Դե, ասեք, մարդիկ, ո՞վ է ինձ նման ամբողջ ձայնով լուսին երգել... Եվ այն էլ նոր լուսին, մեր ժամանակի լուսին: Այ, հիմա լսիր «Կոլխոզի լուսինը» ու կզգաս կալերի բուրմունքը:

Ո՜վ լուսին, լուսին,
Կոլխոզի լուսին,
Թիկնել ես ահա
Սարերի ուսին,
Մարդիկ բովանդակ,
Կալում թե արտում,
Քո շողերի տակ
Երգերս են կարդում:

Օ՜, ինչ հանգ, ինչպիսի պատկերներ, ինչպիսի թարմ շունչ, ինչպիսի վանկեր: Եվ այս բոլորն ինձ տվել է լուսինը: Ո՞վ է գրել լուսնի մասին արտադրական թեմայով, ո՞վ, ասացեք խնդրեմ: Իսկ ես գրել եմ: Ահա.

Բանվորի լուսին

Ո՜վ լուսին, լուսին,
Բանվորի լուսին,
Թիկնել ես ահա
Դազգահի ուսին,
Մարդիկ բովանդակ,
Բակում թե ցեխում,
Քո շողերի տակ
Երգերս են պեղում:

Կամ ահա լրիվ նոր, մոդեռն, արդիական թեմայով.

«Կոսմոսի լուսին»
Ո՜վ լուսին, լուսին,
Կոսմոսի լուսին,
Թիկնել ես ահա...

ՄԱԼՅԱՆ – Արևի ուսին...

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Որտեղի՞ց իմացար:

ՄԱԼՅԱՆ - Ե՞ս... Ձեր ժողովածուն եմ կարդացել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Իմ ժողովածո՞ւն... Ո՛չ, ժողովուրդն է տարածում իմ խոսքերը և լուսինն էլ ինձնից են սովորել: Ժողովածո՞ւն... Ինձ չեն տպում, մա՛րդ, նախանձում են, անտաղանդներին են տպում: Ոչինչ, հիմա ես կթռչեմ լուսին ու... Սա առաջին ռեյսն է, չէ՞...

ՄԱԼՅԱՆ - Այո: Ուրեմն, թռչո՞ւմ եք: Ձեր ազգանունն ինչպե՞ս էր:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Վես, պոետ Վես:

ՄԱԼՅԱՆ - Ո՛չ, ընկեր, թռչող բանաստեղծների ցուցակում չկաք:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Չկամ, հա՞: Իսկ ո՞վ կա:

ՄԱԼՅԱՆ - Գեղամ Սարյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը, Վահագն Դավթյանը...

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Իսկ ես, վարպետս, չկա՞մ... ես ստեղծեմ լուսին և ուրիշները թիկնեն նրա...

ՄԱԼՅԱՆ - Ուսին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - Օ՜, անտաղանդներ, անտաղանդներ, եթե տանեք անգամ, ես նրանց հետ տեղ չեմ գնա, չէ՛... Ասենք, թող թռչեն, գուցե ճանապարհին մի բան պատահի... Պետհրատում գիրքս հաջողացնեմ...

ՄԱԼՅԱՆ - Գնա՛ց: Ազնիվ խոսք, հենց որ այսպիսի մի բանաստեղծ էլ եկավ, երեք դիմում կգրեմ ու կհանեմ տիեզերագնացի հագուստս: Ավելի լավ է գրողների միության կոնսուլտացիոն բյուրոյում աշխատեմ, էլի:

Միանգամից ներս են մտնում չորս հոգի:

ՉՈՐՍԸ - Բարև ձեզ:

ԲԱԼՅԱՆ, ՄԱԼՅԱՆ - *(ակամա միասին):* Բարև ձեզ:

ՉՈՐՍԸ - Եկել ենք թռչելու:

ԲԱԼՅԱՆ - Ի՞նչ, ի՞նչ, չի՞ լինի մեկ-մեկ խոսեք, հո ստադիոնում չե՞ք:

ՉՈՐՍԸ - Չի լինի:

ՄԱԼՅԱՆ - Ինչո՞ւ:

ՉՈՐՍԸ - Այդպես ենք սովորել:

ՄԱԼՅԱՆ - Է, հետո՞, որևէ մեկը ձեզ հասկանո՞ւմ է:

ՉՈՐՍԸ - Բոլորը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱԼՅԱՆ - Դժվար թե:

ՉՈՐՍԸ -Ախ, այդպե՛ս...

Հանում են գործիքները և սկսում նվագել: Ինժեներների կվարտետն է:

ՄԱԼՅԱՆ - Ճանաչեցի: Դե իհարկե, մեր ինժեներների կվարտետն է... Լսել ենք, և անկեղծորեն կասեմ, հիացել: Լավ եք նվագում: Ես կարդացի, թե ինչպես բարձր էին գնահատել ձեզ միութենական թերթերը, երբ համերգ էիք տալիս Կրեմլում: Այո, դուք լրիվ իրավունք ունեք տիեզերական ճամփորդության, արտադրության մեջ հիանալի աշխատում եք, միասին հիանալի նվագում: Համեցեք, ահա տիեզերականի դուռը... Լրիվ իրավունք ունեք:

Կվարտետը հեռանում է: Ներս է մտնում մի գեր տղամարդ:

ՊԵՏՈՅԱՆ - Հարգանքներս: Իմ ազգանունը Պետոյան է: Մի փոքրիկ հարցով: Այստեղի՞ց են թռչում:

ԲԱԼՅԱՆ - Այո:

ՊԵՏՈՅԱՆ - Ահա, լավ է, շատ լավ, հիանալի է, ուրեմն թռչո՞ւմ են:

ԲԱԼՅԱՆ - Թռչում են:

ՊԵՏՈՅԱՆ - Մի անհամեստ հարց՝ արբանյականավո՞վ են թռչում:

ՄԱԼՅԱՆ - Անհամեստ չէի ասի, բայց տարօրինակ կասեի: Իհարկե արբանյականավով:

ՊԵՏՈՅԱՆ - Լավ է, լավ է, ահա, հիանալի է, ուրեմն արբանյականավով: Իսկ այդ արբանյականավը որտե՞ղ են կառուցել:

ՄԱԼՅԱՆ - Դե, իհարկե, Երևանում:

ՊԵՏՈՅԱՆ - Ուրեմն մոսկովսկի չունեք, հա՞: Ահա՛, Երևանո՞ւմ: Լավ է, լավ է, հիանալի է: Չէի՞ք ասի, թե որ գործարանում:

ՄԱԼՅԱՆ - Երևանի բոլոր ձեռնարկություններն էլ մասնակցել են արբանյականավի կառուցմանը:

ՊԵՏՈՅԱՆ - Ահա, ահա, սքանչելի է: Ուրեմն ասում եք բոլորը, հա՞: Իսկ իրենք իմացե՞լ են , որ արբանյականավի կառուցմանը մասնակցում են:

ՄԱԼՅԱՆ - Չէ, ճիշտն ասած դա պետական գաղտնիք է:

ՊԵՏՈՅԱՆ - Ահա, ուրեմն չեն իմացել... Իսկ ոչ մի բացառություն չի՞ եղել: Օրինակ, քաղսովետի գործկոմի կահույքի ֆաբրիկան ե՞ս մասնակցել է արբանյականավի կառուց-մանը: Սա, հասկանո՞ւմ եք, հենց այնպես, հետաքրքրության համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱԼՅԱՆ - Ճիշտն ասած, չեմ կարող ասել, հավանաբար կառուցել են որոշ փայտային մասեր:

ՊԵՏՈՅԱՆ - Ահա, ահա, շատ լավ է, հրաշալի է: Ցտեսություն:

ՄԱԼՅԱՆ - Ո՞ւր, ընկեր, Պետոյան ազգանուն մեր ցուցակում կա, չե՞ք թռչում:

ՊԵՏՈՅԱՆ - Ոչ, ես հենց այնպես, հետաքրքրության համար, ես ուրիշ Պետոյան եմ, կներեք, բոլորովին ուրիշ... Ես նույնիսկ Պետոյան էլ չեմ... Հարգանքներս... Այսինքն՝ մեկ րոպեով, ես հիմա կգամ, հիմա կգամ:*(Ետ-ետ դուրս է գնում):*

ԲԱԼՅԱՆ - *(ծիծաղում է):* Ա՛յ թե փախավ, ա՛խ, խորամանկ, տեսաք չէ՞ ոնց գնաց, էլ չի գա, ընկեր Մալյան:

ՄԱԼՅԱՆ - Դուք ճանաչո՞ւմ էիք, տարօրինակ մարդ էր երևում:

ԲԱԼՅԱՆ - Տարօրինակ չէր: Ճանաչում եմ, գիտե՞ք ով էր՝ հենց նույն կահույքի ֆաբրիկայի դիրեկտորը: Հենց կասկածեց, որ իրենց ֆաբրիկան էլ որոշ մասեր պատրաստած կլինի, փախավ, ախր գիտի իրենց խոտան արտադրանքը: Գիտի, որ իրենց վրա հույս դնել չի կարելի:

ՄԱԼՅԱՆ - *(ծիծաղում է):* Ես էլ ասում եմ ինչո՞ւ էր հետաքրքրվում... Ուրեմն իրենց արտադրանքին չի վստահում, հա՞... Ուրեմն, հնարավոր է, որ «Մետաղ» արտելից էլ գան: Կգա՞ն...

ԲԱԼՅԱՆ - Կոշիկի ֆաբրիկան մոռացար:

ՄԱԼՅԱՆ -Իսկ ի՞նչ կա:

ԲԱԼՅԱՆ - Խոտանի հարցում կարող են մրցել ուզածդ գործարանի հետ: Մի էսպիսի դեպք պատահեց: Ուրեմն, մեր հարևանը կոշիկի ֆաբրիկայի դիրեկտորն է: Պատկառելի մարդ է, այնպես որ մենք՝ հարևաններս, Սամսոն Նիկիտիչ ենք ասում: Հա, ուրեմն էս Սամսոն Նիկիտիչը, երբ պատահում էր, հպարտությամբ էր խոսում իրենց ֆաբրիկայի մասին: Գնացեք, ասում էր, տեսեք ցուցահանդեսում: Գնում, տեսնում էինք, շատ լավ կոշիկներ էին:

ՄԱԼՅԱՆ - Ուրեմն իսկապես լա՞վն էին, հա՞:

ԲԱԼՅԱՆ - Ցուցահանդեսո՞ւմ, հա՛: Խաղաղ ընտանիք էր, ես դրանց տնից դեռ աղմուկ չէի լսել: Բայց մի օր էլ, տեր կոսմոս, ի՞նչ աղմուկ դուրս եկավ, ո՛նց էր գոռում մեր Սամսոն Նիկիտիչը... Տնից դուրս գալու կարիք չկար, ձայնը երեք հարկում էլ լսվում էր: Հասկացանք, որ կինը տղայի համար կոշիկներ է գնել ու հենց ամուսնու ղեկավարած ֆաբրիկայի արտադրանքը: Պահ, պահ, պահ, ինչե՛ր էր ասում Սամսոն Նիկիտիչը:

- Դու,- ասում էր,- էլ ուրիշ կոշիկ չտեսա՞ր, ինչո՞ւ ես գնել այդ հիմար կոշիկները, քանի՞ անգամ եմ ասել, որ մեր գործարանի արտադրանքը չգնես: Բա դրան փո՞ղ կտան, հը՞, դրան փո՞ղ կտան:

Խեղճ կինը արդարանում էր.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բա դու ասում էիր... Բա ցուցահանդեսում...

- Ցուցահանդեսո՞ւմ,- քիչ էր մնում արտասվի Սամսոն Նիկիտիչը, -ցուցահանդեսինը ցուցահանդեսի համար է, հիմա կտեսնես, երեք օր էլ չի դիմանա...

Իմաստուն էր մարդը, ուղիղ երեք օր հետո տղան դպրոցից տուն է գալիս մի կոշիկով, որի երեսի կարը քանդված էր, մյուս ոտքը բոբիկ էր: Կոշկի մեկը դրել էր պայուսակի մեջ, բա՞:

ՄԱԼՅԱՆ - *(ծիծաղում է):* Ա՛յ, արդար պատիժ... Հիմա կոշիկների որակը բարձրացրած կլինի, ազնիվ խոսք:

ԲԱԼՅԱՆ - Մի երդվի, չի բարձրացրել: Պարզապես կնոջն արգելել է կոշիկ գնել, ինքն է բերում, հատուկ պատրաստած:

Հեռանում է, դռնից դուրս է նայում ու հանկարծ շրջվում դեպի Մալյանը:

ԲԱԼՅԱՆ - Ընկեր Մալյան, մի հանելուկ ասեմ՝ լուծիր: Էն ի՞նչն է ինչը, անունը կա, ինքը չկա:

ՄԱԼՅԱՆ - Հի՞ն է, թե՞ նոր:

ԲԱԼՅԱՆ – Հին:

ՄԱԼՅԱՆ - Աստվածը:

ԲԱԼՅԱՆ - Դե, չէ՛, դու ինձ ստիպեցիր տեր աստծու փոխարեն տեր կոսմոս կանչել, հիմա ինքդ ես աստծու անունը տալիս: Էդքան էլ հին չէ: Այսինքն՝ թե՛ հին է, թե՛ միշտ նոր:

ՄԱԼՅԱՆ - Չեմ կարող ասել, ազնիվ խոսք:

ԲԱԼՅԱՆ - Ուրեմն ես կասեմ. Արամ Մերանգուլյանը:

ՄԱԼՅԱՆ - Արամ Մերանգուլյա՞նը:

ԲԱԼՅԱՆ - Այո, հենց ինքը: Տեսա, որ իր խմբով մեր կողմն է գալիս, հիշեցի: Ախր ամեն տեղ ճանաչված ու հայտնի է ռադիոյի և հեռուստատեսության կոմիտեի ժողովրդական գործիքների մեր վաստակավոր անսամբլը և բոլորին էլ հայտնի է, թե որքան աշխատանք է կատարում նրա գեղարվեստական ղեկավարը, ժողովրդական արտիստ Արամ Մերանգուլյանը, բայց ահա ամեն անգամ, երբ անսամբլը ելույթ է ունենում՝ Մերանգուլյանը բեմ դուրս չի գալիս: Այստեղից էլ անունը կա, ինքը չկա: Արի օգտվենք առիթից անսամբլին խնդրենք ելույթ ունենա և միաժամանակ էլ ընկեր Մերանգուլյանին խնդրենք անձամբ ղեկավարել ելույթը:

ՄԱԼՅԱՆ - Լիովին համաձայն եմ: Բայց ահա և ինքը:

ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ - Ես էլ դեմ չեմ: Կներեք, այնքան բարձր եք խոսում, որ չէի կարող չլսել:

ԲԱԼՅԱՆ, ՄԱԼՅԱՆ - Դե, ուրեմն, խնդրում ենք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Անսամբլը կատարում է մի քանի համար:

ՄԱԼՅԱՆ - Դե, ընկերներ, համեցեք ահա այս դռնից:

Բոլորը «Այստեղից թռչում են» դռնից դուրս են գալիս: Մալյանը ուղեկցում է նրանց ու դանդաղ վերադառնում: Բալյանը նստած է միկրոֆոնի մոտ, մատով թխկթխկացնում է:

ԲԱԼՅԱՆ - Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, չորս, երեք, երկու, մեկ... Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն... Խոսում է «Երևան» տիեզերականը, մեկ...

Դուռը բացվում է, հևալով ներս է ընկնում մորթե մուշտակով ու ականջակալներով մի մարդ, թևատակին մի հաստ պայուսակ:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Այստեղի՞ց են թռչում, խնդրում եմ մի տեղ, լյուքս*... (արագ-արագ այս ու այն կողմ է վազում, վախով ետ է նայում):*

ՄԱԼՅԱՆ - Ինչո՞ւ եք այդքան հուզված, ընկեր, դեռ ժամանակ կա...

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ափսո՛ս, շուտ արեք, խնդրում եմ: Հնարավո՞ր չի արագացնել, ես կվճարեմ...

ՄԱԼՅԱՆ - Բայց ո՞վ եք դուք, պետք է իմանա՞նք վերջապես, թե՞ ոչ:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ես շրջսովետի գործկոմի պատասխանատու աշխատող եմ, ինձ, հասկանո՞ւմ եք, շտապ հարկավոր է Լուսին գնալ, արտակարգ խորհրդակցություն ունեմ... այսինքն՝ ի՞նչ խորհրդակցություն, հիմարություններ եմ ասում, ուղղակի պետք է, շտապ, հասկանո՞ւմ եք:

ԲԱԼՅԱՆ - Ա՛յ մարդ, այնպես ես դողում, ոնց որ հետապնդում են քեզ:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Չէ՛, ինչ եք ասում, այն աղմո՞ւկը, ինձ ճանապարհողներն են, հասկանո՞ւմ եք, սենտիմենտալությո՛ւն, ծաղիկներ, համբույրնե՛ր... Չեմ սիրում, ես դրանցից եմ փախչում...

ՄԻ ՁԱՅՆ - Փախչո՞ւմ: Չենք թողնի, եկեք, ընկերներ, բռնեցինք:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ընկեր տիեզերագնաց, հարգելի ռադիստ, փրկեցեք ինձ, խնդրում եմ, պաշտպանեցեք անօգնական բնակկառավարչիս:

ԲԱԼՅԱՆ -Մի դողա, ա՛յ ընկեր, ո՞վ է քո բնակկառավարիչը:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ես եմ, ես...

ՄԵԿԸ - Այո, նա է, նա, դեռ պարծենում է, ի՞նչ եղավ մեր ջեռուցումը:

ՄՅՈՒՍԸ - Տանիքը դեռ անցյալ տարի պիտի նորոգեիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԵՐՐՈՐԴԸ - Չյունն ո՞վ պիտի մաքրի, որտե՞ղ են քո աշխատողները...

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ընկերներ, գիտակից եղեք, որոշումն ընդունել ենք, նախագիծը, շինգրասենյակը... Բաց թողեք ինձ, ես Լուսնի վրա կարևոր գործ ունեմ... հավատացեք, գնում եմ շինանյութ բերեմ, ապակիներ, թիթեղ, խողովակ...

ՄԵԿԸ - Երկրի վրա գործերդ վերջացրիր, հա՞... լքո՞ւմ ես մեզ...

ՄՅՈՒՍԸ - Չենք թողնի, ե՛տ, ե՛տ...

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - *(Բալյանին ու Մալյանին):* Պաշտպանեցեք ինձ, ուղարկեցեք, Լուսին եմ ուզում, այնտեղ ջեռուցում չկա, տանիք չկա, շինանյութ չկա, խնդրում եմ...

ԲԱԼՅԱՆ - Չի լինի, մենք առաջավորներին ենք ուղարկում:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ուրեմն դուք է՞լ եք լքում, բոլորն են լքում, հա՞, չե՞ք տանում...

ԲՈԼՈՐԸ - Ա՛խ, տեղն է *(Մալյանին),* չեք տանի, չէ՞...

ՄԱԼՅԱՆ - Ո՛չ, ո՛չ, ընկերներ, չենք կարող տանել, հաստատ ենք ասում...

Ապարատը ուղղվում է մուտքի դռանը, մեկը ներս է մտել ու կանգնել անկյունում, աջ ձեռքում պտտեցնելով շղթայիկով մի բանալի: Լսելով, որ չեն տանում, նա դռան մոտ բռնում է հուսահատ բնակկառավարչի ձեռքը:

ՎԱՐՈՐԴ - Ախպեր ջան, չեն տանում, հա՞:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Չեն տանում:

ՎԱՐՈՐԴ - Քանի՞ հոգի եք:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Ո՞վ:

ՎԱՐՈՐԴ - Դո՛ւք: Ասում եմ՝ քանի՞ հոգի եք, հավաքվեք, ես իմ սեփական արբանյականավով կտանեմ, դռան մոտ կանգնած է ՊՇ-2: Ի՞նչ կտաք:

ԲՆԱԿԿԱՌԱՎԱՐԻՉ - Այ ընկեր, հեռացեք, է՛...

ՎԱՐՈՐԴ - Լավ, լավ, համաձայնվենք... Կիլոմետրաժով...

Դուրս են գնում:

ԲԱԼՅԱՆ - Տեսա՞ր, ընկեր Մալյան, ա՛յ գործ, կիլոմետրաժո՛վ... սեփական արբանյականա՛վ ունի... Բայց այն էլ ասեմ՝ պաշտոնս աչքիս բարձրացավ: Ինչ ուզում են, ասեն, գոնե բնակկառավարչից լավ է, այդ ի՞նչ էր դրա հալը... Ինչքան են հիմա անիծում խեղճին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱԼՅԱՆ - Անիծո՞ւմ: Իսկ ինչո՞ւ մյուսներին չեն անիծում, լավ են աշխատում, ահա թե ինչ... անիծո՛ւմ...

ԲԱԼՅԱՆ - Է՛, ախր հիմիկվա անեծքները շատ սարսափելի են, է՛...

ՄԱԼՅԱՆ - Ինչո՞վ են սարսափելի:

ԲԱԼՅԱՆ - Շատ են տանջալի... շա՛տ, ժողովուրդը անխիղճ է դարձել...

ՄԱԼՅԱՆ - Դու ինձ սարսափեցնում ես: Այդ ի՞նչ անեծքներ են:

ԲԱԼՅԱՆ - Կասեմ, բայց վախենում եմ վախենաս...

ՄԱԼՅԱՆ - Չեմ վախենա, դու մոռանում ես, որ ես տիեզերագնաց եմ:

ԲԱԼՅԱՆ - Դե լավ, լսիր: **Շինգրասենյակի հույսով ապրես...** Լա՞վ էր... Հը, գույնդ գցեցի՞ր, լսիր, լսիր, **վաստակավոր արտիստ մնաս**, դե ոչինչ, սա արվեստի աշխատողներին է վերաբերում: **Ձեր փողոցով գազ անցկացնեն...** Դիմացի՛ր... **Առանց ֆուտբոլի աբոնեմենտի մնաս...** Ո՞նց ես: **Հեռախոսային ցանցի դռներն ընկնես...** Ջուր բերե՞մ: **Ա՛խ, տունդ հարս մտնի...**

ՄԱԼՅԱՆ - Վերջ տուր, վերջ տուր, Բալյան, իսկապես սարսափելի բաներ են: Եվ ի՞նչ միտք ունի այս ուրախ օրը, այն էլ տիեզերական ճանապարհորդությունից առաջ նման տխուր մտքեր ունենալ: Ժամը քանի՞սը կլինի:

ԲԱԼՅԱՆ - 11-ն է, մեկ ժամ մնաց մինչև 12-ը: Ի՛նչ գիշեր է:

ՄԱԼՅԱՆ – Այո՛, լավ գիշեր է... Գիտե՞ս ինչ, Բալյան, ես շատ քաղաքներում եմ եղել: Շատ անգամ էլ տիեզերքում եմ եղել, բայց ոչ մի տեղ չեմ տեսել այնքան սքանչելի, այնքան խորհրդավոր ու պայծառ գիշերներ, որքան մեր քաղաքում, Երևանում: Այ, պատահում է, նայում ես վերևից գիշերային Երևանին, ու սիրտդ ուռչում է մի տեսակ հուզմունքից, նրա համար, որ սա քո քաղաքն է, հասկանո՞ւմ ես, ոչ մի տեղ չկան այսպիսի լույսեր, ոչ մի տեղ երկինքն այնքան կապույտ չէ: Ու այդ ժամանակ ավելի լավ եմ հասկանում մեր Ալեքսանդր Դոլուխանյանին, որ կարողացել է գրել այնքան հրաշալի «Երևանի գիշերները» երգը: Նույնիսկ ուզում եմ երգել քեզ համար.

«Երևանի գիշերները կապուտա՛կ...»:

ԲԱԼՅԱՆ - (հիասթափված): Է՞դ էր...

ՄԱԼՅԱՆ - Դե, ոչ, ես չեմ կարողանում երգել... Այ, սպասիր, լսենք ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանին: Այն ժամանակ կխոսենք:

(Երգը)

ԲԱԼՅԱՆ - Այ, սա ուրիշ էր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱԼՅԱՆ - Դե, տեսնո՞ւմ ես... Լսիր, Բալյան, խոսեցինք գիշերվա մասին, լսեցինք այս չնաշխարհիկ երգը, ու սիրտս մի տեսակ ուզեց շրջել հիմա գիշերային Երևանում: Բայց դե ի՞նչ կարող ես անել, աշխատանք է: Սպասիր, բայց չէ՞ որ մենք կարող ենք մեր հեռուստացույցի միջոցով տեսնել ամեն ինչ:

ԲԱԼՅԱՆ - Իհարկե, կարող ենք:

ՄԱԼՅԱՆ - Սկզբից Լենինի հրապարակը դիտենք... Ահա, այլևս ոչ ոք չկա, մեծ տոնածառը թափուր է մնացել, բոլորը գնացել են տուն, իրենց փոքրիկ տոնածառների մոտ: Հիմա ամենուրեք հարդարվում են սեղանները, որպեսզի ուղիղ ժամը 12-ին բաժակները զնգան... Փողոցներում էլ ոչ ոք չկա: Բայց չէ, սպասիր, այստեղ ինչ-որ ստվերներ են երևում, ա՛, ջահելներ են, համբուրվում են: Մի խանգարիր, Բալյան, հեռացրու ապարատը: Նրանց համար Նոր տարին սկսվել է:

Սպասիր, սա՞ ով է: Թշվա՛ռ, դժվար թե դու տանը դիմավորես Նոր տարին: Հազիվ է շարժվում: Ո՞ւր ես գնում, նորից ե՞տ ես դառնում, շրջվիր, ահա, զարմանո՞ւմ ես, դե դու մեզ չես տեսնի, միևնույն է, գնա, գնա, քեզ հիմա անհամբեր սպասում են տանը: Երևի հենց այն պատուհանն է: Դե, իհարկե, սպասում են կինը, երեխաները, տոնածառը:

Այս պատուհանը, բոլոր, բոլոր պատուհանները լուսավորված են: Փոքրիկ, զարդարուն տոնածառներ: Այս մանկիկի քունը տանում է, տես, բայց նա ճիգով բացում է աչքերը, ուզում է տեսնել նոր տարվա մուտքը, Ձմեռ պապիկին: Նոր տարի՛... Ինչ հույզերով, ինչ ուրախությամբ են սպասում քեզ բոլորը, անկախ տարիքից... նոր տարի, նոր կյանք, նոր հաջողություններ:

Հեռուստացույցը հետզհետե հեռանում է:

ԲԱԼՅԱՆ - Այո, լավն է նոր տարին... Ես փոքր ժամանակ...

Հեռվից լսվում է երգի ձայն, մոտենում է, բացվում է դուռը, ներս է մտնում Ֆիգարոյի հագուստով մեկը ու մոտենալով Բալյանին ու Մալյանին, շարունակում է երգել Ֆիգարոյի արիան «Սևիլյան սափրիչ» օպերայից:

ԲԱԼՅԱՆ - Ոնց որ խմած լինի: Էդ ինչո՞վ է էդքան ուրախանում:

ՄԱԼՅԱՆ - Սպասիր, ի՛նչ հրաշալի է երգում, բայց ո՞վ է արդյոք, չեմ կարողանում ճանաչել:*(Երգն ավարտվելուց հետո):* Ո՛վ էլ լինես, անծանոթ բարեկամ, ես չեմ հարցնում քո փաստաթղթերը, այդպես հիանալի երգողը իրավունք ունի տիեզերական զբոսանքի դուրս գալու:

ՖԻԳԱՐՈ - Ուրեմն ունե՞մ իրավունք:

ՄԱԼՅԱՆ - Լիովին:

ՖԻԳԱՐՈ - Ու որ մի բան խնդրեմ, չե՞ք մերժի:

ՄԱԼՅԱՆ - Երբեք, ասա ինչ ուզում ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՖԻԳԱՐՈ - Իմ փոխարեն զոքանչիս տարեք:

ՄԱԼՅԱՆ - Ո՞ւմ...

ՖԻԳԱՐՈ - Զոքանչիս, կնոջս մորը, խնդրում եմ, հնարավորության սահմաններում...

ԲԱԼՅԱՆ - Սա իմ օրին մարդ է երևում:

ՄԱԼՅԱՆ - Սիրելի ընկեր, դուք կատակում եք, կարգ կա, առաջավորներին...

ՖԻԳԱՐՈ - Նա էլ է առաջավոր, զոքանչների առաջավորն է, խնդրում եմ, բացառություն արեք: Ես ձեզ համար կերգեմ, ամբողջ գիշերը կերգեմ, օրեր շարունակ կերգեմ, միայն թե ընդառաջեք ինձ, տարեք նրան...

ԲԱԼՅԱՆ - Ախր, ախպեր ջան, ի՞նչ միտք ունի, էլի ետ է գալու, հո էնտեղ չի՞ մնալու:

ՖԻԳԱՐՈ - Ոչինչ, ոչինչ, փորձենք մի վերջին անգամ, ո՞վ գիտի, պատահականություններ լինում են, չէ՞: Խնդրում եմ: Ամեն ինչ արել եմ, ավտոյով էլ եմ ճանապարհել, գնացքով էլ, ինքնաթիռով էլ, ետ է գալիս, հասկանո՞ւմ եք, ետ է գալիս:

ԲԱԼՅԱՆ - Չէ՛, սա ինձնից վառված է:

ՖԻԳԱՐՈ - Պատկերացրեք վիճակս: Ամեն տարի երեք ամիս սանատորիայի ուղեգիր եմ գնում նրա համար, որ գոնե ականջս մի քիչ հանգստանա: Բայց իսկույն թռչում են անիծյալ օրերը, էլի ետ է գալիս: Ասացեք, ի՞նչ անեմ: Ալպինիստական արշավի ուղարկեցի Պամիրի ձյունապատ լեռնաշղթան, էլի ետ եկավ ու հետն էլ սպորտի վարպետի կոչում բերեց, ի՞նչ անեմ...

ՄԱԼՅԱՆ - Սիրելիս, ցավում եմ, բայց օգնել չեմ կարող:

ՖԻԳԱՐՈ - Ամբողջ օրը կերգեմ, խնդրում եմ, ահա (երգում է), միայն թե տարեք...

ՄԱԼՅԱՆ - Չի լինի, ընկեր, վերջացնենք:

ԲԱԼՅԱՆ - *(Ֆիգարոյին մի կողմ է տանում):* Լսիր, ախպեր ջան, էս դռան ետևում մի փափախ արբանյականավ կա, խելքս չի կտրում, թե գնա ու ետ գա: Զոքանչիդ դրանով ուղարկիր:

ՖԻԳԱՐՈ - Օ՛, շնորհակալություն, շնորհակալություն: Դե, ես գնացի...

ԲԱԼՅԱՆ - Հաջողություն, ախպեր, ի՞նչ ասեմ...

Հեռախոսը զանգում է, Մալյանը վերցնում է լսափողը:

ՄԱԼՅԱՆ - Այո, տիեզերականն է, ի՞նչ, չի՞ գալիս, ինչպես թե չի գալիս: Ընտրում եք ու չի՞ գալիս: Անհնարին բան եք ասում: Առաջավորի՞ եք ընտրում: Դե, գիտեք, կատակում եք: Ախ չե՞ք կատակում: Ո՞ր հիմնարկն է դա, Լեսոսբի՞տը, հայերեն ասեք՝ «Անտառմատը», լավ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հիմա կտեսնենք... *(Լսափոխը տեղն է դնում):* Ընկեր Բալյան, միացրեք, խնդրում եմ, «Անտառմատ»: Այնտեղ զարմանալի բան է կատարվում:

ՊԱՏԿԵՐ

ՄԵԿԸ - Ընկերներ, ես պնդում եմ իմ կարծիքը, որ որպես առաջավոր՝ տիեզերական թռիչքի պետք է գնա մեր լավագույն պահեստապետ Գեղամը:

ԳԵՂԱՄ - Ես, հա՞, ես ի՞նչ առաջավոր եմ:

ՄՅՈՒՍԸ - Պլաններդ 101 տոկոսով կատարե՞լ ես:

ԳԵՂԱՄ - Կատարել եմ:

ՄԵԿԸ - Նյութի խնայողություն արե՞լ ես:

ԳԵՂԱՄ - Արել եմ:

ՄՅՈՒՍԸ - Դե, տեսնո՞ւմ ես, ուրեմն պետք է թռչես:

ԳԵՂԱՄ - Չեմ թռչի:

ԵՐՐՈՐԴԸ - Ախր ինչո՞ւ, ընկեր Գեղամ:

ԳԵՂԱՄ - Սիրտս վատ է:

ՄԵԿԸ - Իսկ որ խմում ես, վատ չի՞ լինում:

ԳԵՂԱՄ - Խմելը սրտի հետ ի՞նչ կապ ունի, ստամոքսի հետ կապ ունի:

ՄՅՈՒՍԸ - Դե, Գեղամ ջան, դու ինքդ էլ գիտես, որ ճիշտ չես ասում: Դու առողջ, առաջավոր մարդ ես, քեզնից հարմար մարդ չունենք, ամոթ է, ամբողջ ժողովուրդը մեզ է նայում: Եվ... երբ որ պետդ ասում է՝ պիտի թռչես: Պետական կարգապահություն կա՞, թե՝ չէ: Ասա. կա՞, թե՞ չէ:

ԳԵՂԱՄ - Կա:

ՄԵԿԸ - Ուրեմն կթռչե՞ս:

ԳԵՂԱՄ - Չէ՛, չեմ ուզում, դուք գնացեք, ինձ իմ պահեստից մի հանեք, ավելի լավ է տունս քանդեք: Դուք թռեք, ես ձեր բոլորի տեղն էլ կաշխատեմ: Ինձ մի հեռացրեք իմ մայր-պահեստից...

ՄԱԼՅԱՆ - Անջատիր, զզվելի է: Եվ դեռ այսպիսի մարդիկ կան...

Դուռը բացվում է, աղմուկով ներս են գալիս բանվորական արտահագուստներով մի խումբ տղաներ ու աղջիկներ և բարևում են:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԵԿԸ - Կներեք մեզ, չհասցրեցինք փոխվել, ուղիղ երկրորդ հերթափոխությունից ենք գալիս:

ՄՅՈՒՍԸ - Քաղաքի տարբեր ձեռնարկություններից ենք:

ԵՐՐՈՐԴԸ - Շո՞ւտ ենք թռչելու, օ՜, ինչքան հետաքրքիր կլինի:

ՉՈՐՐՈՐԴԸ - Ո՞վ է ուղեկցելու մեզ:

ՄԱԼՅԱՆ - Արբանյականավը վարելու եմ ես, իսկ ուղեկցելու է Զմեռ պապին, նա ուղիղ ժամը 12-ին այստեղ կլինի, 12 անց 5 րոպեին տրվելու է ստարտը: Թռչելու ենք Լուսին:

ԲՈԼՈՐԸ - Ուռա՜...

ՄԱԼՅԱՆ - Իսկ բոլո՞րն են հանգիստ սրտով թռչելու, հին տարվանը ոչինչ պարտք չե՞ք:

ՄԵԿԸ - Ոչ, ի՞նչ եք ասում, պարտք մնալու սովորություն չունենք:

ՄՅՈՒՍԸ - Նոր տարիներն են մեզ պարտք:

ՄԵԿԸ - Դե, քանի որ ժամանակ կա, ինչո՞ւ եք կանգնել: Եկեք պարենք, ընկերներ:

ԲՈԼՈՐԸ - Պարենք:

ՄԵԿԸ - Բայց ես հիմա այնպես կուզեի տեսնել մեր ընկերներին, նրանց, որոնք Նոր տարին դիմավորելու են ոչ իրենց տանը, այլ երկրորդ տանը, մեծ տանը, գործարանում:

ՄՅՈՒՍԸ - Եվ ոչ միայն գործարանում: Երանի տեսնեինք բոլոր նրանց, ովքեր աշխատում են հիմա, որտեղ էլ լինեն նրանք...

ՄԱԼՅԱՆ - Այդ էլ կարող ենք ցույց տալ ձեզ: Ընկե՛ր Բալյան...

ԲԱԼՅԱՆ - Միացնում եմ ալյումինի գործարանի էլեկտրոլիզի ցեխը...

ՄԱԼՅԱՆ - Ահա ձեր ընկերները, նրանք չեն կարող քնել, չեն կարող հեռանալ վաննաներից, պետք է տաք պահել դրանք, այնպես չէ՞... Ահա Կիրովի գործարանի կարբիդագործները... Նրանք ևս քնել չեն կարող և ոչ էլ գտնվել տոնածառի մոտ, նրանք իրենց պատվավոր ու անհրաժեշտ աշխատանքն են շարունակում:

Է՞լ ով է, որ աշխատում է նոր տարվա այս գիշերը... Ահա նա՝ «Երևանգէսի» հերթապահը, տեսեք, նա հսկում է, որ պայծառ վառվի լույսը երևանցիների տներում: Այս մյուսը ճերմակ խալաթով է, ինչպես տեսնում եք... Այո՛, կռահեցիք, ծննդատան հերթապահ բժշկուհին է: Նա ևս չի կարող չաշխատել: Մանկիկներ են ծնվում, անպատասխանատու մանկիկներ, նոր երևանցիներ: Բժշկուհին չի կարող քնել, պետք է ապահով ու առողջ լինեն մանկիկները...

Ահա մեկն էլ, որ աշխատում, ավելի ճիշտ՝ ձանձրանում է այս գիշեր, հրշեջ պահպանության ջոկատի հերթապահն է: Հրդեհ վաղուց չկա, բայց հոգ չէ, պետք է հսկել, որ հանկարծ չլինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դանդաղ ու ծանր փնչում է շոգեքարշը... Հե՜յ, պատրաստվեցեք, հեռուներն եմ գնալու: Նոր տարի է: Ոչինչ, Նոր տարին գնացքում էլ է գալիս... Փառք ու պատիվ ձեզ, երկաթուղայիններ...

Դուք ուսադիրներ եք տեսնում: Այո՛, միլիցիայի հերթապահն է: Իհարկե, տարիներ կանցնեն, չի լինի ո՛չ միլիցիա, ո՛չ էլ հերթապահ: Բայց այսօր պետք է, և ընկերը հերթապահում է: Հաջողություն քեզ, ընկեր...

Ահա այս ընկերուհին էլ է հերթապահում: Բայց բոլորովին ուրիշ նպատակով՝ ձևավոր, ծաղկավոր, տոնական հեռագրեր է ուղարկում Սովետական Միության և աշխարհի բոլոր կողմերը: «Շնորհավո՛ր նոր տարի»...

ՄԵԿԸ - Որքա՜ն լավ էր, որքա՜ն հրաշալի էր, որ մենք տեսանք նրանց, իրենք էլ զգացին, որ մենակ չեն, որ մենք բոլորս նրանց հետ ենք...

Հեռախոսը զանգում է, Բալյանը վերցնում է լսափողը:

ԲԱԼՅԱՆ -Ի՞նչ, վայ, վայ, վայ, ներողություն, քույրիկ ջան, հիմա, հիմա... *(Լսափողը ցած է դնում):* 09-ից էին՝ նեղացել են, ասում են իսկ մենք չե՞նք աշխատում գիշերը, ինչ է, որ մեզ չեք նկատում, ա՛յ, կխռովենք ու կգնանք:

ԲՈԼՈՐԸ - Միացրեք, միացրեք...

ՄԱԼՅԱՆ - Ահա՛ մեր հեռախոսավարուհիները: Դժվար, պատասխանատու, անհրաժեշտ է նրանց աշխատանքը: Նրանք էլ են աշխատում այս գիշեր: Ու ոչ միայն նրանք: Շատերն են, որ նոր տարին աշխատանքի վայրում են դիմավորելու կամ ճանապարհին, նավերում կամ հեռու-հեռավոր սառույցների վրա... Թող ողջ լինեն բոլորն էլ, թող ուրախություն բերի նրանց Նոր տարին:

ՄԵԿԸ - Տեսնես հիմա որևէ մեկը քնած կլինի՞:

ԲՈԼՈՐԸ - Դժվար թե:

ԲԱԼՅԱՆ - Չգիտեմ քնած մարդ կլինի, թե ոչ, բայց քնածի մասին մի լավ պատմություն կա, ասե՞մ:

ՄԱԼՅԱՆ - Ասա:

ԲԱԼՅԱՆ - Դու հանելուկ սիրո՞ւմ ես:

ՄԱԼՅԱՆ - Փոքր ժամանակ սիրում էի, ի՞նչ կա:

ԲԱԼՅԱՆ - Չէ՜, սա մեծի հանելուկ է: Եվ այն էլ ասեմ, որ հենց մի քանի օր առաջ է եղել: Ուրեմն մի հեռավոր բարեկամ ունենք, խանութի վարիչ է աշխատում: Հա, ուրեմն, էս մեր դիրեկտորը մի անգամ գիշերվա ժամը չորսին քեֆից վերադառնալու ժամանակ անցնում է իրենց խանութի մոտով ու հանդիպում պահակին: Այն էլ ասեմ, որ դիրեկտոր բարեկամս

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մյուս օրը ընկերների հետ Թիֆլիս էր գնալու, ֆուտբոլի խաղի: Ուրեմն, հանդիպում է պահակին ու տեսնում է, որ պահակը դողում է:

- Ինչի՞ ես դողում, Սերոբ,- հարցնում է դիրեկտորը:

Սա թե՝

- Քիչ առաջ մի էնպիսի երազ տեսա, մի էնպիսի երազ տեսա, որ պատմեմ՝ դու էլ կդողաս:

- Ի՞նչ երազ, Սերոբ:

Թե՝

- Արի, դիրեկտոր ջան, վաղը Թիֆլիս մի գնա, երազումս տեսա, որ ավտոյով գնում էիր ու ավտոն ճամփին շուռ եկավ...

- Հիմար- հիմար բաներ ես ասում, Սերոբ,- բարեկամաբար նախատում է դիրեկտորը,- մեծ մարդ ես ու երազին հավատում ես...

Բարի գիշեր է ասում ու թողնում գնում: Գնում է, բայց սրտի մեջ կասկած է ընկնում: Բա որ հանկարծ իսկականից շուռ գա՞: Ախր, պատահում է, չէ՞, որ երազը կատարվում է: Ու որոշում է չգնալ:

Մյուս օրը կեսօրին տեղեկություն է գալիս, թե՝ բա չեք ասի, ավտոն շուռ է եկել, քո ընկերները ջարդվել են: Դիրեկտորը շատ է ուրախանում, անմիջապես զալիս է խանութ, ձեռքով բարևում է պահակին ու տեղն ու տեղը նրան պարգևատրում 50 ռուբլով:

ՄԱԼՅԱՆ - Լավ, ինչպե՞ս է ձևակերպում:

ԲԱԼՅԱՆ - Նյութական օգնություն: Հա, բայց խոսքս չվերջացրի, 50 ռուբլով պարգևատրում է ու հետն էլ հրաման է գրում, պահակին աշխատանքից հեռացնում է...

ՄԱԼՅԱՆ - Վա՛հ:

ԲԱԼՅԱՆ - Բա՞... Հանելուկն այս է, կարո՞ղ ես ասել, թե ինչու է հեռացնում:

ՄԱԼՅԱՆ - Հըմ, անհասկանալի բան է, առանց պատճառաբանելու:

ԲԱԼՅԱՆ - Չէ՛, շատ լավ էլ պատճառաբանում է: Հը՞:

ՄԱԼՅԱՆ - Ոչինչ չեմ հասկանում... Լավության փոխարե՛ն...

ԲԱԼՅԱՆ - Լավության համար 50 ռուբլի է նվիրում... Հը՞...

ՄԱԼՅԱՆ - Ազնիվ խոսք, չեմ կարող ասել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲԱԼՅԱՆ - Հեռացնում է, որովհետև պահակը երազ է տեսել, ուրեմն աշխատանքի ժամին քնած է եղել, չէ՞... Քնել է, չէ՞, որ երազ է տեսել:

ՄԱԼՅԱՆ - *(ծիծաղում է):* Օ՜, շատ սրամիտ է, ազնիվ խոսք, շատ սրամիտ է:

ԲԱԼՅԱՆ - Իսկ, պատկերացնո՞ւմ ես, պահակն այդ կարծիքին չէր...

Բոլորը ծիծաղում են:

ԲԱԼՅԱՆ - Վա՛յ, ուշանում ենք: (Մոտենում է միկրոֆոնին): Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն, քաղաքացի ուղևորներ, արբանյականավը 00-10-ը տասը րոպեից հետո կմեկնի Երևանի տիեզերականից: Ուղևորներին խնդրվում է դանդաղորեն զբաղեցնել իրենց տեղերը:

ՄԵԿԸ - Վա՛յ, ուրեմն մինչև Նոր տարին 10 րոպե՞ է մնացել, արագ, աղջիկներ, մի լավ, մի նոր Նոր տարվա երգ:

ՄՅՈՒՍԸ - Չկա...

ՄԵԿԸ - Ինչպե՞ս թե...

ՄՅՈՒՍԸ - Ինչո՞ւ ես զարմանում, մեր բանաստեղծներն ու կոմպոզիտորները ժամանակ չեն ունեցել գրելու:

ՄԱԼՅԱՆ - Դե ուրեմն լսենք տարեմուտի «Հինգ րոպե» պահեստային երգը՝ «Կառնավալային գիշեր» կինոնկարից: Բալյա՛ն:

ԲԱԼՅԱՆ - Միացված է, ընկեր Մալյան...

Երբ երգն ավարտվում է, բեմում լսվում է հեռավոր մի սուլոց, որը գնալով մոտենում է:

ՄԱԼՅԱՆ - Ուշադրություն, այդ Զմեռ պապին է:

Մի պահ բեմը մթնում է, իսկ երբ լուսավորվում է, բեմի կենտրոնում կանգնած է Զմեռ պապին՝ մի ձեռքին եղևնու ճյուղը, մյուսին՝ նվերներ...

ԲՈԼՈՐԸ - Ուռա՜, Զմեռ պապին...

ԶՄԵՌ ՊԱՊԻ - Այո, անձամբ... Դուք, ինչպես երևում է, անհամբերությամբ ինձ էիք սպասում: Բարև ձեզ, բարեկամներ: Ուրեմն սկսվո՞ւմ է ուրախությունը, սկսվո՞ւմ է Նոր տարին:

ԶԱՅՆԵՐ - Այո՛, շուտով:

ԶՄԵՌ ՊԱՊԻ - *(նայում է ժամացույցին):* Ուշադրությո՛ւն (հնչում են ժամացույցի զանգերը): Բոլորդ էլ լսո՞ւմ եք ինձ, սիրելի հեռուստադիտողներ... Լսո՞ւմ եք ժամանակի զանգերը... Շնորհավոր ձեր Նոր տարին, բարեկամնե՛ր... Թող ուրախության, հաջողության, եղբայրության, խաղաղ աշխատանքի ու կյանքի տարի լինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Բոլորը բաժակները մոտեցնում են իրար):

ՁՄԵՌ ՊԱՊԻ - *(Մայլանին):* Դե, տիեզերագնաց, օ՛ն, ուրեմն առաջ, դեպի Լուսին...

ՁԱՅՆԵՐ - Դեպի տիեզե՛րք... *(Դուրս են գնում: Էկրանի վրա հայտնվում է տիեզերանավը, որ հեռուներն է սլանում):*

ՎԵՐՋ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բովանդակություն

Տառապանքի ուղիներով 4
Խղճի գիշերային այցը 9
Դիրեկտոր առանց խանութի 14
«Վերջը դու՞ք եք...» 17
Գրասենյակային խորդուբորդություններ 21
Սնատես պարոնը այն ափից 24
Լուսիկի և այլոց ամուսինը 28
Զեղչով և առանց զեղչի 31
«Ու չեմ տարբերում...» 34
Մկների ժողովը 37
Երկու տուգանք 40
Կրակը ձմեռվա վարդնէ 42
Բացօթյա դրամշորթները 46
«Ծաղիկներ» 49
Տիկին Գյուլիզարի թեմաներով 51
Չգնահատված տաղանդը 54
Առանձի՞ն, թե՞ որոշ... 58
Դուք նրանց հեռախոս, նրանք ձեզ 62
Խենթի վկայականով 66
Չար կատակ 69
Իրերի հետ միասին 72
Հանուն մարդասիրության 76
Երբ լսափողը անբանի ձեռքին է 79
Հրաշագործ փինաչիները 84
Նախանձեցեք, բյուրոկրատնե՛ր 86
Վարիացիաներ փողոցային թեմաներով 89
Հետքեր... կանաչի վրա 91

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վճռվում է երեխայի բախտը 94
Տոնական կատակ 101
«Արդյոք խմո՞ւմ էր...» 105
«Վաստակավոր» զրպարտիչը 109
Հիշողություններ Բ-ի մասին 113
Կորած աթոռի ետեվից 116
Հեռուստատեսային երգիծանք 120

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱրտաշեսՓիրաղայիՔալանթարյան

Խղճի գիշերային այցը

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Նկարիչ՝ Հ. Տեր-Ղազարյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Օն. Փանիկյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Բարսեղյան

1964

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org